Universitäts- und Landesbibliothek Bonn

T'oros Aġbar, Hayastani Čambord

Srvanjtyanc', Garegin

K. Polis, 1879

urn:nbn:de:hbz:5:1-60437

Visual Library


Gorissen 3572 a (1)

ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ

ՀԱՑԱՍՏԱՆԻ ՃԱՄԲՈՐԴ

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՋՏԵԱՆՑ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ



ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՍԻՄՊԻՒԼԻՒՆ ԽԱՆ ԹԻՒ 47

—1879—

3572ա

ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ

Մեծին Հայաստանի Չորրորդ Հայք Նահանգի գաւառներէն մինն է Տուրուց աշխարհ, Տուրք մեծ. գրուած է նաև՝ Տուրք. առաւել անուանի եղած՝ Տուրք կամ Տուրք Շնորհալւոյն հօր, տոհմին և եղբարց բնակավայր լինելով: Իսկապէս Ծով կամ Ծովիկ մը կայ (4 ժամ երկայն՝ 1 ժամ լայն՝) Խարբերդին, Արշնու և Մալաթիոյ լերանց միջեւ, բաժակաձեւ, բայց գաւառն Խարբերդու կը վերաբերի և անոր աւելի մօտիկ է, իբր վեց ժամ: Ես կը կարծեմ թէ՝ Տուրք կամ Տուրքն է Տուրիկ բառ, սա իւր մէջն ունէր դղեակ մը, ուստի և անուանուած է Տուրք —դղեակ: Հոս Հայաստանեայց եկեղեցւոյ և ազգի Շնորհքն ծագած է: Հոս ծնած, չընչած, լացած, երգած, դրած և աղօթած է Ներսէս Շնորհալին, ուստի և իմ այս անգամի ուղեւորութեան ամենամեծ չահս եղաւ հանդիպիլ և երկիրպագանել այս Տուրիկին և դղեկին, ջրոց և տաճարի աւերակին, ուր ամենայն ինչ չնորհալի էր: Գրքիս երկրորդ մասին մէջ կը մնայ տասը ընդարձակ և մանրամասն նկարագիրն, ես կը փութամ յիշատակարանէս մաս մը քաղել դնել այս տեղ իբրև կանխաբան և իբրև բացատրութիւն թէ ինչո՞ւ սոյն գրքոյկս կոչեցի ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ:

Տիգրանակերտէն 'ի Ջերմուկ և 'ի Ջըն-
քուշ վերադարձած էի, ուստի խարբերդու
վրայօք պիտի անցնէի գայի: Ջնքուշէն ինն
ժամ եկած էինք, կարաւանը իւր օթեւանն
ըրաւ Քէյտան գեղը. ես անցայ, և ուղիղ
արահետէն խոտորելով բարակ ուղիով մը
շատ բարձր լեռ մը ելանք. կ'ուզէի անպատ-
ճառ նոյն գիշերը՝ Հայոց Ծովք գեղ կամ
ըստ Թրքաց՝ Կէօլճիւկ՝ իջեւանիլ: Ցոց ու
կրակ եղած էր փափաք արտիս մէջ, կը տո-
չորէր հոգիս և մարմինս. այնպէս կ'զգայի,
եթէ նոյն օրը չհասնիմ, չտեսնեմ, չհամբու-
րեմ այդ ջուրն ու հողը, պիտի մեռնիմ կա-
րօտակէզ՝ աչքս բաց մնալով . . . : Ա՛րդէն
հնար չէր ձի նստիլ. կը քալեմ, կը վազեմ,
կը թռիմ, և ահա պաղ հով մը, քայլ մի և ս,
և ահա Ծովքն իւր ցանկալի երեսը ցըցուց.
. . . կարկամեցա՛յ . . . : Ո՞վ կարող է նկա-
րագրել այն բուռն և խոր յուզմունքն որ
տիրեց իմ հոգեկան և մարմնական բովան-
դակ մասանց վրայ: Ո՛վ իմ պաշտելի Ընտր-
հալէոյս տուած ու առած, օրհնուած ու օրհ-
նած, աղօթած ու երգած տեղի, տեսարան
ու հանդիսարան . . . : Այժմ կ'զգամ թէ մարդ
ո՛ր աստիճան յափշտակութեան մէջ կը գըտ-
նուի, երբ իւր ամենէն աւելի սիրածին հան-
դիպի: Քարերու գլուխը քարացած մնացեր
եմ, և ապա զեռինը թաւալեցայ երեսացս
վրայ: Կը փարիմ, կը գրկեմ, կը պագեմ,
կ'սթափիմ, և, այլ աչերս չվերցուցի եր-

կինք : Երկինքէն բարձր փառք մը գտած էի : Աչքս ի ծովն, միտս ի ծովն, հետս ի ծովն :

Ծո՛վ, դու է՞ր չես ծիծաղիր :

Բաներ կ'որոնեմ իւր մէջ՝ չգուցըներ . հարցումներ կ'ընեմ իրեն՝ չպատասխաններ : Իւր ափանց ալիքներ՝ որ կը ծփծփան առանց հողմակոծութեան և առանց փոթորկի, նշան է թէ փոթորիկը պանի այնքան վեր ու վայր չուզած է, որոյ կուրծքը ուռչած է և ծածոյն խորերը կոծով լի, նման թշուառ դըշխոյի մը, որոյ գլուխն ու դէմքը փայլուն երեսի ադամանդներով, ոսկեհուռ ճեղեանակներով, բազմեալ բարձրաչուք փղոսկրէ գահոյից վրայ, արտաքուստ երեսոյթ երանելի և նախանձելի, բայց չարունակ արտասուեն իւր աչերը, ցաւն ու կսկիծը կրծէ ներսէն անոր սիրտն, լայ ու հեծեծէ, քանզի կորուսած է նա իւր երկու աչաց լոյս երկու զաւակները, երկուքն ալ թադակիր գլուխներ, մին փառք եկեղեցւոյ, միւսն փառք դիւցազնութեան : Ծովին աչքն ձեւ ունի, կոյսի մը աչքին պիտի ըսէի, բայց ա՛լ ճիշդ՝ մանկամարդ այրւոյ մը կը նմանէր, խորհրդաւոր գեղեցկութեամբ և չնորհքով զեղուն ականոջի մը, զոր արտասուքն աւելի հրապուրիչ կը գործեն, լերանց չրջանակի մը մէջ աւխոտուած, և ինչպէս սեւ ոսպ մը՝ աչքին բիբը, այնպէս կը մնայ և կ'երեւնայ սեւ ու քայքայուած չէնք մը այս ծովուն մէջ, կըղզեակ—դղեակին վրայ Ս. Նշանի տաճարին

աւերակին : Ո՛ աւերակ, որ քան զերկինս բարձրը ես և մեծավայելուչ իմ սրտիս համար . . . : Գիշերը անքուն անցուցինք, արշալուսին նաւ նստեցանք կղզին երթալու . աւա՛ղ աչերուս, սեւ ու սպիտակ քարեր ցիր ու ցան՝ խարխալեալ որմունք և եթէ կան . . . :

Համբո՛յր քարերուն, համբո՛յր հողերուն, համբո՛յր փլատակաց վրայ բուսած խոտերուն: Եւ ցօղն՝ Հայաստանի հոգւոյն արցունքն որ ամեն առաւօտ կ՚իջնէր չաղախել կղզեկիս փուչիներ ու քարերու խիճերէն ծլած թուփերը, լզեցի, կրծեցի, ճաշակեցի, իմ ալ ցօղերս թափելով հոն : « Դեռ 50 տարի յառաջ ատա կը բնակէինք Ծովեցի Հայք, և նախ թերակղզի էր . մեզմէ չատերը այս աւազանը մկրտուած են » ևն. կ՚ըսէին իմ նաւբիչներս : Լուսատիպ մը պէտք էր ճիշդ այս պահուս, սոյն Աստուածաբնակ աւերակին և Աստուածարեալ Ծովկին տխուր ու վսեմ տեսիլն տալէր, պատկեր՝ զոր աւելի կը կեն-դանացընէր արեւուն ծագման քնքոյշ ճառագայթն, և լերանց ու ծառոց սուերնները կը կախէր երկնաւիայլ ծովուս բիւրեղեայ ծոցոյն մէջ . այս պահուս՝ երբ ձկունք երամով կը կայտառէին, երբ թռչունք թիւ թիւ կը թռէին : Բայց ինչո՞ւ ամենքն ալ անձայն էին : Վա՛հ, երբ լռեր էր Ներսէսին քնարը «Զարթիք փառք իմ» երգելէն, զոր կը նուագէր Զուարթն հոգւով «Ընդ զուարթուն նոր երգս առեալ Նորոգողին», և կը կրկնէին այս

թեւաւոր ալախոսիկ սիրացուք «Ալէլուիա՛», այն օրէն ալ լուած էին թռչնոցս դայլայլիկք:

Ո՛վ կրնայ բաժնուիլ ձեզնէ, սիր ուս ուեր Ս. Նշանայ: Ո՛վ կրնայ թողուլ զձեզ, քարինք և ալիք Ծովիկ—դղեկիս: Արդեօք որքա՞ն պիտի ապրինք դուք կամ ես. տա՛յր ինձ երկինք այն երջանիկ առիթն կրկնելու անյագ համբոյրս և անհատ արցունքս՝ի ձեզ:

Լերինք և եթերք Ծովկիս, ձեզ, որ արձագանք տուած ու առած էք չնորհալի երգոց և մեղեդեաց Շնորհալւոյն:

Ջուրք և թռչուն՛ք, ձեզ, որ զուարթ խայտանօք ապրած ու չարժած էք երկնային Աշուղին դպացմանց քնարին հոգեղէն թելերը:

Ամեղք և արեգ, ձեզ, որ պայծառ և չքեղ ճառագայթներով ոգեւորած էք պայծառ հոգին Հոգենուագին «Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեա» գեղգեղողին:

Դեռ ցամաքը չելած, հաւք մը կը տեսնեմ, սեւորակ փետուրով, բարակ վզիկով, գլորիկ գլխով, զոր ծռած էր մէկ քովէ, թըխորակ աչերով, սպիտակ լանջով, ծնկները ծալած ջրոյն ալեաց վրայ կ'երերայ, սգաւորի մը կամ անդին կորուստ ունեցողի մը կը նմանի, բնութեան և առաւօտեան բոլոր գեղեցկութիւնն ու զուարթութիւնը իրեն վրայ չսպղեր, անփոյթ հայեացք մը կը ձգէ աչքի ծայրով դէպ՝ի մեզ երբեմն: Մինակ միայնակ է ինքն բոլորովին: Յանկարծ ծո-

վուն յատակը կ'իջնէ կ'անհետանայ, խորերը կը յուզէ, և ահա ջրոյն երեսը կ'ելնէ պապրապ և ուռնայն, մի և նոյն սխուր սիպով ու դիրքով . . . :

Ի՞նչ կ'որոնես, խե՛ղճ հաւուկ :

— Ի՞նչ է աս թռչնոյն անունը, հարցուցի ծովացի ընկերներէս : — Պատասխանեցին. ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ է իւր անունն :

Թորո՛ս աղբար, ա՛ռ նոր զարկմը սրտիս . . . Արդեօք որո՞յ անձնաւորութիւնն էր այն :

Ա՛յ Թորոս աղբար, որ կը յուզես ծովուս խորերը, կը յուզես սրտիս անդունդները : Թորո՛ս աղբար, ո՛ր մէկ կորուստներդ կը խնդրես, արդեօք տաճարի՞ն եթէ դահլիճին, Լեւոնեա՞նց եթէ Ղերսեսեանց, Հեթումեա՞նց եթէ Գրիգորիսեանց, խո՞րքն եթէ սալաւարտն, խա՞չն եթէ գայիսոնն, փեսուբի՞կն եթէ պողովատիկն, դրո՞շմն եթէ դրօշակն, Աստուածարան մատեա՞նն եթէ գահոյք արքունական, Ծիրանի՞ն եթէ եմիփորոնն, Վկայասիրին բուրվառն ու աղօթամատո՞յցն եթէ Թորոսի տա՛ճարն վրիժուց : . . . Է՛յ Թորոս աղբար, թո՛ղ ինձ հետ, թո՛ղ զքեզ տանիմ հայրենիքէն հեռացեալ Հայոց՝ ի տես, ՝ի յոյզ և ՝ի յոյս . . . :

Բայց դու կը մերժե՛ս, չե՛ս համոզուիր, և ոչ տեղէ՛դ կը բաժնուիս :

Ա՛յո՛, դու ուզիլ ես, յուզէ, խնդրէ, որոնէ այդ տեղ. ԿՈՐՈՒՍՏԸ՝ ԿՈՐՍՈՒԱԾ ՏԵՂԸ . . . :

ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

1878, Ապրիլ ամսոյն վերջերը, Ամենապատիւ Տ. Ներսէս Արքեպիսկոպոս Պատրիարք Հայրն որոշած էր երեք վարդապետ ղրկել Փոքր և Մեծ Հայաստանը. գնացողներէն մին ես էի. մեր պաշտօնը տահմանուած էր կոնդակով մը, որոյ պատճէնն ահաւասիկ:

«ՆԵՐՍԷՍ ծառայ Քրիստոսի և շնորհիւն Աստուծոյ Պատրիարք Հայոց և Արքեպիսկոպոս կոստանդնուպոլսոյ, բարեջան Առաջնորդաց Գերապատիւ եղբարց մերոց 'ի Տէր՝ և Մեծապատիւ Անդամոց Ազգային Վարչութեան՝ բարեչնորհ Քահանայից և ժողովրդականաց գաւառացն Ամասիոյ և Մարզուանու, Եւդոկիոյ, Շ. Գարահիսարու, Սեբաստիոյ, Տիվրիկի, Ակնայ, Զարսանճագի, Արաբկերի, Զմմըլկածագու, Թարթերդի, Չնքուշի, Բալուայ, Մալաթիոյ և Տիարպէքիրու վիճակացն ողջոյն և սէր 'ի Քրիստոս Յիսուս 'ի յոյն բնաւից:

«Որ ուրի զգիր՝ Արժանապատիւ Տէր Գարեգին վարդապետ Արուանձտեանց սիրելին մեր՝ յայս նուագ յատուկ պաշտօնիս առաքեցաք 'ի կողմանադ, զի վիճակագրեսցէ զեկեղեցիս և զդպրոցս և զվանորայս ազգիս զչէնս և զանչէնս և զկալուածս նոցա, և հա-

աքեացէ զկարեւոր տեզեկութիւնս զորպիսութենէ ժողովրդեան և զներկայ կացութենէ նոցին ըստ յատուկ պատուիրանաց մերոց, և յուսով բարօրութեան և բարեկարգութեան Հայաստան աշխարհի՝ մխիթարեցէ զամենեսեան։

«Քաջայոյս եմք զի Ձերովդ ազգասիրական զգացմամբ և ամենազովեալ հիւրասիրութեամբ պատուասիրէք և դիւր ընծայէք սորա արժանապատուութեան օգնելով և ատատարելով նմա, զի կարօղ լինի փութանակի և անթերի լրացուցանել զպաշտօն յանձնեալ ինքեան և դարձ այսր առ մեզ արասցէ՝ ի պայծառութիւն Եկեղեցւոյս և՝ ի շինութիւն Ազգիս։

«Ողջ լերուք և զօրացեալք՝ ի խնամս Տեառն, և Աստուած խաղաղութեան սփոփեսցէ զՁեզ բարեօք»։

ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՕԼՍՈՑ
ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Տուեալ՝ ի Պատրիարքարանէս Կ. Պօլսոյ
յամի Տեառն 1878 Ապրիլի 26
և Ազգական Ոճիէ

Ինչպէս կը տեսնուի, «Յուսով բարօրութեան և բարեկարգութեան Հայաստան աշխարհի» կ՚երթայինք մենք ողջունատար և մխիթարար՝ յուսաբեկ Հայոց։ Այն օրերը Հայկական խնդիրն թեւս առած սաւառներ ու հասեր էր Եւրոպիոյ մեծ տէրութեանց դահլիճները, և քաղցր յոյսեր կանխեր սրտիներ էր Հայաստանի աւերակներուն և Հա-

յոց աւեր սրտերուն. Հայրենի հողն ու հողին հաւատարած Հայն՝ կենաց նոր չարժում մը կ'առանայր. Ս. Պատուիրակներն իրենց բարձր տեղերէն կ'երեւէին մինչև Հայաստանի խորն ու ձորը՝ ի խաւարի նստող բնակչաց: Իսկ լրագրութիւն իրրև գետ կը հոսէր կը տարածէր յոյժ ակնհայելիքներ:

Թողի Պօլիս: Թողի Ռուսաց ապայից և պինուորաց խառնն Բերայի ու Պօլսոյ փողոցները, և անոնց խառնիճաղանճը՝ Այիտէֆանօյի բանակատաշտն: Թողի Միւհէճիրներու ժխորն մայրաքաղաքիս հրապարակները և արուարձանները: Ցետին ակնարկ մը ձըգեցի Մարմարայի վրայ, որոյ մէկ խորչին մէջ Բրիտանական նաւատորմիղն կը ծփար: Եւ կը ծփար ու կ'ալէկոծէր Ստամբօլն ամբողջովին փոթորկալից հոդւերով...:

Մնա՛յ բարով Գատը գեղն, զոր սրտիս հետ կը տանիմ: Մնա՛ն բարով հասկայն բարեկամներս, և ազգասէրներ, որոց յիշատակը գլխոյս հետ անբաժան կը կրեմ...:

Մայիս 1 էր, Օրէստօ գեղեցիկ շոգենաւն զմեզ բարձած իւր թևուց վրայ կը թըռչէր դէպ ի Սեւ ծով: Գարունն իւր չքնաղ գեղեցկութեամբ չքեղազարդած էր վոսբորի երեաներն ու շրթունք, արեւն պայծառ և փափուկ, բայց ասոնք չէին ազդեր յիս:

Օտար էին անոնք, ես կ'երթայի հայրենեաց արեւն ու գարունը ողջունել:

Իմ պաշտօնական թուղթերս ուղղած

եմ Պատրիարքարան և հաւատօտ տեղեկագիրս, որոյ պատճէնը կանխաւ հրատարակուած է Մասիս լրագրոյ Յունուարի թերթերուն մէջ։

Սոյն հրատարակութիւնս պաշտօնական չէ, այլ սոսկ իբրև ուղեւորութիւն և զանազան ծանօթութիւնք իմ շրջած տեղեաց տեղեաց և բնակչաց կեանքի վրայ, մասնաւորապէս ազգայնոց նկատմամբ, և անոնց հին և նոր վիճակը, վանքերը, վարժարանները, քաղաքական և ներքին վարչութիւնք և տնտեսութիւնք, եւ. տորագրել, զորս՝ ի լոյս կ՚ընծայեմ իբրև ընծայ մը բերելով Հայաստանէն՝ Հայաստանը սիրող Հայոց մատուցանելու։

Կատարեալ գործ մը չէ այս, վասն զի այնքան խուռն և կարեւոր պաշտօններուս մէջ չէի կրնար լուռին տորագրել և ամեն բան աչքէ անցուներ. այսու ամենայնիւ որքան կրցայ հաւաքեցի և՝ ի գիր անցուցի, տեղ տեղ ալ ձեռագիր մատեաններու ցանկն ու յիշատակարանները օրինակելով, զորս իբր գուշնաքեայ աշխատութիւն՝ բանասիրաց և ազգասիրաց փոքրիկ ճաշակ մը կ՚ընծայեմ։ Պատրիարքարանն՝ մեր բուն պաշտօնական վիճակագրութիւնը և տեղեկագիրը՝ ի լոյս պիտի ածէ, կցորդելով մեր միւս պաշտօնակցաց գրածներուն հետ։

Եթէ նկատեն ունենք պակաս բաներ գըրուածքիս մէջ, կատարեալապէս իրաւունք

ունին իրենց կողմանէ լրացընելու դիտողութիւններ գրել· բայց միշտ անկողմնակալ հոգւով, ինչպէս մեք ալ նոյն զգուշութիւն ըրած ենք, վասն զի ամեն ոք կրնայ հասկնալ թէ գրածներուս նպատակը ազգայնոց յառաջդիմութիւն և իրենց օգտակարութիւնը ցոյց տալ է միայն· Հայը Հայուն ծանօթացնել, Հայը Հայուն սիրել տալ է բոլորովին իմ փափաքս և ջանքս։

Գործս երկու մասի բաժնելու հարկ եղաւ, վասն զի նոր ուղեւորութիւն մը ընելու հրամանն Ն. Արքաղնութեան՝ կ'սպասէի դիս ընդ փոյթ մեկնիլ մայրաքաղաքէս։

Բ. մասին մէջ կը մնան Խարբերդ, Զիլկածագ, Զարսանճագ, Բալու, Արղնի, Ակըլ, Ջերմուկ, Տիգրանակերտ, Զընքուշ, Ծոփք կամ Կէօլճիւկ, վերադարձ՝ի Խարբերդ, կապան մնաւէն, Արաբկերու գեղեր, Յակն, Արմտաններ, կէրճէնիս, Շ. Գարահիսարու գեղեր և քաղաք, Կիրասոն, իրենց մանրամասնութիւններով։ Խարբերդու վանորայք։ Ներսէս Չնորհալւոյ օրհնած մեռոնն և Հեթում արքային կնիքը։ Զիլկածագու կարմիր վանք· Ագրակ գեղը, աղբիւրը՝ հրեղէն աղբիկ· Ակնջի ջուր, Օսմ. զօրաց բանակն և քանի մը դէպքեր։ Ցաղթուկ գեղը, Ցաղթուկցի Սահակին խօսքեր, անգին ընծայ մը· Խարտիչարու վանք կամ Ս· կարապետ։ Զարսանճագի գեղեր, Բերդակ, հոյակապ Ս· Թորոսի տաճարն· Բաչավանք գեղ, Խաչ ալէյն և իւր արարք·

Մնձուր գետն, Բէրին աւան. Քղիի Ջուրն: Մեծկերտ և իւր հնութիւնք: Ամի Շէֆիկ պէյն, Կիրակոս էֆէնտի Ղազանճեան, զօրաց բանակն, Տէրսիմի բարեկարգութիւնն. նկարագիր և տեղեկագիր Տէրսիմին և Տէրսիմցւոց. ասոնց բարքն և կրօնքն: Աւերակք, հնութիւնք և աւանդութիւնք. Հալէորիկի Ս. Կարապետ վանք: Զարսանճագի պէյեր և գերի ժողովուրդ: Բալուայ Քաղցրահայեաց վանքն, Հաւսու գեղ և այլ գիւղորայք, Բալուայ քար կամ բերդ. Ս. Մեսրոբայ քարայրը, ճգնարան և Դպրատուն: Րուսի էֆէնտին: Բալուայ բէկեր: Աչմուշատայ գեղեր. Ս. Խաչ վանք: Արղնու վանք կամ Բարձրահայեաց Ս. Աստուածածին. ասոր ճոխ գրատուն, ձեռագիր մատենից ցանկն ու յիշատակարանները, աստրագրութիւն: Արղընն և Ակըլ գիւղաքաղաքաց ու անոնց հնութեանց և պախըր մատէնի վրայ ծանօթութիւն: Արղընէն մինչև Տիգրանակերտ ընդարձակ դաշտը: Տիգրիս գետն, Տիգրանակերտի հնութիւնք, քաղաքին աստրագրութիւն, բազմաթիւ ձեռագիր մատեանք, անոնց ցանկն ու յիշատակարանները: Սասնոյ լերինք և անոնց բնակիչները: Աստրի, Քիլտանի, և Շէմսի գեղերը: Քրդեր և եզիտիք: Տիգրանակերտու վանքեր: Ջերմուկայ Ջերմաղբիւրը և քարացեալ մարդիկ: Զնքուշայ վանք կամ Միրահայեաց Աստուածածին: Խեննդ Սիւլէյման: Ծովք կամ Ծովիկն եւ

Կանխաւ իղձ կը տածէի փոքր Հայաստանի և մեծ Հայաստանի հարաւային գաւառները ուղեւորիլ և ստորագրել ուստի այս առթիւ սիրելի Պատրիարք Ս. Հօր հրամանն ինձ ցանկալի էր, և սրտագին գոհութեան պարտիք մը կը դնէ իմ վրաս։ Խընդագին չնորհակալութիւն նաև իմ չրջած տեղերու ազնիւ Հայոց, որք իրենց սիրով և մեծարանօք մեծապէս մխիթարեցին զիս։ Իսկ ես ինչ որ ըրի, « Զոր պարտն էր առնել արարի »։

Երբէք պատճառ մը չունիմ դժգոհելու. վասն զի յօժարութեամբ գնացի, յօժարութեամբ չրջեցայ, յօժարութեամբ գործեցի։ Ոչ երկրին անիչխանութեան օրերը, ոչ Չէրքէզն ու Քիւրդը, ոչ լեռներն ու ձորեր, ոչ արեւն ու անհանգիստ ուղիներ, եւ. չկրցան վհատացնել զիս։ Քրդաց վրաններու տակը և բացօթեայ վայրեր իջեւանեցայ, ասիական ուղեւորի մը կրելիք ամենն ալ կրեցի, բայց երբէք ցաւ չզղացի, վասն զի սիրով գնացի. և փոխանակ անոնց՝ հազարաւոր մխիթարութեանց կը հանդիպէի, մեր հայրենական ջրերուն, հովերուն, մարգերուն, դրախտներուն, բերքերուն և պտուղներուն, համով հացին և կարմիր գինւոյն, հաւքերուն թռչչին ու կաքաւներուն կառաչին, ծաղկանց բուրմունքին և անտառին ասիներուն, մաքուր կաթին, կովու իւղին, ճագուց մեղրին, Հայ մանկանց երամին, և այլ սըր-

տագրաւ յափշտակիչ տեսարաններուն, ո-
րոցմով, կարի զուարթութիւն՝ կարի կորո-
վութիւն եկաւ վրաս։ — Հայ եղողը՝ Հայաս-
տանի հողոյն վրայ ինքզինքը կը ճանաչէ,
ինքզինքը վեհ և կենդանի կը գտնէ, փորձե-
ցէք և տեսէք։

— Ահա կ'երթամ ես։

— Հրամեցէ՛ք։

4 Ապրիլ 1879 Գ. Վ. Աբռահեանց

Գաւառը գիւղ Կ. Պօլսոյ

ՍԱՄՍՈՆ ՔԱՂԱՔ

Այս Հին Սամսոնը ողջունեցինք, գեղեցիկ օդերով, գեղաճիճաղ ծովով:

Այս քաղաք մեծ և կարեւոր նաւահանգիստ մի է Փոքր Հայոց և Մեծ Հայաստանի հարաւային գաւառաց. ամ յամէ աւելի ծաղկեալ:

Իր միջէն կ'անցնի կ. Պոլսէն 'ի Բաղդատ գնալիք մեծ ուղին ցամաքային, զոր կ'անուանեն Բաղդատ ճապխէ. ուղեւորներ և ապրանքները բազմաթիւ եւևէջ կ'ընեն այս քաղաքը:

Բաւական նոր ու չքեղ շէնքեր կան. չուկան և խաներ, վաճառանոցներ, ամբարներ կոկիկ են. իսկ փողոցները անմաքուր. օդը խոնաւ և աեղտոտ. գրեթէ ամռայդ և կայտառ անձինք հազուագիւտ են:

Ձմեռնային վայրեր ունի քովերը, որոց ապահանութենէն յառաջ կու գան հիւանդութիւնները:

Քաղաքիս բնակիչքը մեծաւ մասամբ Տաճիկներ են, և 150 տան չափ Հայք: Հայք վաճառաշահութեան առթիւ հոս գաղթած են, Ակնէն, Կեսարիայէն, Եւդոկիայէն, Եւ:

Ցոյնք Հայերէն ա՛լ պակաս են, բայց աւելի հարուստ և յառաջադէմ։ Քաղաքիս մէջը նշանաւոր է Ցունաց եկեղեցին և վարժարանը։ Աւսր հակառակ կարի նեղեմ է Հայոց եկեղեցին և վարժարանը, որ թէպէտ երբեմն երբեմն փայլակի նման կը պայծառանայ հանդանականութեամբ մը, կամ ընկերութեան մը ջանդով, բայց և յանկարծ կը մթննայ։ Փորձ մ՚ալ ես ըրի. ընդհատ-ընդհատ վերակազմուեցաւ, և վարժարանին պարտքը գոցելու հանգանակութիւն մը եղաւ. բայց խիստ քիչ տեւած էր, վասն զի վերապարձիւ ցաւօք սրտի տեսայ որ վարժապետը քաղաքէն կը մեկնէր. և ընկերութիւնը՝ եթէ վերջացած չէր, չարուճտկելու մէջ ալ չէր։ Ջնջումակալութիւն մը կար աղջկանց վարժարանին, անոնք ալ ձեռնթափ տեսայ։

Սամսոնի Հայք աղքատ չեն, և կրնան իրենց ազգային վիճակը տիպար տալ այն ամէն Հայոց, որ կուգան կ՚անցնին Սամսոնէն, տիպար լուսաւորութեան և ազգասնութեան. կրնան և պէտք է այն վիճակին ունենան, որ Սամսոնին այցելող մը վստահ ունենայ տեսնելու այդ ծովամիջեայ ծաղկեալ քաղաքին մէջը՝ Հայոց եկեղեցին պայծառ, վարժարանը պայծառ, ընկերութիւնք և թանգարանը պայծառ, իբրև ներկայացուցիչ Հայաստանեայց Հայոց, որոց դուռն կը հանապատի իր դիրքով։

Քահանայ մը և եթ ունին. իրենք Ամա-

միոյ թէմ կը համարուէին, բայց Առաջնորդն այցելութիւններ չէին վայելէր. և մինչ Առաջնորդ ալ ունէին. և եթէ ունենային՝ իրենք հեռի ինկած էին. մանաւանդ քաղաքականապէս Ամասիան՝ Սեբաստիոյ ենթակայ է, Սամսոնը Տրապիզոնին. ուստի մեծ վտիտագ կը յայտնէին, և իրաւունք ալ ունէին որ Զարշամպայի և Ճանիկի Առաջնորդութեան հետ միանար Սամսոնն ու Գաֆրան, Առաջնորդը նստէր 'ի Սամսոն, ուր կը նստի Միւթասարիֆը, և Սամսոնի ազգային վիճակը մեր ըղձացեալ պայծառութեան կը հասնէր։

Իբր 300 լիրա Օսմ. դրամագլուխ ունի եկեղեցին և վարժարանը, որ վատահելի անձանց տակոսով արուած է։ Թէ՛ ասոր տոկոսները և թէ՛ տեղական ազգայնոց հանդանակութեան յօժարամտութիւնը կրնայ բաւական արդիւնք դոյացընել. բայց գլուխ կեցող մը կը պակսի։

Քանի մը երեկոյթներու միջոց ցոյց տուին Սամսոնի ազգայինք իրենց սրտի եռանդն և ձկտումն դէպ 'ի յառաջադիմութիւն բանիւ և արդեամբք, ինչպէս և կիրակի ցերեկին վարժարանին մէջ ըրածս հրաւէրին։ Անոնցմէ որոնք արժանի են յանուանէ յիշատակելու, երեքը միայն կը յիշեմ, իսկ պատիւը՝ ամենը գործողներուն. Օհան էֆ. Ալանեան նշանակիացի, Երզուարդ էֆ. Մուրատեան Նիկոմիդիայի և Գաբրիէլ էֆ. Առաքելեան Սե-

թաստայի. ասոնք գրեթէ Սամսոնի ապրա-նոց հոգին են, իւրաքանչիւրն իր յատկութեամբ և առաւելութեամբ։

Քաղաքս՝ գտնուելով իբրև կապ Ասիոյ և Եւրոպայի միջոցը, յարաբերութիւն ունի Եւրոպայի, Կ. Պոլսոյ և Ռուսաստանի հետ. փոխադրիչ վաճառականութեան կարեւոր վայր է, և ցորենի առուտուրը յաջող։ Իր ելջէն և չուրջէն ալ բերքեր կը հասնին, մանաւորապէս մեծ քանակութեամբ ծխախոտ, որ անուանի է և շատ տարածեալ. եղիպտացորեն, վարսակ, գարի, լուբիա, բուրդ, խաչանց մորթ, չիմչիմօ (որոյ հանքն ունին), սեւ խաշխաշ (ձկնկիւր), գանազան և առատ ձկունք։

Պոլսէ հեռագրատան լճակը Սամսոնէն 8 ժամ հեռի է դէպ ի Պաֆրայ, որ իր անթիւ ձկներով մեծ շահ կ'ընծայէ կառավարութեան և հասարակութեան։ Ալիս մեծ գետը (Գըզըլ ըրմադ) Սամսոնէն 8—10 ժամ հեռի դէպ ի Պաֆրայ՝ կը թափի Սեւ ծովը. նոյնքան հեռու է նաև Իրիս գետը (Եէշիլ ըրմադ), որ Զարշամպայի մօտ կը թափի Սեւ ծովը։

Աբազա գաղթականներ և Չէրքէզները ծանր բեռ մը եղած էին ժողովրդեան. և ոչ միայն ճանապարհները, այլ և քաղաքի մէջ, տներու մէջն անգամ ապահովութիւն չէր մնացեր. գողութիւն, ինահարութիւն և սպանութիւն հասարակացեալ էր։

Այս գաւառը գրեթէ ամբողջ լեռնային է. Գոնաոսի լերանց շղթան: Հին եկեղեցական պատմութեանց մէջ Աչքօրհ Հարպոխէոց անուանած են այն գաւառը: Հին Սամոնը բարձր պիրքի մը վրայ աւերակ է դարձած, և իր բերդի չէնքերու հիմերը և պատերը միայն կը տեսնուին այցելուք: Հոն՝ ուր երբեմն մարդկային հերոսները մեծամեծ քաջութիւն գործած են. ուր արիւնները հոսեցուցած քար քարի վրայ և դիակ դիակի վրայ շարելով, այժմ խոտեր բուսած են, զորս կը կրծեն այծեր իրենց ուլերով, և թռչունք թուխս նստած՝ ճագերը հանելով, կը ծըրտչին ատոնք մարդկային գաղափարին վրայ, միւռնները իրենց տօտիկներուն տակ կը կոխկռտէին մարդկային հին հանճարը . . .:

Սամոնը ունի իր մէջ պղտատու ծառեր. աւելի շատ են ձիթենիք: Չեմ կրնար չյիշել իմ ասպնջական Գաշտար Աղա Փոզտանը, Ակնայ Կամրկապէն, որոյ տանը հանդիստ, դրախտը զուարճալի, և իր սիրտը բարեօք լի՝ երախտապարտ կացուցին զիս:

Քաղաքական կառավարութիւնն է Միւթասարիֆութիւն. վիլայէթ Տրապիզոն, Եկեղեցի Ս. Նիկողայոս, վարժարան 2. ուսանողք՝ մանկունք 56, աղջկունք 36: Ծախք վարժարանաց 25000 ղուրուշ եկեղեցիէն, դրամագլխոց տոկոսէն և հանգանակութենէն: Թիւ Հայոց 649. Կաթոլիկ և Բողոքական Հայք 111: Յոյնք 542: Թուրքք 3670:

ՊԱՏՐԱՍՏ ՓԱՂԱՔ

Անձամբ չկրնալով այցելել այս քաղաքը, Սերաստացի Աստղիկեան Գարրիէլ էֆենտին առաւ իմ կողմանէս երթալ, որպէսզի նամակին տեղեկութիւնները կը դնեմ հոս։

Վիճակագրութեան վրայ խօսելէն գկնի՝ կը յաւելու. «... Ցեղույս դպրոցին վիճակը խեղճ գաւառ, գծուծ տեղ մը, լայն չալվարով և բոկոտն դաստատուն մը քով՝ աղտոտ տախտակամածի վրայ ծնկաչոք չարուած հարիւրի մօտ երկու սեռէ խառն աշակերտներ նոյնպէս աղտոտ վարտիքներով, բոկոտն և գլխիբաց, դէմքերնին և ոտքերնին կարծես տարիներէ՝ ի վեր ջուր չտեսած. ատոնց ուղղութեան վիճակը մեր ազգի ներկայ կացութիւնը միտքս բերաւ, և արցունքներս աչկունքս կոխեցին։

«Դպրոցին մէջը հաստատակ ընթերցուածէ և գրէ զատ՝ ուրիշ ուսումնք չկայ. տակէ առաջ մի քանի դաստատուներ գացած են հոն, բայց և ոչ հետք մը ձգած են անոնց. Պաֆրայի պէս անմշակ և անհոգ թողուած տեղ մը չէի տեսած բնաւ։

«Թաղը խորհուրդը հինգ տարիէ՝ ի վեր ցրուած է եղեր, և ազգին գործերը լատ գիպաց կը կատարուէին։ Նկեղեցին մօտ 800 տակի դրամագլուխ մը ունի, որ այլևայլ անձանց

ձանց քով չհնչուած է. բայց ոչ չհնչած վճարուած կայ և ոչ մայր դուռարը։ Տիգրան երեւելիները և թագ. խորհրդոյ անդամները բռնած են այս առակը. ժողովրդեան հատուցակ մասը պայրուքին յուզուած էր նոցա դէմը, և դպրոցին ու եկեղեցւոյն անխնամ թողուելու պատճառները ասոր կու տային։ Հոս չիչեմ որ բառական վայելուչ եկեղեցի մը ունին։

« Հաւկրցոյ որ աշխատել սկսաք էր, ուսուն և դարմանալի գործունէութիւն ցոյց տըւի, ժողովրդեան ինձ ցոյց տուած հաւատիրութիւնը օգնութեան առնելով. շատ անդամ գումարումներ ըրի, խօսեցայ, քաջալերեցի, և եկեղեցւոյն մէջ հաւաքուած ժողովրդեան հաւանութեամբ և աստուածաթեամբ թագ. խորհուրդը վերակազմեցի. նաև ընդհանրական ընկերութիւնը կազմակերպեցի։ Ուրիշ տեղ գործունէութիւն կը ցուցընեն ազգային գործերու խառնուիլ, հոս երիտասարդները բոլոր զօրութեամբ ճիգ կ'ընեին ընդհանրական ընկերութեան գործադիր անդամ ըլլալ. տեսնելու բան էր երիտասարդութեան հրաւէր կարդացած առնելն՝ այն խնդիր գործոյն ազգայոյզ ժողովրդենէն բաժնուելով դժուարին ձեռքով գաւառապրեցին, որովհետև շատունակ իրենք բարեաց համար կը խօսէին. ճանապարհին վրայ, առնելուն մէջ երախտագէտ շարժուելով դիս կը շնորհակալէին։ Ժողովր-

դեան՝ աղբկանց և մանչ տղայոց դպրոցներու համար ունեցած եռանդը քաջալերական գտայ. վերջապէս գործը իրենց ձեռքով կարգադրելու համար ամեն հարկաւոր սկզբունքները ճանչցուցի . . . :

« Պաֆրայի հողը խիստ զօրաւոր է. բերքաւոր կենդանիներ կ՛արածին հոն լեռներու և դաշտերու մէջ. բնակչաց հարստութիւնն ալ կենդանիներն և ծխախոտն է : Ձերբէկը առհասարակ գողութեան և աւազակութեան կը պարապին, ուստի և քրիստոնէից ձեռքէն կենդանիները միշտ կը յափշտակուին. տեղական կառավարութիւնը անկարող է և կամք չուներ չարեաց առաջքն առնուլ. մինչև իսկ երթեւեկութիւնը վտանգաւոր դարձած է աւազակներու վախէն :

« Պաֆրայի ժողովուրդը զօրաւոր է, բայց կրթութենէ ու լուսաւորութենէ զուրկ : Ցոյնք երկաս դպրոցներ ունին, և քիչ չատ հոգ կը տանին. Հայք և Տաճիկք կրթութեամբ իրարմէ չեն զանազանիր :

« Ամէն գետը քաղաքին հիւսիսային կողմէն կուգայ ծեծելով կ՛անցնի, արեւմուտքէն արեւելք կը հոսի, ճամբուն վրայ բոլոր գետերը ընդունելով կը մեծնայ, կը լայնայ. Պաֆրայի առջեւ կամուրջը քանի մը տեղաց միջակաւոր ըրած տարած է. ընդարձակ տարածութիւն մը ունի, մէկ կողմէն միւս կողմը լաւ հրացան մը հարիւ կրնայ դնտակ հասցընել կամ չկրնար. հաստակաւոր մարդ մը

միւս եղերքին վրայ տղայի մը մեծութեամբ կ'երեւնար։ Գետը պղտոր և արընթացութեամբը սպառնական երեւոյթ մը ունէր. աւազէ կղզիներ կան իր սրտին վրայ ցան և ցիր. եթէ երկու եղերքը հաստատուն թումբերով սղմուին, նեղնան, թէ՛ քաղաքը վտանգէ կ'ազատի և թէ՛ նաւարկութիւն կըրնայ ըլլալ։ 15 մղոն անդին ջրվէժ մ'ալ ունի։

« Այս երկիրը շատ կարեւորութիւն ունի և հարստութեան աղբիւր մը կրնայ ըլլալ. պէտք է կառավարութիւնը աւոր յարգը դիտնայ. պէտք է մասնաւոր ուշադրութիւն տրուի այս երկրին։

« Իմ ճամբորդութենէս հասկըցուեցաւ որ եթէ Սամսոն մայր մի է, ազգային տեսակէտով կ'ըսեմ, Պաֆրան նորա սիներէն կախուած մանուկ մի է, որ հոգ տարուելու պէտք ունի . . . ։ »

Գաղ. կառավար. Գայմագամ. Սամսոնի Միւթասարիֆութեան ներքեւ։ Եկեղեցի Հայոց 1. Ս. կարապետ։ Վարժարան 1։ Թիւ վարժարանին եկեղեցիէն 10000 ղուրուշ։ Թիւ Հայոց 794։ Ուսանողք՝ մանկունք 81, աղջկունք 17։ Բողոք. և կաթոլ. Հայք՝ 27։ Մաղադոնծ Հայք՝ 290։

Պաֆրայի հայարնակ գիւղեր.

Ալաչամ. Թիւ Հայոց 8։

Գուլչալար. » » 86։

———

ՍԻՆՈՊ ՔԱՂԱՔ

Քաղ. կառավ. Գայնադամ. վիլայէթ Գասթամունեայ: Եկեղեցի 1. աւեր: Թիւ Հայոց 17: Ցոյնք . . . : Թուրքք . . . :

Մինոպի քով խուլուչի գեղերը: Եկեղեցի 2. Ս. Աստուածածին և Ս. Նշան: Ծաղկոց 2: Ուսանողք 60 մանկունք: Ծախք վարժ. 1200 ղուրուչ հանդանակութեամբ: Թիւ Հայոց 712:

—. Վերոյդրեալ տեղեկութիւնը խուլուչի Հայերէն քաղեցի 'ի Սամսոն:

Մայիս 9: Սամսունէն մեկնեցայ: Քաղաքէն քառորդ ժամ հեռի մեր ձախ կողմը թողուվ Գասթամունեայ գեղը ցունաց, որ պեղեցիկ շէնքեր և ծովահայեաց դիրք մը ունի: Ցառաջանալով Մախմուր տաղի լեռնէն կ'անցնինք անտառներու միջէն, և ցեխոտ, քրոտ, ուրուտած ուղիէ. երկիւղալից է մանդռանայն, այլ կարի գինապարար և զուարճալի անտառաց գարունը. ծառերը բացած են իրենց տերեւները. առուակները զառ 'ի վայր կը խոխոջեն, և թռչնոց երամը կը պայլայլէ: Այս լերան վրայ տեղ տեղ խաներ կան շինուած' գերանէ որմերով: 6 ժամէն հասանք Ձախալի խանները:

Ձախալի' գետոյն անունն է, որոյ երկու եզերքը շինուած են խաներ: Ձիրկ գներ կը

վիտային հոս, և արհաւիրք կը թափառէին։ Մենք իջևանեցանք կեսօրացի կարապետ աղային խանը։ Երեկոյեան արեւուն, մայիս ամսուն, սաղարթալից մեծ ծառի մը հովանեաց տակ, դալար կանանչներու վրայ գետեզերքը ընկողմանած էինք. այծեր ու կովերը իրենց ձագերէն քիչ մը հեռի կը նայէին հոն. ձիուընք կը կայտռէին ջրին ծոցը, պատրաստութիւնը կատարեալ էր։ Յանկարծ աղաղակ և ահռելս մը. հոն բերին ձգեցին Սեաստու Բրգնիկ գեղացի Հայ Ջօրեպան մը, որոյ ձեռքը պատառ պատառ կտրտուած էր. թրքուհի մը՝ որ կուլար, և կանաչ կապած թուրք մը՝ որ վա՛յ վա՛յ կը կանչէր։ Ասոնք մեր անցած Մախմուր լերան գոհերն էին, որոց վրայ յարձակեր էին աւազակներ, և Ջօրեպանէն երեք Ջօրի ու 6000 ղուրուշ առակը, թրքուհիէն՝ որ այրի մ'էր, իր մեռած էրկան գոյքերու գինը 1000 ղուրուշ առակը, և մեսէն ձին ու 400 ղուրուշը յափըշտակած էին, մեզմէ քանի մը ժամ յառաջ։ Սոսկալի և անպատմելի է եղեր գըրեթէ ամեն օր այս ճանապարհին վրայ այս տեսակ դէպքեր։

Մայիս 10։ Ձախալիէն մեկնեցանք, Չամլէն հասնելով Ղալախ կամ Գաւաք, այս մէկուցն է Հաճըլար տապի լեռը, ջրուէտ և անտառոտ. ծառոց արմատներուն քով բուսած բազմատեսակ բոյսեր և ծաղիկներ՝ առնուշ հոտեր և զմայլելի գեղեցկութիւնովը կը

սիրեն անոնքին. հոս տեսայ Հնանոր ծաղիկը, Մշոյ լերանց թագուհին, որոյ տեսքը նման է բազմաթերթի բոսոր վարդին, և յաւիտականացայ Տարօնոյ սարերը, ուր չատ գարուններ ողջունած էի պայծառ և փափուկ ծաղիկներով։ Հոս ցիր և ցան բնակութիւններ կան Չէրքէզներու. և թէպէտ անտառները մաքրուած են արջերէ և գազաններէ, բայց երկոտանիները անոնց տեղը բռնած են. խիստ երկիւղով կ'անցնի ասկէ կարաւանը։ Կ'երեւան տեղ տեղ ալ Թրքաց և Քուրդաց գեղերը, սոնք ալ Չէրքէզութիւն ընդուներ են։

Գաւաք՝ փոքրիկ հովտի մը բերան, հին բերդով մը, ջուրի մը եզերքը չինուած աւան մ'է, ուր Միւտիր կը նստի։ Խաներ, մանր վաճառքի, երկաթագործի, պայտառի, դերձակի և վարսավիրայի խանութներ կան, ու սրճարաններ։ Հայ բնակիչք՝ 52 անձինք, յոյնք 48, թուրք 340։ Հայք խանութպան և արուեստաւոր են, կան նաև մօտակայներէն եկած Հայեր, որք տուն չունին հոս։ Ազգապետ անուն կը կրէ Կեսարիոյ Եմիրկոցի Նազար ագան. ոչ եկեղեցի ունին, ոչ քահանայ և ոչ վարժարան։ Գաւագէն 'ի Գարատուազ 3 ժամ գնացինք. Ագ սու տէրէսի ձորէն անցանք, մացառուտ, ջրոտ, զուարճալի, ուր կան գիւղորայք Քուրդաց, Թրքաց և Չէրքէզաց։

Մայիս 11։ Գարատուազի խաներէն կա-

նուխ մեկնիլ որոշած էինք, որպէս զի նոյն օրը Մարզուան քաղաքը հասնէինք։ Արդէն իրիկուընէ ալ ապահով չէր տեղերնիս. Չէրքէզներ, Ցոյներ, Թուրքերը, որք այն կողմի բնակիչներն էին, և ոչ իւիք իրարմէ կը զանազանէին. ամենքն ալ մէկ տիպ ունէին, սոսկականք. ամենքն ալ մէկ անուն կը կրէին, գող։ Դի՛ր ասոնց վրայ նաև երամ երամ նոր սեւ թուղթ քաշած գինուորները, որ գաւառներէն կու գային և ասոնց փախստականները (ֆիրարները), որք թէ ցեղերկները անտառներու մէջը, և գիշերները չէներու մէջ զարնելու և յափշտակելու համար կը չրջին. և որք առջի իրիկուընէ եւևէջ կ'ընէին մեր իջեւանները. խանջիներն անդամ աւարտոց ընկերներէն էին։ Ասոնք գիտնալով՝ կարաւանը կարի զգուշութիւններ ըրած էր գիշերը, բայց և այնպէս խանի կռնակէն երկու գերանը հաներ և հակ մը կարմիր ներկած ընտիր մանած տարեր էին, որ կ'արժէր 24 օսմանեան ոսկի։ Կանխելու հակառակ յապաղեցաւ մեր չուն, և կարաւանը կորուստին զբաղեցաւ, մեք մեր ոտիկանով ընթացանք։ Գարատաղ լեռնէն կ'անցնինք, մացառներ և անտառներ են մեր երկու կողմն. գիւղորայք Թրքաց և Չէրքէզաց. և մեր առջեւն ու ետեւը երկիւղ։ Երկիւղ կը կրկնէ և կը յեղյեղէ ոտիկանն։— Բայց ես ձեզի հետ եմ, կ'ըսէ, անհոգ կացէք։ — Ի՞նչ կրնաս ընել եթէ աւազակներ

պան . — կարծէք պիտի դիմադրե՞մ անոնց ինչո՞վ և ի՞նչպէս կրնամ . կամ ոսոխական ինչնէ՞ս պիտի ակնածե՞ն . ոչ , ոչ . նշանացի մը կ'ընեմ , և անոնք կը հասկընան — Ի՛ մենք ալ հասկըցանք , դէ՛ քալէ . . .

Լեռնէն ի վայր գեղեցիկ ձորահովիտի մը մէջ կ'իջնանք , ուր Թրքաց գեղեր կան . Թէրսախան (Դառուր Ջուր) գետակ մը պատոյտ կ'ընէ հովտին մէջը , և ուղեւորը յաճախ անցուդարձ կ'ընէ այդ ջրէն՝ ձորոյն դիրքին համեմատ եզանչոխիկ ձեւով ներս ու դուրս պըտտտելով : Կակուղ և բարձրացած խոտերուն վրայ , Թփոց հովերը , ջրոյն եղրերը իջեւանեցանք հանդչելու , ուր ձկունք վէտ վէտ կը խայտան , և ճիկ վիկ , ճինինի ընելով զմեզ ծաղրելով կը սուլանին և կը սրանան ընդվեր և ընդ վայր : Կրակ մը վառած ենք . մեր ուղեկիցներէն մին մեզ սարեկ մը որսաց , կը խորովենք , բայց այս կրակելուդի վրայ ո՞րքան համով պիտի լինէր ձուկն . ահա կու գան Թրքաց լատուկները դոմչներու նախիրով , ջը լեցուին ջուրը , պատիկ հօտաղները մերկուց կպած են դոմչներու կռնակը . դոմչները փռնչելով մրա մրա ձայնելով կը թաւալին ի ջուր . հօտաղները կը չինեն անոնց խոնջեալ պարանոցը , քրտնած ճակատն ու պոչատակը . կ'աղաչենք , ստակ ու շաքար կու տանք լատուկներուն , որք կը համին քանի մը ձուկ բռնել , անմիջապէս կրակին վրայ կը ձգենք : Յայնկոյս գետոյն գեղին ոչխարները

ին կը հաւսին. Ջերմ ու թարմ կաթն բերնէդ հոս տանք, և այսպէս հաճադամ կերը մը կ'ուտենք, որոյ համը միայն անունը գիտեն, որ այսպիսի երջանիկ պատեհի մը պատահեր են։

Երեք ժամ վայելեցինք այս քաղցրութիւնը, և ելանք։ Կը հանդիպինք ուղտերու և էշերու բեռնարարձ կարաւաններուն։ Ուղտերը իրենց երկայն ու բարակ պարանոցները յայս և յայն տատանելով հըռ ու մըռ ընելով, որոճալով, և էշերը իրենց կարճ պոչերը արագ արագ ճօճելով, միաձայն դռնչականութեանց օրէրա մը կը հանդիսացընեն, որով կարծես Սպողոնի քնարի նախանձը կը շարժեն, ի՞նչ էր արդեօք ուղտուց և իշոց այս ցոյցերը, բոզո՞ք մի էր մարդոց բռնութեանց ու բեռնարարձութեանց դէմը, թէ հաճոյք մը՝ մայիսին և այն վայրաց դալարներէն ու ծաղիկներէն, զորս առատ սփռած էր դարուն ձորոյս մէջը։

Ղավղայ աւանը՝ մեր ճանապարհէն քիչ մը վեր յաջակողմն կ'երեւի, ուր հանքային ջրոց բաղանիքներ կան, հիւանդներ և կբօսասէրներ կը յաճախեն հոն. չէնքով շնորհով տուներ և խաներ կան։ Ցանկարծ սեւ ամպեր սքօղեցին մեր պայծառ արեգը, որոտմունք և կայծակունք արագ արագ կը յաջորդեն իրարու. մեր երկու կողմը լեռներ են, և կիրճի մէջն թէ րոսախանը կը խաղայ. Ջրային անձրեւ մը փոթորիկով մէկտեղ բռնեց մեր վրայ, թաւմեցաւ, ինկա-

մեր ճաշակած քաղցրութիւնը։ —Է՛հ, այսպէս նախանձոտ է երկինք հողածիններուն համար։ Երեկոյեան ժամ 12ին հասանք Եմպէլօղլու խանը, բայց խիստ անհանգիստ անցուցինք այս գիշերը. պատուհանները բաց, և չէնքը քայքայեալ, Զէրքէզներն ալ խմբովին եկեր էջ կ՚ընէին։

Մայիս 12. դաղարած էր մրրիկն ու անձրեւ, պայծառ արեւով մը ճամբայ ելանք. այս խանէն մինչև Մարզուան 2 1/2 ժամ է։ Ահա կը տարածի մեր առջեւը Մարզուանու դաշտը իր ընդարձակութեամբ և գեղեցկութեամբ. հեռուանց կ՚երեւի մեզ Մարզուան քաղաքն իր այգեստաններով. դաշտի արտորայք մշակեալ են և կանանչներով գեղեցկացեալ։

Այգեստանեայց միջէն անցնելով՝ բուն քաղաքը կամ թաղերը հասանք, որ բացակայ չինուած են այդիներէն. դիրքը յենած է լեռան մը և քիչ մը բարձր դաշտէն. օդը խիստ առողջարար, ջրերն առատ և պաղորակ։ Իջեւանեցանք Առաջնորդարանը։ Տեղով և չէնքով նշանաւոր է Հայոց եկեղեցին ու վարժարանը։ Առաջինը՝ Ցակոբոս Պատրիարքի չինել տուածը, երկրորդն՝ Գէորգ եպիսկոպոսին, իրենց Առաջնորդութեան օրով, չափով և ձեւով ընդարձակ ու վայելուչ. եկեղեցին՝ Պօլսոյ Մայր եկեղեցւոյն նման է, վարժարանն ալ իր արեւելքը պարտէզ մը ունի։ Աւելի նշանաւոր է Ամերիկացի միսիո-

նաթաց նոր չինել առաջ Աստուածաբանութեան՝ և աղջկանց վարժարաններըը, ուսման ու բարեկարգութեան մասին համբաւաւոր։ Կայ և մի տաճար ու վարժարան կաթոլիկ Հայոց։ Քաղաքի մէջն է հաստատուած մեծ ժամացոյցի աշտարակն, որոյ զանգի ձայն բնակչաց ամեն կողմը կը հասնի։

Հայք չերմեռանդ են իրենց եկեղեցւոյն, ամեն կիրակի առաւօտ և երեկոյ քարոզ մտիկ ընել կ'ուզեն, և ամեն օր եկեղեցի կու գան. բազմութիւն կը լեցուի բուն տաճարը և անոր աջ ու ձախ կողմի գաւիթները. կիրակի ցերեկներն ալ Ս. Գիրք կը բացատրէր եկեղեցւոյ մէջ՝ Եղեսեան Գրաբար զանէն նոր ձեռնադրուած Բաղիշեցի Մուշեղ վարդապետ Չայկունին՝ բողոքականաց դրութեան հետեւելով. սորա ձեռքի տակ ընկերութիւն մի կայ պատանեկաց և երիտասարդաց, Պաշտպան կրօնի և ազգութեան անունով. յառաջադէմներ, պատանիք, ճառեր կ'արտատանեն բերնով կամ գրով, բարոյականի և ազգ. պատմութեան վրայ. մէջ ընդ մէջ ալ երգեր երգել, ես չկրցայ հասկնալ ոչ այս ընկերութեան խոշոր ու անպատշաճ անուան, ոչ վարդապետին և ոչ աշակերտաց բանաստեղծութեանց ձեւոյն. թէպէտ կ'ըսէին. «Մենք այս միջոցով առաջքը կ'առնունք մեր ժողովրդեան երկու սեռին ալ, որ կիրակի օրերը կ'երթան բողոքականաց վարժարանը բան լսելու»։ Աղէ՛կ, բայց դեռ կ'երթային և ալի-

ոմն երթան անոնք որ ոչ ձեր ըսածէն և ոչ բողոքականաց քարոզածէն բան մը չեն հասկանար, և անոնք՝ որ անդին ծուռ չիտակ բան մը կը հասկընան, իսկ ասդին՝ երբեք։

Թէպէտ զանգակ մի և նոյն ժամուն մի և նոյն ձայնիւ կը հնչէ երկու կողմանէ, բայց մի և նոյն բաներ չեն, և մի և նոյն արդիւնքը չունին։ Մեր պատանեակները կը խօսէին իրենցմէ վեր և անծանօթ իմաստասիրութիւններէ։ Խօսք մը՝ երբ խօսողն չհասկընայ, լսողին ի՞նչպէս հասկըցընէ։ Այն ինչ բողոքականաց խօսողները երէց են կամ քարոզիչ, և յատուկ ուսումն ունին ու պատրաստութիւն կ'ընեն խօսելու նիւթոյն վրայ։ Պաշտպան վիճելէն առեալ՝ ես կը վստահէի պաշտել դիտնային կրօնքն ու ապդութիւնը. լաւագոյն էր փոխանակ բանիւ և ձեռով նմանելու՝ հոգւով և գործքով պերազանցէին բողոքականներէն. առեալ այժ տալով դասախարակութեան և լուսաւորութեան։ վարդապետն ալ միայն ժամերգութեան ժամուն քարոզութիւն ընէր, բայց վինարար և խաղաղարար քարոզութիւն, յայնժամ ոչ էր միտք չէր մնար մեր կրօնին և մեր պշտօնեան պաշտպանութիւնը ապատել այդ վրդովիչներէն, խակ պատուղներէն, որոց պղտութիւն ալ կը վատի ու կը թորբորէ առելութեամբ։

Արդէն այս քաղաքը բողոքականութիւնն ամեն տեղերէ աւելի ճարակ գտած է. արտասուոտ աչօք կը նայի մարդ այս Հայը

և այն Հայը, այս եղբայր և այն եղբայրը, այս գաւակը և այն ծնողքը, քացախած իրարու դէմ, արդէն վիատիկացած բողոքական Հայն ալ, բուն Հայն ալ: Ա՛ւ, շատ քիշեր ունայ Հայ Քրիստոնեայ... այս մասին երկու կողմն ալ մեղադրելի են: Մի՞թէ Պօլիս կամ ուրիշ քաղաքներ բողոքական չկա՞ն: Ա՛յսպէս Մարզուանցի մեր ազգայինք՝ մանաւանդ կանայք, որ աւելի ջերմեռանդ էին ուսնկնդրութեան, կրօնական մթին երեւոյթներով և երեւակայական գաղափարներով պաշարեալ ունայ. հրապարակախօսութեանց և առանձնախօսութեանցս մէջը յորդորեցի պիրեանք՝ ժամանակիս ոգին ճանչնալ, քաղաքակրթութեան հետեւիլ, ազգային և գիտութեան գաղափարաց յարիլ, սիրել Քրիստոս և անոր սուրբ Եկեղեցին իրենց առաքինութեամբ փառաւորել, հաւատոյ պտուղներով, խրախուսեցի այդ ընկերութիւնը, որպէս զի բերել տան և ընթեռնուն ուսանելով Ազգաց պատմութիւնները, պարբերական հանդէսներ և լրագիրները, և արուեստից ու գիտութեանց գիրքերը, նախանձաց մատենագրութիւնները, եւ, եւ. ու ընթերցարան մը բանան հաւատակից համար, որոյ օգուտը մեծ է,

Մանրապէս գայթակղեալ և զրդռեալ էին Եդեսեան Արքազանին դէմ. կ'ըսէին. Խռովասէր է, ամեն նոր իրաց վրայ 'ի դէպս և յանդէպս խեղկատակել իրեն հա-

ճոյք հաւատած է. թէ՝ խիստ անվայել վարմունքներ և խօսքեր ունի, թէ՝ ևս, ևս, քայց եղեսեան Արքազանը ո՞վ չիճանչնար։

Ընկերութիւն մի ևս կար Հայ ազկնոյց, Ադապեան անուանով, որոց պարագլուխն էր տիկին Մ. Պարսամեան, քանի մը տարիէ ի վեր կազմեալ և բաւական դումար պատրաստած, որոց նպատակն էր Պօլսէն ձեռագործի և ուսմանց համար վարժուհի մը հրաւիրել և աղջկանց վարժարան մը բանալ։ Ուրախ եմ ըսելու, թէ վերոգրեալ տեղեկացայ որ տուրքեր և սկսեր են։ Ահա արժանի գովեմեան գործ և գործողք։

Իմ տեսածս աղջկանց վարժարանն արդեանոց մի էր եկեղեցւոյ դրան հանդէպ, հին և անկանոն չէնք մը, որոյ ներքին յարկին մէջը 15ի չափ խիստ փոքրիկ աղջկունք և մանկունք խառն, քերականն, հնչարանն կ'ընթեռնուին. այր մարդ վարժապետ, ոտքը բարիկ, փայտ ի ձեռին, Փալախանք մէջտեղ։ Այս՝ իրեն պատրաստեալ վիճակն էր, որուն իմաց տրուած էր կանխաւ մեր այցելութիւնը։ Մանկանց մեծ վարժարանին նոխտրահներու մէջն ալ փայտ և Փալախայ տեսայ, և այսուհետև պրելիքս ամեն տեղերու վարժարանները թէ պրեմ թէ չպրեմ, պէտք է դիտնալ թէ այս տանջանարանները կան ու կան. և ամեն տեղ կ'ատիպուէի ծանր դիտողութիւն ընել վարժապետաց թէ՝ թոյլ ալ փայտով դաստիարակեալ մանուկն մարդ

չէր լինիր, և թէ՝ ինչ էր իրօք կրթութիւն տալու կերպն։ Իսկ վարժապետները ով կրթէր։

Հասարակ ընթերցանութեան դասագրքերը խառն՝ իրարու էին. մէկը գրաբառ աւետարան, միւսը՝ բողոքականաց աշխարհաբառ աւետարան, սա՝ հին աշխարհագրութիւն մը, նա՝ գրաբառ Ս. Գրոց պատմութիւն մը, եւն։ Աշակերտքը դասընկեր ընելու և ընթերցարանները միօրինակութեան վերածելու դիտողութիւններ ըրի, զոր ընդունեց հոգաբարձութիւնը և յուսացուց գործադրել։ Սոյն վարժարանի տեսուչն էր վերոյիշեալ Մուշեղ վարդապետ. և այս մեծ՝ այլ խեղճ վարժարանը ինչ անցեալներ ունեցեր էր...։

Հայոց ազգ, քեզ երկու թեւ պիտոյ է աղաւտութեան բարձունքը թռչելու բարձրանալու համար. ՎԱՐԴԱՊԵՏ և ՎԱՐԺԱՊԵՏ. մեծերը առաջնորդելու, մանուկները դաստիարակելու.... Ամեն տեղի համար այս երկու պակասը կայ։

Գաղաքին չէնքերը հոգաչէն են, քարակերտ քիչ կը գտնուի. Աւետարանը յաջողակ է. ուրախութեամբ տեսայ որ գրեթէ ամեն տներ մանիսա կը գործեն և օր ըստ օրէ կը յառաջանան ալենու տեսակներ արտադրելով. արք և կանայք կ'զբաղին այս արհեստով, և թէ՛ քաղաքացիք թէ՛ գաւառացիք այս մանրաներէն կը հադնին. յառաջուց՝ ի վեր արդէն ծաղկեալ է եղեր հոս այս արհեստը,

և երբեմն մեծ քանակութեամբ Թրիմ կը տանին կը վաճառեն եղեր. բայց ասոնք գործելու համար դերձաններըը Եւրոպայէն կը մանուին, կը ներկուին և կը բերուին, որ բաւական մեծ դումար մը կը տանի երկրէն։ Տեղական պիտոյից համար ամեն տեսակ արուեստներ կան քաղաքիս մէջ. աւելի նշանաւոր է պղնձագործաց արուեստը։ Բոլոր արուեստաւորը Հայերն են։

Մարզուանցիք շատ առատ գինի կը հանեն, և աղէկ տեսակէն, բայց վաճառելու սովորութիւնը չունին. ամեն տուն իր յատուկ գինետունն ունի ներքնայարկ, ուր զետեղուած են մեծամեծ կարասներ, և անպակաս կը մատակարարեն տարուան ամեն օրերը՝ սեղանի բաժակներ ու սափորները, ուր խորովածն աժան է և անուանի իր համով, արդէն օդն ու ջուրն ալ ընտիր, ուստի Մարզուանցիք առհասարակ կարմիր երես, կայտառ և գուարթ անձինք են։

Բնակչաց կենցաղավարութիւնը խորին ասիական է. կանայք պինդ պինդ փաթաթուած գլխէն մինչև ոտքը, բայլաց ոտները բոբիկ. բոբիկ են և արք. կանայք՝ մարդոց հետ չեն խօսիր, մարդէ կը խուսեն, և փողոցը եղած ատեն ձերմակ սաւան մը կամ կիսաքօղ մը կը կրեն, այնպէս որ աչքերնին ալ ծածկէ. չրջապտոյտ կանանց և կարճապտոյտ արանց կարի քիչ կայ։ Տուներու մէջ աթոռ, պրաւղան ևս չեն գործածեր, այլ

բազմոցներու վրայ կը բազմին, և պղնձէ սինիներու չուրջը կը բոլորին 'ի կերակուր։ Առաջնորդարանն իսկ դրասեղան և աթոռ չը կայ. ամեն ոք իր գիրը ծունկի վրայ կը գրէ։ Հիւրասիրութիւն չատ ունին. մեզ համար ամեն օր քանի մը անգամ քանի տուներէ բազմատեսակ կերակուրներ, և կաթ և սեր, և կարագ և մեղր, և սափոր սափոր գինիներ կը ղրկուէին. ղրկողներն ալ ներկայ կը գըտնուէին հացկերոյթին։ Այս սովորութիւն էր գրեթէ հայաբնակ ամեն գաւառները։

Եկեղեցւոյ և վարժարանին յատկացեալ կալուածները՝ որոց մեծագոյն մասն ներկայ Թաղ. Խորհրդոյ գովելի ջանից արդիւնքն է, հետեւեալներն են. 16 խանութէ կազմեալ սէղէստուն մը և 28 այլ խանութ և 3 տուն Մարղուանի մէջ, ու խան մը Գ. ավզայի մէջ։

Դիտողութիւն պէտք է ընել, որ սոյն կալուածներուն՝ ազգային անհատներէն ումանց անուան վրայ կալուածագիր չինուածն են, և սոքա՝ ապահովագիր անգամ տուածչեն ազգին, թէ և իրենք վինին հաւատարիմ անձինք։ Այս կերպին չատ տեղեր հանդիպեցայ։ Պատրիարքարանի Տնտես. Խորհրդոյ դործն է կարծեմ ապահովել Ազգային սեպհականութիւնները։

Մարղուան քաղաք. կառավարութիւն գայմագամութիւն է՝ Ամասիոյ Միւթասարիֆութեան ներքեւ։ Եկեղեցի 1. Ս. Աստուածածին։ Վարժարան 1. Ս. Սահակեան։ Գախք

վարժարանի 22620 ղուրուշ։ Ուսանողք 328 մանկունք, 30 աղջկունք (1)։ Թիւ Հայոց 6498, որոցմէ 481 Մաղադոցք (բօշա) են, և 481 Բողոքական ու Կաթոլիկ։ Ցոյնք 38։ Թուրքք 6874։

Հայաբնակ տեղք և գեօղք Մարզուանու։

ՂԱՎՋՈՑ Ա. Ան. Թիւ Հայոց 75։

ՍԻՄ—ՀԱՃԻ ԳԵՂ. Ա. Ան. Եկեղեցի 1. Ս. Յակոբ։ Վարժարան 2. Պարթեւեան և Հռիփսիմեան։ Ծախք վարժարանաց 4000 ղուրուշ։ Ուսանողք՝ 160 մանկունք, 60 աղջկունք։ Թիւ Հայոց 2317, որոցմէ 62 Բողոքական են։ Թուրքք 6765։

ԿԻՒՄԻՒՇԻ. Իբր Ա. Ան, մօտ Հաճի գեղին, ուր արծաթի հանք կը բանի։ Թիւ Հայոց 107, որոցմէ 25 Բողոքական են։ Ցոյնք 1800։ Թուրքք 2200։

ԱԽԼԱՏ ՀԱՃԻ ԳԵՂ. Ա. Ան։ Եկեղեցի 1. Ս. Գէորգ։ Վարժարան 1։ Ծախք վարժարանի 1000 ղուրուշ։ Ուսանողք 10 մանկունք, 5 աղջկունք։ Թիւ Հայոց 197, որոցմէ 80 Բողոքական են։ Թուրքք 800։

ԵՆԻՃԷ ԳԵՂ։ Եկեղեցի 1. Ս. Ծարգիս։ Վարժարան 1։ Ծախք վարժարանի 1000 ղուրուշ։ Ուսանողք 18 մանկունք, 8 աղջկունք։ Թիւ Հայոց 116։

---

1 Բողոքական և Կաթոլիկ ազգայնոց ուսանողաց թիւերը նշանակուած չեն մեր տեղեկագրութեան մէջ

ԼԻՃ ԳԻՒՂ. Տաճկերէն կէօլ կամ գէօլ *ես*, ուր վանքն է եկեղեցին: Վարժարան 1: Ծախք վարժարանի 800 ղուրուշ: Ուսանողք 12 մանկունք, 8 աղջկունք: Թիւ Հայոց 92, որոցմէ 10 Բողոքական են: Թուրքք 71:

ԼԱԹԻԿ ԳԻՒՂ. Եկեղեցի 1. Ս. Լուսաւորիչ: Վարժարան 1: Ծախք վարժարանին 800 ղուրուշ: Ուսանողք 18 մանկունք, 7 աղջկունք: Թիւ Հայոց 180: Թուրքք 1200:

ԵՄԸՄՃԷ և ԿԷՉԷԼԻ մանր գիւղեր, մօտ Լաթիկին: Թիւ Հայոց 59: Ցոյնք 100:

ՎԷՋԻՐ ՓԷՕՐԻԻ Ա. ան: Եկեղեցի 1. Ս. Գէորգ: Վարժարան 1. Ս. Սահակեան: Ծախք վարժարանի 2000 ղուրուշ: Ուսանողք 80 մանկունք: Թիւ Հայոց 1280, որոցմէ 125 Բողոքական են, և 280 Մաղապործք: Ցոյնք գեղերով հանդերձ 775: Թուրքք՝ գեղերով հանդերձ 23682:

Վերոյգրեալ գեղեր և աւաններըը՝ Մարզուանու և Ամասիոյ միացեալ Առաջնորդութեան թէմերն են, նոյն Առաջնորդութեան թէմին են նաև Սամսոնի, Պաֆրայի և Սինոպի և անոնց գիւղերէից Հայերը, և Գաստամոնի, Պոլուի, եւն: Առաջնորդը Մարզուանու վերջ Զարեհ վարդապետ Ս. Աստուածածնի վանքը կը նայի. ուստի մեք իրր կեդրոն բռնելով զայն՝ հոս նշանակեցինք այս գեղերը: Եւ որովհետև վիճակիս Հայոց թիւերը ամբողջացընելու հա-

մար սէտք էր Գասթամոնի և իր մերձակայից Հայ բնակիչքն ևս գրէինք, նաւոնկ գրեցինք Իշխան քաղաքի Թաղականաց, և վիճակագրութեան հարցումներ ուղղեցինք, որ հասցընէին մեզ Ամասիա. գժբաղդաբար չստացանք:

Ոչ վանքը և ոչ Ամասիոյ Առաջնորդարանը չունէին ցուցակ մը, ինչպէս չունէին նաև կանոնաւոր արձանագրութիւններ և տուարներ, ուստի միայց պակաս այս կարեւոր մասն: Վէպիր քէօփրիւէն մինչև Գասթամոնի կը տարածուին Հայ մաղաղրծաց բնակութիւնները, և իրենց կեդրոն կը համարուի Պօյպատ: Ասոնք գարնանէ մինչև ձմեռն կը սփռուին գեղեր և քաղաքները մինչև Սեւաստ. միայն ձմեռը իրենց խրճիթները կը քաշուին: Մաքուր Հայերէն կը խօսին. ջերմեռանդ են եկեղեցեաց, եկեղեցականաց և եկեղեցւոյ օրինաց. Ս. Ե. բուսագէմ ուխտի երթալ և մըղոլսի լինելը իրենց բարեպաշտութեան լրումն է, կարդալ գրել չգիտեն, բայց բաւական հարուստ են: Չեն նմանիր այն աղտեղի և անարգ գնչուներուն, որ Հայ չեն. շնորհքով հագուստ ու ասլրուստ ունեցողներ կան. բայց Հայերը ասոնցմէ աղջիկ չեն առնուր ու տար. իրենք իրենց մէջ իրրև առանձին ցեղ մը կը մնան. ասոր համար անվերջանալի վէճեր ունին աղջիկ նշանելու, և մեծամեծ գումարներ կը մսխեն թէ՛ հոգեւոր և թէ՛ մար-

Հիւսուր ատեաններըը . իրենց մեծ ընծայն , ինչպէս նաև օժիտ , խոշոր էշեր և ջորիներ են . ասոնց ցեղէն եկեղեցական չեն ընծայուիր , չգիտեմ եկեղեցին խարած է թէ իրենք գիրենք . . . :

Պոյպատու Մաղագործ Հայոց թիւը 6—7000 կը հաշուէին , 'ի բաց առեալ ասոնք որ այլ և այլ քաղաքաց և գիւղից մէջ բնակութիւն հաստատած էին :

ՄԱՐԶՈՒԱՆՈՒ
ԶԱՐԹԱՓԱՆ Ս· ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՎԱՆՔ

Մայիս 15 : Քաղաքի Թաղ· Խորհրդոյ Ատենապետը և անդամներէն քանի մը անձինք միատեղ առնելով գնացինք այս վանքը , որ Ամասիոյ ընդարձակ վիճակին մէջը միակ վանք է , ուր կը նստի Թէմական Առաջնորդ , հոս կը յաճախեն գրեթէ ամեն չաբթու ուխտաւորք Մարզուանէն և այլ թէմերէն , և որուն հռչակը մեծ է ոչ միայն իրրև հրաշալի սուրբ ուխտ մը , այլ և ճոխ , չէն և ընդարձակ հողատէր : Վանքը շինուած է դաշտավայրի մէջ , Լիճք գեղի մէկ անկիւնը , օղը ծանր է բաղդատմամբ Մարզուանին , ուստիոյ 3 քառորդ ժամ հեռի է . կը շրջապատեն վանքը իր գեղեցիկ և արգաստաբեր արտորայք , որ 52 կըտոր են , որոց հաստատուն կալուածագրեր կան եղեր , բայց մեք անոնց օրինակները միայն տեսանք արձանագրութեան մը մէջ , Հո-

ղերը դէղացւոց կիսրար տուած են, սերմն ու ջուրն ալ վանքը կու տայ, մնացեալ բոլոր աշխատութիւնը դէղացին կ'ընէ և արդիւնքը կը կիսէ. Գօլոց 2000 քիլէի չափով սերմնատու է արտերու տարածութիւնը, և բոլոր գաւառի մէջ գոհուածէն ընտիր. կը հաւաստէին թէ տարեկան 25—30000 դուրուշ վարձք տուող կայ արտերուն, բայց չեն յանձներ, այն ինչ իրենց հնձածը խիստ անբաւական է:

Վանքին հիւսիսակողմը կ'իջնայ դրախտը զոր Խոս պղէց կ'անուանեն, երբեմն բարգաւաճ ուչէն, իսկ այժմ աւերակ և խոպան, չատ թթենեաց տեղեր կ'երեւան, որոց ծառերը կտրուած են, և ընդարձակ չերամնոց, որոց աւերակը ցոյց տուին: Դրախտիս մէջը կայ գեղեցիկ աւազան մը առատ ու մշտահոս ջրոյ, որ ծառերը և ածուները ոռոգելէն գկնի կ'երթայ թաւիլ վանքի պարտէզն դուրս յարեւելս եղած մեծ աւազանը կամ լիճը, ուր մեւս աղբերաց ջրերը և Լոյս աղբիւրը կը լճանան, և վանքի արտերուն ջուր կը բաշխեն: Վանքի բակէն դրախտը երթալու համար դռնէ մը կը մտնես, ուր աւերակաց կոյտ մը աչքիդ առջեւ կու գայ, որ խոտոտոյց ընդ աւանովք, որ չորեքկուսի կրկնայարկ սենեակներ են եղած, առնքն ալ փլած, միայն բակին կողմը 3—4 սենեկաց կմախքներ դեռ կը կենան, բայց անգործածելի. վասն զի որոց առաստաղը չկայ, որոց դերանները հան-

ուած , որոց պատը չկայ , որոց տանդուխները բեկբեկած , եւ : Վերոյիշեալ աւերակաց միջ ընդարձակ չինքի մը վրատակ եւս կայ որ անառնոց գոմ է եղած , որոյ մէկ կողմն է մարտզ , տակը ալ պատերէն մէկը վրած , եւ աղբիւր մը այս աւերակաց մէջ՝ ցամքած : Կը հաստատէին ցաւոք որթի մէջ այս ամեն տըխուր եւ ցաւատիպ տեսարանը տեղի ունեցած է տասն տարիէ հետէ , Եղեսեան Սրբազանի առաջնորդութեան ոչ անհոգութենէն , այլ յատուկ հոգատարութենէն :

Դուռ քաղէ մէջ երկու մեծ դռներ կը բացուին դէմ առ դէմ , քանի մը սենեակներ կան մէկ կողմը , բայց անբնակելի վիճակի մէջ . հոս է վանքին չտեմարանոցը բաւական ընդարձակ , որոյ մէջ դնտեղուած են հինգ կտոր տախտակաշէն մեծ , և երկու կտոր մեջական սեղանատներ ցարեանոյ , գարուոյ և ալիւրի : Չտեմարանոցի հանդիսոյ է ձիերուս տխուն , որոյ դրան քով կը հոսի աղբիւր մը :

Քարաշէն ցած դռնոյ մը կը մտնենք ներսի բակը , հոս է վաթսուն անուանոյ ցած և փոքր չինք մը , ուր տակայն հետք անգամ չկայ վարժարանի . կ'ըսէին՝ Եղեր է երբեմն Ասոր կից է Մատանի եմիանոյ սենեակ . վարժարանին դիմացը՝ Նաղդէի (տեսչի) սենեակ : Այս բակը՝ որ խիստ անձուկ է , փոքր դըռնով մը կը տանի Նկեղեցւոյ բակը , ուստի յարեւմուտս կը մտնենք Միաբանից թաղը , որոյ խուցերը չինուած են փոքրիկ պարտեզի

մը չուրջ. այս թաղը կը բաղկանայ տասն սենեակներէ, մէկ խոհանոցէ եւ մէկ սեղանատունէ. ունի նաեւ երկու սենեակով Առաջնորդարան մը վերին յարկը: Այս թաղին մէջն էր թանգարանի սենեակ, յորում գրքատուն մը, այլ դրքերու վիճակը եւ սենեկի անկարգութիւնը աննկարագրելի էր: Այս սենեկի դարաններու մէջը անտուկով կը պահուէին եկեղեցական թանգ անօթներ եւ զգեստներ: —

Այս ամեն չէնքերը հուժ աղիւսով եւ հողով շինուած են, գրեթէ բովանդակ չէնքը խարխալեալ. կարծես թէ երկար ատեն մարդ բնակած չէր էր հոս, այլ սակայն Եդեսեան Սրբազանի Աթոռն էր սա, և Ն. Սրբազնութենէն ձեռնադրուած Մաղբրէ եւ Մուշեղ ուսումնական վարդապետներ այս վանքին միաբան էին, և 40 տարիէն աւելի միաբան: Մաղերով այլ ոչ երեսով ճերմակ՝ ծօհ. վ. Մ. Յակոբ Քիրիշճեան անունով մէկը ամենականով կարգեալ էր տեսուչ՝ Ամասիոյ գաւառական վարչութենէն, և Մարզուանցի Քիրամիտճեան Յակոբ աղան՝ հոգաբարձու: Թէպէտ ես չը կրցի ճշդիւ հասկընալ թէ տեսչի պաշտօնն ի՞նչ էր, հոգաբարձութեանը ի՞նչ, այլ կը թուէր թէ այս վերջինն վերին տեսչութիւնը կը վարէր: Ասոնցմէ զատ կային 3 մշակ, 1 լուսարար, և 1 1/2 անտես:

Տեսչի ձեռքն տակն էր իրր թէ ամեն ինչ. բայց ինքը գիտեր ու կ'ընէր ոչինչ: Երբ

գրքերու ցանկն խնդրեցինք և կ'ուզէինք հետաքննել ձեռագիր գրեանքն, հարկ չեղաւ տեսուչն, ըսելով թէ՝ չատ գիրքեր պակասած են։ Հարցուցինք թէ ի՞նչ և քանի՞ անուններ ունի վանքս։ Ղրկեց երկու գեղացի և երկու մշակ կանչեց, հինգ հոգւով ատան ձեռաք հաշուեցին հաշուեցին, հազիւ պատն 6 գոմէշ, 15 կով ու եզն, 1 ձի և 1 էշ։

Ձեռք մը եպիսկոպոսական ընծիր ըզգեստ մարգատայեա՝ Պուղտաճեանի յիշատակ, տեսչի հսկողութեան տակն էր. թագին մալպարիտները հաներ էին, և ինքն չէր իմացեր։ Արդեօք ո՞վ էր հաներ փականքներու տակէն. ոգինե՞րը . . . ։ Մեր հարցասիրութին ներկայ էր նաև Հոգաբարձուն. սակայն չէր հաճեր պատասխան տալ, և իր խորհրդաւոր լռութիւնն՝ կամ տրհատարհանք մի էր, կամ ինքն ալ տեղեկութիւն չունենալը կը նշանակէր, գուցէ վերջինն էր ատոյգ. վասն զի մեզի չափ ինքն ալ զարմանօք կը դիտէր ու կը հետաքննէր մանաւորապէս եկեղեցւոյ զգեստներ և անօթները, որոց մէջ չատ մը արծաթէ և ոսկիէ խաչեր, սկիհներ, բուրվառներ, սաղաւարտներ, աւետարանի կողեր, խնկանոցներ, կանթեղներ, պաւազաններ և գօտիներ նաև թանկագին թաւիշէ մարգարտայեռ ու ոսկեթել զգեստ եպիսկոպոսական, և ճղակ թագեր, ևն, կային։

Վանքիս Ս Տաճարն քարաշէն է, կամարակապ, չորս սիւնի վրայ։ Ուսագ խորանն յա-

նուն Ս. Աստուածածնին է, Ա. Քահոզմեանը՝ Ս. Լուսաւորչին, և ձախակողմեանը՝ Ս. Նշանին: Երկու փոքր մատուռ ալ ունի երկու կողմը՝ դռներէն երեղեցւոյ մէջէն, մին՝ յանուն Ա. Նըրէսա Ա. Թաքեղոյն, զոր հիմնուած կ'աւանդեն նոյն Ա. Թաքեալէն, և ապա նորոգեալ նորա անունով. հոս կը պահուի Ա. Ձէռնեալ Ս. Ա. Թաքեղոյն. իսկ միւսը՝ յանուն Ս. Կարապետի է: Տաճարիս դրան կողմն է վերնատուն կանանց:

Եկեղեցւոյ Ա. Թոռն՝ ուր Ա. Թաքնորդն կը թաղի, կոնակին վրայ խոշոր գրերով գըրուած է. «Հնազանդ լերուք Ա. Թաքնորդ ոց ձերոց և հպատակ կացէք նոցա»: Ժողովրդական պատուէր, զոր քահանէն կ'աւանդէ Ա. Թաքնորդն և իր աշօք կ'ընթեռնու ժողովուրդն: Իսկ ո՞ւր պէտք էր գրել ուրիշն Ա. Թաքնորդին վերաբերեալը. «Ա. Թածնցէք որ՝ի ձեզ հօտ է Ա. Աստուծոյ. ոչ՝ զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ. ոչ՝ իրրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին...» (Պետ. Թղ. Ա. Գլ. Ե. Հմբ. 2.). որպէս զի յաւիտեան ժամ ընթեռնոյր և՝ի միտ առնոյր Ա. Թաքնորդն ալ իւր պաշտօնին պատուէրը:

Ս. Տաճարի դրան ճակատին վրայ քանդակեալ կայր յիշատակագիրս:

«Զար Խաչիան վանքս Ա. Աստուածածնի,
«Նախահիմնեալն Ա. Ղազարի,

« Յաւազակաց այրեալ քակի ,
« Մնայ յիսուն ամ առայի .
« Ի Լինոպոնդեայ գաւառի
« ՅԱմասիոյ հուպ նահանգի ,
« Ի վեհոյ արձակ դաշտի ,
« Եւ ի գեղջն որ Լիճ ասէ .
« Ի տեսչութեան արհեստ դիտի ,
« Տէառն Յովհաննու վարդապետի .
« Երբեմն Պօլսոյ Պատրիարքի ,
« Պաղտատցի մականուանողի .
« Այն որ զթածն է ողորմի ,
« Շինման տորին հրաման լինի ,
« Զգուշութեամբ ոկսանի ,
« Ի հիմանէ նոր նորոգի ,
« Փայլ ծերուներաց վերակացուի ,
« Յիշատակ մեծ յետ թողանի ,
« Առատ արուեք իւր վիճակի ,
« Յոլով ջանիւք Հայկայ սեռի ,
« Ի մեր Հայոց թուականի ,
« Գաան և չորս յօբելինի . . . » :

Ս· կարապետի մատրան առջեւ , քակին մէջն է յիշատակեալ Պաղտատցի Յովհաննէս եպիսկոպոսին չիրիմը , և անոր քով՝ « Մուննեաց Օրբէլեան տոհմէն , Ս· Էջմիածնի նուիրակ , և կ· Պօլսոյ Պատրիարք Աբրահամ եպիսկոպոսի » չիրիմն ։

Վանքին պարսպէն դուրս տնկուած կան չատ մը ուռի ծառեր , նորերը՝ եղեսեան Արտապանի օրով . կան նաև կաղամախի և չատ մը ընկուզի ծառեր ։ Օղի ապականու-

թեան պատճառն է ոչ միայն վանքի դիրքը, այլ և մեծ լճի ջրից երեսի և եղերաց մառուներու ներխուժեան հոտը, ներքին և արտաքին բակերուն և շրջապատին աղտոտութիւնները, չէնքերու անկանոնութիւնը, մանաւանդ միաբանից թաղին, որ օդ առնելու տեղ իսկատ քիչ ունի, և աննդեան անկանոնութիւնն ու նուաղութիւնը:

Երկու այդի կայ վանքին՝ Մարզուանու այգեստաններայց մէջը, մին՝ 3600 որթոյ կոճով, միւսը՝ 4000, բայց առնք կալուածատիր չունին: Հարիւրէն աւելի փեթակ ունին, մեղրն ու մոմն ընտիր:

Կայ նաև ընդարձակ արօտատեղի մը (եայլա) ամառնական, վանքէն չորս ժամ հեռի Տավշան տաղին կամ Խաչին լեռը. արօտատեղւոյն շրջապատը 5 1/2 ժամ է. այժմ ձգուած երեսի վրայ, ուր այլ եւ այլ իրենց խաչինքը կը բուծանեն և տեղւոյն կը տիրանան, Խաչի լեռը՝ անտառոտ, ջրաւէտ և ծաղկաւէտ է. ուխտ և խորհուրդ ունեցողները յաճախ կ'երթան հոն. ջրերու մէջ խաչեր կան ձգած. որուն որ պատահի հանել նոյն խաչերէն մէկը, անոր ուխտն ու խորհուրդը կատարուած է: Կարի գրօսալի և հովասուն կը նկարագրեն այս լեռը. ուր գաւառին ամեն կողմէն գրեթէ ամառուան ոօթուն չատեր կ'երթան ամիսներով կը կենան: Վանքի ձեռագիր արձանագրութեան մը մէջէն օրինակուած է հետեւեալն.

«Տավչան տապի վրայ, որ Խաչի լեռան մէջ կ'ըսուի, վարդ սրբոցին աւանդելով՝ Ս. Սուքիաս ճգնաւորը բաւական ժամանակ ճգնութիւն րրած և իջած է Ս. վանքը չինելու, որու ճգնած անտառի վրայէն տասն մատուրայի չափ մաքուր ջուր կը բղխի, և աւելն տարի վարդավառի առնին չատ տեղերէ ուխտաւորներ կ'երթան, և հոն պաշտօն և պատարագ կը մատուցուի։ Եւ այս տեղէն երկու հազար կանգնոց չափ հեռի դէպ ի արեւմտեան հարաւային կողմը կայ գերեզմանն մը, որ Խարտաշ ճգնաւորի գերեզմանն է, կ'ըսուի, աւանդութեամբ...»

Ասկէ եօթն տարի առաջ 800 ոչխար ունեցեր է վանքս, կրթս վաճառեր է Եղեսեան Սրբազան իրրև Առաջնորդ, որոց գինը 170 ոսկի յանձնած է Էնիճեցի Հարթարձումին իբր աւանդ, թէպէտ հաւատարիմ անձն, բայց այսօր վճարելու անկարող վիճակի մէջ է, կ'ըսէին։ Նոյն տարին վաճառեր է նաև վանքի արծաթիներէն 19 հօտայ, որոց գինէն՝ 15000 դուրուշը Մարզուանցի Քիրէմիտճեան Յակոբին, 15000 դուրուշը Մարզուանցի Գասպարեան Ղազարին, և 8000 դուրուշը Հաճըդեղցի Չէրքէզեան Գրիգորին տրուած է մուրհակաւ։

Վանքս չունի այսօր երկրագործութեան համար լուծք, և ոչ ոչխար կամ այծ մը։ Թէմերէն պտղին ու հոգեբաժին ալ իսպառ կըտրած է, վասն զի՝ «Աստուած ողորմի և Հոգւոց» ըսողներ չկան վանքը։ Սրբազանն յաճախ

բացակայ կը գտնուի վանքէն իր նորընծայ Մամբրէին հետ կամ թէ մերը կամ լճին եզրերը, նորընծայ Մուշեղն Մարկոսանն է. հին ցօհ. վ. ալ տաճարի դրան կը նայի թէպէտ իր աեւնեկէն, բայց երբէք ոտքը չի՛տներ ներս աեմէն. Տէր Ջէնոբ Քահանայ մի կայ, որ միայն չարաթի երեկոյ և կիրակի առաւօտ Մարգուանէն կու գայ ժամերգութիւն կը կատարէ գեղացւոց և ուխտաւորաց համար ու կը դառնայ:

Քանի մը տարի է որ Եդեսեան Արբապան կը ջանայ նոր յուր հանել վանքի արտերուն համար. արդարև օգտակար մտածմունք, այլ երկար և անյաջող եղած է գործը, բաւականաչ ատակ մխուճած է. գետ կը չարունակէր: Վանքիս դրամական եկամուտը կը կազմէ տարին 40000 դրչ. միայն 32000 դրչ.ի ցորեն և յարդ կը վաճառի, մնացեալը ուխտաւորաց և այգեաց եկամուտն է: Որովհետև մեզ երեւցածէն կը դիտէինք որ ծախքի տեղ չունէին, ուրեմն, ուրախութեամբ հարցուցինք. — վանքը բաւական դրամ ունենալո՞ւ է: Պատասխանեցին՝ Ո՛չ, այլ պարտք ունի. (Ի բաց առեալ արծաթի և ոչխարի գինը): — Շէ՛ն կեցէք, ըսինք. և մեկնեցանք:

Մեր այցելած օրը Եդեսեան Արբապան վանքը չէր, այլ ամիսէ մը աւելի Հաճի գեղը կը գտնուէր. վերջին օրերս դարձաւ. Մարգուանի մէջ արտաքոյ կարգի փոփոխութիւն մը մեծարեց գիս, զոր աւելորդ կը

հաճարիմ գրել, և հետեւեալ օրը մեր ուղին վանքի քովէն անցնելով, յառուկ ’ի տես գնացի Ն. Արքայեպիսկոպոսեան, զոր գտայ իր սովորական վիճակին մէջ։ Նա յանձնեց ինձ տանկերկին գրութեան պատճէնը, յորում նըշանակուած էին մի առ մի վանքի բովանդակ արտերը. ասոր բնագիրը չինել տուած է Յակոբոս Ս. Պատրիարք 25 տարի յառաջ, և պատճէններէն մի քանին վաւերացընել տըուած է Տէր. կառավարութեան եղևսեան արբապանը. բայց այս ինչ որ է, ոչինչ արժեր է ներկայ օրինաց առջև, բոլոր արտերն ալ ներկա ըրած են և էմլաք տուրք կը պահանջեն վանքէն, թէպէտ ասոնք ալ դեռ բան մը տուած չեն։ Ըսաւ ինձ թէ՝ քանի մ’ալ հրովարտակներ ունի վանքը իր հողային կալուածոց համար. խնդրեցի, բայց չհաճեցաւ ցոյց տալ. թէպէտ ոմանք կը պնդէին թէ չը կայ, վասն զի երթէ ունենար, ոչ էմլաքը պիտի վճարէր և ոչ տասանորդը։

Ն. Արքայեպիսկոպոսը մեծարգին կը գտնը գտաէր իր վիճակին, ուրախ էր Աստուածաշունչը հրատարակելուն և հրատարակիչն ընդունելուն, միաբան կը յայտնէր վանքին վանահայր մնալ և բարեկարգ ու արդիւնաւոր վիճակի վերածել զայն նիւթապէս և բարոյապէս։ Զոր Ս. Պատրիարքի խորհուրդն ուշադրութեան յանձնեցի։

Վանքս ունէր 180 կտորի չափ տպեալ մեծ և փոքր գրեանք, որոց մէջ պիտանիներ

ալ կային բառական թուով · իսկ ձեռագրները ասոնք են , զորս ցանկէն օրինակեցի ·

1· Աստուածանմանութիւն , ի Պետրոս վարդապետէ Նախկեւանցւոյ : 1· Աբեւաբանական տոմէ : 1· Աբանիփիր Սղոմոնի , մատաղաթ : 1· Ալբիւր իմաստից ի Պետրոս վարդապետէ Նախկեւանցւոյ : 1· Բանի ասիկական : 1· Բառարանի պետրոկ : 1· Գառապանագիր : 1· Տեառնիւն առակաց Սղոմոնի , մատաղաթ , ի Ներսիսէ եպիսկոպոսէ Տարսոնի . . . « Ի թվ. Հայոց ի վեց հարիւր ի և վեց յաւարտեալ . . . » — Երես ՅԿԲ· « Գրիգոր արի եպիսկոպոսին Նիւսիա խոսք յինն երանութիւն . բան Առաջին , (երանի ազքատաց հոգւով) . . . » : — Երես ՅԺԱ· « Ներսիսի եպիսկոպոսի Կիւլիկեցւոյ Տարսոնի խորհրդածութիւն վասն ուղղութեան հաւատոյ եկեղեցւոյ , որ ի տուրբ Երրորդութիւնն և ի մնօրինութիւնն Քրիստոսի » : — Երես ՅԻԹ· « Ցիշատակարան Ցակոբ քահանայի Կ· Պոլսեցւոյ . . . որ խոշորագրեաց լինելով , մահտաս , և պարկեշտ կրօնիք . . . երկնից ի տուրը Ցարութիւն կատարի Քրիստոսի տուրը Գերեզմանին ծառայելով . . . յիշեցէք զտառացող զոյգս կուսակրօն Ցակոբ արեղայս , զծնողան և զեղբայրան և զքոյրան . . . աւարտեցի ի տուրը քաղաքն Երուսաղէմ , ի թվ· Հայոց ՈՃԼՀ ին . . . » : « Ցմեղաւոր և զանարժան աբեղայդ Ցովհէ ի գրիչ յիշեցէք . . . » :

— Ի վահանն տառնէին ·

« Թուղթ ի Ներսիսէ արքեպիսկոպոսէ Կիլիկեցւոց Տարսոնի պատասխանի Ցունական արքեպիսկոպոսէ ի մեծն Անտիոք , յորում լուծանէ զխարցուածն կղերիկոսացն

Անտիոքու վանն որ 'ի Հայք աստուածային չնորհի ճշմարտութեան 'ի վերայ քահանայական կարգի և ժողովրդականացն ուղիղ հաւատով որ 'ի Քրիստոս »։

Մարզուանու եկեղեցին ևս ձեռագիր մատեաններ ունէր, բայց անձեռնհաս եղայ կրկտելու և յիշատակագիրներու թուականներն օրինակելու։

ԱՄԱՍԻԱ ՔԱՂԱՔ

Մայիս 17։ Մարզուանէն մեկնեցանք դէպ Ամասիա, որ ութն ժամ կը տեւէր։ Վեց ժամ ընդարձակ հովիտ է, և երկու ժամ կիրճ. կիրճէ 'ի կիրճ անցնելով ոտրուն և ժառաղարդ ուղիով կը մտնենք քաղաքը։ Մարզուանու հովիտը բոլորակ է չրջապատեալ լեռներով, այդ լերանց թիկունքը և ստորոտները կը պարդարեն գեղեցիկ պիւղոբայք. բուն հովտին մէջ տեղ տեղ գեղեր կան, բայց անչուք. պիւղորէից բնակիչք ընդհանրապէս Թուրք են և Քուրդ, մաս մը ևս Հայք։ Թէպէտ և երկրագործներ ալ կան, բայց մանաւորապէս անասնաբոյծ են. լեռները խաչինքներով, ստորոտները անդէմք, և հովիտը ձիերով ու էշերով լի են, որք առ հասարակ իրենց տնտակի մէջ ընտիր են. ուրնին նաև ընտիր ջորիներ։

Հովտիս միջէն կը հոսի Թէրսախան գետակը խոտոր մտաւոր. երկիրը տեղ տեղ ան-

մշակ այլ խոտաւէտ, որոց մէջ բազմութիւն ձիոց խրոխտ կը խաղցեն, և եղինք ծանր ծաննըր կը բառաչեն արածելով. տեղ տեղ ալ հողն չօրաղ է և անբոյս։ Տասը կարի բարկ էր, մանաւանդ երբ մուանք Ամասիոյ կիրճը. իսկ աւազակաց երկիւղը այնքան էր, որ երկար հովտին անցքը և տօթը անդգալի կ'ընէր թէրասխանը կ'ուղեկցեր մեզ. և մեր ճանապարհի ձախ կողմը խիտ առ խիտ թթենիք էին, այգիք և մրգաստանք. ահա այս ձորոյն մէջ կը գտնաւորէին կարմրութեամբ և կը հոտաւէտէին այն անդուդական խնձորները, որ Ամասիոյ տեսիլական բերոց փառքերէն մին է. հոս ծառերէն 'ի վար կը կախուէին նաեւ ծառերն 'ի վար կը կախուէին դեղին, սպիտակ և կարմրագեղ մեծահատիկ կեռասները, որոց հանդիսաւոր օրերը հասած էին։ կը պատահինք չերամի հասնար չինուած տանց, չերամ անուցանող ժիր ընտանեաց, և կեռասի պաշտօն հարկանող զուարճասէր պատանեկաց ու աղջկանց, որ խառնուած ու խառնուած էին ծառոց թուխերու մէջ, և ուղեւորներէն կը ծածկէին իրենց սիպտակ ու կարմիր դէմքերը՝ սիպտակ ու կարմիր կեռասներուն ճղերուն ետեւը, այլ չէին քաշեր իրենց բազուկն ու թաթիկը, զոր ձգեր էին կեռասները ճռփելու։

Կրճին միւս եզերեն է Սամսունէն Ամասիա գալու կարաւանի ճանապարհն, որ քաղաքին

ժամ մը հետով կը միանայ Մարզուանու ուղղությամբ կառնուրջով մը. հոս կայ զուարճալի վայր մը իր հանգստարան ուղեւորաց, և սրճարան մը ու խանութ: Ասոր ոկսեալ կառուղի չինուած է մինչև քաղաքը: Մեր քովերէն և ի հանդիպոյ ապառաժներու մէջ քարայրեր կ'երեւան, քանի' կը յառաջանանք ժայռերու դաղաթները կը մերձենան կը բարձրանան. և ահա Ամասիոյ մէկ թաղը: Մեկնեցաւ մեզմէ թէրամխանը և գնաց սահեցաւ Իրիսի (Եէշիլ ըրմադ) մեծ գետոյն լայն ծոցոյն հոսանաց մէջը: Ահեղն Իրիս դիմաւորեց մեզ. իր վրայ չինուած են չատ մը անուանաւոր ջաղացքներ, և չարուած փայտէ դոյլերը, որոցմով ջուր կը բաշխէ այգեաց:

Յայնկոյս գետոյն, գետ քաղաքը չմնուած, քիչ մը տեղ կայ ընդարձակ իրրև հրապարակ, ուր մեծամեծ ծառոց հովանեաց տակ նստած են կարգ կարգ մուրացկանք: Կառնուրջով մը կ'անցնինք յայնկոյս՝ Սամսիոն թաղը, որ կենած է հարաւային ժայռերու, և իր ծառերն ու այգիները կը տարածին մինչև Զախալի ըսուած լեռան կատարը, ծոցաձեւ դիրքով, այս ծոցէն կը հոսի Սօսէ քաղաքէն ջուրն: Մեք անցնելով Իրիսի ափէն, խաներու և կարգ մը խանութներու և արճարաններու առջեւէն մտանք քաղաքի մէջը և իջանք Ս. Նիկողայոս եկեղեցւոյ Առաջնորդարանը: Ստուած առաջնորդարան հանդիպեցաւ . . .

Ամասիա քաղաքը՝ ըստ պատմութեան և աւանդութեան՝ հիմնեալ է Մեծին Ալէքսանդրի Ամասիա անուն եղբօրմէն, և աւելի փայլ ու փառք ունեցած մեր Միհրդատէն, արդարև պատերազմիկ ձեռաց կերտուած, և անառիկ։ Ամեն ուստեք կը պաշարուի մարդ, ո՛ր կողմը դառնաս՝ լերկ ու բարձրաբերձ ժայռեր են, անձուկ խորաձոր մը, որոյ լայնութիւնն ամբողջ բռնած է Իրիս, իր բուռն ճիրաններով. գեօղոյս՝ իբրև նեղուցի ծովու, խորչ խորչ տեղերու և ուղիղ ափերու վրայ չինուած են բնակարաններ, դրախտներ, այգիներ, պարտէզներ, բերդեր, պալատներ, հին ու նոր, նշանաւոր և աննշան կերտուածներ։ Քաղաքս կը տարածի յարեւմտից յարեւելս աղեղնաձեւ, սեղմուած Գալէ տաղի և Զախալի լերանց մէջ, չինքերը՝ ի հիւսիս և՝ ի հարաւ՝ երկու մասի բաժնուած։ Գալէ տաղին հիւսիսակողմն է. իր պաղպաղան և կողերու վրայ ունի հնաչէն բերդին ու պարսպաց մնացորդներ, և մէկ կուտն վրայ դէպ յարեւելս դեղեցիկ թէէ մը, նոր չինուած Շիրվանզատէ Բիւշտի փաշային, որ Սուլթան Ապիդ կայսեր օրով մեծ եպարքոս էր՝ ի Կ. Պոլիս, բնիկ Ամասիացի, որոյ ծնողքը Շիրվաններն, Աղուանից աշխարհէն գաղթական եկած եղեր են հոս. ոյն թէէքէի մէջ կ՝ամփոփուին յիշեալ վէզիրին ծնողաց մարմինք, ուր տաճկի աղօթողաց և այցելուաց համար չնորհքով աւանեակներ չինած է, ամբողջ շինքը պարըս-

պատատ, և մէջը ծառաղարդ, հովատուն և բարձրահասակ դիրքով։

Սոյն լերան քաղաքի կողմը եղած երեսին վրայ կրկնակամար և քառակուսի դըռներով փորուած քարայրներ կան, և այս քարայրները ելնելու իջնելու համար ժայռերու վրայ փորուած սանդուխներ։ Այս օրինակ քարայրներ և սանդուխներ շատ կը տեսնուին քաղաքի հարաւը, յարեւելս և յարեւմուտս եղած ժայռերուն ալ վրան։ Կարի նշանաւոր է Անին ըսուած քարայրը, յարեւելս քաղաքին, որոյ մէջը սալակի վտակ ծեփած, այնքան փայլուն և արհեստաւոր, որ դրսի բոլոր տեսարանները իր մէջ կը նկարէ ցոլացմամբ և կ'անդրադարձէ եղերը, իսկ այժմ խառարամած է և մոխրով սեւցուցած։ Կը պատմեն թէ՝ փաշա մը ձիովը այն տեղէն անցած առեն, ձին խրտչեր և գինքը գետին զարկեր է, ասոր վրայ մեծագործ փաչան այնչափ յարդ վառել տուեր է քարայրին մէջ, մինչև թանձր ծխով սեւցեր են ծեփերը։ Հին ուղեւորներ և տեղացի աւանդապահներ կ'ըսեն թէ՝ շատ մը զանազան նկարներ կան եղեր սոյն այրին մէջ, ինչպէս նաև կամարին վրայ գետ կը նշմարուին Երկոտասան Առաքելոց պատկերներ, դրսէն ալ ճակտին վրայ յունարէն տառերով քանդակեալ երեք բառ, զոր թարգմանեալ կը տեսնենք Հ. Ներսէս Սարգսեանի աւերակագրութեան մէջ. «ԵՐԿՐԻ (գից)

ՓՐՄԱՊԵՏ ։ Ուրեմն մեհեան մի է այս, և՝ի քրիստոնէութեան՝ սրբեալ տաճար. իսկ միւս այրերը՝ ո՛րը մեհեան, ո՛րը գանձարան, ո՛րը պինարան, ո՛րը ապաստանարան են, ևս ։ Ասանց եթէ ոչ ամենքը, գոնէ մեծ մասն՝ մեր Մեծին Միհրդատայ կռել տուածներն են ։

Գալէտապին երկու սուր կատար ունի մօտ ընդ մօտ, որոց միջեւ երկու նշանաւոր խորեր կան, մինը՝ ընդան, միւսը՝ ջրամբար ։ Ընդանը՝ ուղիղ փորուած և բերանը քարերով շարուած, ընդարձակ վիրապ մի է. իսկ ջրամբարը՝ զոր Ջալմջոալ կ'անուանեն տեղացիք, ընդ երկար սասրերկրեայ ուղի մի է սանդուխով, որ իրրև ժամ մը կը տեւէ, և կ'իջնայ մինչև քաղաքի արեւելեան հիւսիսէն հոսող Թէրտախան գետը, պաշարման օրերը ջուր առնելու. կամ գաղտուղի մի է, ուստի կ'ելնեն պաշարող թշնամին պարտելու ։ Վերոյիշեալ ճղլակ լերանց երկու կատարաց վրայ ալ բերդեր եղած են. բարձրաւանին վրայ երեւցածն աւելի հնագոյն ու մեծագործ է. իսկ միւսը՝ Տաճկաց իշխանութեան օրերը չինուած ։ Դեռ 12 տարի առաջ սոյն բերդը չէն է եղեր. բերդապահ գալէլէ անուանեալ բնակիչք հոն կը բնակէին, և այս պաշտօնին առթիւ ազատ են եղեր ամեն տեսակ հարկատուութենէ և զօրք տալէ ։ Սոյն բերդի յարկերէն միոյն մէջ կը պահուին եղեր հնութիւնք, երկաթի զրահ, նետեր,

կերպ կերպ տաղաւարաններ, տապարներ, եւ, որոց ոչ մէկը չկայ այսօր. Հիմա պէյ անուանով Միւթասարիֆը՝ որ չատ բարեկարգութիւն եւ հինութիւն ըրած է այս կողմերը, այդ հնութեանց պիտանի մէկ մասն գոլիս ղրկած է:

Ամասիոյ բնակութեանց մեծ մասն գեօղացի հարաւակողմն է. երեւելի չէնքեր, մզկիթներ, եկեղեցիներ, չուկայն, եւ. միայն կառավարութեան պալատն և հասարակաց ժամացոյցի բարձր աշտարակը հիւսիսակողմն են, զորս՝ վայելուչ չինած է յիշեալ Զիյա պէյն: Այգեստանք երկու կողմն ալ կան: Հայք, Յոյնք և Տաճիկք խառն կը բնակին մի և նոյն թաղերու մէջ. Մզկիթն ու եկեղեցին, վարժարանն ու մէտրէսէն իրարու մերձ չինուած են:

Շինութեանց մէջ հոյակապ և ամենէն չքեղն է Սուլթան Պայազիտ անուն ճամին՝ կրկին մինարէով, մարմար սիւներով, արաբական նկարներով և քանդակներով, մանաւանդ իր տեղով ու ընդարձակ դիրքով. իր մեծ բակին մէջ մեծամեծ նոճի ծառեր կան, մէկ կողմը՝ ընդարձակ մէտրէսէն: Այն ճամիի բակին քովէվով կը հասի Իրիսը: Նշանաւոր է հնութեամբ հանդերձ՝ նաև Գէօզլէ-լե ըսուած մզկիթը, որ ունի նշանաւոր գմբէթ մը՝ զրահն խիստ գեղեցիկ և արուեստով կերտուած. այն գմբէթը մզկիթին մէկ քովը չինուած է, որոյ ներքեւ խորա-

Ինս անկոյս յարկին մը տակ քանի մը մեռելոց կմախքներ կան փայտէ դագաղներու մէջը պահուած, իրր անխտելի և չէյնթ հոչակուած։ Կաղ Մօլլայ մը առաջնորդեց մեզ Հրապով մը և աղօթից սրմնունջով Պղուտոնի այս տաճարը, քանի մը ծունր կրկնեց, և ապա դագաղներու խուփերը բացաւ, որոց մէջ տարածեալ կային մեռելոց կմախք, միս և մորթը վրան չորցած։ Թէ ո՞յք էին ասոնք, չգիտէր մօլլան։ Ցանկ կանանց ուխտաւորի է դարձեր այս տեղ, բայց մկկիթ լինելէ ալ դադարած։ Ամբողջ յարկերու մէջը Չէրքէզ ընտանիք կը բնակէին, բայց՝ի այս մեռելոց ներքնայարկէն։ Ձիշդ ասոր մկկիթին դրան հանդէպ և անոր խիստ մօտ արուեստաշէն գմբէթայարկ մի ալ կայ, որոյ մէջը լօթն հիրիմներ կան, մէկը մեծ և փառաւոր, սեւ մարմարիոնէ կափարիչ մը ունի, որոյ շրջապատը արծաթի գրեր քանդակուած են։ Այս է, կ'ըսեն, Ղևմ Ալանայ գերեզմանը, և միւսները տնոր գոթոթներուն են։ Այս անձը իր սուրբներով ու կառավղի արարքներովը յայտնի է մեր ազգային պատմութեան մէջ, մեծին Թորոսի օրով, Իկոնիոյ Սուլթան Մաղասուտի որդին ու յաջորդը։

Գառամ մինասէով մկկիթի մէջն ալ վերոյիշեալ կմախքներուն նման կը պահուին, և տեսնել ուզողներուն կը ցուցընեն։

Թէմուրխանէ անուանեալ հին չէնք մի կայ կառավարութեան պալատին հանդէպ,

Իրիսին հարաւային կողմը, որոյ դուռն ու ճակատը ողջ է, տրարական մանր քանդակներով և քուֆի պրերով, իսկ ներսը քայքայուած է. ողջ մնացած սենեակները արքունի ամբար ըրած են։ Ըստ աւանդութեան, այս է Եղեր, կամ հոս է Եղեր Ռէյայ մօրն չաստուածոց մեհեան, զոր հրճիզ ըրաւ Ս. Թէոդորոս զինաւորն։

Նշանաւոր են ընդհանրապէս երեւելի Տաճկաց տուները, և իրրև նոր չէնք՝ կառավարութեան պալատը, Հասարակաց ժամացոյցը, Մէքթէպի բիւշիւէն, այգիներու մէջ Զահալի լերան կողմը Հովնոցներ (քէօշք), Հայոց Ս. Յակոբ և Ս. Աստուածածին եկեղեցիները, գեղոյն վրայ կառուցուած ջաղացքներ, որոց մէջ ամենէն գերազանցն է գերմանացի Պ. Մէյինը, որ աղացքի չէնքին մէջ ունի նաև մեռաքսի թել հանելու և ոլորելու ընդարձակ և ընտիր գործարան։

Հինգ կամուրջ ունի քաղաքս. երկուքը քարաչէն են, երեքը փայտ։ Փողոցներ նեղ և անմաքուր, ծուռ ու մուռ և անկանոն, միայն Սալայիսի թաղը քիչ մը լայն է՝ բայց և այն զառ՝ի վեր։ Աղբիւրներ շատ կան, թէպէտ պաղորակ չեն, բայց թեթեւ և համեղ ջուր ունին. տեղ տեղ ալ գետէն կը լմանեն։

Իրիս՝ որ համայն քաղաքին զուարճութիւնն ու վայելչութիւնն է, և առատ ձկունք ալ կ՚ընծայէ, բայց իր վտանգներն ալ

ունի. գարնան և աշնան անձրեւաց յաճախութենէն կը բարձրանայ ջուրը, և իր մօտ պարտէզներ, փողոցներ, ու տները կը կոխէ, և ամեն տարի քանի մը անձինք ալ կը խղդէ, կը կորանցընէ։

Ամասիոյ չուկայն բաւական մաքուր և ձեւաւոր է, վրան գոց, բայց ընդարձակութիւն չունի։ Թաշխանը՝ ուր մաքսատունն է և վաճառականաց սենեակները, իրենց համար նշանաւոր կերտուած մը համարուած է. վասն զի բոլոր չուկային մէջ միակ շէնք է քարէ, այլ իրօք ոճով ու շնչին։ Պէզեստէնը, զոր գոված են նախկին ուղեւորք, աւերակաց կարգն անցած է, խոպան անգործածելի։

Քաղաքին մէջ կը գտնուին տեղական պիտոյից համար ամեն արհեստներ. արհեստաւորք Հայերն են։ Կայ և մի տեղական բժիշկ՝ Գէորգ էֆ. Պօղոսեան, որ ունի դեղարան մը, և մի վիրաբոյժ՝ Սեւաստցի Նշան էֆէնտի։

Վաճառականութիւն բանուկ է. գաւառէն բերքեր կ'ուղարկէ Եւրոպա, Պոլիս, և Թուրքիոյ այլ և այլ գաւառները, ոչխար, այծ ու ոչխարի մորթ, աղուէսենի, գայլենի, սամոյր, պրօն (թիվթիք), բժոժ (շերամի խոզակ), խաշխաշ (աֆիոն), ճէհրի, գաղի խէժ (քիթրէ), մահլէպ, սալէպ, կաննեփ, տորոն, վարսակ, ցորեն, ոսպ, սիսեռ, լուբիա, պաւեա, անիսոն, կտաւատ, պանիր, իւղ, մեղր, եւ։ Գաւուղներէն՝ ա-

նուշահոտ խնձոր, սալոր, խաղող, ընկոյզ, գինի, եւ: Կը սնուցանէ ընտանի կենդանիները՝ ձի, էշ, ջորի, եղն, կով, գոմէշ, այծ ու ոչխար: Քանի մը տարիէ հետէ սկսած են սնուցանել նաև Անկիւրիոյ լաւ մազերով այծեր (Թիվթիկ) և ադէկ յաջողած են: Ամասիոյ չերաւը՝ որ առաջները լաւագոյն էր, տեղացւոց համար հարստութեան աղբիւր մը կը կազմէր. բայց իրր 15 տարիէ 'ի վեր աւ յամէ անկման մէջ է, հունտերը աւրուած լինելով: Այս տարի ձարօնէն հունտ բերել տուած էին, և յուսալի կը թուէր բարելաւելու իրենց այս չահը:

Ամասիա գոնուելով Բաղդադի մեծ ուղւոյն վրայ՝ միշտ նշանաւոր եղած է, առաւելապէս 'ի հնումն, երբ ցամաքային ճանապարհով կ'երթևեկէին 'ի Պոլիս. այժմ ևս Բաղդադէն յայսկոյս եղած քաղաքաց վաճառքներ և մարդիկ այս գիծով կ'իջնեն 'ի Սամսոն, և փոխադարձաբար. բաց 'ի Հայաստանի այն մասերէն, որոց նաւահանգիստն է Տրապիզոն և Կիրասոն:

Սոյն աշխարհի լեռները Պոնտոսի չղթան կը կազմեն և անտառոտ են: Օդը բարեխառն է, միայն Ամասիա քաղաքը խոր ձորամէջ լինելով, ամառը սաստիկ տաք կ'ընէ, և տենդի հիւանդութիւնն յաճախ:

Թէ' քաղաքին մէջ և թէ' գեղերը մեծամեծ կալուածներ ունին թուրքերը: Ինա-քաղաքը բազմաթիւ ուսանողներ կուգ[illegible]

այլեայլ կողմերէ՝ մահմէտական կրանին վար-
դապետ և օրէնսդէտ լինելու համար :

Քաղաքիս բնակչաց՝ կանայք կարի աշ-
խատասէր են , ու Մարզուանցւոց պէս՝ երիկ
մարդու շալվաբ կը հագնին , ի գլուխ կիսաթօզ
մը կրելով, իսկ փողոցը չրջած ատեն՝ սաւանով
կը պատատուին . անխօս և անտես կը պա-
հեն դիրենք . կարի սակաւաթիւ են չրջա-
ղդեստ հագնող կանայք . իրենց զբաղումներն
են չերամ սնուցանել , բժժէ թել հանել ,
մանիսա և այլ տարազներ գործել , տուն և
այգի տնտեսել . ժիր են և առողջ : Իսկ
արք՝ դանդաղ և մեղկ , կերուխումի և զուար-
ճութեանց սիրողք . գրեթէ գարնանէ մինչև
աշուն անգործ են իրենց այդ ինքերէն , ուր
ծառոց դալարախիտ ոստոց թփոց քովերը
բազմած՝ կարմիր ջուր , ճերմակ ջուր , փո-
փոխակի կը պատուհան ջերմիկ խորոված մսով
ու փափուկ հացով , և ծառերէն միրգեր կը
թափին սեղանին չուրջը : Մայիս 25 , Համ-
բարձման տօնն էր , Անմոսիացիք ամրողջ
հարբարձեալ էին տուներէն . մեծ հանդէս
էր այն օրը կեռասի տարեդարձին :

Քաղաքիս մէջ երեք եկեղեցի կայ Հայոց ,
Ս. Նիկողայոս՝ ուր Առաջնորդարանն է . Ս.
Յակոբ՝ գրեթէ կից առաջնոյն , բայց քան
զայն փառաւոր և ընդարձակ . Ս. Աստուա-
ծածին՝ Սավայիպի թաղը , բարձրադիր և
գեղեցկաչէն , որոյ ներքին պատերն , սիւներն
և առաստաղն՝ եկեղեցական պատկերներով

նկարուած , դեղեցիկ դիրքով ու բաւական ընդարձակ խաչքակեր ունին, ծառեր և սեն-եակներ , իւրաքանչիւր եկեղեցւոյ բակին մէջն է իւր թաղին մանկտւոյն համար երկսեռ ծաղկոց , իսկ չէնքով և դաստիարակութեան մասին կարի ողորմելի : Սամայիդի թաղեցիք մտանաւոր վարժապետ մը ունին Բենիամնցի Պ. Աստուածատուր , ուսեալ և բարեկիրթ անձն , որուն յանձնած են միայն քառասուն աշակերտ , և կ'ուսուցանէ հայերէն , գաղղիերէն , տառկերէն , աշխարհագրութիւն , թուաբանութիւն , և ձայնաւորութիւն : Իսկ միացեալները լցած են ծաղկոցներու մէջ , ուր կ'ուսանին քերականէն մինչև Գործոց , հաղիւ գիր գրել գիտցող մը կը տեսնես առանց մէջ . վարժապետները անդէտ իրենց պաշտօնին և անկիրթ : Կը չառաչեն ջալախաններ , ատոց՝ ա՛ֆ ու եամա՛ն դուռալէն կը թընդան չէնքի քարն ու փայտը , այլ չպղուիր անգութ վարժապետին սիրտ . խրխռտաբար պոռտալ , դղրացընել ու սարսեցընել մանուկըն իր խաժոռ հայեցուածքով , և գալարուն վարսը ձեռքին մէջ ճօճեցընելով , ահա վարժապետներ , ահա աշակերտելոց մարդութեան կանոններ : Զգուած այն սիրուն ծաղկունք այս խամրեցուցիչ ձեռաց և խեղաց տակ, ապականեալ օդերու մէջ , խոնաւ հողերու վրայ , փայտի կտորներու վրայ , որք իրեւ նոսաբան չինուած են , առանց դրասեղանի, չէնքեր առանց լուսոյ և առանց օդի , գիր-

քերը կտրտուած , և ամեն մէկի ձեռքը պատ զատ տեսակ դիրք : Այս աղջային յուսոյ անյոյս յարկերը այցելուածս միջոցին՝ Ս. Ատուածածային եկեղեցւոյ դրան քով փոքրիկ աղջկանց վարժարան մը ևս ցոյց տուին , որոյ դրան առջեւ այլանդակ դէմքով , խառնած մազերով , բորիկ , պատժափայտն ի ձեռին՝ սիպտակ մազերով մէկը կեցած կ'երերար . Քահանայ է , ըսին , և աղջկանց վարժապետ . որ և ոչ քահանայ , և ոչ մարդ կը նմանէր , այլ սակայն ստոյգ , աղջկանց վարժապետն էր նա : Ողջունեցի դինքն . — Օրհնեա տէր , վարժապե՞տ էք . — Ինչ պիտի ընեմ , բախի չունիմ , պատասխանեց : — Հրամէ երթանք վարժարանդ այցելենք . — Ինչ կը փնտռես , կարգս վկայ , ոչ բախի կայ , ոչ մազէ . . . : Յաստիկ դրդռուեցայ ասոր կոպտութեան վրայ , և այն ինչ այցելակցացս վեղարդրանք կ'ընէի , ինձ պատասխանեցին Թէ , ձիւտ կ'ըսէ , այս տէրտէր վարժարան բացած է . մէն մի աշակերտուհիէն չաբաթական տասն փարայ Թոշակ կ'առնու , և առածը օդիի կու տայ , ամեն օր կը խմէ : — Է , աս եղա՞ւ : — Վչտացեալ է : — Ինչ է վիշտը : — Լադիկ գիւղին վրայ ձեռնադրուած էր , գեղացիք չուզեցին , հոս ալ քահանայք բաժին չեն տար անոր : — Պատճա՞ռը . — վասն զի տգէտ է և գինով : Ուրեմն ապրեցընելու համար վարժապե՞տ պէտք էր ընել . . . :

Ա՛հ , Հայեր , ա՛հ , հայրեր ու մայրեր ,

ինչո՞ւ դուք ձեր ոտքով կը զարնէք ազգային յառաջադիմութիւնը և յետս կ'ընկրկէք։ «Ազգի պաշտօնեայ են, վարժարան դնենք չահուին». դեռ Պօլսոյ մէջ ալ այս բանը կայ։

Միւս ծաղկոցներու վարժապետներն ալ իւրաքանչիւր աշակերտէն չաբաթական 10—20 փարա թոշակ առանալով և աշակերտները բրածեծ ընելով իրենք գոհ և ծնողք գոհ կ'ընեն. ըսել է մէկ տղայ տարին 12 դահեկան վճարելով, և քանիներն ալ 24 դահեկան, կ'սպասեն մարդ լինին։ Վարժապետներէն ոմանք եկեղեցական ձայնաւորութիւն ալ դաս տալու համար եկեղեցին քանի մը դահեկան նպաստ կու տայ։ Ամենէն բարձրագոյն վարժապետն տարին 2000 ղուրուչ կ'առանար, և այն՝ Պ. Աստուածատուր Բենկանցիի պէս ուսուցիչ մը, բայց երբէք օգնական մը չունենալով իրեն. իսկ միւս վարժապետներ՝ տարեկան 1000—500—300 դահեկանով կը կենան։

Ամասիոյ վարժարանաց այս վիճակէն պիւրին է դուշակել տեղւոյն ազգայնոց զգացումն յաւէնայնի, զորս ցաւ է ինձ ասել թէ կարի անտարբեր գտայ. երկու կամ երեք հոգի հազիւ կան, որ կրնան զգալ խօսիլ և լսել ազգայնութեան վրայ։ Իրենց Առաջնորդարան և ժողովքներ ողորմելի են. անենակ մը ունին միայն, ուր հազիւ զետեղուած է Առաջնորդին խոչորակերտ մահճակալ. տեսանք ուրեմն Առաջնորդի ննջարա-

նը, բայց պաշտօնատուն և ժողովարան ոչ և ոչ: Ոչ դիւան, ոչ գրագիր, ոչ գրատեղան, ոչ նստարան, ոչ տուսար, ոչ արձանագրութիւն, ոչ նիստի օրերը որոշեալ և ոչ որոշումները արձանագրեալ: Եթէ հարկ լինէր թուղթ մը նայիլ, կը բանային եկեղեցւոյ դարակը, ուր անտուկ մը կար, մէջը բժժանաց նման խառնակ թղթեր զետեղուած, օրերով կ'զբաղէին որոնելու և գտնելու: Մի միայն կանոնաւոր արձանագրութիւն մը կար՝ Սերաստիոյ Առաջնորդ Պետրոս վարդապետի քննչութեան օրով գրուած:

Անդամ անդամ եթէ հարկ լինէր ժողով գումարել, կը հաւաքուէին եկեղեցւոյ գաւիթը կամ խաչքարը, գերեզմանաց չուրջը ծառերուն հովանեաց տակ, և կը խորհրդակցէին կամ որոշում մը կու տային, իսրայէլի նահապետաց, Դերովբային, կամ հին ազգաց դատաւորաց դարը կը ներկայացնէին:

Այսպէս լքեալ էր ազգային վիճակը. յառաջագոյն 1—2 ընկերութիւն կան եղեր, բայց կարճատեւ եղած և իննկած. շատ խրատխուսեցինք պիրենք և խոստացան Միակամ անուն ընկերութիւնը վերակազմել. երիտասարդութիւնը շատ կը գանգատէր մեծերէն, բայց ամենքն առ հասարակ կը գանգատէին Եղեսեան Արքազանէն, և անոր առաջնորդութեան արդիւնք կը համարէին իրենց այս անկերպարան վիճակը, զոր ունէին 7—8 տարիէ 'ի վեր, երբ Եղեսեան Ս. երեք եկեղե-

ցեսց արծաթի անօթներ Տաճկաց առջեւ այպն և կատակ ընելով ջարդել ու վաճառել տուեր էր, որոցմով կեղրոնական վարժարան մը պիտի կանդնէր, և թէպէտ գումարը քաղ. ժողովոյ ձեռքն էր, և յարմար տուն մի ալ դներ էին վարժարան ընելու համար, և 14 խանութ իրրև կալուած նոյն վարժարանին, դեռ 313 օսմ. լիրա ալ պատրաստ ունէին, բայց ահա 8 տարի է տակաւին վարժարանն չէր բացուեր, և ժողովրդեան գրգիռը չէր հանդարտեր: Առաւել գրգռեալ էին Սաւայիդի թաղեցիք, որք երկու տարիէն 'ի վեր Առաջնորդի անունը յիշատակել դադրեցուցած էին իրենց եկեղեցւոյ մէջը, և իրենց բողոքներ պատրիարքարանէն ուշադրութեան չառնուելուն համար վշտացեր ու գաւառական ժողովներուն ալ ընդդէմ հեռաձալ էին: Եղեսեան Ս. ին չատ բան կ'ըսէին, բայց իրենք ալ անմեղադրելի չէին: Ինչ որ իրենց չինութեան և ազգային օգտին կը վերաբերէր թէ հրատարակախօսութեամբ և թէ 'ի մանաւորի խօսեցայ իրենց, աւելորդ է կրկնել հոս, այլ այսքան մը գրեցի, գամ մի ևս յիշեցընելու համար իրենց, որ Իրիսի ջրերուն յանձնեն իրենց մեղկութիւնն ու երկպառակութիւնը, Նախապաշարումն ու բռնաժանութիւն, թող տանի անհետ այդ սեւ հեռքերը Սեւ ծովու անդնդոց յատակները թաղէ, և թող իրենք միանան, ժրանան, գործեն ազգային ակտքն ու օգուտը, ժամէ հասկնալ

թէ այն դարու մէջն ենք, որ զօրութիւն ու իշխանութիւնը ժողովրդեան ձեռքն է, ժողովրդեան կը հետեւի այսօր Առաջնորդն ալ, կուսակալն ալ, պատրիարքարանն ալ, թաղաւորութիւններն ալ, եթէ լուսաւորուած է ժողովուրդն. եթէ ոչ՝ խաղալիկ ու կոխան է ամենուն հաճոյից և ոտից, և ոչ ոք ունի իրեն պիտացող: Այո՛, և ոչ նոյն իսկ Աստուած:

Ամասիոյ ուխտաւորիներն են՝ Ս. Թորոսի և Ս. Բասիլիոսի պերեզմանները, քարտէն $3\frac{1}{2}$ ժամ հեռի: Ս. Յովհաննէս, որ քարայր մի է և միջէն ջուր կը բղխի, ուր կը յաճախեն տենդիւ ախտացեալներ: Աշքացաւի համար ալ Թոխ անունով ուխտատեղի մը ունին ընդ մէջ Մարզուանու և Ամասիոյ, որ, կ'ըսեն, Ս. Թէոդորոսի սպանեանց վիշապին պերեզմանն է:

Ամասիոյ քազ. կառավարութիւնն Միւթասարիֆութիւն է՝ Սեւաստու վիլայէթին ներքեւ: Եկեղեցիք 5. Ս. Նիկողայոս, Ս. Յակոբ և Ս. Աստուածածին: Ուսուցիչարան 1. Ս. Ներսիսեան: Տղոց մանկանց 3. Տղոց աղջկանց 2: Տարիք վարժարանաց 13500 ղուրուշ: Ուսանողք՝ 409 մանկունք, 108 աղջկունք: Թիւ Հայոց 5605: Բողոքական և կաթոլիկ Հայք 96: Յոյնք 625: Թուրքք 9823:

———

ՁԵՌԱԳԻՐՔ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ
Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

1. Ա-ԲՓԱՔԱՆ. — Ի սկիզբն գրեալ.

« Մատթէոս մարդ վասն այն ցուցաւ :
Զի մարդկութիւն Տեառն սկսաւ,
ՅԱբրահամէ պատմել կարգաւ,
Եւ զորս արար մինչև յարեաւ :

« Սուրբըդ Մատթէ նախ մաքսաւոր
Եւ ի յետոյ աւետաւոր,
Յիչեա՛ առ քո Տէր երկնաւոր,
Զիս Տիրասուր յոյժ մեղաւոր » :

— Ի վերջն Մատթէի.

« Քրիստոս Աստուած քո սուրբ և հրաշալի կենսաբեր յարութեանդ ողորմեա սուտ անուն քահանայիս ՀԵԹՈՒՄ ՊԱՈՒԶ երիցուս. զի քան զամենայն սպասաւորս քո ես միայնւիրը և անհնազանդ եղայ Աստուածային օրինաց քոց և ողորմութիւնն քո. . . » :

— Ի միւս երեան.

« Զմահդ ասի Սարգիս, յիշեցէք զվերջին աստացոյն սուրբ Աւետարանիս, և կենսակիցն գիշամ խաթունն և զամենայն տեառն մերոյ ձաւորան, զհայրն զԱլան և զմայրն զԽունդին, և յիշեալ լինիցիք ի Տեառնէ Աստուծոյ, ամէն : Հայր մեղ" » :

— Ի միւս երեան.

Աւետարան ըստ Մատթէոսի.

« Մատթէոս զիւրն աւետարան,
Գրեաց լեզուովն եբրայեցեան,

Ցեօթն ներսէդ յեռոյ ամեան,
Զարչարանացն Փրկչական,
Ցերուսաղէմ զառաջին բան.
Եւ է իրա ինչ որ 'ի Քաղդեան
Նոյն 'ի Պարթեւն և 'ի Քուշան,
Առ 'ի նմանէ քարոզեցան.
Իսկ 'ի Պարթեւք և 'ի Գողթան՝
Միանդ ամայն կատարեցան.
Ապա յեռոյ թարգմանեցան
Ցերրայեցւոյն 'ի Յունական,
Ի փառս անեղծ Աստուածութեան
Երից անձանց մի սէրութեան »:

— . Ի վերջն Մարկոսի.

« Քրիստոս Աստուած մեր, որ վասն անբաւ մարդասիրութեանդ քո խոնարհեցար 'ի հայրական ծոցոյ և առեր մարմին 'ի սրբուհւոյ Աստուածածնէն Մարիամայ և զմահ խաչի յանձն առեր և պատուական արեամբդ քո զմեզ զամենեսեան 'ի ձեռաց մեղաւսէր իշխանին ազատեցեր, ազատեա և զքաղմամեղ անարժան ծառայս քո զՀեթում կաւանցւոց 'ի ծովացեալ մեղաց խոց, զի դու ես ողորմած գթած Տէր մեր, որ յամենայնի կարող ես թողուլ զմեզ յանցաւորաց, և քեզ ընդ Հօր և ամենասուրբ Հոգւոյդ վայելէ փառք և պատիւ յաւիտեանս ամէն »:

— . Ի միւս երեան.

« Ո՛վ եղբայր, յիշեա սակաւ գրիս գրաւղն 'ի քո սուրբ աղաւթս և զմեր արեան մերձաւորքս, և Աստուած զքեզ յիշէ յիւր սուրբ արքայութեան՝ քո արեան մերձաւորաւք. Աւետարանիս մեզ պարգեւողին այլ ողորմի ասացէք, և Աստուած ձեզ պատրաստէ, ամէն, Ո. ամէն. ՃՃ ՃՃ ԺԸ ԼԼ ՃՃ ՍՍ »:

« Արդ յիշեցէք զվերջին ատացաւզ սուրբ աւետարանիս զնահապատի Սարգիսն և զհայրն գԱլանն և ծնողն զԹուենսին և զկողակիցն զԺամ խաթունն և զամենայն արեան մերձաւորքն զննջեցեալքն 'ի Քրիստոս, և Աստուած յիշողացդ ատցէ զվոխարէնն ձեզ ամէն » :

« Է յիշատակ Սամաթիոյ սուրբ Աստուածածնին, խնամատուքն աւրհնին Աստուծոյ. գրեցաւ սակաւ գիրս թվին. ՌՀ. ձեռամբ Բարդուղիմէ քահանային և կապն՝ աւլան և կաղմ. կար մեր այս էր, ով եղբարք : ՁիշեԱ. ԱՀ » :

— . Ի սկիզբն Ղուկասու .

« Ով սուրբ Ղուկաս բժիշկ մարմնոյ
Նախ՝ և յետոյ եղեր հոգւոյ,
Զիմն Տիրատոյ մեղք՝ Տեառն քո
Մաղթեա մարթել սեռիւն խոյ :
« Այլ թէ զՂուկաս եղն է'ր գրեցին,
Զի որպէս նա հերիկէ զդեսին,
Կրկին անխոնջ վաստ պտղին,
Նոյնպէս երկար է բանք նմին » :

— . Ի վախճան Ղուկասու .

« Ողորմեա Տէր ամենայն հոգւոյ ծնիդ և ինձ անարժանի. ողորմեա տէր ամենայն ծնընդեան աւազանի և ինձ անարժանի. ողորմեա տէր ամենայն քահանայի և ինձ անարժանի և ցոփի. ողորմեա տէր ամենայն եկեղեցւոյ սպասաւորի և ինձ անարժանի. ողորմեա տէր ամենայն քո պատարագողի և ինձ անարժանի. ողորմեա տէր ամենայն յանցաւորի և ինձ յոյժ անառակի. ողորմեա Քրիստոս Աստուած ամենայն երիտասարդի և ինձ թըշուառականի. ողորմեա տէր ամենայն հոգ-

ւով հիւանդի և ինձ բաղմավէրի . ողորմեա տէր ամենայն հոգւով աղքատի և ինձ յոյժ թափուրի . ողորմեա տէր ամենայն մեղսասիրի և ինձ որ քան զամենն աւելի . ողորմեա տէր ամենայն անանկի և ինձ որ չկայ բնաւ ոտացս տեղի . ողորմեա տէր ամենայն տառապակուսի և ինձ որ անճարակակիր մնացի . ողորմեա տէր ամենայն աշխարհի և ինձ որ ամենայն մեղօք եմ գարշելի . բարեխօսութեամբ քո սուրբ ծնողի յաւուրն ահեղ դատաստանի . ողորմեա քո արեամբ գնեալ ծառայի , տեսոյդ արա զմեզիկ արժանի , զի անդադար աւրհնեացուք զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգի . . . . » :

— . ի միւս երեան .

« Ա.րդ ցանկացող եղեալ այսմ լուսազարդ և հոգեւոր բուրաստանիս որ կոչի սուրբ Ա.ետարան՝ տիկին եղներ և թոռն իւր պարոն Թորոսն որ գնեցին զսա ՚ի հալալ արդեանց իւրեանց և եպին յիշատակ ՚ի ձեռն Դանիէլ երիցու , որ կարդայ և յիշատակէ . և Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն : ի թվին . ՉկԹ. » :

— . ի միւս երեան .

« Ա.րդ և Ղ.ուկաս աքանչելի
Ձաւետարան իւր ցանկալի
Ցետ ութ ու տասն անցեալ ամի
Ձարշարանացըն Քրիստոսի
ՅԱնախոքու քաղաք մեծի
Գրեաց լեզուով սոյգ ՚ Ասորի
Իսկ որք ասեն ըզՂ.ուկայի
Ա.ետարան Յունով լեզուի .
Ապա գիարդ , յայսմն վայրի
Յոյժ մեզադիր վասն այս լինի

Մեծն Եպիփան երանելի ,
Զթարգմանելով ումեք մարթի
Լեզուվ առ այլ և ստոյգ գիտի :
« Եւ պի ինքն իսկ ի յԱստղի
Լեզուէն մեկնեաց ջանիւ մեծի
Զաւետարան իւր անթերի
Ի ցունարէն Հելլենացի
Որպէս և գրեալ կայ այսպիսի
Ի պատմութիւն սուրբ հարցն յայտնի ,
Զոր և պատմէ եկեղեցի
Ցիւր պատմութիւն անծածկելի .
Եւ Հաւր տացուք փառք անմահի ,
Որդւով Հոգւոյն անլռելի » :

— . Ի միւս երեան . գՑովհաննէ .

« Իսկ գՑօհաննեայ այսպէս ասին ,
Թէ յետ յիսուն և մի ամին
Վերանալոյ Տեառն յերկին ,
Մինչ քարոզէր գգործս բանին ,
Ի Դեմետիանոսէին
Հռովմայեցւոց թագաւորին :
« Աքտասահման եղեալ նորին
Առ 'ի Պատմոս կոչեալ կղզին ,
Երեքտասան ամ անդ ինքնին
Վասն Աստուծոյ եկաց բանին
Մինչև յաւուրս Ներոնին
Որ յետ նորա էր արքային .
Ապա հանեալ արձակեցին ,
Եւ անտի յետ դարձեալ նորին
Ի յաշխարհէ Ասիային ,
Եւ բնակեցաւ 'ի քաղաքին
Ի Եփեսոս և անդստին
Զաւետարանն իւր լանդրեցին ,
Եւ նա գրեաց լեզուվ ցունին ,
Որ է բարբառ Հելլենացին .
Եւ առաջնորդ եկաց նոցին

Յ.սիացւոց եկեղեցին,
Զոր զկնի արձակմանին
Եկաց և ամբս տասնեկին.
Այլ թէ ո՞րքան յետոյ Փրկչին
Զարչարանացն ամս ՚ի մարմին
Եկաց այլ ևս ե՞ այս ոքին՞
Եօթանասուն և հնգեսին,
Եւ ՚ի յետոյ քան զբնաւին
Սուրբ առաքեալն աւետեաին,
Նա փոխեցաւ յերկինս վերին,
Յանանց հանգիստ և երկնային։

« Այլ ՚ի յառաջ մինչ կենդանին
Էր և խնդրեաց իսկ զերեսին
Աւետարանն և փոյթ բերին
Յինքն՝ անդանաւր ուր և կային,
Զնախանկի գրեալն զՄատթէին
Յերուսաղէմ ածեալ մուծին,
Յ.ղէքսանդրէ զՄարկոսին,
Յ.նտիոքայ ըզՂուկային.
Եւ միացոյց որպէս գրեցին.
Նախ զՄատթէ, Մարկոս զկնին,
Ապա ՂուկայՀետ միջին
Եւ յետ նոցա զիւրըն վերջին,
Ի փառս Հաւր անսկզբանին
Եւ ՚ի ՅՈրդւոյ ծնունդ նմին
Եւ սուրբ Հոգւոյ բղխման նորին,
Երիս անձանց կամացն ՚ի մին,
Որում որք եմք հանուր մարմին,
Երգեմք զփառս ՚ի միասին »։

— Ի միւս երեսն.

« Աստուածարան սուրբ Յ.հաննէս,
Զիս Տիրատուր մեղաւք պէսպէս,
Խնդրեա մաքրել յախտոյ տղմէս՝
Քում Տեառն որ է ՚ի քերովբէս։
« Իսկ զՅ.հաննէս՝ արծուանըման,

Թռեաւ մտաւք անհոտական,
Ա՛ւ ի պատմել բանիւ մարդկան
Զանճառն էիցս հանրական։ »

Աղաչեմ զեզնկելի գրիչս ցՏիրատուր յիշել ի Տէր Աստուած »։

———

1· Ա-ԷՊՓԱՆ միջոր, մագաղաթ.

— . Ի սկիզբն Մարկոսի աւետարանին.

« ԶԳրիգորիս Աբասի գանալիտանս ի զբոյսէ և թարմատար երգնցուղ յիշեալքիք ի Քրիստոս, և զատացուղ աւետարանիս գվարդապետն Գրիգոր. և ամէն ցիսուս յիշողացդ և յիշելոց ողորմեացի. ամէն։ ՈՁԽ· գրեցաւ։

« Զեռամբ անխմաստ գրչի Գրիգորիսի յանապատի Սանդուլ կոչեցեալ ի ժամանակիս յորում բարեպաշտ թագաւորն Հեթում և աստուածատէր թագուհին Զաքել անուանեցին զսա իբրեանց հովանոց, և զեռածին մանուկն իբրեանց էր ամի միոյ և ամսոյ, որոյ տէր Աստուած տացէ ժամանակ բարի պարագայից ամաւք խաղաղանալ յայսմ կենցաղի »։

« Ո՛ պատուականդ իմ Գրիգոր վարդապետ յիշեա զեզնկելիս Գրիգոր և սխալանացս որ ի սմա անմեղադիր լեր, զի այդ էր կարմեր »։

— . Ի վախճան Յոհաննու աւետարանին։

« Յամի վեց հարիւրի
Եւթնից տասանց եւթնեկի,
Յարքայութեանն Հեթումի
Քրիստոսազօր թագաւորի,

Եւ ՚ի Հայոց պիտապետի
Սուրբ և ամբիծ հայրապետի
Որում կոստանդին անուն կոչի,
Կատարեցաւ տաճ մատենի
Քրիստոսական պատուիրանի
Աւետարանս հռչակելի,
Ձեռամբ իմով Գրիգորիսի
Թարմատառ գրչագրի
Եւ տուտ անուն երգեցողի,
Ի հրամանէ պատուաւորի
Սիրեցելոյ վարդապետի
Եղբօր մերոյ Գրիգորի,
Ի վայելուչն պանծալի
Իւր ձեռնադրութեն աշակերտի,
Որ է չնորհաւքն Քրիստոսի
Առաւելեալ յամենայնի,
Պաշտօն անուն իւր ճանաչի:

« Արդ որք ՚ի սոյն տաճ պատուելի
Վայելէք սիրով ուրախալի,
Առցէ յաղագս աւրինակի.
Սա է ընտիր և գովելի,
Ի գրչէ յոյժ ճարտարի,
Որհայեցի կոստանդընի,
Փոխակերպեալ յայս քարտեզի:

« Աղաչեմ յիշմամբ բարի
Ապագային մահու գկնի
Զաշխատող սին գրի
Եւ զտացող սորին նիւթի,
ԶԳրիգորիս ընդ Գրիգորի
Սրբաբան վարդապետի,
Արժանի յիշատակի
Արարէք, սուրբք ՚ի մարմնի.
Եւ Քրիստոնին սուրբ և բարի
Ստեղծաւղն էիցս համայնի
Մեզ և ձեզ ողորմեացի,
Որում պատիւ ընծայեացի

եւ փառք Հաւրն իւր անեղի
եւ Հոգւոյն Հարիապատուի,
Այժմ և յաւէտ յաղագս.
Ամէն աւետեաւնիւ յիրաւի »։

— . Խափիղն աւետարանին՝ տարրեր դրոյ գրեալ. « Ի թ՚ՁԼ. ՊՀՉ. ՚ի հայրապետութեան Տէր Պաւղոսի և յեպիսկոպոսութեան Տէր Մխիթարայ, Ամասիոյ վիճակին աստուածաշէր և բարեպաշտ քրիստոնեայս մղուեցեալ Սահակ գնաց գործոյ աւետարանն ՚ի յԱստուածատուր քահանայէն ԻԳ. Ֆլորի ի յիւր հալալ յընչից, և ՚ի յարդար վաստակոց. և ետ ՚ի Վաղալու եկեղեցին ՚ի սուրբ Սարգիս յիշատակ իւր և ծնողացն իւր Գառնուկին և մաւրն Ոսոխանէ, և ով՚ ոք իշխեսցէ յաւիշտակել գաւետարանս կամ ՚ի քահանայից, կամ ՚ի սարկաւագաց, կամ ՚ի ժողովրդոց, կամ գողանալով, կամ սիրելով, այլ կացցէ ՚ի հրճուանս սուրբ եկեղեցւոյս ՚ի գիւղաքաղաքիս ՚ի Վաղալայ ՚ի սուրբ Սարգիսն. և որ ոք յանդգնի հանելոյ զսա ՚ի սուրբ եկեղեցւոյս նա այնպիսին անիծեալ լիցի և բանադրանաւք ՚ի սուրբ հայրապետացն և ՚ի սուրբ եկեղեցւոյս, և որ ոք կարդայ կամ աւրինակէ, Աստուած ողորմի ասէ մղուեցեալ Սահակին, և ամենայն արեան մերձաւորաց և կարդացողաց և լաւ պահողաց »։

1· Ա՚եթոպան։ — . ի վերջն Մատթէոսի գրեալ. «Ցիշեցէք զՄէթ աստանուն արեզայս, որ գսուրբ Աւետարանս կազմեցի։ Ցիշեցէք զՆնաղանդ անուն հաւատարիմ կնին, որ գլնաց և կապել երեսս։ եւ Աստուած զձեզ յիշէ, ամէն, և որ զամէնն ասեն։»

« ՊՄՒ։ Քակեցին զեկեղեցիքն յԵգնկան և ՚ի Խայիքն։ Ն· վայ ինձ մեղաւորիս »։

— . Իվերջն Յօհաննու. « Զկազմող գրոց զմեզաւոր հոգւս զՊետրոս քահանայս ծնաւղաւք և աւետեան ազգականութք յիշեսջիք ՚ի Քրիստոս և մեղաց թողութիւն խնդրեցէք ՚ի Քրիստոսէ , և որք յիշէք , յիշեալ լիջիք ՚ի Քրիստոսէ , որ է աւրհնեալ յաւիտեան » :

Յիշատակարան ՚ի վախճան աւետարանիս. « Աւրհնեալ եւ անեղապաւր Աստուած ամենակալ յաւիտենից միշտ հզաւր և աքանչելագործ , որ տաս միտս տարակուսելոց ՚ի մէջ ունայն կենաց և խարտ աչխարհիս որոց և կամիս , զի ՚ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն , լոյս ծագես ՚ի սիրտս նոցա զի մի՛ ունայն վաստակեսցին , այլ ուղիղ վարուք և բարի գործովք կացցեն յայսմ աչխարհիս, զի ՚ի հանդերձեալ ահեղ ահաւոր բեմիդ կարասցեն կեալ յանդիման աեառնդ և փրկչիդ Յիսուսի Քրիստոսի տուողիդ անեղական բարեաց հոգւոց և մարմնոց :

« Որոց միաբազդ եղեալ յուսոյ գալստեան Աստուածորդւոյն , կին ումն աստուածասէր , անուն նորա Հնազանդ և որդւոյն իւրոյ Տիրուսր , և գնեաց զսուրբ Աւետարանս զայս յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց , հաւրն իւրոյ Աթին և մաւր իւրոյ Գուհար խաթունին և քուրջն իւր Մարիամ թագին , և հաւրեղբաւր իւրոյ Զաւակարին և Խազարին . ՚ի թվին Հայոց ՊԾԳ. գնեաց և ետ յիշատակ ՚ի Խայիքն . . . » :

« Եւ Հնազանդս գնեցի զսուրբ Աւետարանս ՚ի հալալ արդեանց իմոց և աւելի Գրիգոր երիցու որդւոյ Խաղաղութենայ , որ այլ մարդ իշխանութիւն չունենայ ՚ի վերայ աւսր Աւետարանիս , ոչ ապգ , ոչ որդի և ոչ գեղ-

խըտիքա. թէ կենայ թէ գնայ Գրիգոր երէց ինքն պահէ. ոչ ծախէ, ոչ պահէ, այլ կարգայ հանապազ, և ով առնու և կարդայ խնամով պահէ, և զԱյբ աբեղան յիշէ ընկազմոզս »:

— . Հոս հասած էր գործոյս տպագրութիւնը, և ահա Հայրենիք լրագրոյ 503 թուով հրատարակուած Ամասիայէն մի նամակ, 1879 յունվար 18 թուականով, կ'աւետէ Համալսարանական ընկերութեան արդիւնաւորութիւնը, և Ս. Մեսրոբեան երիտասարդաթանի մը բացումն. անոր խնամակալք և խնամակալուհիք ևս: Ահա ուրախութիւն լուր. և սիրտնիք իմ զգացած ցաւոց:

ՉԻԼԷ ԳԱՂԱԹ

Մայիս 27. մեկնեցանք Ամասիայէն, մեր Միհրդատայ դամբարկերտէն և Ստրաբոնի Գապիւին, կարսի արքային, վերջին անգամ նայելով, հին չէնքերով և անունով իակ - Ամասիա - Հայ քաղաքէն, դէպ ի Չիլէ քաղաք: Մի և նոյն կիրճ կը շարունակուի երկուք ու կէս ժամ. Իրիս խոժոռ ու խոտոր, թանձր ու կարմիր ափերով պզտոր կու գայ, երկու կողմն եղած թթենիք և այգիք ոռոգելով: Մեր ձախ կողմն կը թողունք Ս. Ցօհ. ուխտատեղին, ուր երկու կտոր վայտեայ յարկեր չինուած են նոր՝ Հայոց և Ցունաց: Նոյն կողմն վրայ դարա-

փին կից՝ առուի մը հետք կ՚երեւի, տեղ տեղ ալ ապառաժի պատահելով փորուած են քարերը, և նոյն առուն չարունակած. այս անցքով ջուր կը բերուի եղեր դեպի՝ քաղաքի մէջը. ասիկայ կ՚անուանեն ուղղացիք Ֆէրատ Եափոսի, զոր Հայք կը հասկընան Մեհրապատայ ջրի: Այս առուն իրրև մեծապարծուխիւն, իր վէպն ունի, և Ֆէրատն իրրև պիւցալն և իրրև սիրահար սիրուհոյ մը. առուէն վեր բարձրացած քարայրեւրին պապաթան վրայ կը ցուցնեն Ֆէրատին գերեզմանը, ուր սիրուհոյն գոհ ինկած է:

Կիրճէն դուրս կ՚ելնենք, ուր աղբիւրի մը քովէն կ՚անջատուի Թոքատ գնալիք մեծ ճանապարհ, կամ Բաղդադի ճեպքէն, Թուրհալայի վրայէն: Մենք կը խոտորինք՝ ի յաջ, և ահա մեր աչաց առջեւ կը տարածի Կելէկէն օվասին, փոքր հովիտ մը, մացառուտ, ծառաւէտ և խոտաւէտ, ուր Թրքաց և Չէրքէզաց գեղեր կան: Անդէոց երամ խուռն կը ճարակին հոս, գէր և կայտառ, զուարթ և արհամարհոտ նայուածքներ կը ձգեն անցորդին:

Փայտաչէն խախուտ կամուրջով մը անցանք գետը: Ահեղ էր հոս Իրիսին կերպարանքը, հսկայի մը նման, որ դեռ դադրած լինէր յաղթական արշաւանքէ, իր աջ ու ձախը և միջեւը ձեւացած աւազէ կղզեաց վրայ շատ մը հաստաբուն ծառոց դիակներ ձգած էր արմատախիլ, զորս խորտակած էր

իր կատաղութեամբ, և տեղ տեղ արեան մութ գունով թանձր ալիքներ կուգան։

Դարձեալ կիրճ. և կ'ակսինք բարձրանալ Ալթաղաճ լեռը, որ կը տեւէ իրր երեք ժամ. մացառուտ է և սաստիկ զառ 'ի վեր, քարուտ և բարձր, որոյ գագաթէն բոլոր չուրջ եղած մեծ լերանց գլուխները կ'երեւին. Մարզուանու հովիտ եւ անոր լեռները, Եըլտըզ տաղին, որ այդ կողմանց ամենէն բարձր լեռն է՝ և Սեւաստին մօտ։ Ալթաղաճի կողերուն վրայ Գըզըլպաշներու գեղեր կան. Մեր ուղին երկիւղալի է. բայց մեզ հետ Չէրքէզ ասկեան ունինք... ինչե՞ր կը պատմէ, ինչե՞ր կը ճառէ...։

Լեռան մէջ երեսը զառ 'ի վայր քիչ է. Ձիէն կ'երեւի. կ'իջնենք ուելի նեղ և քարուտ կիրճ մը, ուսոր կը հոսի վտակ մը, մօտ ընդ մօտ ջաղացքներ կան, աստ ու անդ այգիք և ծառաստանք, բայց թթենի՝ ոչ։ Այս վտակի ջուր կ'ուռոգէ և կ'արբուցանէ Ձիէն։ 8 ժամ է Ամասիայէն հոս։

Ձիէի դիրքը հովտի մը վրայ է, գեղեցիկ. և իր չուրջ այգիք և ծառաստանք, մշակեալ ընտիր անդաստանք, յայս և յայն կոյս կլորակ բլուրակներ։ Բուն բերդ բլուրի մը վրայ է, որոյ պարիսպները քակած և զօրանոց չինած են. քաղաքի չէնքերը բաւական տարածեալ. Հայք ու Տաճիկք գրեթէ խառն կը բնակին. փողոցներ անմաքուր, տներ ծռեւ, հոգ ուտաներ աղտոտ. կա-

նայք երիկ մարդու չալմայր կը հագնին՝ բայց սաւան մը կը կրեն, սատիկ փաթաթուած, բորիկ կը չրջէին։

Զիլէ իւր դիրքով այս կողմերու շատ քաղաքաց հետ յարաբերութեան յարմարութիւն ունի, ուստի և շատ անուանի է Զիլէ ֆանայէրէն, ուր ամեն տարի դեկտեմբեր ամսոյն կուգան ոչ միայն իր չրջակայներէն, այլ և Հալէպէն, Շամէն, Գաղաաիայէն, Կեսարիայէն բազմութիւն վաճառականաց, և մեծ առուտուր կ'ընեն. իսկ այժմ քնկած է այս ֆանայէրը։

Զիլէի մէջ կը գտնուին ասիական պրեթէ ամեն տեսակ արհեստաներ և արուեստաւորք, մասնաւորապէս խաղախորդութիւն, (պապոչ), որ Տաճկաց ձեռքն է, Հայեր պըրկեալ են այս արուեստէն. Տաճկներ կ'ըսեն թէ՝ «Մեր փէրը չհաճիր». իբր թէ նուիրական բան մը եղած լինէր. մեծ շահ կը քաղեն ասկէ, վասն զի շատ տեղեր կը պրկուին հոս բանուած կաշիներէն։ Ծաղկեալ է նաև բամբակէ ճերմակ կտաւ գործել, որ ընտիր է ու դիմացկուն, բայց բամբակը Խարբերդէն և ուրիշ գաւառներէ կուգայ. շատ տեղեր կը պրկուին Զիլէի կտաւներէն։ Այսպէս նաև մանիտա, և այծու մազէ ու կանեփէ չուաններ, մեծ ու պատիկ տոպրակներ, և այլ նիւթեր, որոնցմով ալէկ շահ ունին։

Զիլէ գինուորական նկատմամբ ալ նշա-

նաւար է իւր անառիկ կիրճերով, և՛ ի հնումն կարեւոր տեղ մը եղած է։

Քաղաքիս արեւմտեան կողմն իրր տասն վայրկեան հեռի Սէվէնը անուանով բլուր մը կայ, զոր Պօղըճա ևս կ՚անուանեն. տասը տոհմաւոր՝ տարածեալ են շատ մը այգեստաններ. բլուրն ամբողջ ղեղրուկներով լի է վերէն վար չուրջանակի, նոյն իսկ այգիներուն մէջ չէնքերու աւերակներ կան։ Ատոր կը հանուին երբեմն քարէ սիւներ, խարիսխ և խոյակներ. ատոր գտնուած էր քար մը, իրր մի մէթր երկայն, վրան մարդու կերպարան քանդակուած, որոյ դէմքը մուրճով ձեզ ձեզ ած՝ և անճանաչելի ըրած են. գլուխը աջըն փոխ թած էր նման։ Ձեռաց մէկն փակ և կշտէն կախ, իսկ միւսով ափին մէջ տաշտի ձեւով բաժակ մը բռնած դէպ՚ի բերան կը տանի։ Սոյն քարը Հայոց եկեղեցւոյն բակը մեծ մը գերեզմանի վրայ ձգուած է։ Դրամ և ուրիշ հնութիւններ ալ կը գտնուին սոյն հողերու մէջէն։ Հաւանական է կարծել թէ այս բլրոյն վրայ կանգնած է եղեր Անահտայ հռչակաւոր արձանն։

Երկու բլուրներ ալ քաղաքի հարաւային կողմն կան իրր քառորդ ժամ հեռի. մէկն՝ որ քիչ մը մեծ է, կ՚ըսուի Կապէ պապա, որոյ գագաթը գերեզման մը կայ՝ հռմանուն, և տատրատը՝ ուստի ջուր կը բղխի, գերեզման մը կայ Ալֆ պապա անուն, երկուքն ևս ուխ-

տաճարին: Իսկ միւս բլուրն կ'ըսուի Կէօվէօ-
ճէ-Լէ (ապառնոց): Հիւսիսակողմն բլուր մը
կայ Լաճեաք անուն, ուր գերեզման մը կայ
Շէյխ Ահմէտին, և նուիրական ծառոց
պուրակ մը: Բերդաբլուրն հարաւային կողին
վրայ քարայր մը ունի, ուր գերեզմանաձեւ
փորուած. ասկից ներս կայ և քարայր մը նո-
ճա ջայէրէ անուանուած, ուր ուխտ կ'երթան
կանայք տղայ ծնանելու համար և այն ծակ
քարէն կ'անցնին: Իմացայ դէպ ըսուած ուխ-
տատեղի մը ևս կայ՝ քաղաքէս իրր մէկ ժամ
հեռի, ուր Հայք և Տաճիկք կը յաճախեն:

Զիլէն՝ ի հարաւ երկու ժամ հեռի է
Զէլէկ, զոր Հայք կ'անուանեն Ս. Աբրոտա-
կէս հայրապետ, աւերակ է, քարէ սիւն մը
կայ կանգուն, լուսնտաներըը հոն ուխտ
կը տանին և կը կապեն այս սիւնին, կ'ըզ-
գաստանան. նաև այլ և այլ ախտաժէտներ
կու գան և կը բժշկուին. խաչքարեր կան,
և ուղղ տեղ յուշարձան դրեր:

Ըստ աւանդութեան՝ մեր Ս. Աբրոտա-
կէս հայրապետ Նիկիոյ ժողովին երթալուն,
հոս եկեր, աղօթքով և հրաշիւք ապրիւր մը
բղխեցուցեր է. դեռ կայ այն, զոր կ'ան-
ուանեն Լոյս ապրիւր, որոյ ջրով կը մկըր-
տուին և կը բուժուին հիւանդներ: Վանքի
տեղ է եղած այս տեղը, և քաղաքիս ծե-
րունի Տ. Աբրոտակէս քահանայն իրմէն հնա-
գոյն եկեղեցականներէ լսած է եղեր թէ՝
հոս գտնուած է Ս. Աստուածածնայ գօտին,

որ մեր Տայոնեաց մէջ, օգոստոս Լ. ին, այսպէս գրուած է . . . . Տայոնեցաւ Ս. Գօտի նորին Տիրուհւոյն մերոյ յեպիսկոպոսէն Զիլիւս ի թագաւորութեան բարեպաշտութին Յուստինիանոս . . . », առանց տեղւոյն անունը տալու : Ս. Աբրահամէն ժամ մը հեռի Զաքէր չոյէ ըսուած լերան վրայ խոշոր քէդել անունով ուխտատեղի մը կայ Տաճկաց ալ իսկ բուն քաղաքի մէջ Աչուս Դեհրէյոս անուն վկայարան մը կայ աւերակ, որոյ չուրջ Տաճկաց գերեզմանատունն է, որոյն գերեզմանքը փայտէ ցանկով պատած են, և ըսած են տաճկի սուրբ, ուր կան նաև երկու գերեզմանք Մոհէմմ Եֆենտի և Պէհէդիր անուններով : Մուէլիմն պաշտպան է և բաշխող հանճարոյ, իսկ Պէքիմիշն՝ բժիշկ սրտի ցաւոց : Խաչքարերով տեղ մ'ալ կայ, զոր Տաճիկք Քիւշէյէ Զելմեէ կ'անուանեն, ուր Հայք ևս ուխտի կ'երթան : Հոս է բնակիչները Բեդրեմի անունով ուխտատեղին, ևս կը հաւատային մեզ, և հաւանական է թէ այսքան ուխտատեղիներ քրիստոնէից են եղած, և բնակիչներէն չատերը թրքացած, կամ՝ ի բռնութենէ բուն թրքաց՝ ուխտատեղերն ալ թրքացուցած են . ատոր ապացոյց կու տային քաղաքի մէջ Հայոց հին թաղի Ս. Յարգիս եկեղեցին, զոր Տաճիկք դէպ եօթնեկնի ըրած ուխտած են այսօր, ուր գեռ Հայերը ուխտի կ'երթան :

Թրքաց հին բռնութեան արդիւնքն է որ

Զիլէի Հայք ամբողջ թուրքերէն կը խօսին, երբէք հայերէն չգիտեն. այնչափ կը զարհուրին տաճիկներէն, և կատարելապէս ընտրուկ են անոնց առջեւ։ Երբ կառավարութեան կամ իրենց ներշաց վրայ տեղեկութիւն կը հարցընէի, մէկն կ'ուզէր կռկռալով բան մը ըսել, միւսներ կը ծածկէին, մէկ մէկէ անվստահ էին, և կը դողային չվնդ՝ թէ դուրս լսուէր իրենց ձայն։ Ազգութեան ոգին մեռած էր, և ժամանակ դեռ չէր կրցեր զարթուցանել սառնք, կեանքի ճառագայթ մը երբէք ծագած չէր հոս։ Ո՞վ էր պարտական սառնց . . . ։ Ազքատ չէին, բայց մուրացկանի նման էր իրենց հագուստն և ներքին ու արտաքին երեւոյթն, որպէս զի չցուցընեն թէ բան մը ունին, և այս անոր համար, որ թուրքեր կը խլեն եղեր իրենցմէ՝ եթէ ապկ բան մը տեսնեն։ Այսու ամենայնիւ կանանց և աղջկանց ճակատները ասկեշար էին։ Արդարև Զիլէի թուրքեր չափէն աւելի մոլեռանդ և անկիրթ են, կատարեալ բարբարոս. նախատանօք կը վարուին Հայոց հետ, մարդու տեղ չեն դներ. կը պրկեն, կը խլեն, կը հայհոյեն, կը ծեծեն, և Հայք խոհեմութիւն կը համարին լռել և լուել, որպէս զի կարող լինին ապրիլ. եթէ ապրիլ էր այս։ Ընդհակառակը բերած ժամանակ կը քարկոծեն, քահանայն փողոցէ անցած ատեն լամուկները երամով հոտէն կը վազեն աղաղակելով «Քէչի՛չ, օ՛չ, օ՛չ . . .»։ Նոյն

օրեր ժամկոչը դիշեր մը չարաչար ծեծեր էին, և քիչ մը դիմանալուն համար, գանակ քաշեր էին վրան ապաննելու համար, հազիւ խոյս տուած էր։

Այս տեղի Միւթթիէն գոհ էին Հայէ, և այն՝ Կ. Պոլիս Մէպուս գալէն ու գառնալէն պիտի, Դիտելի է որ Զիլէն Պոլիս պանդուխտ չկայ և ոչ վաճառականութեան համար եկող։

Այս քաղաքի մէջ կը բնակին մի միայն Հայէ և Թուրք, ցոյնք եղեր են յառաջ, իսկ այժմ քանի մը վաճառական և երթ կը գըտնուին երթ և եկ. ցուռնաց մէկ եկեղեցի կայ առանց քահանայի, Թէպէտ՝ ի հնումն եպիսկոպոսանիստ է եղած, ինչպէս վերը տեսանք։ Հայոց ալ մէկ եկեղեցի կայ բաւական ընդարձակ, Ս. Յակոբ անուն, որ ունի կալուածներ 12 խանութ, 2 տուն և մէկ ճէհրիմիկ. բակի մէջն է գերեզմանոց, քանի մը սենեակ, վարժատուն և չքեղ Առաջնորդարան մը։

Զիլէի Հայէ արուեստաց արժանի վիճակ մը ունէին. 200 աշակերտներ կ'երթեւեկէին վարժարանը, ուր հասարակ ընթերցանութիւն և գրել կը սորվէին. սակայն առանց երբէք հայերէն խօսելու և առանց հասկնալու, տեղական սիրացու մի էր իրենց վարժապետ՝ թրքախօս, և իրենց ծնողք թրքախօս։ Բոլոր քաղաքի մէջ երկու քահանայք կային Հայերէն հասկցող։ Կայտառ մանկունք և սիրացուք չատ կանոնաւորութեամբ

կ'երգէին եկեղեցին ու կ'ընթեռնուին ընթերցուածները անոնց, բայց և ոչ բառ մը հասկընալով. իրրև մեքենայ, կամ իրրև գծնծղայս որ ղօղանջեն։ Կարի չերմեռանդ իրենց պահքին և օրէնքին. բայց քրիստոնէութեան բուն հոգին, և անոր պատուղ՝ գործք, չունէին։ Մի և նոյն ժամանակ կարի չերմեռանդ էին օղիին. և խաբէութիւնը խոհեմութեան փոխանակ ունէին։ Չիս ալ քանի մը բաներու մէջ խաբեցին։ Մայիս 28, որ երկրորդ Պազկտարդի ոօն էր, Մեծահրաշ եկեղեցւոյ մէջ քարոզ խօսեցայ իրենց, և թաղականները գրեթէ երիւս օր առաջ յորդորեցի որ արթննան և վարժարանի համար դրամ չխնայեն. իրենց մանկանց մայրենի լեզուն և ուսումնք ուսուցանեն, ևս, ևս։ Թէպէտ կը խոստանային, բայց յայտնի էր թէ չէին հաւատացած. մեծ հաւատարմ ունէին իրենց Պատմչորդին վրայ, ուստի Արքազանին առաջին հոգ. պիտի լինէր աստնց պէտքն ու գործերը։ Բայց ո՞վ էր իրենց Պատմչորդն. Եւդոկիոյ Ձգնաւորեան Յակոբ եպիսկոպոսը, զոր պիտի տեսանենք իւր տեղը։

Չիլէի քաղ. կառավար. է Գայմապատմութիւն, Պատիւ Միաբանութեան ներքեւ։ Եկեղեցի 1. Ս. Յակոբ։ Վարժարան 1. Ս. Մեսրոբեան։ Ծախք վարժարանի 3400 դրշ. եկեղեցւէն։ Պատանողք 200 մանկունք։ Թիւ Հայոց 2012, որոց 12 Բողոքականք և 93 Մաղագործք։ Թուրք 16688։

Զիւէի եկեղեցւոյ ձեռագիր մատեանները տեսնել ուզեցի, ապչեցայ, երբ քահանան պատմեց թէ քանի մը տարի առաջ շատ ձեռագիրները եկեղեցւոյ ոմանի ներքեւ թաղած են, ինչպէս նաեւ վախճանեալ քահանայի մարմնոյն հետ դերեզմանը դրած։ Աւելի արժանի չէի՞ն իրենք ողջ ողջ թաղուելու։ Բայց եւ յաջողեցայ հետեւեալները փոշիներու միջէն բերել տալ ու նայիլ։

Թէպէտ բաւական թուով ձեռագիրներ կային, բայց ես ամենքը չկրցի տեսնել, այլ միայն հետեւեալները, և անոնց յիշատակարաններէն օրինակեցի։

ՁԵՌԱԳԻՐՔ ԵՒ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ

1. Մաշտոց. «... Ով սուրբ ընթերցող, անմեղադիր լեր, զի ծածուկն և չտապն այսպէս լինի բանն. վասն յիշելոյ է պիտանի. և մեք ապրի ապրի և յոյժ տարաբերիմք։ Զմեռեալս հոգւով յիշեա ով ժառանգող»։

«ԵՒ ԿԼԵԼ ||.:: | · ||| :: | :: | : | ::: |||| :: : || :

« ~ ցա՜ է ։ է ։ ա՜ն ։ ՈՐ ՋԺԴ. թուականին ծնայ զառաս 'ի գեօղն որ կոչի Խալկին, ընդհովանեաւ Ս. Աստուածածնին. ամէն։ Եւ պիս զանպիտան զտէր Թովմայն, որ աշխատեցայ և գրեցի զառաս. ով որ պիս յիշէ, նա Աստուած պինքն յիշէ յերկինից արքայութիւնն. ամէն»։

— . ի ներքոյ, այլ գրով դրեալ. «Զայս գրողին Աստուած կարողութիւն տայ։ Թուա-

կանխս ՈՄՋԴ գրեցաւ, որ է Թուականն »։ « Յիշատակ է սուրբ Յակոբ եկեղեցւոյն »։

1· Մաշոց քահանայից· « . . . Գրեցաւ սա 'ի գիւղաքաղաքն Մարդասան, ընդ հովանեաւ Ս· Աստուածածնի տաճարիս, 'ի թուականութեանս Հայկազեան տուեալիս հազարերորդի, ութծուներորդի և ե· արարարդի, օգոստոս ամսոյ ԺԲ· աբեղն ուրբաթ, ձեռամբ յոգնամեղ և անարուեստ սուտանուն Միքայէլ դպրի, 'ի վայելումն ոչ Աստուածատուրին . . . »։ — · ի լուսանցն· « . . . Գրեցաւ թուին ՈՋե· Մաշոցս Մարիամին և ծնողաց նորին հօրն Ովանէսին և մօրն Փառայինի· և որք զողորմին առեն։ Եւ եձ· ստակ։ « Յիշատակ է Մաշոցս Աւետիքին· եւսեր իւր աղջկան հոգւոյն կէս զուրուշ· Աստուած ողորմի իւր հոգուն և իւր զաւակին։ « Յիշատակ է Մաշոցս Գաւիթին հոգուն համար եւսեր կէս զրչ· Ամէն »։ « ՈՂԲ »։

1· Ա-եփոքան մագաղաթ, պատկերազարդ։ « Փառք աւետաւորդ երրորդութեան . . . որ և զմեզ մեղուցեալս փրկեացէ . . . և զծնաւղսն իմ զտէր Մեսրոպեանս քահանայն, որ մանկանուն Ղ-ոփ տէրտէր ասի, և զմայրն իմ զՋմշութն, և զեղբայր նորին զՍաղաքիա զմեծ բարեւնապետն որ բազում աշխատանս ունին 'ի վերայ իմ և ուսարութեանս իմ սիրելիչ . . . և զքոյրն իմ զՀռիփինան և զդուստրն իմ զկիրկին Հեղինան որ հանգեաւ 'ի Քրիստոս ՈՃԶ· արար աղէխարչ զղաւածեալ ծերս անվախճար, որ եղեւ վասն մեղաց իմոց։ Եւ հուսկ յետոյ ոսկարս մարմնով, այլ և հոգւով յետնեալս 'ի ժամանակաց ես Աւէքսանոս գրիչս 'ի ծերութեան ժամանակիս, հաւատս կալայ, որ աչքս

վառեալ, որ աչնոցով հազիւ կարէի նկատել, և ձեռս դողայր, որ՝ի գրել և՝ի ծալկել և նկարել զպատկերաց ոչ կարէի ուղիղ դնել. և հաւատս անձին կալայ վասն յետ մեռացից յիշատակ յիշման արժանի առնելոյ պիս անարժանս, որ յիշելոյ չեմ արժանի: Եղեւ աւարտումն տուր Աւետարանս՝ի թուականի Հայոց ՌՃՓ. ՚ի փառս Քրիստոսի . . . »: — . ի տողեւ այլ գրով գրեալ. « . . . Ցիշեցէք . . . զպատուականն զարան, որք բազում ջանիւ և սիրով յօժարութեամբ զուն գործեալ թափեցին զաս՚ի ձեռաց այլազգաց, տալով նոցա զկրկին գին, ազատեցին՚ի գերութենէ, ակն ունելով Աստուծոյ իբրեանց թողութիւն առնուլ և ազատիլ՚ի մեզաց և անցանաց իւրեանց. որ և ձեզ յիշողացդ ողորմեսցի . . . Ամէն» «ի թուականութեան Հայկայ ՌՃ. ամենի և չորս տասնեակ ընդ սմա թիւ բազմապատկի, որ միշտ տալաւ կայ՚ի համարի. յիշատակ եղեալ արքն հոգելի որ՚ի Զիլա գիւղաքաղաքն անուանի. ՚ի դուռն Ս. Յակոբայ աստուածաշէն և աստուածազարդ եկեղեցի: Աւ ձեզ աղերսեմք մանկունք նորոյ Սիոնի, գորով ունիլ սորին անվնաս պահել յամենայնի. և ոչ հանել կամ գողանալ և կամ գրաւել. այլ թէ ոք յանդգնի ննջգել սորին վնասիւ, պարտական լիցի յաւուրն դատաստանի, և առցէ պատիժ ընդ խաչահանուացն և որք՚ի սորին կարգին են. իսկ լաւ պահողքն յամենայն վնասուցն, աւրհնեալ լիցին՚ի Քրիստոսէ Աստուծոյ անպրաւ յաւիտեանս. Ամէն»: Հայր մեր":

———

ԹՕՓԱԴ ՔԱՂԱՔ

Մայիս 29. Զիլէէն եկանք։ Անպատմելի դեղեցկութեամբ, ճերմակ, դեղին, կարմիր ու կանանչ գոյներով պճնազարդեալ է Զիլէի ընդարձակ հովիտն, խաչխաչներու ծաղիկներով, հասկած ցորեններով և հասած խոտերով. տեղ տեղ ալ թիւթիւնի արտեր են։ Չարխ ուղի է մինչև Թոքատ, կլոր կլոր հովիտներու բաժնուած, զորս կը սահմանափակեն մանր լեռներ։ Անհիւակ երկիրներ բուսական կան՝ առատ արօտներով, այլ անջրդի։ Լեռնակաց ոտոտաները Թուրքի, Զէրքէզ և Քրդաց գեղեր են. դաշտաց մէջ անդադար խուռներամ կը ճարակին։ Հինգ ժամ յառաջ երթալով կը հասնինք Գ.-ալէ կէօլ ըսուած եղէգնուտ չամիը. ուր կը թառին և կը թռչին անթիւ ոստեր, բադեր, արագիլ և զանազան թռչուններ։ Օդը կարմրաթոյր է և տատապին. բզէզներ, մոծակներ և խոշոր ու խայթող ճանճեր գունդ գունդ կը յարձակին, կը խոցեն խեղճ անասուններն և ուղեւորները, ձիոց, կովուց և եզանց պոչն ու գլուխ չարունակ կը շարժին, ձիերը անհանգիստ իրենց սլարանոցը կը ցնցեն. իսկ էշերը իրենց խոշոր ականջները կը տատանեցընեն և կարճուկ ոտքերը անդադար կ'երերցընեն, և մերթ ամենքը մէկանց չեփորներու չառաչիւնը կ'արձակեն, այլ 'ի զուր.

անուանեն կը մնայ թշնամեաց առաւար փա-
ղանգը և արիւնախոյ կ'ընեն չորքոտանի հե-
րոսները : Մարդիկ իսկ պէտք է փաթթեն
իրենց երեսները և պաշտպանեն զիրենք այս
անվախ բանակին դէմ : Կրիաներ , օձեր , և
այլ և այլ զեռուններ ու սողուններ կը վխտան
հոս , միայն արագիլներէն կը խուսեն : Իբր
թէ հերիք չէին ասոնք ուղեւորը տառապե-
ցընելու , աւազակ մարդիկներով ալ լի է այս
վայրը : Ղափկէօլի մէկալ ծայրէն կը նշմար-
ուի Թուրհալայի դիրքը , որ կիրճին մը բերանն
է . ուր կը մտնէ Իրիս կամ Թօզ ատլ գետը ,
և ձորերու միջով կ'ընթանայ Ամասիա : Ութն
ժամ տեւեց մեր դնացքը , և հասանք Բա-
զար գեղը Թուրքաց , որ ծառաւէտ և այգե-
ւէտ փոքր աւան մ'է , ուր օթեցինք գիշերը :
Հետեւեալ առաւօտեան՝ թէպէտ օդին տա-
սը չափսպանց , բայց վաղուն առատ ջրերու ,
ծառոց հովանեաց , և վայելչագեղ դեղերու
կը հանդիպինք , ուր Հայ բնակիչներ ալ կան .
սոյն գիւղերն են , որ Սեւաստիոյ կը մատա-
կարարեն այնքան ճոխ ու համեղ զանազան
միրգեր , խաղող և գինի : Մեր ճամբակցին
կ'երեւին Քրդաց նկուղաձեւ անշուք և ան-
տունկ գեղեր , որոց բնակիչքը իրենց խա-
չինքներով մեկնած են հովատուն լեռները :
Տեղ տեղ չինուած աղբիւրներ կան , խաներ
և նշանաւոր չէնքեր ընտիր արհատաշէն քարե-
րով կերտուած , այլ ամայի , լքեալ ու ա-
ւերակ . ասոնց համար կ'ըսէին թէ Սուլթան

Մուրատ Բաղդատի վրայ դնալուն և գալուն չինել տուած է եղեր. ապահովութեան և հանգստութեան համար: Ուրեք ուրեք ալ թէֆէ անուանով քարակոյտեր և ուխտատեղի եզած դերեզմաններ կան, ուր տաճիկները կը բերեն իրենց հիւանդները. սուրբ Ծառեր՝ որոց ոտերուն վրայ բժժանքներ են կապեր: Թօքատին ժամ ու կէս մնացած՝ քարաշէն մեծ կամուրջն է, որ կը միացընէ Թուրհալայի ուղին Զիլէի ուղւոյն. այս կամուրջն ալ Սուլթան Մուրատի շէնքն է: Ասիա ուղեւորող մը յաճախ կը հանդիպի այս երջանիկ Սուլթանին աշխարհաշէն գործոց, մեծամեծ և հոյակապ կամուրջներուս, խաներուս, ճանապարհներուս, պահնակներուս, եւն, որոց չատերը անեղծ և սիւտանի են դեռ. ամեն բերան կ'օրհնէ այսպիսի թագաւորի մը յիշատակ, որ իր երկիրն ու ժողովուրդը չէն ու անդորր պահելու հոգեր հոգացեր է, և երանի՛ կը կարդայ այն ժամանակին, որ եղեր է ժամանակ չինելոյ, ժամանակ տընկելոյ, ժամանակ ծնանելոյ, ժամանակ բժըշկելոյ, ժամանակ ծիծաղելոյ և կաքաւելոյ, ժամանակ քարինա ժողովելոյ և կարկատելոյ, ժամանակ խնդրելոյ և պահելոյ, ժամանակ խօսելոյ և սիրելոյ, ժամանակ պիրկս արկանելոյ և խաղաղութեան, երբ կը բաղդատեն ներկայիս հետ. որ է ժամանակ մեռանելոյ, խլելոյ, սպանանելոյ, կոծելոյ, ցրուելոյ, կորուսանելոյ, արտաքս հանելոյ,

պատառելոյ, լռելոյ, ատելոյ, հեռանալոյ և պատերազմի։

Ինչ մը ևս յառաջ երթալով, պարզ կը ցուցընէ իր զանգակատունն Հայոց Ս. Ցուսաւկիմ—Աննայի վանքն՝ դեռոյն միւս երեսը, բարձրադիր, քաղաքի այգեստաններուն կատարը, ծառաստաններու միջէն։ Հովիտը սպառելու վրայ է, խոր գոգ մը կը թացուի, շրջապատեալ լեռներէ։ Գետն ոլոր մոլոր կը հոսի, երկու կողմն դրախտներ ունենալով. այգեստանքն են ատոնք, որ իրենց մէջն ունին բազմաւետակ մրգերնոց ծառեր և տրանգ երանգ վարդեր, որոց սքանչելի գոյնը և երանուէտ անուշահոտութիւնք կ'ըմայլեցընեն զնարդ։ Խիտ խիտ ծառերէն՝ ի վայր կախուած են կայզ կայզ կեռասներ պարտուտ ու գէր, սպիտակ ու կարմիր, և դառոտակներըն՝ որ ոտոց միջէն կը պտրտին կիթելու զանոնք, նոյնքան սիրուն, զգեցեալ նրբաթել շղարշներ՝ ի դոյն սպիտակ և բոսոր, տոքա դառերը են թօքատու. խառն ատոնց հետ երամովին ելեւէջ կ'ընեն գունեղ ու փուխկամփեռուր թռչունք թեւաբախիկ ու կարկաչաձայն, մրցելու, խլելու իրենց կտուցներով քաղցրահամ կեռասն աւարող ձեռներէն։ Իսկ վարդենեաց տակն ու վրան կը բզզայ մեղուաց պար, կը գեղգեղէ պուլպուլն սիրահար, և մանկտին փունջեր կը կապէ թուփերու հովը նատած, պուլպուլին երգոց և մեղուին տզտզոցին խառնելով իր ճըլվլուն։

Այսպէս ամրալի անցքով մը մտանք բուն Թօքատ քաղաքը, որ ճնշուած է լեռներու և ժայռերու մէջ. անտանելի է արեւուն տաքն ու տապ. բնակիչքը գրեթէ ամենքն ալ ելած էին այգիներն ու դեղերը: Քաղաքին մէջ առատ են ջրեր. փողոցները՝ լայն ու նեղ, մաքուր և անմաքուր, հարթ և ելևէջ. շէնքերը հում աղիւսով են, այլ՝ ի ներքուստ բռեալ և չքեղ, կահ կարասիք և պղեստուց ձեւերը պերճ ասիական. խիստ քիչ է եւրոպական:

Հին բերդ՝ հիւսիսակողմեան ապառաժին վրայ է, աւերակ: Քաղաքի մէջն ալ կան քանի մը աւերակներ, որոց մնացորդներէն և դրանց ու ճակատուց վրայ եղած չքեղ քանդակներէն, ձեւերէն ու գրերէն կ'երեւին թէ չքեղ շէնքեր են եղած երբեմն. այսպէս է թէմըհանան, քանի մը մզկիթ, խան, եւ: Կայ և մի հնագոյն գմբէթ, որ թրծած աղիւսով է շինուած, խարխալեալ, որոյ գագաթան վրայ բոյն դրած էին զոյգ մը արագիլներ և իրենց ծիրտրեով ներկեր էին այգ յարկը, որոց ներքեւ հող կտրած կ'աւելուէր աշխարհասատան Լէնկթէմուրին մէկ որդին: Ո՛վ ժամանակ . . .:

Թօքատու շուկան ճոխ է, բայց անկանոն. խանութները ցիր ու ցան: Ամենէն նշանաւոր արուեստն է պղնձագործութիւն: Արդնու մատէնէն և կապան մատէնէն եկած պղինձները հոս կը հալուին և կը ձուլուին,

և ամէն կը բաժնուին այլ և այլ կողմեր . հոս կը շինուին նաև ամեն տեսակ պղնձի ա- նօթ : Երբեմն քաղաքիս բնակչաց մեծ մասն այս արուեստով կը շահուէին , բայց այժմ պակասած է : Ածելի ծաղկեալ և ծաղկելու վրայ է պատճէնը , կտաւեղինաց վրայ գունաւոր տիպ , բաղմոցի և բարձի երես ու սիրուց , վերմակի պորտ , վարագոյր , կերպ կերպ եռվաներ խամ և խաս զոր բաւական քա- նակութեամբ կը վաճառեն ուրիշ գաւառաց, այնպէս և մանիսա, ևն : Արուեստաւորք Հայք են : Իրր երեք տարիէ հետէ սկսած էին խաչխաչի մշակութիւն . քաղաքի շուրջ եղած արտերը , և մօտակայ գեղերը գրեթէ ամ- բողջովին ներմանած էին այս բոյսը , և հա- սած էր աֆիոնը ճրկելու և ժողովելու օր . ո՛րքան գործ բացուած էր երկրագործաց . այր և կին , աղջիկ և մանուկ , գեղացին և քաղաքացին զբաղեալ էին առով , և աղքատ- ները աղէկ օրական կը շահէին . կային ոմանք որ իրենց այգին անդամ քակեր ու խաչխաչ ցաներ էին : Մեծ քանակութեամբ թիւթիւն կը մշակեն թօքատ և իւր գեղերը . առատ ճէհրի ունին , և այլ շահաւէտ բերքեր :

Իրիս գեղը քաղաքիս չրթնէն կը հոսի , իր վրայ ունի քարաչէն գեղեցիկ կամուրջ մը : Այգեստաններաց մեծ մասն յայնկոյս գետոյն կը տարածին իրրև ժամու մը գնացք . վայե- լուչ ճաշակով տնկուած ու յարդարուած են վարդենեօք և ալէս ալէս պտղոց ծառով , և

'ի միջի որթ խաղողոյ. չատերն ունին առանձին աւազան, ուր մշտահոս կը թափին ջուր. ունին նաև ամառուան բնակութեան համար շնորհքով հովանոցներ (թեշէ)։ Առնք կը ցուցընեն Թօքատցւոց գուարճասէր կեանք և ունեցոր վիճակը, թէպէտ այժմ նոյն չէին։ Թօքատ իր այս դրախտներով և այգեստաններով արդարև գերազանց ու չքեղ է այն կողմերու քաղաքաց մէջ, իր հռչակին արժանի։

Այլ սակայն, ա՛ գեղանի՛դ քաղաք, քո այսքան վայելչութեամբ հանդերձ չես կարող հրապուրել Վանայ այգեստանցին. դու միշտ անյագապատելի կը մնաս իմ հայրենեաց հետ. քեզ կը պակսին Վարագայ աղբերակունք և անմահութեան ծաղկունք. ո՞ւր են քո պարզ այերք և պապղուն առուղունք. ի՞նչպէս կարելի է ցուցել քո մշտապղտոր Իրխին խոժոռ երեսը՝ մեր վճիտ ծովուն՝ ծփծփուն, ծիծաղող, անուշ պատկերին. ո՞ւր քո ընդարձակ փողոցները, և անոնց մէջ ու ձախ գլգլացող առուները, և ի գնացս ջուրց անկել սաղարթախիտ հովասփիւռ ծառերը. վերջապէս ո՞ւր են, և ես չեմ յիշեր մեր բերդին հրաշալիքներ, և հայկական անուան, փառաց և չինից վայրեր ու նշմարները։ Ցեղդ կեցիր դու, Եւդոքսիոյ կերտուածդ. քեզ չեմ կարող առ օրինակ և ոչ մեր Ամասիան միայնակ։

Թօքատու մէջ եօթն եկեղեցիք կան

Հայոց, պայծառ չինուածով և ճոխ պճեռտուններով, արծաթի և ոսկի զարդերով ու առնօիններով. քանիներ աւելի հարուստ են պրատպվոով և եկատուաններով. իրարու պրեթէ կից են Ս. Երրորդութիւն, Ս. Մինաս և Ս. Աստուածածին. իսկ Ս. Լուսաւորիչ և Ս. կարապետ զատ թաղերու մէջ. Ս. Գէորգ և Ս. Քառասուն մանուկ՝ քաղաքի երկու թեւոց ծայրերը չինուած: Թէպէտ ժողովուրդ քիչ է, բայց իւրաքանչիւր թաղեցի իր եկեղեցին ունի և ամուր յուսած է, կարծես մի և նոյն ժողովուրդ և մի և ապրի եկեղեցիներ չեն: Մայր եկեղեցին է, Ս. Աստուածածին, որոյ մօտ չինուած է Առաջնորդարանը: Առաջնորդարանի դուռն քիչ անգամ բաց կը մնայ. և ոչ օր, և ոչ որուհետև անձինք կային ժողովք կազմելու: Առաջնորդ Յակոբ եպիսկոպոս ձգնաւորեանն աւելի կառավարութեան անդամ էր քան թէ Ազգին Առաջնորդ. դռները փակելով բանալին գօտին պարկած՝ կ'երթար կառավարութեան դուռը մինչև երեկոյ. և իր ձփնաւոր կոչման համաձայն՝ ամեն առաւօտ եկեղեցիէն դառնալով Սաղմոս և Նարեկ կը քաղէր: Այս ժամուս՝ դեղերէն և թաղերէն բազմաթուն լանչ բամպուլցներ կ'ապասէին իրեն, զոր հեռուէն ձգելով, կամ իրմէն առաջ ու ետքը զրկելով, կ'առաջնորդէր կառավարութեան: Խիստ թեթեւ էր ազգային ժողովոց գործը. մանաւանդ մարդ

կարող է լսել, գործ չէր թողուր անոնց։ Ինքն Արբաղան բնիկ լինելով թօքատոյ, յաճախակի իւր օրերը և ժամերը կ'անցընէր եղբօր տունը, և կը մշակէր եղբօր այգին. և ցավակիմ—Աննայի վանքը կ'երթար, ուր եղբօր ընտանիք և ուրիշ քանի մը ընտանիք կը բնակէին ամրան ամիսները։

Արբաղանը տղայի պէս հաճոյք կ'զգար ինքզինքը գովելու. գրեթէ ամեն օր իւր մեծագործութիւններ, իւր մեծախօսութիւնները՝ վերակրկնելով կը պատմէր. դատապարտուած էի մի և նոյն բաները միշտ լսել, զորս իրմէ զատ ուրիշ ոք չէր պատմէր. իւր առաքինութիւնները՝ երիտասարդական հատակէն՝ ի վեր, եպիսկոպոսանալու չափուր էջմիածին դնացած տեղը՝ պետրոս կաթողիկոսէն և հայոց միաբանութենէն գտած ընդունելութիւնը, իւր հանճարոյն և արժանեաց վրայ անոնց ունեցած հիացումն, իւր քաղցրանուագ ձայնը, իւր մինչև այսօր Պօլիս չտեսնելուն պարծանքը, իւր անպատուաղ աղգասիրութիւնները, եւ, եւ. մինչև անգամ չկրկեց զմեզ ըսելէ թէ՝ պիրք նայելով գողոնքներ գտած է եղեր, և գիտէ գաղտնի գիտութեանց արուեստը, եւ։ — Ի՛նչ մեծ արժանիք եպիսկոպոսի մը կամ Աոաջնորդի մը։ Եւ սակայն իրական գործքերը, որ իւր պաշտօնն կը պահանջէր, չտեսանք։ Քաղ. և կրօնական ժողովներ անուանական, Ընտրութեան և Տնտեսական

խորհուրդ չկայ, տուժարներու և արձանագրութեանց երեսը չտեսանք. ընկերութիւններ լքեալ, վարժարանները փակեալ:

Անտարակոյս ամեն բանէ յառաջ վարժարանները էին մեր տեսութեան փափագ և ուշադրութիւնը գրաւող. ո՞վ կրնայ պատմել պղտցածս ցաւը, երբ իմացայ թէ վարժապետաց թոշակ չվճարուելուն համար ցըրուած էին ուսանողք և ուսուցիչք: Երբ մեր յաճախակի խնդրանաց վրայ, հապիւ արժանի եղանք գալ. ժողովոյ Ատենապետ էֆէնտիին երեսը տեսնելու. և երբ յուզեալ կը խօսէինք վարժարանաց վիճակին վրայ, 'ի կարգս չատ մը պատճառաբանութեանց, Ատենապետ էֆէնտին 'ի ներկայութեան Ս. Ա. աջնորդին հետեւեալ ինձ ըսելու թէ՝ վարժարանները անհատուածութեան տուներ են, ևն: Այս էֆէնտին մի և նոյն ժամանակ կը պատմէր թէ՝ ինքն ներհուն է մոդական գիտութեանց, վեցհազարեակի վարպետ և Դաւիթ Անյաղթի անունով՝ Ա. Բ. Գ.ի թուահանուրով կը թափանցէր ամեն զաղտնեաց՝ յերկինս և յերկրի և 'ի սիրտ մարդոյ. ուստի եղեր Աղաւէր գիրք, որով ամենայն ինչ կը գուշակէ, ևն, ևն: Ահա այսպիսի մէկն էր Խիմկեան Ցօհ. էֆէնտին, որոյ ձեռքը յանձնուած էր Թօքատու Ազգային վարչութիւնը, որ յամենայնի հաստնթաց կը թուէր և հաստատիտ Ս. Ա. աջնորդին: Երանի՛ այդ քաղաքին:

Խռովութիւն չյարուցանելու համար, կ'ըսէին ասոնք, թոյլ տուած ենք ազգային վիճակը այս վիճակին մէջ. մեր եկեղեցիներ ու թաղեցիները ապստամբ են և մեր իրաւասութիւնը չեն ճանչնար: Կը յիշեցնէին ինձ թէ՝ երբեմն Տ. Փիլիպպոս և Տ. Կիւրեղ վարդապետները իրարև քննիչ հոս եկած և ծեծ կերած էին. ծե՛ծ, կը չեշտէին՝ ծե՛ծ. ի՞նչ էր իրենց միտքը . . . : — Բայց եթէ քննութեան առնուէր այդ ծեծը, տակէն ո՞վ դուրս կուգար արդեօք: — Եթէ դուք հրաւիրէք զանոնք յանուն օրինաց, և բացատրէք իրենց օգուտը, դարձեալ խռովութի՞ւն կը յառնէ. և ի՞նչ պիտի լինի այդ խռովութեան վախճանը, առ առաւելն հրաժարումն Ձեր պաշտօնէն. մի՛ վախնաք, բուն ձեր միտք պիտի լինի այդ:

Սակայն ժողովուրդն առանց պէս չէր խօսեր. երես առ երես կ'ըսէին, թէ՝ Սերբապան, դուք եկեղեցւոյ բեմէն կ'որոտաք վարժարանաց բացման համար. կը յորդորէք, բայց չէք իրականացըներ. ժողովուրդ և թաղականք պատրաստ են, բայց դուք չէք հրաւիրեր. դուք խօսելով կ'ուզէք արդարացընել Ձեր անձը, բայց գործադրելն է բուն Ձեր պաշտօնը, ևս, ևս: Երկուստեք չատ մը խօսքեր:

Թէպէտ եկեղեցեաց բակերը ծաղկոցներ կան եղեր, բայց նշանաւոր ուսումնարանն էր վարպանանց անունով ընդարձակ չէնքն:

Փաստանեան Գ. Լիխնաին, որ առաջին ուսուցիչն էր, և մեր գալուստը լսելով փութացեր էր իր կամաւոր տարագրութենէ, գեղերէն, գալ, եւանդոտ և արժանաւոր անձն այդ պաշտօնին. Անձնուէր ընկերութեան առաջնորդութեամբ Ս. Առաջնորդն ալ միասին, վարդանանց դռներն բացուեցան, և գնացինք թափուր սրահներու և գրասեղաններուն այց առնել: Սոյն յարկին ներքև թէ՛ իրև ուսուցիչ և թէ իրև Անձնուէր ընկերութեան հիմնադիր և վարիչ, շատ եւանդ և քրտինք թափեր էր քանի տարի առաջ Փորթուգալեան Մկրտիչ Լ. որոյ ճշմարիտ անձնուիրութիւնը ազգի լուսաւորութեան ամեն բարեկամաց յանօթ է. անոր հոս եկած ժամանակ Թօքատ նահանգի քայլեր առեր է ազգային ոգւոյն և ժամանակի յառաջադիմութեան. բայց շար նախանձու դևը ղրկեր է քաղաքիս ոակիով զօրաւոր անձինք. բանը հոն հասեր էր, մինչև Փորթուգալեանը կազանօք 'ի Սեաստա տարուած էր, ամբաստանուելով թէ՝ Հայոց թագաւորութիւնը վերականգնելու ջանքեր կ'ընէ ատ . . . . . Վալին դնտեղով զամբաստանելն և լսելով անոր վրայ դրուած քըրէական եղեռն, այսպէս վճռած է. գնացէք բանտրնուդ, մինչ կը կարծէք թէ այնքան դիւրին է թագաւորութիւն մը կանգնել, և այն՝ Հայոց պէս ազգի մը, այն ինչ 300 տարիէ հետէ Աւի—օսմանն թագաւորութիւնը չէ

կրցեր հաստատուն հիմ մը դնել իրեն։ Այսու ամենայնիւ ծանր տպաւորութիւն թողած է երիտասարդաց վրայ այս ստրատիւլի մատնութիւնն, և մինչև ցայսօր կը դողային այն անձինքներէն։ Փորթուգալեանի օրով ու ջանքով սկսուած էր նաև աղջկանց վարժարան մը, որ այժմ մարած էր։ Այն ինչ այսպիսի յիշատակներով կը յուզուէր մեր հոգին, ահա վարդանանց զրկեալ և ցրուեալ սաներէն երկու պատանեակներ, հետեւեալ գիրը մատուցին, զոր ընթերցողաց խղճին և դատաստան կը յանձնեմ։

« Հայրենանուէր Հայրիկ ։

« Գալրոցը որ կ՚այցելէք, անայի և աւերակ կը ներկայանայ Ձեզ։ Այն վայրը որ երբեմն յիանալուր վարդանեան աշակերտօք կը զարդարուէր, այժմ ստրկի ոտտայններով մեռու տեսարան մը կ՚ընծայէ, հովիւ զրկուած, ոչխարներ ցրուած են, երդերու և դասախօսութեանց դղրդիկ դասլսիկներուն կը յաջորդեն աւերայութիւնն ու լռութիւնն։

« Ցաճախ կու գանք, ո՛ սիրելի Հայրիկ, կու գանք աւերակաց մէջ թափառիլ բուռ մը պէս մեր դպրոցական փոշոտ դրասեղաններըը արտասուօք թրջել, այլ աւա՛ղ, ոչ ոք կը դթայ մեզ. մեր ծնողք ոգէտ, ապագայինք անգութ և վարչական իշխանութիւն մեր դահիճն են։

« Ընդա կարծես հաճոյք կ՚զգան մեր արցունքներ տեսնելով. ծարաւի՞ են արդեօք մեր արտասուաց։

«Դու ո՛ Հայր, կ՚աղաչենք, գէթ դու, որ Հայաստանի սիրահար հովիւ մի ես, մի՛ անկարեկիր մնար երկու խեղճ Հայ ուսանողներու արտասուագին խնդրանաց, և երբ Քու պաշտօնական տեղեկագիրդ՝ ի լոյս հանես, մի՛ մոռանար նաև լսելի ընել վարդանեանների արտասուչ ձայնը որ յանուն Աստուծոյ՝ իրենց Դպրոցի վերաբերեալ բացուելը և սիրելի դաստատու Փասպանեան Էֆէնտիի դասախօսութեան չարունակութիւնը կը խնդրեն։

«Եթէ մեր արցունքներ կրնան Ձեր գըթած սիրտը չարժել,

Ընդունեցէք ներկայ ուղերձնիս.

Օ. Գ. Յ. Հ.

Չկրցինք առանց ուժգին յուզուելու լսել այս սրտայոյզ խօսքերը և առանց կարեկցութեան մեկնիլ. նոյնը կը նկատէինք տեսնել և յանձն Ս. Աստուածածնի, որ գիտեր չուտով փղձկիլ. մխիթարեց մանուկները և ուսուցիչները, ապահովեց զմեզ, թէ ի՞նչպէս ինքն եղեր է գլխաւոր չինող այս յարկին իր նորընծայութեան առեներ, մինչև անձամբ քարեր կրեր է. ալ ի՞նչ կը մնար ինձ ըսելիք, եթէ ոչ՝ նոյնը կրկնել, և իր խոստումներուն յուսալ։ Արդարև Պօլիս վերադառնալուս՝ Փասպանեան Գ. Էֆ. կը գրէ՝ թէ «. . . Մեր քաղաքը չատ փոխուած է Ձեր տեսածէն ետքը. ոգևմիտ խումբն այսօր աւելի լաւ կազմակերպութիւն մը առած՝ ժողովրդական—խոշոր անունը կը կրէ. անմիջապէս բացուեցան թաղային դպրոցներ

և կեդրոնական ուսումնարան մը, բաւական կանոնաւոր . . . » : Այս ժողովրդական ոչ-ջամիա խումբն կը կազմէին երեք ընկերութեանց անդամները, այն է Անձնուէր, Ընթերցասիրաց և Վարդանանց սանուց, որոց հասարակական և առանձին ուսումնական մէջ, ծանօթացանք իրենց եռանդին և գաղափարաց, քաջալերելով դիրենք և միայոյն վստահութիւն տածելով իրենց վրայ :

Վ. Խճակիս նախորդ հանգուցեալ Առաջնորդներէն Գէորգ եպիսկոպոս 60000 ղրշ. և Յակոբ եպիսկոպոս 10000 ղրշ. կտակած են՝ կէսն վարժարանաց համար և կէսն աղքատաց. Ս. Երուսաղէմայ եւայլ Ս. Պատրիարքն ալ վանքին կալուածներէն քանի մը կտոր չէնքեր նուիրած է յանուն վարժարանաց, որոցմէ 2000 ղրշ. տարեկան կ'ըստանան. այս գումարները Առաջնորդ արանի հսկողութեան և մատակարարութեան յանձնուած էր, որոյ մասին բացատրութիւն տուաւ Ս. Առաջնորդն, թէ՝ 16000 ղրշ.ի չափ ենթակայ բաժնէթուղթ գնած են եղեր, 20000 ղրշ.ի ալ տուն մը գնած, որ տարեկան կը բերէ 800 ղրշ. մտադիր են եղեր այս տունը խան չինելու. մնացեալ գումարն ալ տոկոսով տուած են ումանց քով : Բոլոր այս դրամագլուխին և կալուածոց տարեկան արդիւնք 6500 ղրշ. կը գանձուի, ըսին. — Աղէկ չհսկողութիւն. և ասոր կէսը վարժարաններին էր, և կէսն աղքատաց բաժին :

Եկեղեցեաց սեղանոյն և պատկերաց վրայ չատ մը արծաթէ զարդեր և ոսկի կային. կը հաւատային թէ միայն Ս. Մինաս եկեղեցին 120 օխայ արծաթ ունէր: Այսպէս պէտ է ոնց թօքատու ժողովուրդ կը հաւատայ թէ Ս. Աստուածածնի պատկերին ոսկի ճրագնոց և ոսկի թագ չինելով, Ս. Մինասին արծաթէ նիպակով և ձեռն ոսկեսարաս զարդերով իրենց հոգւոյն փրկութիւնը կ'ստանան. ե՞րբ պիտի համոզուին թէ՝ Աստուծոյ առջեւ ամենէն թանգ զարդ արանք, հաճոյական պատարագ, և իրենց հոգւոյն ու մարմնոյն փրկութիւնն՝ իրենց զաւակները ոսկեղէն մարդ ընելն է, զանոնք կրթել և լուսաւորել Աւետարանի հոգւով, ազգութեան սիրով, պանծալի հանդիսացընել հանճարով և պատուով:

Եկեղեցիներ ունին եղեր իրենց առանձին դրամագլուխներ, ասոր անոր քով տոկոսով դրուած, բայց տոկոսին հետ դրամագլուխն ալ ոչնչացած էր, կ'ըսէին. Ս. Աստուածածնի եկեղեցին 40000 ղրշ. ունի եղեր, միայն 7000 ղրշ.ը ողջ է և անկէ տոկոս կ'առնու: Գաւառական վարչութիւնն անձեռնամուխ կը դանուէր այս հաշիւնեբուն:

Քաղաքիս բնակիչքն էին բաց՝ի թուրքերէն և Հայերէն, Յոյնք և Հրէայք սակաւաթիւ. Յոյներու մէկ մասն Հայ—հռոմ էին, և հայերէն կը խօսէին ու կը կարդային:

Թօքատու Քող. կառավարութիւնը դայմագամութիւն է, Սեւաստու վալիութեան ներքեւ։ Եկեղեցիք Հայոց 7։ Վարժարանք 3. երեքն Ծագկոց մանկանց, մէկն Ծագկոց աղջկանց, և մէկ Ուսումնարան։ Ծախք վարժարանաց անորոշ։ Թիւ ուսանողաց 205 մանկունք, 18 աղջկունք։ Թիւ Հայոց 8819, որոցմէ 1579 կաթոլիկ և Բողոքական։ Ցոյնք և Հայ—Հռոմք 2600։ Հրէայք 906։ Թուրքք 10300։

Ազաչնորդական թէմք և հայարնակ գիւղերայք Թօքատու.

Քաղաքի չրջակայքը և Ղազովայի կամ Ղազապատի, Արթըքովայ կամ Արթըքապատի, և Թաշովայի կամ Ղազկի էրպայի հովիտներու մէջ եղածները.

ԹԱԽԴԸՊԱՑ գեղ. եկեղեցի 1. Ս. Աստուածածին։ Թիւ Հայոց 262։

ԵԱԹՄԸՇ գեղ. եկեղեցի 1. Ս. Գէորգ։ Թիւ Հայոց 374։

ԳԷՏԱՂԱՋ գեղ. եկեղեցի 1. Ս. Սարգիս։ Թիւ Հայոց 308։

ՉԻՎԹԼԻԿ գեղ. եկեղեցի 1. Ս. Յակոբ։ Թիւ Հայոց 326։

ՊՕԼԻՆ գեղ. եկեղեցի 1. Ս. Լուսաւորիչ։ Թիւ Հայոց 200։ Թուրքք 234։

ՊԷՍԿԻՆՃԻՔ գեղ. եկեղեցի 1. Ս. Յակոբ։ Թիւ Հայոց 291։

ՎԱՐԱԶ գեղ. եկեղեցի ի. Ս. Սարգիս։ Թիւ Հայոց 39։ Թուրքք 171։

ԷՆՏԻԶ գեղ. եկեղեցի ի. Ս. Փրկիչ։ Թիւ Հայոց 60։ Թուրքք 95։

ԳՐԻԳՈՐՈՍ գեղ եկեղեցի ի. Ս. Աստուածածին։ Թիւ Հայոց 245։

ԳՈՒՐՋԻ գեղ. . . . . Թիւ Հայոց 31։ Թուրքք 195։

ԿԷՍԱՐԱ գեղ. . . . . Թիւ Հայոց 9։

ԿԷՖԻՍԻ գեղ. . . . . Թիւ Հայոց 18։ Ցոյնք 24։

ԲԻՋԷՒԻ գեղ եկեղեցի ի. Ս. Յովհան. Ոսկերերան վանք։ Թիւ Հայոց 34։ Թուրք 340։

ՀԷՐԷՔ Աւան. գայմագամութիւն, Ամասիոյ վիլայեթ տասարիֆութեան ներքեւ։ Եկեղեցի ի. Ս. Ստեփաննոս։ Վարժարանք 2. Ս. Մեսրոբեան և Մարինոսեան։ Ուսանողք 80 մանկունք, 30 աղջկունք։ Թիւ Հայոց 1126։ Թուրքք 4702։

ԱՂԱՊԱՂԸ գիւղ. Թիւ Հայոց 79։
ԶՕՂՇԱՐ » » » 92։
ԷՑՎԱԶԱՑ » » » 113։
ՍԱՐՔ ԳԱՑԵԱՆ » » » 63։
ՍԱԽԱՐ ՁԱՂ » » » 30։

ՆԻԿՍԱՐ քաղաք, գայմագամութիւն, Սամսոնի Միւթասարիֆութեան ներքեւ։ Եկեղեցի ի. Ս. Աստուածածին։ Վարժարան ի. Սուրբ Նշան։ Ուսանողք 180 մանկունք, 20 աղջկունք։ Թիւ Հայոց 2053։ Ցոյնք 315։ Թուրքք 3390։

ՂԱՓՈՒ ԱՂՋԻ գիւղ. Եկեղեցի 1. Սկարապետ ։ Թիւ Հայոց 360 ։

Թօքատու Դատաւորութեան թէյին կը նայի Զիլէ ։ Գեղերու մէջ տեղ տեղ Մատիոցներ կան հասարակ ընթերցանութիւն, գիր, և եկեղեցւոյ փոխեր և երգեր ուսուցանելու չափ, որ միայն ձեռներ թաց կը վնէրն, միւս եղանակները երկրագործութեան կ՚զբաղեցրնեն տղայքը ։ Ախպէտ են գրեթէ ամեն վիճակաց գիւղորէից վարժարաններ ։ Վերոյիշեալ թէմերու մէջ Զիլէցի Հայոց նման Նիկսարցի Հայք ևս տաճկերէն կը խօսին, բայց տունք իրենց վարժարանին աղէկ ուժ կու տան ։

Սոյն վիճակի մէջ գտնուած բնակիչ օտար ազգաց թիւն է՝ ցոյն 4849 · Չէրքէզ 13420 · Քիւրդ 2123 · Գըլպաչ 7348 · Թուրք 67445, որք տարածեալ են Թօքատու, Նիկսարու, Զիլէի և Հէրէքի գեղերը ։

Թօքատու գեղեր առատ բերքեր կ՚արտադրեն, ցորեն, գարի, բազմատեսակ միրգեր, մեղր և մոմ, լուղ և բուրդ, խաղող և գինի, աֆիոն, թիւթիւն, գազի խէժ, մահիճ, ճէհրի, տորոն, կանեփ. կը սնուցանեն ամեն տեսակ ընտանի կենդանիներ. նոր սկսած և յաջողած են Անկիւրիոյ այծեր (Ֆիլէկ) ալ հասցնել, ևս ։ Թօքատ՝ Բազդատի մեծ պողոտային վրայ գտնուելով, յարաբերութիւն ունի չատ քաղաքաց հետ ։ Իւր բերանց գործներ իր նպատակն կատարելու

և Պանտոսի լեռանց շղթան, կրնան իբր այլ և այլ վտակաց և իրմէ վրայ գործարաններ շինուիլ։

Ս. ՅՈՎՍԱԿԻՄ—ԱՆՆԱՑԻ ՎԱՆՔԸ

Թօքաթէն մէկ ժամ հեռի՝ 'ի սպառուածս այգեստանեայց, լեռնակոզի մը վրայ կառուցեալ է վանքը։ Պարսպին դուռը կը բացուի 'ի հիւսիս, կայ և մէկ փոքրիկ երկաթի դուռն յարեւմուտս։ Վանքին մէջ տեղը շինուած է Տաճարն՝ քարաշէն. արեւելեան կողմը՝ ուխտաւորաց թաղ 14 սենեակներով վիայարկ։ Սոյն բակի մէջ կը հոսի աղբիւր մը, աւազան մը կայ և վարդատունկ։ Տաճարին հարաւը շինուած է Միաբանից թաղը 12 սենեակներով. մէջ տեղը փոքրիկ պարտէզ մը շատրուանով, կանանչ տունկերով և խաղողոյ բարուենակով։ Վերնայարկն ունի երկու սենեակ, հիւրանոց կամ ընծաբեր Միաբանից, ուստի կ'երեւին քաղաքին, այգեստանեայց, և Ղազուայի գեղեցիկ տեսարանները, լեռները և իրիսը որ պտուտաւոր կ'ընթանայ։

Տաճարի հիւսիսային կողմն վերին յարկը շինուած է կանոնաւոր չէնք մը ձեմարան կամ վարժարան, որոյ երկու ծայրը չնորհքով երկերկու սենեակները՝ իրրև վարժապետի սենեակ և դասարան, զորս կառուցեր է Յակոբոս Ս. Պատրիարքն իւր Առաջնորդութեան օրով։ Սոյն յարկին ներքեւն

է սեղանատուն, խոհանոց և մառան. խոհանոցի դրան քով կը հոսի աղբիւր մը։ Ամբարանոց մը ունի ընդարձակ, որ կը տարածի 'ի ներքոյ միաբանից և ուխտաւորների սենեկաց, ուր կը պահեն արմտիք, ալիւր, գինի, իւղ, պանիր, և այլ նպարեղէնք և վանադան ալէտքի նիւթերը։ Մի և նոյն չափով տանիքի ծածկոյթ մը կայ (քովան պրօէ) 'ի վերայ սենեկաց միաբանից և ուխտաւորաց, ուր ճէհրիներ կը փուեն, կը չորցընեն. և այս յարկին արեւելեան հիւսիսի անկիւնը կը բարձրանայ փայտէ շինուած զանգակատուն մը՝ երկաթ խաչն 'ի գագաթ։

Վանքի հիւսիսային մեծ դրան հանդէպ շինուած են անասնոց ախոռները, և տուն մը՝ ղոր Զէֆրլէկ կ'անուանեն։

Ախոռներէն վեր և անոր կից է վարդապետաց գերեզմանաթաղը ցանկապատ. (ցաւ 'ի սիրտ տեսայ որ ոչխարները լեցած մէջը՝ կը կթէին և կը մակաղէին. աղբերով ծածկուած էին խաչքարերը), իսկ բուն դումը աւելի վերը՝ լեռան վրայ էր։

Վանքն ունի պարտէզ մը, որ կցուած կը շրջապատէ արեւելեան և հիւսիսային պարիսպը, ուր կան պտղատու ծառեր, և կը մշակուին բանջարեղէնք. կից նմին կայ մի ճէհրիւկ. ճէհրիւկ մի և սա քիչ մը բացակայ ասկէ. ունի նաև մահկէսի ծառեր, և այդի մը՝ այգեստանեայց մէջ։

Վանիցս 25 կոսր արտ կայ, որոց կէսը առոգելու չափ ջուր ալ ունի։ Առնցմէ քանիները կուտան վարձքով — կիսարար — ածիւնի և թիւթիւնի համար. Հերկը, ջուրը, սերմը վանքէն, մշակել, հնձել՝ վարձակալէն։ Իսկ ցորենոյ և գարուոյ մշակութիւնը վանքը առանձին կ'ընէ. և սորա համար ունի 8 մշակ, 4 հովիւ, 2 նախրորդ. 50 եզ, կով և գոմէշ, 3 էշ, 350 այծ և ոչխար։

Վանքին մէջը կան մէկ ծերունի և մէկ պատանի (նոր եկած) աշխարհական միաբան, երկու տնտես, մէկ դռնապան որ և պարտիզպան ալ է։

Եկեղեցական՝ ոչ ոք. միայն Ս. Առաջնորդը երբեմն երբեմն վանքը կ'երթայ. և ուխտաւորաց օրերը քաղաքէն քահանայ մը կու գայ կը պատարագէ։

Վանահայրն էր Թօքատցի աշխարհական Մ. ՅՕհ. Գալփաքճեան, որ կ'երթայ կու գայ։ Չոս եկաւ Հանրածանօթ Մաղաքեան Առաքել Վ. Ս. Պատրիարքի գրով՝ մնալու իբրև ապաշխարող։

Այս վանքի հիմնարկութիւնը ո՞ր թուին և ո՞րմէ սկսեալ, չգտանք. բայց յիշատակարանի մը, որոյ օրինակն 'ի ստորեւ, կը յայտնէ քանի մը անձանց անունները, աւերոցաց և չինողաց. իսկ վերջին նորոգողն է եղեր Գէորգ եպիսկոպոս Իլմիրցին, որոյ յիշատակարանը կայ Տաճարի դրան ճակատին վրայ քանդակուած այսպէս.

« Ողորմութեամբն Աստուծոյ նորոգ եցաւ սուրբ ուխտս ի հիմանէ հանդերձ սեներկօք և շրջապատ պարսպօք և արուարձին չինուածովք յամի Տեառն 1828, սկսեալ յակիզբն ապրիլի և աւարտեալ ի վերջն սեպտեմբերի, աշխատասիրութեամբ Գէորգ արքեպիսկոպոսի և արօք ժողովրդեան և իւրն և իւր վիճակաւորութեան ի փառս Աստուծոյ »:

Տաճարի դրան վրայ բոլորակ գմբէթաձեւ ծածկուած է կցեալ ընդ պարիսպն և ընդ որմն Տաճարին, իբրեւ զաւիթ. այն ծածկին տակ երկու մուխ մարմար քարով գերեզմաններ կան. մինը՝ վանքը չինող Գէորգ եպիսկոպոսին և միւսը նորին վիճակաւոր Գալուստ վ. ին Պօնճուգեան, որ նոյնպէս Առաջնորդ է եղեր քաղաքին և վանից:

Բաւական աղէկ և շատ անօթներ ու կահ կարասիներ կան վանքին մէջը, և չէնքերը կանոնաւոր չինուած ու աղէկ պահպանուած են. գիրքեր ալ ունի, բայց ըստ ասից բազմաց՝ աւելի շատ ունեցեր է, և տարող տարողի է եղած: Ինչպէս վարդապետաց անհնեակները թափուր էին վարդապետէ, նոյնպէս և վարժարանը իր գրասեղաններով ամայի կը կենար, մէջը սոխ, սխտոր, և այլ չորցրնելիք բանջարներ լցուած:

Դեռ մօտ տարիներս այս վիճակին ինկած է այն վանքը, և ինչպէս չէնքեր ու պատուհանները կը հաստատեն, երբեմն նախանձելի էր և բազում օրինակ այլոց վանօրէից իր ուսումնական վարդապետներով

և բարեկարգ վարժարանով։

Վանքի հողերը շատ պտղաբեր չեն. արտերը ամրողջ ըռֆոս են. ո՛րը Աստվածորդի անուան, որը միքայէլի մը անուան, բայց քօչանները վանքը կը պահեն։

Վանքի եկամուտներն են տարեկան՝ ածիճէ, թիւթիւնէ, ճէհրիէ, պտղիներէ, քաղաքի մէջ եղած 2 խանութէ, վաճառուած բուրդէ, ուխտաւորաց նուէրներէ եւ, տարեկան 11400 ղրշ։ Առնցմէ զատ տարին 60 քիլէ ցորեն և գարի կ'առնուի իր արտերէն և պտղիէն, նաև մեղր, իւղ, պանիր, եւ, որք վանքին մէջ կը մխսուին։

Վանքի ծախքերն են՝ մշակաց, հովուաց, տնտեսաց և դռնապանին տարեկան վարձքեր և զգեստները 10000 ղրշ։ Աղի, և այլ ներքին պէտքերու և նորոգութեանց 8000 ղրշ։ Ջուրի, եւ. 4500 ղրշ։ Աստիճանաց 1500 ղրշ։ Գումարն է 24000 ղրշ։

Վանքին պարտքը՝ նախորդ վանահօր Մարտիրոս վ·ին, որ այժմ 'ի Ս· Յօհ· Ոսկեբերանն է, 17000 ղրշ· Ներկայ վանահայր Մ· Յօհաննէսին 9000 ղրշ· այլ և այլ տալիքները 4000 ղրշ։

Վանքէս իբր տասն վայրկեան հեռի է Յունաց կէս անուն գիւղը և փոքր մենաստանը, ուր կայ կառուցեալ սուրբ Աստուածածնի անունով տաճար մը. Յոյն վարդապետ մը կը նստի մէջը, ունի քանի մը մշակներ և տնտես։

Ս· ՆՇԱՆԻ ՎԱՆՔ
ԿԱՄ
Ս· ԳՕՀԱՆ ՕՍԿԵԲԵՐԱՆ

Թաքաւոր չորս ժամ հեռի Բիդէի ա-
նուն գիւղին մէջ կառուցեալ է սոյն վանքը։
Բիդէի կամ « Բիթէի Հայոց Ջինէ. թուին
տակաւին ութն հարիւր տուն Հայ բնակիչ
և ժ· քահանայ » ունէր, ըստ յիշատակա-
րանի ձեռագիր մաշտոցի մը նոյն վանուց։
Վանքս հիմնարկեալ եղեր է Վասպուրականի
Սեննեքերիմ արքայի երեք որդիներէն, ըստ
աւանդութեան և ըստ ձեռագիր յիշատա-
կարանաց. արքայորդիք մէկ մէկ խորան կա-
ռուցած են իրենց յիշատակին, աւագ խո-
րան՝ Ս· Նշան, որոյ անուամբն է վանքն·
միւսները՝ Ս· Գրիգոր և Ս· Կարապետ։ Շի-
նութենէն իբր չորս տարի յետոյ Սեննեք-
րիմ արքայն կոմանայէն բերել տուած է Ս·
Ցօհ· Ոսկեբերանի տապանաքարը և զետե-
ղած է Ս· Նշանի տաճարին ձախ կողմն՝ կից
յորմն։ Այս տապանաքարը ճշմարիտ հնու-
թիւն մ'է, նուիրական և պաշտելի· թէ՛
տապանը և թէ՛ կափարիչը մի և նոյն քարէն
է կոպտականանչ գունով մարմարիոն, կա-
փարիչի չորս անկիւնները տասմնաձեւ վանդա-
կապատ։ Գլխուն կողմը փոքր փոս մը թո-
ղած է՛ն, որոյ վրան և քովերը հին ու ըն-
տիր քար տերով չարուած· հոդ կայ այդ փո-

սին ՝ էջ , յորմէ ՝ի պէտս բժշկութեան պէս-պէս ցաւոց կը տանին ուխտաւորք : Մասնաւորապէս ծննդաբերութեան և այլ խնդրուածոց կատարման համար ուխտի կուգան հոս՝ ոչ միայն Թօքաղէն և իւր գիւղերէն , այլ և Ամասիայէն , Ջիլէէն , Հէրէքէն , Նիկսարէն և այլ տեղերէ :

Վանքին՝ երբեմն երբեմն ցոյներ ուղեր են տիրանալ , առարկելով թէ ՝ի սկըզբանէ մերն է եղած , բայց չեն յաջողած . վասն զի ոչ միայն արձանագրութիւն մը կամ նշան մը չէ գտնուած իրենց , այլ և գեղի ծերուներն բոլորքերը աւանդութեամբ յորդւոց յորդի միշտ վկայած են Հայոց վանք լինելը . կարծողներ կան թէ՝ նոյն իսկ Բիլէոմի թուրքերն ալ Հայ են եղած յառաջագոյն :

Երից խորանաց հիմունք և որմունքն հնագոյն են . բայց փոքրիկ լինելուն համար՝ 1842ին Յակոբոս Պատրիարք նորոգեր է Ս. Նշանն և Ս. Գրիգորը , և միացուցեր իրարու՝ միջնորմին վերցընելով . իսկ Ս. Կարապետ նոյնութեամբ կը մնայ : Հին ժամատունն կամ գաւիթն , որ նեղ չէնք մ'է եղեր և հողով ծածկուած , յիշեալ Յակոբոս արքեպսն փլուցեր , և կամարաձեւ պայծառ ու ծաղկենկար եկեղեցի է շիներ հանդերձ պատարագատան տոյց տեղանով և բեմով , անուանելով Ս. Յօհան Ոսկեբերան . սոյն նորաշէն եկեղեցւոյս աջակողմեան դա-

սին միջէն կը բացուի Ս. Գրիգորը մտնելու դուռն և Ս. Նշանը, որ ճիշդ նոր սեղանոյն առեւը կ'իյնայ. իսկ ձախակողմեան դասէն՝ Ս. կարապետի մատրան դուռն:

Ս. Տաճարիս գրան գրանդուայն վրայ հետեւեալը գրուած է.

«ԲԵՐԱՆԴ ՈՍԿԻ ՓԱՌՔ ՔԵԶ ԱՍՏՈՒԱԾ միշտ ասէր,
«Աշխոյժ բարի վերընծայել բաժիկը.
«Ջայս չառանայր Յակոբոս դէտ
«Մինչ յաթոռ քո դեռ նստէր,
«Զորոյ երկուքն ճրպանց 'ի սմա
'ի հաճոյս քո ընկալ Ցէր»:

Ասկէ վար քանդակեալ կայ բուն յիշատակարան.

«Շինեցաւ Ս. Յօհան Ոսկեբերանի տաճարս բոլոր շրջապատս պարսպօք և ամենայն շինուածովք, եւ ոսկւոյ և վիճակաց նորա ազգիս Հայոց բարեպաշտ օրհնեալ ժողովրդոց արովք և ողորմութեամբ: 1842. ՌՄՂԱ»:

Տաճարին հարաւակողմը կը բարձրանայ կրկնայարկ գեղեցիկ չէնք մը, վեր և վար 14 սենեակներով. վերնայարկին արեւելեան անկիւնն է Առաջնորդ արան. չէնք մը՝ որ իւր ընդարձակութեամբ և չքեղութեամբ արժանի է կոչուելու վեհարան, ինչպէս որ կ'անուանեն. իսկ արեւմտեան անկիւնն է Փոխանորդ արան. միւս սենեակները յատկացեալ են վարդապետաց և տիրացուաց. այս է Միաբանից թաղ կամ Ներքին բակ:

Ըոլոր այս սենեակները ճաշակի յարմար, մաքուր, և կանոնաւոր կահաւորեալ են. մանաւոր առաւելութիւն ունի վեհարանն, որոյ կահ կարասին ևս չքեղ է. հոս կ'րնդունին պատուաւոր հիւրերը: Վանքիս Ս. Տաճարին և արտաքին յարկերուն մէջ ու դուրս առնուած մաքրութիւնը, կանոնաւորութիւնը, անօթոց և կահուց կարասեաց առատութիւնն, իւր նիւթական վիճակը, կարգաւորեալ թանգարանն, ծառայից, վաճկաց, ուխտաւորաց և վարդապետաց պահքերանը, կը զարմացընէ այցելուս մը, վասն զի մեր Հայաստանի վանքերէն ոչ մէկուն կը նմանի. բայց իւրոյն կը լուծուի զարմանքն, երբ իմանայ թէ վանքիս տնտեսութիւնն ու առաջնութիւնը ոչ եպիսկոպոսի, ոչ վարդապետի, ոչ քահանայի և ոչ միաբնակ վանականի յանձնուած, այլ ժրագլուխ տիկնոջ մը, այն է Տիկին Մարիցա Գասէմեան, դուստր հանգուցեալ Ցովակիմի Ալանեան, որ իբրև հոգաբարձու և խնամակալ կը կառավարէ:

Տաճարի դրան հանդէպ փոքրիկ կոչնակատուն (զանգակատուն) մը կայ բարձր, յորում կախուած են երկաթի և ընկուզենի կոչնակներ. անոր կից մատնատուն, նշխար և մատն պատրաստելու համար, և առանց մակ աղբիւր մը վշտահոս: Փոքրիկ դրախտիկ մ' այ Տաճարին ետեւ, ուր կը գտնուին պտղատու ծառեր, բանջարեղինաց ածուներ, մեղուաց փեթակ, և մէկ կողմէ՝ ծածկ-

կուաձ յարկի մը տակ պանապան չոր ընդե-
ղինաց չտեսուարան : Դրախտը մտնելու դրան
կից է վանքին խոհանոց և մառան :

Ուխտաւորաց թաղը Տաճարին հիւսիսա-
կողմն է , առանձին չէնք մը , 24 սենեակով ,
որոյ բակին մէջ կը հոսի աղբիւր մը : Վանքի
պարսպէն դուրս , մեծ դրան հանդէպ չինե-
ուած են վանքին ախոռներ և չէմըէին 12
սենեակով և երկու խանութներով . կից այս
չինուածեանց է մարագն և կալատեղն : Կէս-
էն-ի ըսուած չէնք մի ևս կայ վանքին Զիվթ-
լիկին մօտ՝ 8 սենեակով , ուր վարձքով կը
նստի մաքսապետ :

Կալատեղւոյն կից բարձր բլրակի մը
վրայ է գերեզմանատունն , վանականաց և
չինականաց շիրիմներն . հոն յաճախ կ'եր-
թան մարդիկ , կը նստին հինաւուրց ծառի
մը շուքին տակ , իրենց շուրջը նկատելով աչ-
խարհի ունայնութենէն հրաժեշտ առուղաց
վերջին յարկերը , և իրենց առաջ՝ կենաց
հետ պրպղող բիզէոի աշխատասէր արք և
կանայք , որք գեղին մէջ և դաշտին մէջ կը
դեգերին 'ի չինել , 'ի տնկել և 'ի վայելել ,
քանի՛ գեղեցիկ է բիլէոին իր ծառերով ,
վազուն ջրերով , և աշակերտ անդաստան-
ներով , որ կը տարածէ իր կանանչ ու կար-
միր տեսարանը՝ այս դիտարանէս դիտողին
աչաց առջեւ , շրշապատեալ սիրուն լեռ-
ներով :

Վանքս ունի նաև թօքատի մէջ երկու

խանութ, պոլիս մէկ ունեակ, գիւղիս մէջ մէկ ճենոփէչ և մէկ «էֆէն», երեսուն և ինն կտոր ընտիր արտեր՝ թաւիս ըրած, յորս կը մշակէ թիւթիւն, ցորեն, գարի, աֆիոն, եւն: Իր դրամական եկամուտն է տարեկան 36—40000 ղրչ. բաց՝ի վանքին մէջ մսխուած ուտելիքներէն. ծախքն է 24000 ղրչ: Կանոնաւոր է տուժարակալութիւն և մատակարարութիւն: Հոս իրրև միաբան տեսանք և գրականութեամբ զբաղեալ Ա.րժ. Մանուէլ վարդապետ Թօքատցին, որ ծանօթ է Պօլսեցւոց՝ երբեմն քարոզիչ լինելով Բերայի. հոս էր նաև Ծերունի Մարտիրոս վարդապետ, իրրև Ս. Տաճարին փակակալ և լուսարար. քանի մը սիրացուներ կային, մշակներ, և ծեր ու անկար պառաւներ, ամենքն ալ աղէկ խնամուած: Մարիցայ տիկնոջ հոգատարութեանց չնորհիւն է որ վանքս դրամ աւելցընել սկսած է, նոր նոր արտեր գնած, վանքի շինութեանց և նիւթեղինաց մեծ մասն նորոգուած, և այժմ մտադիր էր գիշերօթիկ վարժարան մի ևս բանալ. չանացած էր վանքը այն աստիճանին հասցընել, որ ուխտաւորաց և թէմականաց արդիւնքին չսպասելով՝ կարող լինի ինքզինքն կառավարել:

Ա.րդ արև Մարիցայ տիկինն իւր հանճարով, աղնիւ հոգւով, և լուրջ ու անձնուէր ջանքով գերազանց պարգեւ մ'է Նախախնամութենէն՝ Թօքատու աղգայնոց համար, և պարծանք իւր սեռին ու տոհմին. մեծ

վոյթ կը տանէր նաև իւր հայրենակցաց առաարրեր կեանքին վրայ. ոչ միայն եպիսկոպոսի մը պէս կը քարոզէր, կը հանդզէր, այլ և եպիսկոպոսին հետ ապտու կը խօսէր, անոր պարտքեր ու ընելիքները յիշեցնելով. մեծ յոյս ունէր՝ կրկնելով կրկնելով մինչև գոնէ առջևնէր և յաջողէր մանկանց վարժարանաց հետ՝ աղջկանց ալ վարժարանի մը բացուելն։ Տիկին Մարիցայ պատկառելի և ակնածելի դիրք մը ունէր բոլոր քաղաքացի Սպայնոց և Թուրքաց, և նոյն իսկ կառավարութեան առջև։

Կուզեմ առանձին ստորագրել Ս. Յօհան Ոսկերերանի վանքը երթալուս ուղին։

Յունիս 5 էր, տիկին Մարիցայի խնամօք պատրաստեալ ձիերով՝ վանքին մշակ կարին Վրակոսին առաջնորդութեամբ յուղի անկանք. մեր երրորդն էր Սերաստացի Թաշճերեան Մարտիրոսը, զոր Պօլսէն հետս առած էի. ոտաստպինեալ էր նա, ես ալ ունէի վեց Հարուածեան մը, և Վրակոսն՝ հասու բիր մը. ճամբան խիստ երկիւղալի և վտանգաւոր էր, կ'ըսէին ամենքը։ Ժամու մը չափ քաղաքի այգեստանեայց միջէն ընթանալով դուանք Իրիս գետոյն ափը, որ յարեւելից կը հոսէր։ Զորամէջ է մեր անցքը, արեւուն ջերմութիւնը կիպիշ։ Գետոյն յայնկոյս և յայսկոյս մշակեալ արտորայք էն, խաղող, դրենի, դարու, տարե-

կանի, թխթխանի, տեղ տեղ ալ այդի և ճկնդրիի տունկեր։ Գրիգորաս գեղը մեր աչ կողմն է բարձրագիր, հովտաւան վայր մը. այս գեղը Գրիգոր պատրիարքի ծննդեան տեղին է, կ'ըսեն, և հոս գտնուած է Սբրբոյն գերեզմանը, ուսաի և անոր անուանով յորջորջուած։

Յառաջ երթալով՝ Գէղեզ Դօշէն ըսուած կամրջահող եռանկիւն արտի մը չրխունքէն կ'անցնինք. ճիշդ ճամբուն բերանը, արտին եզերքը դերեզմանաչուխ քարակոյտ մը կայ, արդէն լսած էի, և ահրակոս՝ բարեպաշտական իշխանութեամբ մը հրամայեց ինձ որ իջնամ ձիէն. ինքն գլուխը բացաւ, վազեց, ծնրադրեց, համբուրեց այդ քարերը և հողը. մենք կեցած էինք. գարձաւ, Հայր սուրբ, ըսաւ, ի՞նչ կեցեր ես, ծունր դիր, երկիրպագէ, աղօթք արա, Ս. Ոսկեբերանի հանգիստն է այս, այս տեղ հանգեր է Սուրբը։ — Ա՛յս տեղ, ո՛վ իմ պաշտելի վայր, ո՛վ օրհնեալ հողեր ու հովեր... ի ձեզ Ոսկի բերանն իւր վերջին հառաչն հառաչեց, և կեղեցւոյ սատրակն իւր վերջին մրմունջն մրմնջեց, «Փառք քեզ Աստուած, փառք քեզ», և ի փառս Աստուծոյ՝ իւր աստուածարեալ հոգին աւանդեց, որբանեակ մարմինը սարածեալ թողլով կարմիր արտին եզերը — : Աստի փոխադրած և թաղած են ըղձալի Սուրբն ի կոմանա, որ մօտ է իւր քաղաքին ժամ, տեղ տեղ։ Նամակս արդեն ծայն

մը սեպհական է, որոյ ցորենոյ ալիւրը առանց խմորի կը զանգուի և կ'ածի, կ'ըսեն, հասնայն երկրացիք, զի օրհնութիւն սրոյն կայ 'ի հողն։

Կարմիր արտէն քիչ մը յառաջ երթալով կը պատահինք միապատող լերկ քարի մը, կարծես ուրիշ տեղէ մը ինկած լինի այս քարը այն տեղ. քարին երկու կողմն երկու այրեր կան փորուած. ճանրուն վրայ նայող այրը իր դրան ներքին չրթան վրայ յունարէն գրով տող ու կէս արձանագրութիւն ունի, իսկ միւս այրին մէջ գերեզմանի չափով և ձեւով փորուած մը։ Ս. Թոլման կ'ըսուի այս քարը, որոյ համար կ'ասանկ են թէ գետոյն միւս երեսէն, Գրիգորաս պեղի լեռնէն թռեր ինկեր է հոս՝ Ս. Գրիգոր պանչելապործի հրաշիւք։ Գրեթէ մինչև այս քար կ'երեւին Կոմանայի աւերակաց հետքեր և այլիներ, իսկ բուն Կոմանան՝ բըլրաձեւ աւերակոյտ մի է. իրեն մէկ կողմն քայքայուած բաղնիքի մը որմունք և կամարներ դեռ կան։ Իրիս կը քերէ Կոմանայի սըրնարը, և կամուրջ մը կայ քարակերտ, չէն. այս աւերակին առջեւ՝ գետոյն միւս երեսն է՝ Նիկսար, Հէրէք, և այլ տեղեր երթալու դալու բանուկ ճանապարհ։

Մեր գնացքին ձախ կողմը կան կարգ մը այգիներ, դրախաններ և ճէհրիլիկ, յորս կան չատ մը պտղատու ծառեր, սառնորակ աշտահոս ջրոց աւազաններ, և ամառուան

բնակութեան համար հովանոց յարկեր : Զովացանք , հանդստացանք այս հովանոցներուն շուքը :

Ասկէց անդին ճամբան լեռնային է և մայաոտ . դոզերու մէջ տեղ տեղ գուարճալի դեղեր կը տեսնուին Թրքաց և Հրքէղաց : Գետը հեռի կը մնայ մեզմէ :

Անհաւասիկ գաս 'ի վայր մը , ուր սրտակներու մէջէն չորս աւազակ երկու ամիս յառաջ յարձակեր էին Ս. Աստուածորդ Յակոբ եպիսկոպոսին վրայ , և այն ինչ կողոպտելու վրայ են եղած , դիմացէն Սուլթան անուն Հրքէղ մը քանի մը ձիաւորով հասեր , դողերը բռներ և կառավարութեան տարեր էր , որք դեղացի թուրքեր են եղեր :

Նոր ել մը կ'ելնենք , որոյ միւս երեսն աւելի վայելուչ է մացառներով և սրտակ սրտակ սուրբ ծառերով : Սառնորակ աղբիւրի մը վրայ իջանք , ուր Գըզըլպաշ Քրդաց դիմով բազմութիւն մը , հեծեալ , զարդարեալ և սպառազինեալ ժխոր մը կը կազմէին , և ողջոյնի մատղաշ կին մը պաճուճեալ՝ և երեսօք և գլխով պատատեալ , միայնակ ծառի մը տակ կծկեր , կաւարեալ , դերեզ մը նըմանեն . բայց դա էր նոր հարսն , և ժխորն՝ հարսնեւորք : Բարեւեցինք , խօսակցեցանք և անցանք , իջնալով հովտի մը մէջ , սիրուն , կաճանչագեղ , ջրաւէտ , յայս և յայնկոյս մօտ և հեռի գեղեր կ'երեւին . կը ջրեն , կը տնկեն , կը հնձեն , այր և կին , տուն և

անասունք կը չրջին, կը վատակին հոս. հովուի սրինգն ալ երանութիւն կը սփռէր անոնց:

Հասանք Բիզէռիի մօտերը, որոյ գաչտը աքանչելի էր քան բոլոր մեր տեսածները, և կարի զուարճալի իւր ուղին, երկուստեք ջրերու առուներ, և անոնց եզերքները տընկուած ընկուզենիք և այլ և այլ ծառեր և թուփեր կը հովանաւորեն անցքը: Քաղաք մը կ'արժէ Բիզէռին, և վեհ ու վսեմ կ'երեւի հեռուստանէ և 'ի մօտոյ մեր վանքը:

ՉԵՌԱԳԻՐՔ ԵՒ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ

1· Ա֊Եփռեան մեծատիր, երկաթագիր, մագաղաթի, Ս· Երրորդութիւն եկեղեցւոյն թօքատու:

«Որոց փափաք սիրոյ և աւենչումն ցանկութեան միշտ և հանապազ յԱստուածային բերի, ոչ դադարէ երբէք ղձայդ և ղերեկ խոկալ 'ի նոյնն, թէ պիտոյդ և կամ որով աւրինակաւ հասանիցէ բազմալոյն և լոյծ զաւենչումն բորբոքելոյ սրտին յԱստուածային սէրն· որպէս և մեր երջանիկ, սուրբ և աստուածարեալ Հայրապետս, ըստ մարմնոյ գարմ և չառաւիղ սրբոյն Գրիգորի մեծ նահատակին Քրիստոսի, և ըստ հոգւոյ հաւանեման և զուգահաւասար նմին· բանիւ կատարեալ, և հոգւով լցեալ, առատաբուղխ իբրև գյորձանս գետոյ, յառնել և յուսուցանել զգիտութիւն Աստուածաչունչ գրոց, հեզ և խոնարհ սրտիւ, զգաստ և արթուն

'ի քննութիւն Աստուածայնոց գրոց, որ և ի աւուրըք և կատարեալ հաւատոյ · ոչուք ծերութեան, որ և յանդարձի ժամանակի յաջորդեաց զաթոռն հայրապետութեան տանն Թորգոմայ 'ի քրիստոսապգեաց եղբաւրէ իւրմէ Գրիգորիսէ, որոյ քաջութիւն անուանն և գովութիւն խնամոցին անցանէ քան զվիտս . որ և բազմամեայ ժամանակաւ, երկայնաձիգ պատգանաւ վարեաց զնոգեւորս այս իշխանութիւն, փառաւորեալ յԱստուծոյ և 'ի մարդկանէ : Զքննամիս և զնախառակորդն Աստուծոյ և սրբոց Աթոռոյն ընկուն արարեալ և հալածական · և բազում արդեամբ և արբութեամբ ճոխացուցեալ զաթոռս սուրբ, ի աւուրըք և պատուական ծերութեանն վախճեցաւ 'ի Քրիստոս յամին յորում էր թիւն Հայոց ՈԺԵ· և ժամանակ Հայրապետութեան նորա էին ամք Ե· թիւ կատարեալ և Ե· միակ, իբր արեամբ ստացեալ ամրոցիս, որ կոչի Հռոմկլայական կա, մեծ սուգ թողեալ իւրոցն և յինատակ բարի յաշխարհի, և ըստ վերադրելոցս վախանորդեաց հայրապետական աթոռ եղբայրն նորա երջանիկն Ներսէս, որ և ըստ աստուածային սիրոյն բորբոքելոյ հոգի նորա ցանկացող եղեալ այսմ աստուածային գանձուս և լուսերանգ տաճիս, որ է աւետեաց քարոզ բոլոր ազգաց և ազանց, և վրկական տնաւրէնութիւն մարդացելոյ Բանին պատմող և հրատարակիչ, և մեզ պատճառ վրկութեան և ազատութեան. ետ գրել զնա 'ի լաւ և յընտիր աւրինակաց սրբոյ աթոռոյս և զարդարեալ զանազան երանգաւք և ծաղկաւք յոսկւոյ սրբոյ և 'ի գեղոց պատուականաց, ոչ 'ի պատճառս մեծութեան և փառաց որ 'ի մնայս խաւսի Աստուած,

այլ ՚ի վայելումն և ՚ի զուարճութիւն մանկանց եկեղեցւոյ և ՚ի յիշատակ իւր յաւագ պայն . որ և յաւարտումն լուսաղարդ տաճիս և ՚ի լնուլ փափաքման սրտին վրէժ յառնեացս առ Քրիստոս , վարեալ պիշխանութիւն իւր առն է. և յիշատակ բարի թողեալ յաշխարհի , յետ որոյ բազում խնամք ողորմութեան եղոյց Տէր ՚ի վերայ աղքատացեալ ազգիս և սրբոյ Աթոռոյս . վասն զի բազում առիւրապք նուռվութեան յարեան ՚ի վերայ նեղջոյ և արտաքոյ յաւտարաց և սուտ եղբարց , զոր աւելորդ համարեցաք գրել . և ապա ՚ի հաւանութենէ բոլոր ազգիս եպիսկոպոսաց սրբոց հարց և վարդապետաց, վանականաց, և աշխարհայնոց, զաւրանանաց և զաւրապետաց, և ՚ի հրամանէ գերերջանիկ Տեառն Գրիգորիսի և յանդարձ կոտակէն եհաս վիճակ հայրապետական եղբաւրորդւոյ նորին Տեառն Գրիգորի մականուն Տղայ կոչեցելոյ , որ ամենայնիւ զարդարեալ էր ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ , զորոյ լաւութիւն բարուց և գիտութիւն մտաց ոչ ոք կարէ ընդ գրով արկանել. մանաւանդ զգեղեցկագունութիւն կերպարանին բնաւին մարմնոյն , յորմէ հրաժարեալ ամենեւին անարժան դանձն վարկանելով. շատ է ինձ , ասէր , մատակարարութիւնս հաւատացեալ զոր ունիմ, որում ոչ անսացեալ սրբազանիցն հեղինակաց , որ ՚ի Հոգւոյն չարժեալ նաւուցին զսա յաթոռ սուրբ իւրում նախանձացն բազում խրախութեամբ և մեծաւ հանդիսիւ , յորոյ վերայ խաղացեալ Հոգւոյն սրբոյ՝ ընդ ոլորտս տիեզերաց հռչակեալ եղեւ , մինչ զի այլասեռք հեռացեալք ընթացեալ մեծապարգեւ ընծայիւք ՚ի տեսիլն չքնաղ և զարմանալի , որ տեսա-

նէրն պէնոյր և երթեալ հանբաւէր, և որ
լսէրն բորբոքէր առաւել, այս այսպէս գոր-
ծիւր ՚ի բազում ժամանակս։ Եւ ապա ՚ի
հանդարտի ընծայարերից, յառաջ բերէր
զաստուածեան մատեանն ընթեռնոյր աւր
ըստ աւրէ, և յաւելոյր ՚ի թիւ կարգաւորաց
եկեղեցւոյ վարդապետաց, երաժշտաց և
քահանայից. կազմէր և անաւթս պատուա-
կանս ՚ի սպաս պիտոյից սրբոյ աթոռոյն, յո-
րոյ և անաւթս այս պատուական աստուա-
ծավայելուչ Մատեան, որ իսով ձեռամբ պը-
ծեալ Գրիգորի մեղապարտի և անկատար
մնացեալ, զորոյ պակասութիւնն լցեալ իմ
հրամանաւ կաթողիկոս Հայոց Գրիգորի Տը-
ղայի, ՚ի թուականիս ՈՒԳ. վասն որոյ աղա-
չեմ զամենեսեան զատացողսդ, յետ սոցուն
զընթերցողսդ յարաժամ և զամենայն որ-
դիս լուսոյ, յիշել ՚ի Տէր յառաջ զպատճա-
ռըն բարեաց ՚ի սորայս գործառնութիւն
զսուրբ և զաստուածազգեաց հայրապետին
Ներսէս. և ապա զերկրորդ լուսաւորիչն Հա-
յոց զեղբայր սորա զԳրիգորիս կաթուղիկոս,
ընդ սոսին և զեղբաւրորդի սոցուն Գրիգոր
վերատեսուչ հանուրց սեռի. յիշեալիք և
զեղբարս երիւց լուսաւորչացն Տ. Գրիգո-
րիսի և Տ. Ներսիսի բարեպաշտ և զքրիստո-
սասէր իշխանն Վասակ, զպատճառն լինելու-
թեան ՚ի կենցաղս նորընծայ Հայրապետին,
և զամենայն բարեաց աւրինակն աշխարհի
զմիւս եղբայրն զԱպիրատ, և զքոյր նոցա
Մարիամ յայրիութեան և ՚ի սրբութեան
վախճանեալ, և զպինւորն նոցա զրաբե-
պաչտ իշխանն զԱպիրատ, և զնոյրն նոցա
Վանէն, ընդ սոսին և զրաբհոգի մայր պատ-
կաւորին նորա զՄարեմիկ դուստր Հեթմոյ
Սեւասուսւոյ, և զորդիս նորա հարազատ

զԱսպետն, որ և Սարգիս 'ի քահանայութեան վախճանեալ, և զարիագոյն զինուորն Աստուծոյ, զԱպիրատն քաջ և զՀաւատն կորովին, զՎահրամ խոհեմն և զՎասակ հեզն, զՀեթում պատանի և մանուկ գեղեցիկ, որք 'ի քառնամենից մինչև 'ի տիս երիտասարդութեան վախճանեալ 'ի հինգ ամեայ ժամանակս, և զԴ. կուսանն բարեհոգիք քորք սոցին. զորոց պայծառացուցէ Տէր զհոգիս յիշեցելոցս, և յիշողացդ վարձս բարիս պարգեւեսցէ, որ աւրհնեալ է յաւիտեանս ամէն:

«Աղաչեմ և ես մեղապարտ գրիչս առաջին 'ի մեղաւորս և յետին ամենայն բարեգործաց, յիշել ողորմութեամբ զմեզուցեալ հոգի իմ և զծնաւղաց իմոց. և և զարժանաւորսն յիշատակի, որք աշխատեալ են յիս, վարդան գրիչ և կոստանդին պատուական ծերուն. միանգամայն և զայնոսիկ որք բարի կամաւք աւժանդակ եղեն գրչիս բանիւք և գործով. զի և նոցին վարձս բարեաց պարգեւեսցէ ընդ նախատապատեալ առացաւղացն, և որ Տէրն է հատարակաց ամենեցուն ողորմեացի առացաւղացն և աշխատողիս, յիշողացդ և յիշատակելոցս, և ինքն աւրհնեալ եղիցի յաւիտեանս ամէն»:

«Զերկրորդ առացիչ սուրբ Աւետարանիս զՊարսն կոստանդին զԹագաւորահայրն Հայոց զարմից նորընծայ Թագաւորին Հեթմոյ, որ այն ինչ ամաց մեռասանից ընկալեալ զԹագաւորութիւն 'ի Բարձրելոյն, և 'ի Թուականութեանս մերոյս ՈՁԵ· առացաւ զսա Պարսն կոստանդին Թագաւորահայրն և իշխեցաւղն ամենայն Հայոց զարմից և ընձեռեաց եկեղեցւոյ իւրոյ սուրբ

Փրկչին, զոր ինքն չինեաց բազում ծախիւք ի յիշատակ իւր և Աստուածապարգեւ շառաւիղացն իւրոց. զոր թէ ոչ Տեառն զաւրութեանց թողեալ էր մեզ զաւակ, իրրեւ զՍոդոմ լինէաք և Գոմորայ նմանէաք, զորս և պահեցէ Տէր Աստուած ընդ երիսայն աւուրս և պարագայդ ամաւք չնորհեացէ եկեղեցւոյ իւրոյ և ամենայն հաւատացելոց իւրոց ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն »։

1. Ա-եպոքն սկզբանէ յԱռաջնորդս ազգին։

« Փառք եղականի հառհիւսեակ դասանութեանն ապէնիոսին կատարեալ և անսահմանելի Աստուծոյ Հաւր, Աստուծոյ Որդւոյ, Աստուծոյ Հոգւոյ, յաւիտեանս ամէն։

« Շնորհիւ Տեառն ամենակալի և նորին աւգնականութեամբ աւարտեցաւ հառհիւսեակ և հոգեպարգ Աւետարանս, զոր էր չաղկապեալ երանեալ Աւետարանչացն ընտրեալդ պաննոն ի մի ոստան անկելով հանճար. զոր արուեստակեալ անուշայած ծաղկանց իւղեփեցականի կազմութեամբ իմանի զանազան որակութեամբ պաղպտարելով, ըստ յոյժ ունն արմատացելոցն դասակցութեանց առ ի յեկեղեցւոյ յաստուածային յաւդիւ հաստատութեամբ գլխոյն պատչաճեալ, զի յայտանէ կատարելութիւնն։ Զորք աւետարանիչք ի բազում պատճառէ։ Զորբեքերեան կենդանիք, մարդ, առիւծ, ցուլ, արծիւ։ Զորք նմին ասխատին, հոգ, ջուր, աւդ, հուր. հակառակք անհաչտելիք և սիրելիք անքակտելիք։ Զորք դիր անուան երրորդութեանն, Հայր, Որդի, Հոգի։

Զորք գեաթ բղմեալք 'ի դրախտէն, Փիսոնէ, Գեհոնէ, Տիգրիս, Եփրատէս: Զորք անկիւն և եղջիւրք սեղանոյն: Զորք դևմք խաչին: Եւ այլ բազում պատճառս, յորս դաշտավարի չորեքեան աւետարանիչքս. զի թէպէտ բազում բանք 'ի սուտ երեւին ներհակ միմեանց, այլ քաջ ճշմարիտ և միաբանք միմեանց:

«Արդ այսմ անմահական ըմպելւոյ և անդիւռ մարգարտին փափագող եղեալ Եփրեմոս և ետ գաղափարել զսա 'ի ժամանակս վերջինս 'ի թուականութեանն Հայոց ՋԽ 'ի գաւառին Գուդարոյ, ընդ հովանեաւ սուրբ կարապետի ուխտիս և այլ բազմապատիկ սուրբ նշանացս, յորում ամի մեռաւ Եզազար խանն, և այլքն մի ոմի կատարեցին մինչև ճնաց և ոչ մի 'ի յապդէն Պաինդրոյ. և եղեալ Պարոնն Վրաց Զաւրզաւրէ Լոմարդով 'ի վերայ քաղաքին Արքրուժոյ և առեալ առ ձեռինէն և սրաբ զքաղաքն հարկաւոր: Այս եղեւ 'ի թագաւորութեանն Վրաց Կոստանդինոյ, և 'ի կաթողիկոսութեան Հայոց տէր Սարգսի, և յեպիսկոպոսութեան մերոյ տէր Յուսկանն:

«Արդ ապաչեմք զաւետեաւնդ որք ընթեռնուք զսուրբ Աւետարանս, յիշեսջիք աղաւթիւք զսասցող սորին զԼիանոան, և զկենակիցն իւր զՄարտակիքն, և զորդիքն զԵսաւչէն, զԹորխուշէն, զԵրանոան, զՍարգիսն, զՅոհաննէս պԹոսպիարն և զեղբայրն զՅովհաննէսն, զԹոռոսներն զԹաչատիզն, զԴաւլաթն, զՇահղաւսան, զԱստուածատուրն, զքոյրն զՓէրաւժն, զՆայրն Տրդատ, զմայրն զԴաւնամէլիքն, զպապն Սարգիս, զմոմն զՍիրմանն, զտղապարոնն զԵղիսաբեթն, զԱվրդատն, զՄկրտիչն, զԹաւագն, և ա-

ինձնայն աղքատահոգին նորին ամէն : Եւ զիս զանպիտան գրիչս զմեղքիսեթիս անյապաղ յիշեսջիք . . . » :

Վերջին առաջողաց երկու յիշատակարան ևս կար գրեալ , մին Ռ.ՃԹ. թուին , յորում կը յիշուին հետեւեալ անունները .

« . . . Որդիքն Շապիկ և Հեղինար . . . և զմեծ մանն զՎարդիչահն » : Իսկ միւսն , « . . . Ռ.ՃԺԹ. թվին , ՚ի քաղաքն Թէոդոսպօլիս , Աղրուամ . . . » :

— Իսկիպրն այն Աւետարանին գրեալ .

« . . . Այս սուրբ Աւետարանիս համարաւ եղաւ Աղրուամոյ քաղաքն . և ես տէր Մկրտիչս եղայ գնացի ՚ի Ալվար , առի զՄկիչն ու գնացի Ազմու (Աղրուամոյ) քաղաքն . և գնացաք ՚ի սակերիչ Միրաքն , առաք և գնացաք ՚ի խօճայ Աբանատարն էյ Եըզատանին . առին և գիներ են ձ. Փլօրի և անաւրինաց ձեռացն առին » :

ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Հրաշակերտ վանուց սրբոյն Ցուվակիմայ և Աննայի , որ գրեցաւ յամի Տեառն 1841 , ՚ի 15 յուլիսի :

(Օրինակեալ ՚ի մեծ արձանագրութենէ նոյն վանից .)

« Ի բազում ժամանակաց հետէ , կարի կարօտակիր տենչանօք ցանկայաք գտանել ուրեք՝ զհաւատոյ յիշատակագրութիւն հրա-

չակերտ սրբոյ Ուխտիս, և նովին տեղեկանալ նախնի հիմնարկութեան և սկզբնաւորութեան սորին, և այլ ևս եղելոց և անցելոց իրաց: Այլ աւա՛ղ, դի կամ անփոյթ արարեալ նախնեաց մերոց զայսմ կարեւոր պատմութենէն, և կամ որպէս և իցէ անհետ եղեալ կօրստեամբ, չեղեւ մեզ հնար՝ ի բազմաքննին հետազօտութեանց՝ ի ձեռս բերել դինդրելին մեր, և հասանել մերոյս բաղձանաց: Ապա յուսահատուբ լեալ յաւենային ուսուեքէ, և զնաւս ածեալ թէ՝ մի՛ գուցէ և յեռանորդք մեր զմեզ սադաննիցեն, արժան համարեցաք առանձն ըստ կարեաց տիարութեան մերոյ՝ ձեռնամուխ լինել, լինքնին առ այս գրութիւն:

«Վասն դի առաջին հիմնադրութիւն սորա չէր մեզ յայտ, այլ որչափ ինչ դտեալ մեր՝ ի հաւանական գրոց և պատմութեանց զայն դնեմք առաջի, և մանաւանդ զոր տեսաքն աչօք մերովք և լսեաք՝ ունիմք յիշատակել առատանօր՝ յանձն առեալ զաշխատութիւնս՝ ի փառս փրկչին մերոյ Յիսուսի և՝ ի պատիւ ամենօրհնեալ Ծնողին իւրոյ:

«Եւ սրդ՝ գրեալ էր՝ ի վերջոյ հին ձեռագիր աւետարանի միում այսպէս, ՝ի թուին Հայոց 1103, — գտակեցին զմեհատանն սրբոյն Աննայի, և զմի յեկեղեցեայ Եւդոկիոյ որ էր՝ ի Շոյա տեղի սահմանեալ տեղին: Եւ՝ ի թուին Հայոց 1108 նորոգեցին զվանս սուրբ Աննայի. յայնմ ժամանակի՝ եպարքոս ոմն եկեալ՝ ի կողմանցն Տարաւոյ՝ քակեալ կործանեաց զսուրբ Ուխտս՝ ի հիմանց: Իսկ՝ ի թուին Հայոց 1159, վերստին նորոգեցաւ մենաստանն սրբոյն Աննայի պայծառ և փառաւոր խորանիւք և պատշաճաւոր սեննեկօք՝ օժանդակութեամբ ժողովրդոց համայնից և

վերակացութեամբ Տ· Մարտիրոս բարեջան քահանայի :

« Զկնի երից ամաց չինութեան սրբոյ Ուխտիս , յԵդոկիա սկսան նորոգել սրբուն հրամարտակաւ զեկեղեցին սրբոց Մանկանցն քառասնից , բայց չև հասեալ նոցա 'ի լրութիւն չինութեան ժողովեցան չարաժանտ և խեղաթարոյ այլազգիքն Եդոկիոյ , և հասեալ 'ի վերայ սուրբ եկեղեցւոյն՝ քակեցին զնա : Եւ նոյն ամբոխիւ՝ դիմեցին 'ի վանս սուրբ Աննայի , զամենայն ինչ աւար առին , և իրրև ոչ կարացին քակել զնա մուրճով , այրեցին զամենայն չինուածն հրով , յամենայնէն յուլիսի— :

« Ահա այսքան միայն դառք 'ի ձեռագիր աւետարանի անդ , սակայն նոյն Տ· Մարտիրոս բարեջան քահանայն դոլով պաշտօնատէր և նախանձախնդիր վանացն Աստուծոյ , ինքնին գնացեալ 'ի թագաւորեալ մայրաքաղաքն , կրկին հրամարտակ հանէ 'ի Դըբանէն , և եկեալ վերստին չինէ զՍ· վանս առաւել քան զառաջինն պայծառ և փառաւոր , և ինքն զկնի միոյ տարւոյ փոխի 'ի կենաց սատի թողեալ զանուն իւր յերկրի անմահ և անթառամ պանծանօք և փառաւորեալ համբաւովք , և մնայ Ս· վանքս նոյն չինուածովք մինչև հարիւր հինգ տարի , և անտի վերստին նորոգի կամօքն Աստուծոյ՝ զոր ունիս տեսանել զկնի : Արդ կամեցեալ մեր աստանօր դնել զպատմութիւն նորոգ չինութեան սրբոյ Ուխտիս՝ որ եղեւ 'ի ձեռն Գէորգ արհիապանծ արքեպիսկոպոսի : Սոյն այս մեծահամբաւ բարեւնասէրս մեր՝ դոլով բնակիչ ծննեալ 'ի գերահռչակ քաղաքին Զմիւռնոյ , 'ի տոհմէ աշնուականաց , գրաւէր , ծանրաբարոյ և խոհական բարուք ,

թուլու զաշխարհն և կրօնական սիրով վառեալ գայ հանդարտի 'ի հրաշալի վանս Ս. Աստուածածնի որ ընդ հովանեաւ Մարզուանի։

« Զի անդ էր եղբայր մօր իւրոյ Արքեպիսկոպոս Առաքնորդն նոյն Մարզուանու, ճնայ անդ 'ի վանս առ ժամանակ մի մինչ 'ի վաղճան Առաքնորդի ապրակոնին իւրոյ, որպէս որք անհայր ճնացեալ։

« Որովհետեւ հարքաւ դիտնականութեան սորա՝ ամենայն ուրեք տարածեալ էր 'ի մէջ ապրի մերում, վասն այնորիկ դանիէլ սրբազան կաթողիկոսն Ջջմիածնի հրաւիրէ զնա յաթոռ իւր սիրով և պատուով, իսկ նորա իսկոյն հնազանդեալ՝ անկանի յուղի, և այն ինչ եկեալ յԵդոկիայ երկու աշակերտովք, օթեւանի 'ի վիրս պանդոկի և անդ լսէ զվաղճան դանիէլ սրբազան կաթողիկոսի և ճնաց առ յԵդոկիա առ ժամանակ մի։

« Ի սմին ժամանակի Առաքնորդն էր Եդոկիոյ երեմիա արքեպիսկոպոսն կոստանդնուպօլեցի, որոյ տեսեալ զսոյն պանծալի գՍ. Հայրն մեր, խանդ ուղատեցաւ ընդ նմա մեծաւ սիրով, դի լուեալ ևս էր զհամբաւ բարեվարութեան նորա յառաջագոյն, վասն որոյ խորհուրդ արարեալ ընդ մեծամեծս իշխանաց քաղաքին՝ ամենեքեան միաբան հաւանութեամբ հրաւիրեցին զնա 'ի կարգս վարդապետութեան, և թէպէտ զառաջինն նա ոչ հաճեցաւ անարժան զանձն վարկուցեալ հոգևորական պաշտօնիս, բայց յետ բազում թախանձանաց ձեռնադրեցաւ վարդապետ 'ի նոյն ինքն երեմիա Արքեպիսկոպոսէն յեկեղեցւոջ սրբոյն Գէորգայ, յամի տեառն 1809։ Եւ կոչեցաւ անուն նորա Գէորգ վարդապետ։

« Ապա ապա այս Գէորգ գերահանճար

բարուն՝ ի նոյն ամի տնօրէնութեամբ Ա-
գոյին ժողովոյ կարգեցաւ վերակացու և
վանահայր սրբոյ Ովհաիս՝ որ մինչև ցայն
վայր՝ էր ի ձեռս աշխարհականաց : Ապա
եկեալ նորա ի վանս, և տեսեալ յամենայն
կողմանց պիղծութիւն և գաղթաւորութիւն
սրբոյ Ովհաիս, մանաւանդ զվաղընջակերա
հնութիւն չինուածոյն և զքայքայումն նորա
յանհոգութեան աշխարհական վերակաց-
ուաց՝ սկսաւ այնուհետեւ ջանահնար լինիլ
և հոգալ օր ըստ օրէ զպակասութիւն նորա,
յորդորելով զժողովուրդն և արդար վաս-
տակօք իւրովք : Եւս եդ ի մտի յայնմ օրէ
նորոգել զչինուած սրբոյ Ովհաիս ըստ յա-
ջողութեան ժամանակի :

« Տեսեալ եպիսկոպոսդ զսորա հաւա-
տարիմ ծառայութիւն ամենն Աստուծոյ՝ և
զբռնաջան աշխատութիւն, առաւել եւս
կապեցան ընդ նմա անխզելի կապանօք սի-
րոյ, և ուրախ լինէին ընդ այն, ամն ունե-
լով յատկագոյս վայելել զքաղցրախորժ պը-
տուղ աստուածածիր չնորհաց և վարդա-
պետութեան նորա : Ի սմին ժամանակի՝ Ե-
րեմիա Արքեպիսկոպոսն պատճառօք իւիք ե-
լեալ դնաց ի Կոստանդնուպոլիս, և մնաց
անդէն :

« Իսկ Եփրեմ սրբազան կաթողիկոսն՝
որ յետ դանիէլի նստեալ էր յաթոռ հայրա-
պետութեան, քանիցս նամակագիր լեալ առ
սուրբ հայրն մեր Գէորգ բարուն՝ հրաւի-
րէ զնա գալ անյապաղ առ ինքն յԷջմիա-
ծին՝ վասն հոմաղաարանին իւրոյ՝ զոր կա-
ռուցեալ էր նա ինքն անդէն ի պայծառու-
թիւն դիտութեան . վասն որոյ հնազանդեալ
բարձրագոյն հրամանի վեհապետին՝ եւ գը-
նաց առաջի գինի չորից ամաց վերակացու-

թեան իւրոյ ՚ի վերայ սրբոյ Ուխտիս ։

« Հայց ժողովուրդք եւդոկիոյ որոց ոչ սակաւ տրտունթիւն էր պրկիլ յայնպիսի ժրաջանթիւն և քաջաքարոզ բարուեաց , աճապարեցին փութապէս դրկել ՚ի Կ. Պոլիս և բերեն զառաջնորդութիւն վիճակիս ՚ի վերայ նորա Պատրիարքական կոնդակաւ և պէրաթիւ Օսմանեան . և եղեալ կոնդակին Պատրիարքին ընդ միւսոյ երեւելի անձանց առաքեցին ՚ի Ս Աթոռն հանդերձ ազերտական գրով առ սրբազան կաթողիկոս , պի պԳ.որգ վարդապետս սուրբ հայրն մեր ձեռնադրեալ Եպիսկոպոս , չնորհեցէք փոքու հօտին իւրոյ առաջն պատնիցելոյ · Որոյ ընկալեալ զգիրն խնդրանաց , ձեռնադրեաց զնա Եպիսկոպոս և ակամայ կամօք առաքեաց զնա այսր յաւմի Տեառն 1814 ։

Ապա եկեալ սրբազան Հօրն մերոյ Գէորգ Արքեպիսկոպոսին ՚ի վիճակ իւր Եւդոկիայ՝ լցոյց զսիրտս հաւատացելոց հոգեւորական ուրախութեամբ և սկսաւ յայնմ հետէ աչալուրջ հսկողութեամբ հոգալ և խնամել զհօտն Քրիստոսի , լեալ իսկապէս հայր որբոց և այրեաց ։

Արդ վասն զի եղեալէր ՚ի մտի Ս. հայրս մեր ՚ի սկզբանէ անտի նորոգել զսուրբ Ուխտս ՚ի հիմանց , բայց ոչ ներէր նմա բազմազիչտ նեղութիւն ժամանակին , յորում առաւել զօրացեալ էր ՚ի վերայ ազգին անողորմ բռնութիւն Սարակինոսաց · սակայն կատարեցաւ փափաք ցանկութեան սրտի իւրոյ հաւսկ ուրեմն յաւմի Տեառն 1828 ։ Որ թէպէտ առաւել ևս դառնագոյն ժամանակի պատերազմաց Ռուսաց ընդ տէրութեան Օսմանեանց , բայց յուսացեալ յամենակարող զօրութիւնն Աստուծոյ զայն բարձրելոյ , ձեռն էարկ

'ի կատարումն իւրոյ առաջադրութեան : Այլ և առաւել պղծէն 'ի գլուխ տանելոյ եղեալ պատճառ յոյնմ ժամանակի եղեալ գեռնաչարժութիւնն զարհուրելի , յորմէ պատառեալ քակտեցան և կործանեցան ամի և անտի պարիսպքն երկոցունց կողմանց և այս եղեալ առ մի յառաջ քան զչինութիւնն :

« Իսկ 'ի միւսում ամի գեռնաչարժութեան , այն է 1828 , սկսաւ պղծին չինութեան 'ի սկիզբն ապրիլի , և գեղատեսնծ վայելչութեամբ յօրինեաց զտաճար , անսիւն կամարօք և արբատաշ քարամբք , և վայելչայոյց զարուրս Ուխտս գեղեցկազարդ սեանեկօք չուրջանակի պարսպօք և արտաքին չինուածօք . և յաջողութեամբ Տեառն Ամենակալի աւարտեցաւ այն ամենայն մինչ 'ի վերջ սեպտեմբերի որպէս տեսանի գրեալ անդ 'ի վերոյ պրանտաճարին : Ահա այսպիսի մեծ ազգութեամբ առաւել ևս ծաղկեցաւ Գեր· Ս· Հայրս մեր մանաւանդ բազմութեամբ և երեւելի ընտիր աշակերտօք , զորոց անուանս արժան համարիմ ծանուցանել աստէն :

Ցօհ· վ· որ այժմ է եպիսկոպոս վիճակին Ակնայ , Զաքարիա վ , Եսայի վ , Ն· Գալուստ վ· (գրող պատմութեանս) , Գաբրիէլ վ , Ներսէս վ , Ցօհ· վ , Թադէոս վ : Սրքա էին 'ի կենդանութեան իւրում միաբանք Ս· Աննայի , որք 'ի ժամանակս չինութեան , քըրտնաթոր տաժանութեամբ զցայգ և զցերեկ թաթաւեալ 'ի կիր և 'ի կաւ 'ի գործ տաճարին պարապէին :

« Եւ իբրև այսպէս բազմահոգ տառապանօք լրացոյց զգործ չինութեան , սկսաւ այնուհետեւ մաքրասուն անձն նորա սկսանել օր ըստ օրէ , բայց և այնպէս ոչ հան-

գարուէր 'ի կենսատուչ հոգոց և զբաղմանց առաքինարդական գործոց. և զկնի չորից ամաց չինուեցան Ս. Ոսիտես, անկաւ 'ի մահ հարեր ցաւս, որում ոչ կարացին բժիշկք գարման մատուցանել պեղարէնէ, հրաւիրեցաւ յանմահ Արքայէն յաննգրական 'ի կեանս 'ի 69 ամեայ վախճանած աղիկ հասակին ծերութեան. զկնի 20 ամաց տեսչութեան իւրոյ Եպիսկոպոսի, յամի Տեառն 1832, յամսեանն սեպտ. 13, և թաղեցաւ զնա հոգեւորական հանդիսիւ 'ի գաւիթ սուրբ Եկեղեցոյ յանդիման գրան տաճարին»։

ՁՆՈՒԴԻՐՔ

Ս. ՅՈՎԱԿԻՄ—ԱՆՆԱՅԻ ՎԱՆՈՒՑ

1. Ճաշու գիրք.
1. Շարական.
1. Հաւաքումն և լուծմունք Առակաց և Երգոց երգոյն.
1. Կանոնգիրք.
1. Համառօտ տեսութիւն հրեշտակաց.
1. Մաշտոց փոքր.
1. Մարդաբանութիւն և ճառք Գրիգորի Նիւսացւոյ.
1. Աւետարան մագաղաթ մեծ.
1. » » միջակ.
1. » » փոքր.

Բաւական հարուստ թուով տպագիրը գրեանք ունէր վանքս։ Նոյնպէս ճոխ էր նաև Ս. Ոսկեբերանի վանքի գրադարանը, որոյ ձեռագիրներէն ցանկ և յիշատակարան օրի-

նակելու միջոց չունեցայ դժբաղդաբար։ Մեծ ցաւ եղաւ սրտիս որ թօքաղի եկեղեցւոց ձեռագիր մատեաններէն , որ չատ հարուստ թիւ կը կազմէին, չկրցայ աչքէ անցընել ամենքն ալ և այսպէս եղածն ընդօրինակել, թօքաղ ոչ միայն իրեն համար, այլ չատ ուրիշ գաւառներու համար ալ եկեղեցական գրքեր ձեռագրած է , ինչպէս յայտնի է հեռաքրքիր եղողներուն . չատ երգեր և տաղեր չինողներ ալ եղած են , նոյն իսկ տուներէն բաւական ձեռագիր մատեաններ կան եղեր . կ՚երեւի թէ թօքաղի ժողովուրդն առկէց չատ աղէկ հաշակ ունեցեր է գրելու կարդալու , Ա.պարաբեան Յօհաննէս առնուն մէկը , կ՚ըսէր , Ս. Ա.ուաջնորդն և այլք , բոլոր բուսոց Հայերէն բառեր գրած ունի , ոտանաւոր յօրինած , որոց ձեռագիրը անոր որդւոյն Յակոբին քովն է : Պ. Ընկուզեանն ալ այս տեսակ գրուածքներ ունի եղեր , Բայց առանք քաղաքէն բացակայ լինելով, չը կրցայ տեսնել , կը վստահքէն որ առաջ լինէր , և խնդրեցի որ խնամօք պահել տան , իբրև խիստ կարեւոր գործ :

Ութն օրուան մէջ , որքան կարելի էր , լրացընելով մեր պաշտօնը , Հոգեդ.ստեան կիրակին քարոզեցինք Ս. Ա.տուածածին եկեղեցին : Յունիս 7ին թաղեցինք Սուբիասեան Օհան էֆէնտին , որ թօքաղի առաջին նշանաւորն էր եղած այս տարիներու մէջ , և հասարակ հիւանդութեան արհեստէն բարձրա-

ցած էր բարձրագոյն աստիճանի. մարդ՝ սաստիկ եռանդուն և փառասէր, ճարտար, ազդու, գործող, բայց յամառ և խռովասէր. որոյ կեանք կարի բեղմնաւոր և ազդու կարող էր լինել, եթէ կրթութիւն և քիչ մը ուսմունք ունենար, անգամ անգամ իւր անձնական ծախքով վարժարան բացած էր, մի և նոյն առաստաձեռնութեամբ սակ կը մխէ եղեր իւր կաշքը յառաջ վարելու և հակառակորդը ստպալելու համար, գրեթէ բաղդատար չուան՝ ի վնաս ազգին. թէպէտ, կ՚ըսէին՝ անմիջապէս կը գղջար ըրածը գլուխ առնելէն գինի, բայց ի՞նչ օգուտ. վերջին օրերն ալ բոլոր ըրածներուն վրայ գղջացեր էր, ըսին. բայց հառուցում մը չընելով, և ոչ իւր հարստութենէն կտակ ձգելով ազգին: Մեծ տպիտութիւն մի է այս և խղճի մոլորութիւն, երբ անհատի մը կամ ազգի մը վնասողները Մեղա ըսելով և գղջմամբ խոստովանելով, կը կարծեն թէ կը ներուի իրենց այնքան չրկանքներ և վնասներ, զորս միայն փոխարինմամբ կարելի է քաւել. անշուշտ անոնց համար կ՚ըսեմ, որ կրնան հաստուցանել իրենց չրկածին չորեքկինը: Այո՛, անոնք միայն կրնան հանդարտել իրենց խիղճը, և ըսել «Այսօր եղեւ փրկութիւն տանս այսմիկ»:

———

ՍԵՒԱՍՏ ՓԱՂԱՓ

Յունիս 8։ Զկրնալով ջուրեան դառնալ, հարկ եղաւ սուրհանդակի հետ երթալ. ժամ 3½ին մեկնեցանք Թոքատլէն։

Լերան ճանապարհով դնացինք. կը բարձրանանք ու կը բարձրանանք։ Երթացող եկող իշոց կարաւաններու յաճախ կը հանդիպինք, որք Թոքատլէն կեռաս կը առնեն ի Սեւաստ ու կը դառնան։ Պաղրակ Ջրեր կը խմենք. զովագին է օդ. տեղ տեղ ճամբուն վրայ գերեզմաններ կան սպաննելոց. երկիւղալից են այս տեղերս։ Զէրքէզներ կը վխտան, որոյմէ Ուզուն Միրզէ անուանով Զէրքէզն հեծեալ և սպառազէն ընկերացաւ մեզ. ամայի վայրերէ կ'ընթանանք։ Ուզուն Միրզէն պատմութիւններ կ'ընէ կարսի պատերազմին, ուր ինքն ալ ղըտնուած է. կը պախարակէ Թուրք զօրավարաց չուայտ և զեղխ կեանքը, արտասուօք կը յիշատակէ Զէրքէզաց ազգասիրի կոտորածն, և մեղքը Թուրք զօրավարաց վրայ կը դնէ. տակաւին նկարագրութիւն այն կոտորածին, և խեղճութիւն պինուորաց. իրենց անձնուիրութիւն և դիւցազնութիւնը կը գովէ, եւ, եւ, իրենց նախկին հայրենիքը, և հոն ունեցած երջանիկ կեանքն ու վայրերը կը նկարագրէ. իրենց կրօնական ջերմեռանդութենէ չարաժեալ խլամի երկիրը գալու համար Թողած

ու զոհած են եղեր իրենց վայելքն ու հայրենիքը. դժգոհութիւն կը յայտնէր պետութեան կառավարիչներէն, թէ «Մենք երկրագործ, արուեստագէտ և ժրաջան ժողովուրդ ենք, բայց երկար տարիներ մեզի բնակարան և երկիր չյատկացուելուն համար թափառական մնացինք. անօթիներ՝ աւազակութեան ձեռք զարկին. և այսօր այնպէս ճանչցուած է թէ՝ ո՛վ որ Չէրքէզ է, աւազակ է, մարդասպան: Ոչ, ոչ. սրիկան ամեն ժողովրդեան մէջ կը գտնուի, բայց մեր մէջ ազնիւ ու պարկեշտ մարդիկ չատ կան: Կը ցաւիմ, կը ցաւիմ, կ'ըսէ, երբ կը տեսնեմ որ ամեն մարդ մեզմէ կը վախնայ, կը փախչի, իբրև թէ մենք գազան եղած լինէինք և ոչ մարդ. կը ցաւիմ, երբ ամեն տեղ պատահած դողութիւններ ու սպանութիւններ Չէրքէզաց վրայ կը դնեն. մենք աւազակներ գիտենք, որ բնիկ են, բայց Չէրքէզի հագուստ և գէնք կրելով կը յարձակին կարաւանի կամ գեղերու վրայ, կը խլեն, կ'սպաննեն, և տեսնողներ կերթան կը վկայեն թէ Չէրքէզներ էին. և ահա ոստիկաններ կու գան մեր օճիքէն կը բռնեն: Որո՞ւն հաւատացընենք թէ Մենք չենք. և որովհետև չենք կրնար մեր անմեղութիւնը պաշտպանել, ընենք չընենք գող ենք, կ'ըսեն մեր Չէրքէզներ, ու իրաք ալ կ'սկսին», ևա, ևա: Արդարև ես ուրիշներէ ալ լսած էի, թէ բնիկ ցոյն կամ թուրք սրիկաներ կ'եր-

թան Չէրքէզներէն հանդերձ կ'առնուն և ա-
նոնց կէնքեր, կ'երթան ճամբաներու վրայ
գողութիւն կ'ընեն։

Մացառներէ կ'անցնինք. ջրե՛ր դրախ-
տային. ճորերէ կը բարձրանանք, ձիւներու
վրայ կը քալենք. մայրի անտառներ կան.
նորածիլ դալարներ. այս վայրաց գարունն
դեռ այսօր է. և ահա աղբիւր մը, ՔՕՈ—
ՕՂԼՈՒ ԱՂԲԻՒՐ։ Տեղւոյս դիրքը, ջրերը,
անտառն, արօտն, օդն, և Քօռ—օղլի ա-
նունն՝ խոր տպաւորութիւն մը կը ներգոր-
ծեն. ամենայն ինչ բանաստեղծական։ կը
յիշէ մարդ Քօռ—օղլու վէպն ու խաղը, և
արժանի կը գտնէ այս հիանալի վայրին։

Մեր ձիավար Մանուկն ընչացքներ ըլ-
րած, գդակը մէկ քովին դրած, ձին մլտ-
րակեց, ատրճանակը կրակեց. կրկնեցինք
ես և Մարտիրոս մեր ատրճանակները. և
ահա Մանուկի աչխոյժը վառուեցաւ. քաղցր
և ահեղ ձայնով մը սկսաւ, «Հայ հայ, բա-
բամ հայ հայ», Քօռ — օղլուի խաղի նա-
քարտաթը։

Իջանք այս խորհրդաւոր աղբիւրին վր[illegible],
ճաշեցինք, և խմեցինք մուսայից և դիւցա-
զանց ջրէն, որմէ կարելի չէր յագենալ։
Հեծանք և շարունակեցինք մեր ուղին։ Ո-
զուն Միրզէն անրաժան է քովէս. կարի քա-
ղաքավարութեամբ և ազնուականութեամբ է
իւր վարմունքն ու խօսուածքը. ծանօթու-
թիւններ կու տայ մեզ այդ տեղերուն վրայ,

կը ցուցընէ քովի անտառները, մարդերը, որ իրենց գեղին կը պատկանին. և ահա գեղը ԲԱԹՄԱՆ ԴԱՇ։ Բաթման դաշ գուռ Զէրքէզի գեղ է, նոր չինուած, լերան ուսին վրայ, կոկիկ տներով. սքանչելի է օդն, հողն ու ջուրը, միայն ձմեռն խիստ։ Եքեղ ապարանք մը կը ցուցընէ գիւղին մէկ ծայրը րըլրակի մը վրայ առանձին, և կ'ըսէ թէ Զէրքէզ Մուսա փաշայի տունն է, բոլորովին եւրոպական ճաշակով չինուած, քարուկիր, ապակեայ մեծ լուսամուտներով, առջեւն ալ փոքր մկկիթ մը։ Զէրքէզուհէ՝ գեղին առջեւէն անցնող ջրոյն եղերքը ցորեն կը լուանան և կը չորցընեն. Ուզուն Միրզէ զանոնք ցուցընելով՝ հառաչանօք կ'ըսէ. «Ա՜հ, այս գեղէն կուխի գացողներէն միայն ես և ուրիշ մը ապրեցանք. ամենքն ալ չկիտ եղան. գեղը միայն կիներ և տղաքներ կը տեսնէք»։ Զմեզ իւր տունը կը հրաւիրէ. չնորհակալ կը լինինք. խիստ մարդավարի կերպով կ'ուղեւորէ զմեզ և կը խնդրէ, երթէ վերադառնանք՝ իրեն հիւր մնանք և չմոռնանք գինքն։ Ուզուն Միրզէն Ռուսաց մէջ պաշտօնատար եղած է՝ գեռ այս կողմերը չգաղթած. 58 տարեկան էր, այլ աշխոյժ և միանգամայն կիրթ անձն։

Արարչաւ կ'ընթանան մեր ձիերը, և ահա վեց հնծեալ և պինեալ Զէրքէզներու կը հանդիպինք, որ Սեւաստ կ'երթան. ոչ պակաս քաղաքավար և աղնուական են ատոնք

Ուղղն Միրզէն. ժամ մը ՝ի միասին ընկերանալով, խօսակցելով, մենք յառաջ կ՚անցնինք, մեր եռեւ ձգելով Համիտեան պալատները գեղեցիկ արուեստ և վայրեր, անտառներ և ջրեր, մեզ հետ առնելով պահականոցէն ոստիկաններդը: Չմոռնանք ըսել թէ՝ այս Բաղդադի մեծ ճամբուն վրայ և լեռնային ուղին, ուր որ աւազակաց երկիւղ և ձմեռուան խոտորմենէն վտանգներ պատահելու տեղեր կան, պահականոցներ շինուած են, և պահապան ոստիկաններ դրուած, թէպէտ շատն ամայացած և վտանգներ անպակաս:

Ղարղինի լեռնադաչտն իջանք. վերհասած նըշտըղ լեռն որ ձեւով կը նմանի Մասիսին, շքեղ կ՚երեւի մեզ յանդիման, ճիշդ իր տարօրէն շինուած է Ղարղին գեղը: Յուրտն կը պղպանք: ժամ 12 է: Ընթացք բազմաթիւ հօտեր, հաչող ու վազող դարմ. շուներ, բայօթեայ իջեւանած կառաւաններ, արածող իշոց և ձիոց պանդրուկ պընդպընդոց, անդաստանաց գեղատեսիլ վիճակնէ գեղը, և դաշտն ու լեռնէն վերադարձող շինականաց ու վաստակաւոր հեզիկ եզանց երամն, երեկոյեան շքեղութիւններն են երջանիկ կեանց և վայրաց: Հասանք մենք ալ մեր իջեւանը: Գեղին բնակիչքը տիրողջ Թուրք են:

Պատուական Թուրք մի էր մեր ասպնջականն, շնորհքով տեսակ մը պատրաստ,

մեծ պուխէրիկ (պատին մէջ բացուած օճախ) առատ փայտերով անդադար կը վառէ. քանի՛ սիրուն է բոցը. մեր շուրջ խոլորելացան դէղի Աչոխ-Լէխ, պատուաւորներ, անվերջ հետաքրքրութեամբ հարցուփորձեր կ'ընեն, փափաք և մաղթանք պատերազմի վերջանալուն: Այսպէս ամեն թուրք և Գըզըլպաշ դէղերը արտաուօք և մորմոքանօք կը խօսին պատերազմի վրայ, որոյ աղէտը կարծի ծանրացած էր իրենց, տանելով իրենց զաւակները մահու ասպարէզը. չատ տներ թափուր մնացեր էին, և երկրագործութիւնը խափանեալ. կ'ողբային յիշելով իրենցմէ պահանջուած չափազանց ֆանէներ, ծանր տուրքեր, ձրի ծառայութիւններ, և անպատրոյն պաշտօնատարաց խիստ վարմունքներէն կրած պրկանքները, ևն, ևն: Պատրաստուեցաւ մեր տեղան, թարմիկ հաց, նոր պանիր, ջերմիկ կաթ, կարագ, սեր, մածուն, և ձաւարէ փլաւ: Ի վերջոյ մենք ալ թէյ հրամցուցինք ամենուն, և չատ բաժնեցինք կանոնաւորել պատիկ լամուկներուն, որ չատ բարեհամ եղան մեզ, և արագ արագ կը վազէին ու կը պատռային իրենց մայրերուն քով, որ դրան ծակերէն ու երդիքներէն կը նայէին:

Յունիս 9. Ղարղինէն մեկնեցանք. լեռնահովիտ է մեր ուղին, գեղակի մը ափէն կընթանանք, հերկողներ, նախրորդներ, երթեւեկներ կան, գոգաւոր տեղ մը առա-

ji թէ+է մը, և անոր մօտ դերեզմաններ. տեղ տեղ գեղեր կ'երեւին, և Սեւաստու քանի մը բարձր լեռներ: Կը հանդիպինք խումբ մը Ալբրինցի գինեալ կտրիճ Հայոց, ինձէ առ ըսուած աղբերակի մը վրայ: Քանի՛ քաղցրահամ և սառն է այս ջուրը: Եւ առհա Մէյրէդումն ենք, որ ընդարձակ լեռնադաշտ մի է անջուր, անմշակ, և անբնակ, կը տեւէ 2 1/2 ժամ. հետու հետու հազիւ կը տեսանենք լեռնադաշտին եզերքները մի քանի վարսղներ՝ Բրդնիք գեղացի: Աւազակներէ ապահովելոց՝ և ձմեռն ըքախտիլ եղողներու դերեզմաններ կան տեղ տեղ. անշնկարագրելի փոթորիկներ տեղի կ'ունենան եղեր Մէյրէդումին վրայ. քարակարկառներ կան շարուած՝ ճամբան չմոլորելու համար: Ահա աւերակ խան մը, և պատ՝ի վայրէ մը կ'իջնենք ձորահովտի մը մէջ. մեր անցած լերանց ջրերը գետակ մը կազմելով այս ձորէն կ'ընթանան Սեւաստու քաղաքը. դալարաւէտ արօտներով լի է ձորը, ուր խաւարերամ անդեայք և իշան խրախճան կը կազմին: Մեր իջած դարին տակ աղբիւր մը կը հոսի կաթի պէս սպիտակ և համեղ, ձիւնի պէս ջինջ և սառն: Կը յառաջանանք, և առհա Չաղացքներ, առեւնիք, դալարներ, կանանչ արտեր, ճիւղ ճիւղ բաժնուած ջրոց առուներ, տեղ տեղ կանգնած վրաններ: Դուրս կ'ելլենք ձորէն, մեր աչ կողմն է ԴԱՎՐԱ գեղեցիկ գեղ Հայոց, որոյ հանդէպ

և հուսկ բարձր դիրքի վրայ կայ վիայարանի ձեւով փոքրաշէն նոր տաճար մը Ս. Յակոբայ անուանով, և քարայր մը՝ Ս. Վարվառէ, զոր քոյր Ս. Յակոբայ է, կ'ըսեն։ Դավրայէն վեր խիստ մօտ է Ս. Նշանի վանքն, դմբեթայարկ, պարսպապատ և դրախտապարտ, յորմէ անդր ևս, իբր կէս ժամու միջոց, Ամեաստու քաղաքն է։ Ուղղակի Ս. Նշանի վանքն իջանք. զեռ կէս օր չէր։

Յունիս 10. Վանքը շրջեցանք, ուխտ և երկրպագութիւն ըրինք, ու հանգստացանք քաղաքէն քանի մը ապտ այիններ տեղութեան եկան։

Յունիս 11. Կիրակի առաւօտ, Առաջնորդ Ս. Հօր հրաւիրանօք կանուխ քաղաքի մայր եկեղեցին իջանք. այն ահագին և հոյակապ եկեղեցւոյ մէջ խառն բազմութեամբ լեցուած էր ժողովուրդն, ողջունեցինք պիրեանք, աւետաւորեցինք, և իրենց ընծիքները յիշեցուցինք։ Նոյն երեկոյ, որ Հոխիմեանց կաւատնաց նախատօնակն էր, իջանք անոնց կրթութեան վրայ խօսելու։ Այսօր մինչև երեկոյ այցելութիւններ վայելեցի ազգ այնոց պրեմէ ամէն կարգէն, երեւելիներէ, ուսումնականներ, պաշտօնական մարմիններ, ընկերութիւնք, երիտասարդք, քահանայք, եւն։ Շատ մխիթարուեցայ և յուսով եղայ, տեսնելով հոս կենդանի Հայերը։

Մինչև յունիս 28 ՚ի Ամեաստ անցուցինք. մերթ ՚ի վանք, մերթ ՚ի քաղաք։ Ընդհա-

դառեալ թէ՝ ազգայնոց թախանձանքէն և թէ՝ Առաջնորդ Ս. հօրէն, կաթողիկէ Ս. Էջմիածնի մօնի կիւրակին պատարագեցինք՝ ի Մայր եկեղեցին. աւուր պատկերը գեղեցիկ առիթ կ'ընծայէր Հայ ազգիս և Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ նախկին փառքը նկարագրելու, Տրդատն և իւր օրեր, Լուսաւորիչն և Շողակաթ, Ազգիս նոր նորոգութիւնն, լուսաւորութիւնն, նոր Շողակաթն, նոր լոյս, ևն, ևն: Նոյն երեկոյ Ս. Սարգիս եկեղեցին գնացինք և քարոզեցինք Մովսէսի և Դաւթի սատուածապաշտութիւնն. վարդանանց, Ղեւոնդեանց և այլ այսպիսեաց Հայ — Քրիստոնէութիւնն: Եռաց ժողովրդեան սիրտն, և ոչ եւրոպեան ու մխիթարեանց հոգեւորապէս:

Վարժարաններըս մի առ մի շրջեցայ, 12 յարկի կամ մասի բաժանեալ է՝ զատ զատ թաղերու մէջ, յորոց երեքն աղջկանց են. մեծ Ուսումնարանն Թարգմանչաց անուամբ՝ Մայր եկեղեցւոյ մօտ է: Զարմանալի էր տեսանել Սեւասաւու Հայոց մանկանց բազմաթուութիւնը. Աստուծոյ «Ճգեցէք և բազմացարուք» օրհնութեամբ խիտ խիտ, կայտառ, կարմիր, սիրուն, սիրուած են վարժարանաց բակը, սրահն ու սենեակը, իբրև ծաղիկունք՝ ի մարգ: Սովորական կարեւոր ուսմունքներէն զատ, կար նաև գաղղիերէն և տառկերէն լեզու. աղէկ ուսուցիչներու ալ տաք ունէին. աւազ վարժապետն էր

թաղէոս պատուելին, զոր թուրքեր կը կոչէին Աղէ և Մոլլա. թէպէտ երկու աչօք անտես, այլ մեօք կորովի. սա կ'ուսուցանէր բարձր կարգին Ճարտասանութիւն, տրամաբանութիւն, գրագիտութիւն, պատմութիւն կրօնագիտութիւն, բանաստեղծութիւն, և գաղղիերէն, ուսած էր նաև Պարսկերէն. գիտէր քնար և ջութակ հարկանել, խազ կանչել, յանպատրաստից տաղ և խազ հընարել, եկեղեցւոյ չարականներ և երգեր նուագել, ճաշու գիրքերը բերան ընթեռնուլ, գրաբառ չարադրութիւն յօրինել արձակ և ոտանաւոր, կրօնական և բանասիրական քննադատութիւններ ընել, եւն, եւն:

Ուսումնարանի այցելութեանս ժամուն, ուր մանկտիկ ճառեր և ոտանաւորներ ընթերցան, երգեցին, և ապա մեր դիտողութիւններ, յորդորներ և խրախոյսներ խօսեցանք. խօսեցանք և յուղուեցաւ սիրտս ... որուն 'ի պատասխանի ճարտար բանիւ փոխարինեց նա, և մատոյց ինձ հետեւեալ ձօնը, զոր իբրև ճաշակ մը կը դնեմ այստեղ, հրաժարելով առ ի եղած ակնարկներէն ....:

Ժամանակ հանդարտիցս մայր քանի
չքնաղ ծնար օր,
Քանի'օն բարեբաստիկ ծագեցեր մեզ
այգ այսօր.
Ներելով զարուեստական 'ի մեր աչխարհ
մշտագիշեր,

Զարեզ ին ազատութեան ընկճեալ ազգիս
աւետարեր ։
Հոգիդ կենարար մահկանացուաց
ու անմահից ,
Կաթեա՛ յիս աւիւն անմահ ոգիդ ինձ տաղ
աչխուժ ալից ։
. . . . . .
. . . . . .
Ցանկալի է ինձ , Հայրիկ , յաւիչտակիչ
որտիս քերթող ,
Որ յուչիկ գողանայ զսիրտ մարդկան
իբրև զգող ։
Զգող ում մարդ չնորհապարտ ցմահ զանձն
իւր դաւանի ,
Այնու զի յաւիչտակեաց զնա 'ի դրախտն
աղեխի .
Եւ պարզեաց առաջի նորա զբնութիւն
և զԱստուած ,
Ցորոց 'ի գեղ զմայլի մարդ տրոփէ իւր սիրտ
հոզաչանգուած ։
Քերթո՛ղ սոխակ բանաւոր զսէր երգէ
և զգեղ անմահ ,
Քերթո՛ղ հրեչտակ երկրաւոր զԱստուած երգէ
երգովք 'ի ճահ .
Քերթո՛ղ քնար Աստուծոյ որ յաւիւն
զմեզ լնու ,
Ցաչխոյժ երկնապզեցիկ անմահ գործէ
զմարդ մահացու ։
Քերթողի ճչմարտութեան սկզբանց քաջիկ
հմտացելոյ ,

եւ ի խանդ երկնապղեցիկ ի հրեշտակ
վոխադրելոյ ,
Պարտին ազգ մարդկան պիւրեանց արդի
թարգաւճանս .
Ի հրահանգս քաղաքական մարդկց եւ յայլ
ուսմանց կրթանս :
Գերթող զբ այդպիսի տեսեալ իմ
զքեզ Հայրիկ ,
Եւ յոգւոյդ ի զշուտիշ հարեալ ի գեղ
անանցիկ ,
Ընդ խուն խայրիս մոացըս քեզ ձօնեմ
պիմս անկեղծ սէր ,
Զօն թէպէտ թերեւ և դոյզն սակայն և
անձնանուէր :
Այլ ա՛ւշ թէև քո սիրտ պիս խոպառ
չառնէր անտես ,
Ա՛ւշ երէ և ինձ ի քէն պաշտէր քո սէր
ուր պատքիմ ես » :

14 Յունիս 1878 . . . . . .

Թադէոս Կէղէրեան

Թադէոս պատուելին պրակաս մատեա-
ւոր գործ մը ունէր յօրինած հրատարակու-
թեան համար . սակայն այսքան առաւելու-
թեամբ հանդերձ , անպատշաճ էր այսպիսի
մէկը վարժապետութեան , պատճառը կար-
ծեմ ոչ ոք հարկ կ'զգայ հարցընելու . Թէ-
պէտ և սա իւր այնքան պիտանի ջանից
և տքնութեանց արժանաւոք իրաւունք ու-

նէր ազգէն իւր անուանդն և ապրուստն ստա-
նալու :

Ա.րժանաւոր երաժիշտ կր պ. Յակոբ Մեսխեան, որ և դաստիարակ Ուսումնա-
րանին : Երկրորդական դասատուք կրնային յառաջանալ և կատարելագործել իրենց պաշտօնը, եթէ լինէր մանկավարժական կամ նոր ու իրական գրութեամբ վարժարան-
ները բարեկարգել գիտցող առաջ մը : Վարժարանաց նիւթական և ուսումնական հոգը սահանձնած է Ս.ննէքերիմեան ընկերու-
թիւնն, և անօրէն անուամբ մկլը կարգած է իր կողմէն իրրև հսկող : Աղջկանց վարժա-
րաններըը վարձեալ տներ էին, անձեւ և ան-
յարմար. ուսմունք չկար, ձեռագործ սկը-
սած էին, այլ գործելու նիւթ չկար : Օր մը յանկապէս սիկնանց քարոզ խօսեցայ, ի-
րենց սեռի կարեւորութիւնը, դաստիարա-
կեալ մարդ ամենամեծ օգուտը ապին հա-
մար բացատրելով, «Արատուք դմա ՕԳՆԱ-
ԿԱՆ ըստ դմա », թէ ինչպէս մարդ մը, նոյն-
պէս ազգ մը առանց կանանց օգնականու-
թեան բան մը չեն, և թէ իրենք ոչ միայն կին են, այլ և օգնական, այլ և մայր, թէ ինչ է իրենց մայրական պարտաւորութիւնը, թէ ինչպէս կարելի է զիրենք իրենց ունե-
ցած ուրուական վիճակէն փոխել և իրական կեանքը ձեռք բերել. մասնաւորապէս Սե-
բաստու սիկնայք, որք մարդէ կը հալած-
ուին, անուսանելի և անբարբառ են, հե-

տեսարար և անդաղափար և անպատ մարդկային, պղտային, տնական, և քրիստոնէական կեանքին և կոչման, հաշխնեքեն աւելի հաքե՞, ինչպէս են նաև Ա.իոց կամ Հայաստանի քաղաքաց Հայ տիկնայք, որք սակայն պերճ կը հագուին, և մարդարիտն ու ոսկին կը կախեն, փոխանակ Գրակքոսեանց մօր նման ոսկին ու գոհարը մխիթարու, և իրենց ուստերքն ու դստերք ուսումնքի և կրթութեամբ ոսկի գոհար դարձնելու, անոնցմով զարդարուելու և պարծենալու. Ցորդորեցի զիրենք որ խնամակալութիւն մը կազմեն, և իրենց աղջկանց մտաց ու մաստանց նիւթ հայթայթեն, եւ. բայց սոսնք իրականացընել տեղւոյն Ա.ազնորդին գործն էր և Ազատմնական խորհրդոյն, որ չկարե թէ՛ ուսումնարանն և թէ՛ ծաղկոցներ լոյս և օդ առնելու պէտք ունէին. Ս. Սարգսի նորաշէն վարժարանի վերին սրահն այս մասին լաւ էր, բայց հոն ալ գրասեղան չկար. գրասեղան միայն Թարգմանչաց ուսումնարանը կար. ծաղկոցներու մանկունք և աղջկունք քանի մը տեղ բոլորովին հողոյ վրայ նստած էին: Զարմանալի՛ հայրեր և մայրեր, երբէ՛ք չեն այցելեր իրենց զաւակաց, այնքան ցաւօք ծնած և տառապանօք մեծցուցած որդիք, կը ձգեն այնպէս անխնամ, չը գիտեն թէ բան կ՛ուսանի՞ն, կամ ի՞նչպէս է տեղերնին, կեցուածքնին: Ասոնց այսպէս անփոյթ լինելուն պատճառն ինձ կը թուի թէ

ձրի վարժարան ունենալն է. պէտք է թո-
չակ տան, որպէս զի տղակին չնորհիւ իրենց
զաւակաց ալ հոգ տանին, հաչիւ առնուն,
աղէկ վարժապետ և վարժուհի ունենալու
փոյթ տանին: Տղոց և աղջկանց
վարժարանաց մէջ մի միայն է ուսուցիչն, վա-
րիչն, և ամենայն ինչ: Սեներբերիմեան ընկե-
րութեան Պօլսոյ անդամներ մտադիր են ե-
ղեր ընտիր ուսուցիչ մը և վարժուհի մը ղըր-
կել, բայց հոս դիտողներ կան եղեր, որ կը
կարծեն թէ իրենց ներկայ վարժարաններէն
լաւագոյն վիճակ ունեցող վարժարան չի-
նիր. ամենէն կարեւոր և բարձրագոյն դիրք
ունեցող անձ մի և այս կարծիքէն էր ըղժ-
բաղդաբար:

Դեռ աշակերտ, կամ վարժարանէս նոր
ելած պատանիք, Դեմոքրէնական խրոխտ
ճառախօսութեանց, և Հիւկօական բանա-
խօսութեանց մէջ կը խիպախէին. փոքրիկ
սոփեստէաններ և պուէտեաններ, որ գիրենք
չատ բարձր գիտնոց կարգին դրած են:

Բաւական բազմաթիւ են ընկերութիւն-
ներ, որոյմէ մի քանին միայն պիտի գրեմ.
1. Սեներբերիմեան ընկերութիւն, որ Սե-
ւաստացոց պարծանք և բազմաց օրինակ մի-
նելու արժանի է իրր 32 տարիէ ՚ի վեր
հիմնեալ Պօլիս գտնուած պանդուխտ Սե-
ւաստացիներէ, քանիցս դադարած և վե-
րսկսած, վերջին անգամ 1877ին աւելի կա-
նոնաւորուեր և արդիւնաւոր վիճակի մը մէջ

դրուեր է. իր բաժանորդական հասոյթներով թէ վարժարանաց նպաստած է և թէ այսօր երկու խան ունի քաղաքիս մէջ, Առաւեան խան՝ 25 տարի յառաջ չինած, Սեննեքերիմեան խան, որ դեռ նոր լրացած էր. երկուքն ունին 71 սենեակ կրկնայարկ, և 15 խանութ, որք տարին 30000 ղրշ. էն աւելի վարձք կը բերեն, ամբողջապէս նուիրուած վարժարանաց:

2. Անձնուէր ընկերութիւն, որ յառաջ աւելի համբաւ և արդիւնք ունեցեր է. հասարակաւորաց ձրի դաս կու տայ կիրակի օրերը. բաւական գրեանք ունի, թանգարանն պէկեան պ. ՃանՕյի ձեռքն էր:

3. Լուսարեր ընկերութիւն, որ կարօտ ուսանողաց ուսումնական և նիւթական պէտքեր կը մատակարարէ:

4. Օժանդակ ընկերութիւն, որ դասագիրք բերել կու տայ Պօլսէն, աղքատաց ձրի և կարողաց դիւրագին կ'ընձեռնէ՝ ընթերցանութիւնը տարածելու նպատակաւ:

4. Համալսարանական ընկերութիւն, որ բացած ունի երկսեռ վարժարան, ուր կարեւոր ուսմանց հետ կ'աւանդուի նաև տաճկերէն և գաղղիերէն լեզու և բնական գիտութեան դաս. աղջկունք կ'ուսանին մանել և գործել դունաւոր չալ, մանիսա, երեսի սրբիչ, թաշկինակ, ևն, որոց համար յատուկ վարպետ կին մը կայ և վարժարանի մէկ կողմն գործարան ըրած է. մանկանց հա-

մար ալ իրենց վերաբերեալ գործեր։ Այն ընկերութիւնը կիրակի ցերեկներն ալ կենցաղագիտական, պատմական, արուեստական, տնտեսական և բարոյական բանախօսութիւններ կ'ընէ։ Ցաւալի էր որ ոմանք դժգոհութեամբ կը խօսէին այս ընկերութեան վրայ, և այս յառաջ եկած էր բանախօսաց խիստ քննադատական լեզու գործածելէն. և երբեմն չափազանց եռանդով յառաջդիմութեան ու անոր արգելքներու վրայ խօսելէն, գուցէ երբեմն ալ անզգոյշ կարծիքներ յայտնելէ։ Իրենց ծրագրին մէջ տեսայ կրօնագիտութեան դաս. ըսին թէ քանիցս դասատու խնդրած ենք, բայց ըլած չեն։ Ասոնց պէտք եղածը՝ ասոնց, և բամբասողաց պէտք եղածը՝ բամբասողաց խօսելով, քաջալերութեան արժանի գտայ այն անձնանուէր երիտասարդաց օգտաբեր ձեռնարկն։

Կան այլ և այլ ընկերութիւնք ևս, որք կը բանախօսեն, կը դասախօսեն, եւ. վերջապէս խօսելու, լսելու և գործելու մեծ փոյթ ու եռանդ ունին Սեւաստու աղգայինք. եթէ այս ջրուեալ մարմինները իրարու մօտեցնելու և օգտակար ու կարեւորագոյն պէտքերու ծառայեցնելու առաջնորդող մը լինի, Սեւաստ շատ և շատ կը յառաջադիմէ։ Պէտք չէ որ ընկերութիւն ընկերութեան հակառակի և զանի անուանարկէ. մոռնալու չէ թէ ամենայն ընկերութեանց

նպատակը ազգին չահն է այլ և այլ ճանապարհով. բանն այն է՝ իրար հասկնալ թէ ո՞ր միջոցն է առաջին և չինարար, ու միացընել իրենց զօրութիւնը՝ այն զօրութեան։

Գլխաւորապար երկուքի բաժնուած էր Սեւասացւոց ընթացքն ու նպատակը, Դատիարակութիւն լուսաւոր մտօք, և Բարեպաշտութիւն՝ առանց լուսաւորութեան։ Դատիարակութիւնն կ'ընդունի թէ Աստուծոյ խնամքն ու պատուիրանք մարդոյ համար է, երկրի բարիքն ու երկնից արքայութիւնը մարդոյ համար է, և մարդը թէ՛ մարդոյ և թէ՛ Աստուծոյ համար է. իսկ Սեւասացւոց բարեպաշտութիւնը կը հասկնայ թէ երկրիս վրայ խնամք, բարիք, ընկեր, ազգ, հայրենիք, և նոյն իսկ իրենց անձինք իրենց համար չկան, ամենայն ինչ Աստուծոյ նուիրուած են։ Օրինակ, խումբ մը ձեռնաւորներ անուանով անձինք կային, որք թողած էին իրենց ծննդեան տունն, իրենց տունն, իրենց արուեստը, կ'ատէին ամուսնութիւն, կը փախչէին մարդոց ընկերութենէն, կ'առանձնանային վանքերը, լեռներն, իրենց համար ամառն ու ձմեռն չկար, չորակեր, խոտակեր, մերկաձամբկոյթ մը միայն կամ ցնցոտի հագնիլ, աղօթել, սուրբ գիրք ընթեռնուլ, վիճաբանել, տեսիլներով յափշտակուիլ, ծոմ պահել, առաքինութիւն համարած էին. ինչպէս նաև անձնասպանել, հիւանդանալ, և մեծ երանութիւն՝ այս պատճառներով մեռնիլ,

որպէս զի զԱստուած ժառանգեն : Իրենց
սկզբունքն էր « Որ ոչ առեայ զհայր իւր և
զմայր և զկին և զորդիս և զեղբարս և զքոյր
նաև զանձն ևս իւր , ոչ կարէ իմ աշակերտ
լինել » Քրիստոսի խօսքը . բայց միթէ նոյն
իսկ ասոնց հայր , մայր , կին , որդիք , եղ-
բարք , քոյրք , և իրենց անձինք Քրիստոսը
սիրող և Քրիստոսի համեմէն գացող , Քրիս-
տոսին աշակերտ , Քրիստոնեայներ չէին :

Ահա ոգիտութեան արդիւնք , կարեկ-
ցութեան արժանի հոգիք . բարեբաղդաբար
մեր ուսած օրերը ասոնց կարեւորութիւնը
ինկած էր . քանի մը հոգի հազիւ կ'երեւա-
յին , թէպէտ մահուան հիւծման , և զանա-
զան ախտից ծանր զոհեր տալէն ետքը : Ա-
ոնցմէ ոմանք ցրուեալ տեսայ վանքերու
մէջը : Ուրիշ բարեպաշտ ընկերութիւններ ալ
ատակ հանդանակելով չինած էին Ս. Յակո-
բայ տաճարը , կը շինէին Անապատի տաճա-
րը , պատած էին Ս. Գառնուն մանկունքի
գերեզմանատունը , չէնցընել կ'ուզէին խու-
նըրկըտուր վանքը , որուն Յ կտոր արտ գը-
նած էին , եւն : Ասոնք ամենը ատակով յառաջ
կ'ուզար , և ժողովուրդն յօժարութեամբ
կու տար այսպիսի նեղ տարի մը : Բայց ա՛լ
ժամանակն է որ հասկընանք թէ քարէ տա-
ճարէն շատ գերազանց է Աստուծոյ բուն
տաճարը հինել , ՄԱՐԴ , պատրաստել թէ
Աստուծոյ փառաց և թէ ազգի պարծանաց
համար ՄԱՐԴ . տալ մեր դրամները մեր զա-

ւսակաց կրթութեան և դիտնականութեան, և լաւ դաստիարակաց ձեռքով չինել զանոնք ժամանակի ՄԱՐԴ. տաճարն ինքնին կը պայծառանայ, եթէ ժողովուրդ նախ լուսաւորուի, Աստուած չհաճիր որ ձեր զաւակները անգէտ և անկիրթ մեծնան, ձեզ անէծք ժառանգեն, և դուք կարծէք թէ ձեր չինած քարերը ձեզ արքայութիւն պիտի տանին, այն ինչ ձեր զաւակները կը կորսուին, և ձեզ դատախազ պիտի կանգնին։

Աղքատասիրաց ընկերութիւն, իբր 18 տարիէ հետէ կազմեալ, ունի 2 խանութ որոցմէ կ'առնու տարին 2000 ղրշ. և ժողովրդէն կը հանգանակէ 15000 ղրշ. ի չափ, զորս սա յամէ կը մատակարարէ 'ի պէտս աղքատաց։

Քաղաքիս ազգային խորհուրդներ և ժողովները թէպէտ կազմուած են ըստ Սահմանադրութեան, բայց կանոնաւոր նիստ և արձանագրութիւն չունէին, ոչ քարտուղար և ոչ դիւանատուն։ Առաջնորդն Ս. Նշանի վանքը նստելով, կտոր մըտոր արձանագրութիւններ և պաշտօնական թղթերը վանքի մէջ կը պահէ տոպրակներով. եթէ հարկ լինի խնդրոյ մը համար ժողովք կազմել կամ տեղեկագրութիւն պատրաստել, տոպրակներու արուեստահանդէս մը կը բացուի, 4—5 անձինք կ'զբաղին քրքրել, աչքէ անցընել գրերը և դատ դատ չարել բազմոցներուն և բարձերուն վրայ. տաժանելի՛ աշխատու-

թիւն, գրասեղան չկայ, ծունկի վրայ կը գրեն, և գրադիրն է Առաջնորդ հայր սուրբի փոքրաւորն. վերջապէս դանդաղութիւն, ժամավաճառութիւն, գործ տեսնալու դժուարութիւն և անկանոնութիւն մեծ։ Առաջնորդն կարի պրաղեալ է կառավարութեան վերաբերեալ խնդիրներով, ոչ միայն իւր վիճակի ազգայնոց, այլ իբրև վիլայէթի կեդրոն, շրջակայ վիճակաց ազգայնոց խնդիրներն ալ կը ծանրանայ իւր վրայ. ինքն արի մէկը չէ, բայց զարմանալի երկայնմտութիւն և տոկունութիւն ունի, մանաւանդ տեղացի լինելովը երկար ժամանակ այս պաշտօնին մէջ գտնուելով, ամեն մարդ կը ճանչնայ, խնդիրները կը հասկընայ, ամենայնի կը լսէ, ամենեցուն կը պատասխանէ, կը խոստանայ, չատերու գործոց համար կառավարութեան անձամբ կ'երթայ. մարդ մ'է միայն, որոյ վրայ է վանքերու կառավարութիւնը, ժողովոց նախագահութիւնը, քաղաքին և բազմաթիւ գիւղերու ներքին ու արտաքին հոգերը, ևս, ևս, ևս։ Մէկ մարդ, և այսքան գործ։

Քաղաքիս մայր եկեղեցին, սուրբ Աստուածածնի անուամբ, հոյակապ և դեղեցկաշէն, մեծ, քարուկիր, չատ տեղերը մարմարիոնով և քանդակներով զարդարուած։ Ս. եկեղեցւոյս բակին մէջն է Առաջնորդարանի շէնք։ Սուրբ Սարգիս եկեղեցին՝ երկրորդ կը համարուի մայր եկեղեցւոյն, որոյ

տաճարի աջակողմեան դասին եռեւն է մար-
մարեայ տապանաքարով դամբարան Տ. Ներ-
սէս կաթուղիկոսին Սոյ, որոյ չրջապատը
գրուած է «Փոխումն սուրբ Հայրապետիս
կաթուղիկոս Տ. Ներսէս (ՌՂ.)։ Իսկ Նորո-
գումն գերեզմանիս ՌՄՂ. արդեամբ ազ-
նիւ Ցարութիւնի Ղըռխլիկեան մրգածախու»

Ս. Մինաս, Ս. Յակոբ և Ս. Փրկիչ փոք-
րիկ եկեղեցիներ են, Ս. Փրկիչը նորոգած
են, գրէթարդ սիրուն տաճար մի է. բա-
կին մէջը քանի մը տուն Հայք կը բնակին։

ՍԵՒ ՀՈՂԵՐ քաղաքիս մէջ ամենէն նուի-
րական և արտաճմլիկ վայրն է, ուր Լէնկ—
թէմուր Հայոց կաթնկեր մանկտին ցիրևցան
փոեց և կոխան ըրաւ իւր պատանասիրտ
զօրաց, ճմլելով այն սիրուն ոդկոյղները կա-
տաղի ձիոց սմբակաց ներքեւ. Ո՛ արիւն ար-
դար, մարմինք անմեղ, ծնողք կիսամեռ,
կական երկնադղրդ, տեսիլ սրտակէզ, հո՛ղ
անիծեալ և երանեալ, տեղի սարսռելի և
սխրալի . . . Հայոց գերեզմանատուն է
ՍԵՒ ՀՈՂԵՐԸ. թուի թէ ուխտիւ ընտրած
են մայրեր իրենց սրտի հատորներու արիւ-
նաչաղաղ հողին մէջ թաղուիլ և զովացնել
իրենց զաւակաց կսկծանաց բոցով այրեց-
եալ ոսկորները, ՍԵՒ ՀՈՂԵՐ, այսպէս կը
կոչեն ցայսօր Սեւաստու Հայեր, որ չրջա-
պատուած է սրմով և իր մէջն ունի Ս. Գէ-
որգի մատուռ մը. գերեզմանատանն չրջա-
կայքը Հայոց և Թուրքաց բնակութեան թա-

ղեր են, իսկ Ս. Գէորգի մատուռը Յունաց ձեռքն էր. Յոյները խիստ սակաւաթիւ են քաղաքիս մէջ, իրենց յատուկ եկեղեցի և գերեզմանատուն չունենալով, Հայոց թոյլատուութեամբ հոս թաղեր են իրենց ննջեցեալները և այն մատրան մէջ աղօթեր ու պատարագեր են. Ի վերջոյ եւած ամբողջ գերեզմանատուն և մատուռը տիրեր են, մեծ վէմեր ու ծեծկռտուքներ առղի ունեցեր են երկուստեք. Պօլսոյ պատրիարքարաններ միջամտեր են, մեծ գումարներ մսխուեր են, վերջապէս կառավարութիւնն արգիլեր է երկու ազգաց ալ հոն մեռեալ թաղելը, բայց մատուռը Յունաց ձեռքն է մինչև այսօր. Հաղարաւոր գերեզմաններու քարեր Հայոց գրերով, և ննջեցեալոց տէրերը կ'երթան գերեզման օրհնել տալու, որոց հողը դատի տակ էր, մտածողներ կային թէ կ'իսնէք Յունաց հետ և վերջացնենք բանը: Սեւ հողերը ոչ միայն պատմութեամբ և նուիրակատնութեամբ Հայոցս համար ամենաթանգ տեղ է, այլ իւր դիրքով ալ աքանչելի է, անոր մէկ կողմը կարելի է չինել վարժարան:

ՓԱՌՍՈՒՆ ՄԱՆՈՒԿ. Քաղաքի արեւմտեան ծայրը, Գայսէրի դրան մօտ, ընդարձակ գերեզմանատուն է Հայոց, երկու կողմն որմնապատ. գերեզմանատանս մէջ աւերակի թումբ մի կայ խաչքարերով, և կոտրած սիւներով, այս տեղի է չիրիմ և հոյակապ տաճար սրբոց Մանկանց քառասնից, զոր

կործաններ է Լենկթիմուրն և հոս 4000 հոգի Սեւաստցի ողջ ողջ թաղեր: Այս աւերակին վրայ կու գան խուռնկ և մոմ կը վառեն բարեպաշտ անձինք, և երբեմն վրանով պատարագ կը մատուցանեն: Հոս է գերեզման Ս. Ստեփաննոսի եպիսկոպոսին Սեւաստու և երկու արեղայից նահատակեալ 1387ին, որոց ուխտ կու գան: Բայց այս քաղաք ոչ մէկ, և ոչ հազար ու մէկ են նահատակք, այլ բոլոր հողերը խառնուած են Հայ—քրիստոնէի արիւնով և չորս կողմը գերեզմանք են մարտիրոսաց: Սոյն գերեզմանատան մէջը քանի մը երկար, մութ և լերկ քարեր կը ցուցնէին առանց խաչի և յիշատակագրի, զորս կ'անուանէին՝ ԿԱԶԱՑ ԳԵՐԵԶՄԱՆՔ, և անոնցմէ քանիսը՝ ԺԱՄՈՒ ՇԵՄԵՐ:

Լիճ, ուր քառասուն մանկունք ձգուեցան, գրեթէ կիս է յիշեալ գերեզմանատան: Լիճը չկայ այժմ, այլ տարածեալ ճահիճ մ'է, բայց ակն մի կայ, ուստի ջուր կը բղխի, վրան քարաչէն ծածկած, վարէն աչք մը թողած են միայն, ուր Հայք ուխտի կերթան, իսկ Տաճիկ կանայք լաթ կը լուանան. լեղի է ջուրն. լուացուեցանք մենք ալ այդ սրբազան ջրով և ափ մը խմեցինք: Աւտի տարուած է Ս. Նշանի վանքը ԻԶՄԱՆ ՔԱՐ, այսպէս կ'անուանեն առեալ շարականէ, «Այսօր Սեբաստիա եղեւ երկրորդ Յորդանան, իջմամբ որդւոյն Աստուծոյ...»:

Ա՛յս ջրոյն մօտ կը ցուցընեն Տաճկի մը տուն, ուր կորստական բաղնիքի տեղն է եղեր :

Ս. Վլասիոսի գերեզմանը քաղաքին մէջն է Թուրքաց թաղը, Թուրքի մը տան մէջ. Թուրք կնիկ մը անոր լուսարարն է, մշտավառ կանթեղ մը կը վառէ, և բանալին իրեն քովն է : Հողաչէն նեղ յարկի մը ներքեւ կը ննջէ Սուրբն. վրայի տապանաքարը նոր է, բայց գլխուն կողմէն կլոր քարէ կիսասիւն մը կայ անկուած, փոս, որոյ մէջ ջուր կը լեցնեն խմեն ուխտաւորք, կ՛ասանդեն թէ Սրբոյն բժշկական դեղորայք մանրելու անկանն է եղեր. իր յատուկ ուխտաւորներն են թէ՛ Հայ և թէ՛ Թուրք՝ փողացաւ և աչքի ցաւ ունեցողներ, և անոնք՝ որոց կոկորդը ոսկոր խրած լինի :

Քաղաքիս Ս. Սարգիս եկեղեցւոյ մօտ կայ հնաշէն փոքրիկ մզկիթ մը, զոր Հայք Ս. Լուսաւորիչ կը կոչեն, արդարեւ դիրքն յարեւելս է և գմբէթ վեղարաձեւ 'ի գագաթան : Կ՛ասանդեն թէ չինուած է եղեր սա յատուկ և 'ի յիշատակ գալստեան Ս. Լուսաւորչին 'ի Սեբաստիա, բայց Տաճկաց բըռնաւորութեան օրերը, երբ Տաճիկ մը համարձակ էր մտնել անոնը, եկեղեցիները, ուզածն ընել, ուզածը տանել, — ո՛հ օրեր, որոց հետքը չէ անհետացեր տակաւին տեղ տեղ մինչև իսկ մեր օրերը, — ներս կը մըտնէ Մզկիթ մը Ս. Պատարագի ժամուն և սե-

զանն եղելով եղած կը կանչէ, ու կը յայտարարէ թէ՝ այս վայրկենէս ալ բան չունի հոս Քրիստոնեայն, որովհետեւ մզկիթ եղաւ ասիկայ. բայց մեծ չնորհ մը կ'ընէ թոյլ տալով տէրտէրին՝ եկեղեցական գրեանքն և սպասքն առնելու և մեկնելու, և ահա նոյն օրէն Ս. Լուսաւորիչը կը տաճկցընեն: Իսկ Ներսէս կաթողիկոսն Սոյ, զոր վերը յիշատակեցինք, Սեբաստ կը գտնուի, Օսմ. արքային Սուլթան Մուրատ Դ.ին կը դիմաւորէ, անոր բաղդատիչն վերադարձին, եկեղեցականն հանդիսիւ, օրհնութեամբ և ընծաներով, հաճութեան և մեծարանաց կ'արժանանայ մեր Հոգեւոր տէրն. (այսպէս կ'ուներ մինչև այսօր այս ժողովրդասէր Հայրապետն): Սուլթանն կը հրամայէ, — Ուզէ՛, ի՛նչ կ'ուզես: — Ապրած կենաս, թագաւոր, կը պատասխանէ Հոգեւոր տէրն, և կը պատմէ Ս. Լուսաւորչին դէպքը, ու կը խնդրէ որ իրեն չնորհուի: — Փոխանակ այս մզկին, եօթն եկեղեցի չինելու չնորհը կ'ընեմ քեզ, կ'ըսէ Սուլթանն. և ահա այն օր կը չինուի անոր մօտ արդի Ս. Սարգիս եկեղեցին. այս առթիւ թաղուած էր սոյն եկեղեցւոյ մէջ Հոգեւոր տէր՝ Ներսէսն, իսկ վեց եկեղեցիքն գեղերու մէջ չինուած են, ամենքն ալ Ս. Սարգիս անունով:

ՀՈՂԴԱՐ անունով առանձին թաղ մը կայ Հայոց, որ մօտ է Ս. Նշանի վանքին, քանի մը արտերով միայն անջրպետուած

քաղքէն, այս արտերէն մէկը Գահանայապե-
տի արտ կ'ըսուի. կ'ուսանդեն թէ այս է Մխի-
թար Աբբայի ծնած ու սնած տեղը: Հոդ-
պարին մօտ ապառաժի մը վրայ կը բարձ-
րանայ մինարէով չէնք մը, որոյ շուրջ կան
և քանի մը թուրքաց տներ. Աւերակ վահագ
Ղալէ կը կոչեն այս մզկիթը թուրքեր, իսկ
Հայք՝ Ս. Յօհաննէս, և կ'ըսեն թէ վանք
կամ վկայարան է եղած: Գաղաքի մէջ և
շուրջը բազմաթիւ նուիրական հիրիմներ կան
թուրքաց պաշտելի, որոցմէ մէկն է Էյէուլէ
քաբա, որ ամեն դիշեր ձի կը հեծնէ օգնու-
թեան կը հասնի նեղելոց, պատերազմի կ'եր-
թայ, եւ. ուրիշ նոր Էվլիէի մը հիրիմ կը
հինէին, որ յայտնուած էր տեսլեամբ Ա-
նամուտ տէրվիշի մը: Գաղքի բերան, ըն-
դարձակ տեղ մը գրաւած է թուրքաց գե-
րեզմանատուն, ուր Հայոց նշխեցեալներ կը
թաղուին եղեր նախ. դեռ կը գտնուին յա-
րեւելս ուղղեալ գերեզմաններ և վրան պատ-
կեցուցած օրօրոցաձեւ քարեր, որք և ուխ-
տատեղի են Հայոց և թուրքաց:

Գայաէրի գափուսուէն իբր ժամ մը բա-
ցակայ կ'երեւի Շէհնէ գոմբէնէ ըսուած չէնք
մը, ուր ձմեռները անցորդք կ'ապաստանին
և աւազակաց որջ է, և որոյ դագաթը գանձ
կայ դեռեղուած, կը կարծեն:

Հայոց թաղերէն կայ որ առանձին են,
կայ որ թուրքաց հետ խառն:

Սեւաստ 'ի հնումն և 'ի նորումս միշտ

հռչակաւոր քաղաք եղած է, բայց աւելի նշանաւոր չէնքեր չունի։ Իրրև հնութիւն կը համարուի Վերին բերդ, քիչ մը բարձր բլրաձեւ դիրքի վրայ, որոյ գագաթը նոր չինուած է հասարակաց ժամացոյցի աշտարակ մը, դեռ կան քանի մ՚ալ տուներ։ Իսկ ներքին բերդը քակուած է բոլորովին, և տեղը տուներ չինուած։ Վերին բերդի բաւորուած նշանաւոր չէնք մը կայ ամբողջ մարմարիոնէ, կրկին մինարէներով, արտաքուստ խիստ չքեղ քանդակազարդ, մանաւանդ դրան ճակատը, ուր կայ իննդլեանի երկու վիշապ քանդակեալ և արուեստակեալ ծաղկունք, եւ. իսկ ներսը չքեղ չէ, կէտ Հոգիե՞ր կ՚անուանեն զայս, զոր Հայք կը համարին պալատ Սենեքերիմայ. չէնքը, քանդակներ և գրուածքներ նմանութիւն ունին Թօքատի և Ամասիոյ մէջ եղածներուն։ Արդեօք կրնա՞յ կարծուիլ թէ մինարէք և գրերը եղքէն աւելցուցած լինին։ Այս չէնքի ներսը կը շրջինք, և ահա երկու կանանշապկուխ իւլէմաներ տեսանք ընկղմանած չատրաւանին ափը ընդ հովանեաւ հին կաղամախի մը. այս երկուքը ունէին երեք աչք, բարեւելէն զկնի հարցուցինք թէ կրնա՞ն տեղեկութիւն տալ մեզ այս չէնքի հնութեան մասին։ Անոնցմէ մէկը՝ — «Այո, ըսաւ, չատ հին չէնք է, կոստանդիանոսի չինածն է . . . .» Հասկըցա՛նք, հասկըցա՛նք, չնորհակալ ենք։ — Ձեր պաշտօնն ի՞նչ է. — Մեծ վարժապետ

ենք, ըսին։ Անշուշտ, և անոր համար իրրև պատմապէտ խօսեցան . . . ։

Ներքին բերդի մէկ մասին մէջ կան երկու մէտրէաններ դէմ առ դէմ կառուցեալ, մէկ մի եւս քիչ մը բացակայ, որոց դրանց ճակատներ նմանօրինակ մանր քանդակներով զարդարուած են։ Առնցմէ միոյն մէջ գըմբէթաւոր յարկի մը տակ ինն չիրիմք կան, որոցմէ մէկն մեծ և յախճապակով բռեալ. Հայք կ'ըսեն թէ Սենեքերիմի գերեզմանն է այն, ուստի յետոյ մարմինը փոխադրեցին Վան՝ Վարագը։

Քաղաքիս փողոցներ, չուկաներ և խաններ անձեւ շինուածք են, ամբողջովին կաւակերտ, թէպէտ ներքուստ բաւական չընորհքով. աւաւն թոյնի պէս ժահահոտութիւն կը բուրէ փողոցաց մէջ տեղ տեղ լըճացած ու նեխած ջրերէն. աղբերու ապականութենէն. անկարելի է մանաւանդ Թըրքաց թաղերէն առանց քիթը բռնելու անցնիլ, այլ սակայն իրենք կը ծծեն ախորժանօք այդ հոտաւէտ օդը. ջուրը խիստ առատ կը վազէ ամեն կողմն, թէ՛ առուներով և՛ թէ աղբիւրներով. գրեթէ տուն մը չկայ որ իւր բակի մէջն աղբիւր չունենայ. իրօք բակերու հողն ու քարն անդամ ամէն օր կ'ողողեն մաքրեն, իսկ փողոցի դռնէն դուրս տղմոտ և աղտոտ կը պահեն։ Քարայատակ չունին փողոցներ, անցորդն պատիւ ունի ամառները աղտոտ փոշիներ կլլելու, իսկ ձմեռն աղբ

և կաւ չաղախելու : Աննկարագրելի է հրապարակաց աղտոտութիւնը, ուր ամեն առաւօտ գեղերէն բեռնաւորեալ սայլերը և գրաստները կը լեցուին բազէ ընելու համար : Երեւակայելու է այս տեղերը եղած ամբոխին ժխորն ու աղաղակը, որ կը բաղկանան թրքաց, Հայոց, Հրեից և Չէրքէզաց բազմութենէն, որոց մեծ առուտուրն է ցորեն, անասուններ, ևն, զորս կը փոխարինէն՝ քաղաքէն զանազան ապրանքներ գնելով : Սեւաստ յաջողակ առեւտրականութիւն կայ, մանաւորապէս մեծ քանակութեամբ ցորեն, և մեծ քանակութեամբ ոչխար, ձի և արջառ կը վաճառէ : Հրուտոնները տեղական պիտոյից համար ամեն տեսակը կը գտնուի, սակայն յաջողակ են երկաթագործք և գինագործք, որք Եւրոպիոյ րէվոլվըր և նոր հրացաններ ու անոնց փամփուշտներ կը չինէին : Տեղացի բաւական թուով Հայ բըժիշկներ կային թէ քաղաքիս մէջ և թէ մերձակայ քաղաքները ցրուած, որք քայ վիրաբուժութիւն սորված էին Ամերիկացի Տօքթէօր Ուիլդէն, և վիրաբուժական ամենանուրբ գործիքները տեղացի երկաթագործները ճարտարած էին. իրրև բարերար իրենց քաղաքին կը յիշատակէին յիշեալ Տօքթէօրը, յորմէ շատ մը առողջապահական սկզբունքներ ուսած էին. սոյն աշակերտները մանաւոր ճարտարութեամբ գիտէին աղեաց մէջ դոյացած քարը հանել, սխա

մը՝ որոյ չատ ենթակայ է Սեւաստացին : Արդեօք չրերէ՞ն է . . . :

Արուեստաւորք ընդհանրապէս Հայք են , կարեւոր թիւ և դիրք մը ունին մարթողներ (ղասապ) , որք նոյնպէս ամբողջ Հայք են : Զդեստուց նորաձեւութիւն դեռ մտած չէ այս քաղաքը , բայց կանանց հագուստը չնորհալի չէ :

Զարմանալի է տեսնալ Սեւաստացիները այնքան կայտառ և սիրուն , անչուշտ օդին և ջրոյն չնորհիւն է , ասանց չնորհիւն է որ այնքան անմաքրութեանց հակառակ՝ քաջառողջ են և կարմրերեսս . ուտելու մասին չըռայլ են , օղի և գինի բաւական առատ կը գործածեն , առատ ալ միրգեր կ'ուտեն , որք թէպէտ ոչ մէկին իր գաւառէն կ'երթնէ , բայց եղած տեղէն աւելին և ընտիրն հոս կը բերուի : Կը զարմանայինք տեսնելով այն ինչ բժիշկներ և ֆէլէֆէլի ժողովք կար այս քաղաքի մէջը , ինչո՞ւ պէտք էր այսքան խանգարեալ և ապականեալ մնար այս քաղաքը , պատասխանեցին . — Այո՛ , տարին 30000 ղրչ. էն աւելի հասոյթ կայ Բելէտիէին՝ խաղողներէ , մորթողներէ , կղխոքէ , և այլ և այլ հրապարակային վաճառքներէ , ևս , բայց հասարակաց համար ոչինչ ըրած , ոչինչ շինած է : Ինչ կ'ընէին ուրեմն գոյացեալ հասոյթները . եթէ հաւատալ պէտք է , մըզկիթներու նորոգութեան և քանի մը երկաթեայ Տաճիկ էվլէաներու չինութեան

և այլ այսպիսեաց համար կը ծախսէ, անչուչտ ժողովոյն պաշտօնէից ամսականներ ալ կը վճարէ։ Երբ ատակ տուողն հաշիւ չպահանջէ, երբ քաղաքացին իւր պաշտօնեայն իրեն տէր ճանաչէ, և իւր պէտքերուն անփոյթ գըտնուի, միթէ ամօթ կամ մեղք համարող կա՞յ անոր ատակն ուտել և գինքն անբանի տեղ դնել . . . ։

Մեզ ցոյց կուտային քաղաքի մէջ այնպիսի Հայեր, որ մուրացկանի ձեւով հագուած էին, բայց քանի մը հազար ոսկւոյ տէր էին. այնքան զօրացած է բռնաւորաց երկիւղն այս ողորմելեաց վրայ, որ չեն համարձակիր իրենց հարուստ լինելը ցոյց տալ, գաղտուկ մաղտուկ գործեր կ'ընեն, ցած և հին տներու մէջ կը բնակին, ատակնին կը թաղեն. վասն զի եթէ յայտնուի իրենց ունեւոր լինելը, կը վախնան թէ խլեն ձեռուընէն։ Մասամբ մը ընդհանուր է այս, վասն զի կարի հազուագիւտ են լաւ հագնող, լաւ տուն ունեցող, ձի և ծառայ գործածող։ Գրեթէ քաղաքական հրապարակի վրայ պայծառ և փայլուն Հայ մը չունի Սեւաստ։ Քաղաքիս թուրքաց մոլեռանդութիւնը և անհանդուրժողութիւնն այնչափ է, որ կրնան Հայ մը ձիէն վար առնել, չուկայի և փողոցներու մէջ անտեղի պատճառով մը, կամ, ի՞նչ պէտք է պատճառ, միթէ Հայ լինելն բաւական պատճառ չէ՞, կը քաշեն կը գանակոծեն. եթէ թուրք մը բան գնած է Հայէ մը

իրաւունք չունի Հայն ատակ պահանջելու, եթէ վճարէ թուրքն՝ չնորհ մ՚է, եթէ ոչ, իւր իրաւունքն է: Անկիրթ և սրիկայ անձինք չատ կան, ատոնց ծայրայեղ կրից քանի՛ քանի անմեղ զոհեր կ՚իյնան Հայ ընտանիքներէ և պատանիներէն. այս ախտը մասը մը Հայ սրիկաներու մէջն ալ ճարակած է, գառնուկ մանուկներ և մատղաչ աղջիկները տերեւի պէս կը դողան դուրս ելած, վարժարան կամ եկեղեցի գնացած ու դարձած միջոցին. եղեր են օրեր, որ յանդգներ են մինչև վարժարանի դռներ պաշարեր և տղայ յափշտակեր են: Առաջնորդն մինչև գեղացի քահանայն չեն կրնար փողոցներէ անցնիլ առանց Տաճիկ տղաքներէն «Քէշի՛շ, օ՛շ, օ՛շ, Քէշի՛շ, օ՛շ, օ՛շ» լսելու, հասարակաւոր թուրքերն ալ կը զուարճանան, մանաւանդ թէ իրենք կը թելադրեն: Սոքա իբրև ամենօրեայ սովորութիւն կը հայհոյեն Հայուն խաչ ու հաւատքը, և Հայք իրենց խոհեմագոյն գլուխները կախելով հլեալու պէս՝ կ՚անցնին. բայց կան նորահասներ ալ որ չհանդուրժելով կը փոխարինեն կամ կը հալածեն այդ բղէղները:

Քաղաքիս զբօսավայրեր և ուխտատեղիք գրեթէ մի և նոյն նշանակութիւն ունին, և բաւական չատ են: Անոնցմէ քանիները միայն պիտի գրեմ, թողլով Ս. Նշանի և Հրեշտակապետի վանքը առանձին ստորագրել:

ԱՆԱՊԱՏ, փոքրիկ վանք մ՚է, Ս. Նշանին

մօտիկ, քաղաքէն կէս ժամ հեռի, կից Դավրա գեղին: Ունի քանի մը սենեակներ, պարտէզ, բակին մէջ ընտիր ջուր մը, պարսպի տակէն կ'անցնի գետակ մը և մեծ առու մը ուռիներով և ուրիշ ծառերով զարդարուած, օդը խիստ ընտիր, իւր գովերը քանի մը քառյրներ կան, զորս կը հատարեն ճգնաւորաց ճգնարան, և մեծամեծ քարերով հին գերեզմանատուն մը: Անապատիս տաճարը կը նորոգէին 'ի հիմանց քարուկիր՝ բաւական մեծածախ, 'ի գո՛ւր: Իրրև հիւանդանոց համարուած է այս վանքը, ուր ամիսներով կուգան կը կենան ուխտաւորք. հոս գրեթէ ամեն օր երամ երամ կանայք կուգան քաղաքէն ուխտի նպատակաւ. հոս կուգան նաև անպարիսպ անձինք Հայ և Թուրք, հոս կուգան ճգնաւորաց խուրձը: Բայց իրօք կրնայ յորմար հիւանդանոցի մը վերածուիլ, որուն չատ ալէտք ունի այսպիսի մեծ քաղաք մը:

Ս. ՅԱԿՈԲ, զոր կանխաւ յիշեցինք, Անապատէն կէս ժամ անդին է, միայն տաճար մի է առանց սենեակ ունենալու, առուշ ջուր մը ունի և աքանչելի է դիրքն ու օդը. քանի մը ուռիներ անկած են, որոց հովանեաց տակ կը հանդչին ուխտաւորք և պրօսատէրք: Տաճարը՝ որ նոր չինուած էր, խախտեալ էր, դրան եռեւը գանձանակ մը դրած, ժամկոչ մը կ'ապատէր հոն. պատին վրայ Ս. Յակոբայ պատկերը և ձեռագիր

քարտէզ մը, անճառնի և սխալմամբ լի դըրուագ մը, որ այսպէս կ'սկսի «Յիսուսի Քրիստոսի ծառայ զաէր Ս. Յակոբ մծպնայ հայրապետ...»: Իշարս բազում և անլուր հրաշից կը դնեն մի նորալուր հրաշք ևս, զոր ամեն մարդ գիտէ թէ որո՞ւ սուտ հըրաշքէն քաղած են. այս է «... Թովմասիեաց Սուրբն զվերարկուն իւր և անկան 'ի նմանէ 12 կաթիլս և բուսան 12 արմաւենիք և ետուն պտուղս» եւն, եւն: Կանո՞ն էր, կոնդա՞կ էր, յորդորա՞կ էր, խառնափնթոր բան մը, զոր սարքադրած էին քանի մը խառնափնդոր անձինք:

ԽՈՆԸՐԿՏՈՒՐ վանք, աւերակ, ժամ ու կէս հեռի է քաղաքէն, տաճար մը միայն ունի Ս. Աստուածածնին անուամբ, որոյ հողերը Տաճկաց ձեռքն են: Այս վանքը խընդրակատար կ'անուանեն ոմանք իբր թէ ուզելով խոնըրկուտուրն, բայց կ'երեւի թէ կը սխալին, նա ուրիշ նշանակութիւն ունենալու է, ինչպէս որ Տաճիկներն ալ կ'անուանեն խոյ էեէն էլէթ:

ԴԱՎՐԱ, որ ամենէն մօտ գեղն է Սեբաստիա, ամենէն ալ գեղեցիկն է իր առատ ջրերով, պտուկին չուրթն, զառ'ի կող փոքր ձորոյն, բազմաթիւ ջաղացքներով, հովանաւորող ուռենիներով, վայր սխրալի բոլոր Սեբաստացւոց, ուր կու գան օրերով պտօսնելու և զուարճանալու. ընտիր է քէֆէնէկ աւաչ ըսուած ջուրը, զոր խողովակներով

քաղաքը տարած են :

Կորիճ և հաստակուռ երիտասարդներ կան հոս. կայտառ և քաջառոգ են ուստերք ու կանայք. բոլոր բնակիչքը Հայ են, և մեծաւ մասամբ Ջաղացպանութեամբ կ'զբաղին : Ունին քարաշէն պայծառ եկեղեցի մը և նորաշէն վարժարան մը : Եկեղեցւոյն կից կակուղ ժայռերու մէջ քարայրներ կան, որոց վրայ շատ բաններ կը պատմէին կռապաշտութեան ժամանակներէ : Այն ժայռի մէկ ճակտին վրայ երկու մեծ պատուհանի ձեւով դուռներ կան, կ'երեւի յատկապէս փորուած, նոյն քարէ սիւնակով մը բաժանեալ, Զոհալ Ս. Սրբէն է, ըսաւ Տէրտէրն. սանդուխ մը ցոյց տուաւ ժայռի վրայէն փորուած, որ կը հանէր Զաթալ Ս. Սարգիս, ուր սեղան մը կայ, ըսաւ, պատարագելու, և գեղի կանայք ու մանկունք հոն խունկ ու մոմ կը վառեն կիրակամուտ իրիկուններըը : Շատ մը մանր խաչեր կային քանդակուած այն քարերուն վրայ : Քարայրներըը՝ ճգնաւորաց տեղեր են եղած, կ'ըսէր Տէրտէրն, և Զաթալ Ս. Սարգիսն իրենց համար պատարագի խորան, Հայոց նոր քրիստոնէութեան սկսած հալածանաց օրերը : Այն ժայռերու ներքեւ կային հին դերեզմաններ՝ վաղ օրերէ մնացեալ :

Աւերակ վանքերէն կը յիշատակուին Դէվէկրէի Ս. Գէորգ : Աւաքելոց վանք՝ Դուզաասրին վրայ : Սոխակերոյ կամ Սոխակերաց

վանք, ուր կ'աւանդեն թէ ճգնաւորներ եղեր են, որք միայն ոսկ և հաց կը ճաշակեն ամբողջ տարին, քաղաքէն երեք ժամ հեռի սեռեկաձեւ փորուած քարայր մի է։ Գըլխաւոր, Ս. Սեւերիանոսի գլխաւորեան վայրը, եւ։

Սեւաստու քաղաքը անչուք տեսք մը ունի, շինուած հովտի մը մէջ, անծառ և անայգի։ Գծուծ և հին չէնք մի էր նոյն իսկ կառավարութեան պալատը. անկանոն իւր առեղտուններ և բանտերը։ Քաղաքին մէկ կողմն է Ալիս պեհ (Գըզըլ ըրմադ), կէս ժամ հեռի, որ հարաւային և արեւմտեան տահմանէն կ'անցնի, իւր վրայ ունենալով կամարակապ քարաշէն կամուրջ մը, զոր կ'աւանդեն թէ Սեննեքերիմայ արքայադուստրն շինած է։ Կան այլ և այլ մանր վտակներ ալ, բայց մանաւորապէս Ալիսի վրայ դարձարաններ չինելով մեծամեծ օգուտներ կըրնան ձեռք բերել։ Ալիս կը բղխի Արեւելեան հիւսիսէն, Հապէշ լեռներէն, որ մայրի, կաղնի, եւ, անտառներով հարուստ է, և չէնքի ու վառելիքի փայտեր կը բերէ այս լեռնէն քաղաքացւոց 'ի պէտս, և պէս պէս ճուկեր կը վաճառակարարէ։ Հապէշէն գկնի Սեւաստու նշանաւոր լերինքն են Ատղիկ, (Եըլտըզ տաղին), Գուռլավիկ՝ որ նոյնպէս անտառուտ է, Զամիը պէլ, Սախուր և Սալատակ սարեր (Ձ տաղի)։ Իրիս կամ թօփաշ ասկին ալ Սեւաստու լեռներէն կը բղխի։

Երկրին գլխաւոր բերքերն են վաճառականութեան համար ցորեն, գարի, ճէհրի, գաղի խէժ, տորոն, սալէպ, աղուէսենի, սամոյր, գայլենի, այծու և ոչխարի բուրդ և մորթ, եղ, մեղր, պանիր ևն։ Քնտիր և տաստ ապի աղբիւրներու վիճեր կան, մեծ քանակութեամբ ազ կը վաճառեն բոլոր շրջակայ գաւառաց։ Աղկ կարպետ (+էլիմ) և Քիւրդի գորգ (խալէ) կը գործեն, Հանքեր կան գաճի (ալլէ), բորակի (կէ-վերշէկ), ընտիր մարմարի, կարմիր և սպիտակ քարակաւ, ևն. ունի նաև երկու ջերմուկ տաք և պաղ հանքաջուր, ուր յաճախ կ'երթան Մեւաստցիք թէ առողջութեան և թէ զուարճութեան համար։

Երկրին հողերը մեծաւ մասամբ թուրքաց սեպհականն են, թէպէտ եզած արգաւանդ և բարեբեր են ընդհանրապէս. պրեթէ դաշտի մեծ մասն, լերանց տորոտուններըը, և բլուրները կրային և աղային են, սպիտակ գունով հողեր։ Բազմաթիւ բլուրներ կան այսպէս, զորս տեզացիք կ'անուանեն փուռ։ Լեռները սկսեալ Ամասիայէն ցայտր մեռոպի, պաղեղի և այլ հանքերու գանձարան են։ Գիւղերու մէջ երկրագործութիւն խիստ ծաղկեալ է, և բնակիչք առոյգ, հսկայ, և աշխատասէր, այսու ամենայնիւ ծանր ծանր պրկանաց և հարստահարութեանց ենթակայ, զորս կը կրեն Զէրքէզներէ, Քիւրդերէ, քաղաքացի թուրքերէ

զօրքերէ, աւազակներէ, մէկ խօսքով՝ տեղական կառավարութեան անհոգութենէն ու անարդարութենէն: Ձանապարհն է մեծ պողոտայն Բազդատի, որ Դէլիբլի Դաշէն անցնելով, Տիվրիկէն քիչ մը հեռու՝ ուղիղ կ'երթայ Մալաթիա. միւս արահետն է կարնոյ ուղին՝ Երզնկայի վրայով, լեռնոտ:

Սեբաստու մէջ տեսայ Կիւրինցի Հայեր, որք կը պատմէին իրենց եկեղեցւոյ կողոպտուիլը, այս երկու տարուան մէջ թուրքերէն կրած անտանելի զրկանք, բռնութիւն և հարստահարութիւն. Ամասեանի տանը քանի մը ամիսէ 'ի վեր աւեն գիշերը պահարուիլ և քարկոծուիլը, իմնինամ վէրնէ Զիա պէյին անիրաւութիւնքը և անոր թուրք արիկայից տուած քաջալերը, իրենց Ա. ազնուրդին՝ Մանճըլըխու Զաքարիա եպիսկոպոսին անպատուութիւն և անպիտանութիւնը, որ այս ձիրքերուն հետ ունի նաև ծերութիւն և հիւանդութիւն, սիրտ և միտք չունեցող անձն, որ պատկեր է վանքը: Ասոր համար կ'ըսեն թէ՝ քալ ձի նստիլ գիտէ եղեր, և միայն այն արժանեաց վրայ եղած է եպիսկոպոս Սոյ Աթոռէն. սա վանքի արտեր և ջաղացքներ իրեն անուան վրայ կալուածագրել տուած է, իրրև իր սեպհական, որպէս զի ժողովուրդ չկրնայ հրաժարեցնել զինքը առաջնորդութենէ: — Անմտի բա՞ն է այս — : Թէ' ասոր և թէ' իրենց ցաւոց համար Պատրիարքարան յաճախ բողոքած

են, այլ անլսելի ճնացեր է, ևե, ևե։

Գրեթէ ամեն օր գեղերէն կը պիտէին Հայք Առաջնորդին և կառավարութեան, թէ՝ գիւրդեր ու Չէրքէզներ մեր եզները քըշեցին տարան, թէ եզները քերթեցին՝ կաշին տարան, թէ՝ լեռը վայտի համար գնացողները ծեծեցին ու կողոպտեցին. միայն մէկ գիւղէն 18 ձի և 12 եզն տարեր էին նոյն օրը Չէրքէզներ, և Հայոց ընտրեալ պատուական արտերուն տիրեր էին, ընդ պաշտպանութեամբ քաղաքի հուշակաւոր Մէհմէտ Ալի Ֆէնաիին. ասոր բարեխնամ հովանեաց ներքեւ ապաստանեալ են ամենայն ինատակար անձինք Սեւաստու քաղաքին և բոլոր երկրին, որոնց ամենէն նշանաւորն է գիւրդ Ալիչան պէյն, ևե, ևե։

Սեւաստու Ս. Սարգիս եկեղեցւոյ Առաջնորդարանը նստած գտանք Հրաշափառ Տիգրանեան Մկրտիչ եպիսկոպոսը, ուր եկած էր ութն ամիսէ ՚ի վեր . . . : Ի՞նչ ըսենք այս մարդու համար, զոր ոչ ոք կայ չճանչցող. . . . : Հազիւ չարժեցաւ տեղէն թօքատ գնալու, և անտի Ամասիա : Ինչո՞ւ կը շրջի, ի՞նչ կ՚ընէ, միթէ պէ՞տք է հարցընել։

Փափաքելի էր այս տեղի Հայոց ներքին կեանքի, տնտեսական և ընկերական սովորութեանց, աւանդութեանց, լեզուին, ոճոյն, վէպերուն և խաղերուն վրայ տեղեկութիւն գրել, վասն զի իսկապէս Հայկական հին կեանք կայ սոսկ մէջը. բայց ասոր համար հարկ

էր բաւական օրեր անցուներ հոն և գեղեցը չրջիլ, որ շատ ցանկալի էր ինձ, այլ պաչտօնս կը փութացնէր դիս մեկնիլ: Սովորութեանց և արարողութեանց մասին շատ նման էին վասպուրականցւոյն, ուստի գաղթեալ են. բայց լեզուն շատ տարբեր կը խօսին, գրեթէ մեծաւ մասամբ Պօլսեցւոյ նման: Անշուշտ գիտենք որ Սեբաստիոյ չուրջ շատ յառաջ Հայեր կային այս կողմերը:

Ուրիշ առթի, կամ ուրիշներու թողլով հետաքրքիր լինել և գրել այս մասերը, կը փութամ վերջ տալ Սեբաստոյ տեղեկագրութեանս, անվերջ ունենալով յուշիս մէջ իրենցմէ՝ ազնիւ և պզտիկ անձանց անոյշ յիշատակը, և բոլորին համար յառաջադիմելու և նորոգուելու քաղցր յոյս:

Քաղաքիս Հայոց եկեղեցիքն են 5. որոցմէ երեքն՝ փոքրիկ: Վարժարաններն են՝ 1 ուսումնարան և 1 ծաղկոց Թարգմանչաց անուամբ: Ծաղկոց 7. Ներսիսեան, Ռրամեան, Թորգոմեան, Ս. Սահակեան, Ս. Մինասեան, և երկուքն անանուն: Վարժարան 3. աղջկանց՝ Հռիփսիմեան, Լուսինեան և Պեղիքեան: Ծախք վարժարանաց տարեկան 52000 ղրշ. որոց 47000 ղրշ.ը Սեբաստիոյ ընկերութիւն կը հոգայ երկու խաներու արդիւնքներով և ընկերաց բաժանորդագնով. մնացեալը մասնաւոր ընկերութենէ մը, Ս. Մինաս եկեղեցիէն, և մաս մը՝ աշակերտներէ: Թիւ ուսանողաց 1422 մանկունք. 494

աղջկուն ք : Թիւ Հայոց 13200 : Կաթոլիկ և Բողոքական Հայք 72 : Ցոյն ք 330 : Թուրք ք 18437 : Ապրիլեան՝ թուրք բռչայ 200 :

Հայաբնակ գիւղերայք :

ԲՐԳՆԻԿ գեղ. ամբողջ Հայ կաթոլիկ. Թիւ նոցա 1800. ունին եկեղեցի և վարժարան :

ԴԱՎՐԱՑ գեղ. եկեղեցի 1. Աստուածածին : Վարժարան 1. Դաւթեան : Ուսանողք 100 մանկունք. Թիւ Հայոց 880 :

ՍԱՐՔ ՀԱՍԱՆ գեղ. եկեղեցի 1. Ս. Գէորգ. Թիւ Հայոց 96 :

ՊՕՐՍՋԻԴ գեղ. . . . Թիւ Հայոց 50 : Թուրք 30 :

ՆՈՐ ԽԱՆ Ա.ան. գայմագամութիւն, եկեղեցի 1. Ս Խաչ : Վարժարան 1. Սեւեքերիմեան : Ուսանողք 100 մանկունք. Թիւ Հայոց 682 : Թուրք 720 :

ՇԸՆԲՈՒԽՐԱԿ գեղ. եկեղեցի 1. Ս. Սարգիս : Թիւ Հայոց 28 : Թուրք 110 :

ՂԱԼԴԸ գեղ. եկեղեցի 1. Ս. Սարգիս. Թիւ Հայոց 256 :

ԻՇԽԱՆԻ գեղ. եկեղեցի 1. Ս. Նիկողոս : Վարժարան 1. Բագրատունեան : Ուսանողք 60 մանկունք. Թիւ Հայոց 408 :

ԴԸԴՄԱՃ գեղ. եկեղեցի 1. Ս. Սարգիս : Վարժարան 1. Կ.եռնդեանց : Ուսանողք 50 մանկունք. Թիւ Հայոց 411 :

ԲԻՆ—կէօլ գեղ. եկեղեցի 1. Ս. Մինաս : Վարժարան 1. Ս. Սեւերիանոսեան. Ուսա-

Նողք 60 մանկունք. Թիւ Հայոց 615։

ՊԵՏՐՈՍԻ կամ ՂՕՉԻՍԱՐ գեղ. գյմնազանութիւն։ Եկեղեցի 1. Ս. Յակոբ։ Վարժարան 1. Պետրոսեան։ Ուսանողք 110 մանկունք։ Թիւ Հայոց 706։ Թուրքք 470։

ԵԷՆԻՃԷ գեղ. Եկեղեցի 1. Ս. Յակոբ։ Վարժարան 1. Աբգարեան. Թիւ Հայոց 157։

ԽԱՆՉԱՌ գեղ. Եկեղեցի 1. Ս. Սարգիս։ Վարժարան 1. Ա.Թանապինեան։ Ուսանողք 60 մանկունք. Թիւ Հայոց 467։

ՂԱՎՐԱՋ գեղ. Եկեղեցի 1. Ս. Փրկիչ։ Վարժարան 1. Ռասիատուհեան։ Ուսանողք 40 մանկունք. Թիւ Հայոց 261։

ԽՈՐԱՍԱՆ գեղ. Եկեղեցի 2. Աստուածածին և Ս. Սարգիս։ Վարժարան 1. Արշակունեան։ Ուսանողք 100 մանկունք. Թիւ Հայոց 618։

ԱՂՏՓ կամ ԴՈՒՉԱՍԱՐ գեղ. Եկեղեցի 1. Ս. Կարապետ։ Վարժարան 1. Հրեշտակապետեան։ Ուսանողք 200 մանկունք. Թիւ Հայոց 1631։

ԴԱՎՇԱՆԼՈՒ գեղ. Եկեղեցի 1. Ս. Թորոս. Թիւ Հայոց 83։ Թուրքք 420։

ԴԱՎՐԱ կամ ԳԱԲԵՐԱ գեղ. Եկեղեցի 1. Ս. Սարգիս։ Վարժարան 1. Ս. Մեսրոբեան։ Ուսանողք 50 մանկունք. Թիւ Հայոց 438։

ԿԱՄԻՍ գեղ. Եկեղեցի 1. Ս. Թորոս։ Վարժարան 1. Ս. Սահակեան։ Ուսանողք 80 մանկունք. Թիւ Հայոց 827։ Թուրքք 75։

ՇԸԺՂԵՆԻԿ կամ ԵԱՐ—ՀԻՍԱՐ գեղ. եկեղեցի 1. Ս. Սարգիս : Վարժարան 1. Պարթեւեան : Ուսանողք 75 մանկունք. Թիւ Հայոց 827 : Թուրքք 300 :

ԻՍԴԱՆՕՋ գեղ. եկեղեցի 1. Ս. Թորոս : Վարժարան 1. Միւնեաց : Ուսանողք 60 մանկունք. Թիւ Հայոց 498 : Թուրքք 128 :

ՃՈՆՃԻ գեղ. եկեղեցի 1. Ս. Խաչ. Թիւ Հայոց 138 : Թուրքք 310 :

ԹՈՂՈՐԱԿ գեղ. եկեղեցի 1. Ս. Յակոբ : Վարժարան 1. Տաճատեան : Ուսանողք 50 մանկունք : Թիւ Հայոց 500 : Թուրքք 370 :

ԿՈՎՏՈՒՆ գեղ. եկեղեցի 1. Ս. Աստուածածին : Վարժարան 1. Վարդապատրիկեան : Ուսանողք 200 մանկունք. Թիւ Հայոց 1145 :

ՓՕԴՆԻ գեղ. եկեղեցի 1. Ս. Սարգիս : Վարժարան 1. Մովսէսեան : Ուսանողք 60 մանկունք. Թիւ Հայոց 453 :

ԴԵԻՈՅՈՑ գեղ. եկեղեցի 1. Ս. կարապետ. Թիւ հայոց 70 : Թուրքք 270 :

ՋԱՐՈՑ Ա.ան. գայմագամութիւն: եկեղեցի 1. Ս. Լուսաւորիչ : Վարժարան 1. Արշակունեան : Ուսանողք 200 մանկունք. Թիւ Հայոց 1497 : Թուրքք 1900 :

ՓԱՐՀԱՏ գեղ. եկեղեցի 1. Ս. Աստուածածին : Վարժարան 1. Թարգմանչաց : Ուսանողք 30 մանկունք. Թիւ Հայոց 328 :

ԱԼԱ ՓԻԼԻՍԷ գեղ. եկեղեցի 1. Ս. Մինաս : Վարժարան 1. Նարեկեան. Ուսանողք 150 մանկունք. Թիւ Հայոց 663 :

ԹԷՔ ԷՎԼԻ գեղ. եկեղեցի 1. Ս. Գէորգ. թիւ Հայոց 130։

ՂԱՐԱ ԲՕՂԱԶ գեղ. եկեղեցի 1. Ս. Խաչ։ վարժարան 1. Ամերիկայէ։ Ուսանողք 40 մանկունք։ թիւ Հայոց 224։ թուրք 40։ Քիւրդ 25։

ՁԱՑ ՔԷՕՑԻԻ գեղ. եկեղեցի 1. Աստուածածին։ թիւ Հայոց 80։ թուրք 180։

ՊԱՂՁԷՃԻԿ գեղ. եկեղեցի 1. Ս. Գէորգ։ վարժարան 1. Ռուբինեան։ Ուսանողք 30 մանկունք. թիւ Հայոց 279։ թուրք 40։

ԽՕՐՕԽՕՆ գեղ. եկեղեցի 1. Ս. Հրեշտակապետ։ վարժարան 1. Խոռխոռունեանց։ Ուսանողք 40 մանկունք։ թիւ Հայոց 372։ թուրք 280։

ԲՐԱՒԵՐԴ գեղ. եկեղեցի 1. Ս. Թորոս. վարժարան 1. Մամիկոնեան։ Ուսանողք 60 մանկունք. թիւ Հայոց 362։ թուրք 231։

ՈՂՆՈՎԻՏ գեղ. եկեղեցի 1 Ս. Յակոբ. թիւ Հայոց 58։ թուրք 700։

Վիճակիս մէջ գտնուած օտար ազգաց գիւղերու և բնակչաց թիւը չկրցանք ճիշդ ձեռք բերել։ իսկ ցեղերն են՝ թուրք, քուրդ, Գըզըլպաշ, Չէրքէզ, Յոյն, Բօշայ։

Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՔ

Ինչպէս յայտնի է՝ի պատմութենէ, Ժա. դարուն սկիզբները, վասպուրականի Սենեքերիմ արքային և չորս հարիւր հազար Հայ

ժողովրդեան դաղթականութեան օրերը հիմնուած է սոյն վէնաստանը: Սերաստիա փոխանակ Տօսքայ՝ Ոստանայ ևս, և Ս. Նշանն փոխանակ Վարագայ, երբէք անբաղդ ատելի փոխանակութիւն, զոր օրինակ նախամարդն՝ի դրախտին և արտաքոյ դրախտին: Իրաւունք ունէր դժբաղդ Թադեւորն իւր սերունդով և իւր ժողովրդով մէկ տեղ ցվերջին չունչ կարօտիլ, հառաչել Վատպուրականին, Աղի ծովին, Աբտոսին, և Վարագայ սարին, մինչև կաակիլ գոնէ իրենց մարմինը դարձունել աւանդել իրենց կեանք տըւող ցանկալի հողոյն, իրենց արեւ տուող չողին և չուքին ներքեւ:

Ս. Նշանի վանք կառուցեալ է Մէյրէդում լերան սորոտը, թէպէտ դաշտային այլ բարձրադիր է իւր տեղին: Շէնքերը անձեւ և խառն՝ի խուռն են, գլխաւորաբար երեք բակի բաժնուած: Ուխտաւորաց թաղ, Վարժարանի կամ սեղանատան թաղ, և Միաբանից թաղ. կրկնայարկ են յարկերը, և հում աղիւսով կերտուած, ախոռն ու գոմը սոյն թաղերուն կից. նեղ և մութ փողոցներ ու սանդուխներ: Մեծ և պայծառ կը համարուին չէնքերուն մէջ առաջնորդարանը, վարժարանն և սեղանատունն: Մշտահոս ջրոց չորս աղբիւրներ կան վանքին մէջ:

Երեք տաճար ունի քովէ քով: Առաջինն Ս. Նշան, խաչաձեւ, հնաշէն, գմբէթա-

յարկ, չորս քառակուսի սիւնաձեւ անկիւններով, որոց և սեռնց կիսէն 'ի խոնարհ յախճապակիով բռնեալ: Ս. խորանի երկու կողմն նեղ և մթին աւանդատուններ կան Ս. պօղոս և Ս. պետրոս անուամբ. իսկ դըրան կողմն յաջմէ՝ խորան Ս. կարապետի, որոյ սեղանն և չրջապատը մարմարեայ, քանդակեալ և ոսկեզօծեալ. 'ի ձախմէ՝ խորան Ս. Գէորգի: Տաճարիս դրան քով դաւթէն մանեւիք նեղ դուռ մը կայ, որ սանդուխով կը հանէ փոքրիկ վերնատուն մը հանդէպ Աւագ խորանին, այս է տեղի աղօթելոյ Թագաւորին: Ամրողջ տաճարիս յարկը, որմունք և յատակը խոնաւ են:

Հին, և բաւական արուեստակերտ Աթոռ մը ցոյց տուին, որոյ վրայ կը նստի եղեր Սենեքերիմ արքայն:

Երկրորդ տաճարն է Ս. կարապետ անուամբ, մեծ, ընդարձակ, նոր, լուսաւոր, բարձրագմբէթ, առանց սեան, նորոգեալ 'ի հիմանց 1857 ամին. աջակողմեան դասին երկու վանդակաւոր դռներով կը մտնանք փոքր խորան մը՝ Էջմիածին, ուր 'ի միջավայրի քառատուն մանկանց լճէն իջման քարը բերած դնեցած են սեղանի վէմ քարին մէջը, վրայի սեղան սիւնազարդ և քանդակազարդ, ողջ մարմարիոն, ոսկեզօծ. քանդակները կը ներկայացընեն մէկ կողմը բազանիքն, ուր կը դիմէ կորատակաւն, և այն երանելի Մայրն՝ որ իւր մանուկն Մելիտոն

չալակած կը վազէ հասնիլ և խառնել զայն որբոց Քառասուն Մանկանց ոսկերաց հանդիսին. միւս կողմն ոսկերարարձ սայլեր, և Պետրոս եպիսկոպոս եկեղեցական հանդիսիւ, որ կ'ամփոփէ Երանելեաց նշխարները. բազմական ճարտարութեամբ կերտուած:

Գեղեցիկ է մարմարեայ ճակատ դրան Ս. կարապետին, նոյնպէս քանդակեալ և ոսկեզօծ. իսկ փեղկերը երկաթէ և արոյրէ, վանդակաւոր, մէկ փեղկին վրայ Մկրտի Քրիստոս, և միւսին՝ քարոզէ Մկրտիչն. մեղաւորք և մաքսաւորք ունկն դնեն, և առընթեր՝ Գառն Աստուծոյ:

Երրորդ տաճարն է Ս. Աստուածածնի, փոքրիկ դասիթով մը, փոքրիկ է նոյն իսկ տաճարս, այլ սիրուն և չքեղ, շուրջ անկիւնը կրկնասիւն, 'ի միջի գմբէթ, և յատակը յախճապակի: Ցաջմէ շիրիմ Գեւոդորձին Պետրոսի. (թէպէտ ասոր նշխարներն եւս փոխադրուած են 'ի վարագ.) և 'ի ձախմէ շիրիմ Թէոդորրա Աբեղայ նահատակին, որ մինն էր յորդւոց Ս. Գոհարինէի, մարախրոստացեալ 1156ին՝ նոյն կողմանց բռնաւոր Թուրք Տանիշմանտէն: Այս երկու շիրիմներն ալ ընտիր մարմարիոն քարերով շինուած են, իրենց պատկերները որմոց վրայ նկարուած, պատմութիւնը խոշոր տառերով առանաւոր գրուած, և վրանին փայտեայ ոսկեզօծ խաչկալներով չքեղ յօրինուած:

Մեծ պատիճը, ուստի կը մտնենք այս

երեք տաճարները, կը պարունակէ կարգ մը Առաջնորդ եպիսկոպոսաց և վարդապետաց գերեզմանները: Իսկ հասարակ Միաբանից գերեզմանները վանքի պարսպէն դուրս յատրեւելս է, որմնափակեալ, կից տաճարաց որմոց, կամ ըստ ուղիղ աստուածեան՝ «Ընդ հովանեաւ սրբոյ եկեղեցւոյն հանգուցեալ»: այս հասարակաց հանգստարանի դրան մօտ Ս. Նշանի հիւսիսային պատին փակած է գերեզման Անանիա եպիսկոպոսին և կաթողիկոսին Սեբաստիոյ. որոյ օրով չորս կաթողիկոս կար Հայոց. . . 1203—1205. Հռոմկլայ, Սիս, Շիրակ և Սեբաստիա: Ահա Անանիայի տապանագիրն:

«Ցայս դամբարանիս եդին ըմբարձին,
«Տեառն Անանիա կաթողիկոսին.
«Որ օծեալ նստաւ վեհապետ ազգիս,
«Ի գերահռչակ տուրս մեծաստանիս.
«Սա էր ազգական պետրոսի մեծին,
«Գետադարձ կոչեալ տուրս Հայրապետին.
«Ժամանեաց վախճան տուրս կենաց նորին,
«Թուին վեց հարիւր յիսուն և վեցին»:

Ընդարձակ պարտէզ մը ունի վանքս, ուր անկուած են ճէհրի ծառեր, մրգաբեր տունկեր, բարաեենիք և ուռենիք, և կը մշակեն զանազան բանջարեղէններ. ջուր մը կ'անցնի միջէն, և լոյս—աղբիւր մը ունի. իբրև պրօսավայր է քաղաքացւոց և ուխտաւորաց, որք ամեն օր դրեթէ պակաս չեն, բայց աւելի բազմութեամբ կու գան կիրակի

օրերը : Վանքն ունի 47 կտոր արտ , երկու ջաղացք , և 10 խանութ՝ քաղաքի մէջ : Երկրագործութեամբ կ՝զբաղին , և թէմական պաղիներէ , ուխտաւորներէ բաւական հասոյթ ունին . բայց և այնչափ կը մնայուին , վասն զի իրրև միակ մեծ վանք , ճանապարհի վրայ , քաղաքի մօտ , ամեն օր լի են ուռողներ , աստրողներ այլ և այլ ազգէ և աստիճանէ , անշուշտ վանքի ապահովութեան համար ալ այս տալն ու կերցընելը միջոց մ՝է : Այսու ամենայնիւ իւր տնտեսական վիճակը բաւական է , և տարիէ մը՝ի վեր էր որ Գերաշնորհ Ս. Հայրն վանքի վարժարանին մէջ 25 դիւերօթիկ աշակերտներ հաւաքած էր թէմի գեղերէն և քաղաքէն , որոց կ՝աւանդուեր Հայերէն գրականութիւն , ազգային և Սրբազան պատմութիւն , կրօնք , թուաբանութիւն , տաճկերէն և երաժշտութիւն . այս աշակերտելոց կոչումն էր վարդապետ , քահանայ , և վարժապետ լինել :

Կանոնաւոր էր մանկանց ննջարան և սահիճները , մաքուր՝ ուսումնարանը , և վանքի տպեալ ու ձեռագիր մատեաններն ալ չատ խնամքով վերեղուած էին ուսումնարանի դրադարաններու մէջը . անշուշտ եթէ արժանաւոր ուսուցիչներ ալ ունենան , ասոնք պիտի պատկառորեն Ընորին Հայրութեան պովելի ջանքն և փառաւորեն բազմացեալ նպաստակն : Ս. Ղևանի վանքի իրաւատութեան տակն են վիճակիս միւս վանքերը . և Գետ-

րոս Հայր սուրբն, Առաջնորդն, այնքան լաւ հմտութիւն և կրթութիւն ունի վանական կառավարութեան, այնքան աղէկ կը հասկընայ հոգեպործական և նեռեսական վիճակը, այնքան արբասէր և պարկեշտ կրօնաւորութիւն ունի, միանգամայն կը հասկընայ թէ վանքերէն ի՞նչ կ'սպասէ ազգը. անընդհատ, անամբարտաւան, այնպէս որ իրեն նման քիչ կայ այսօր մեր վանականաց շրջանին մէջը. բայց քաղաքական առաջնորդութեան պաշտօնը խիստ տաժանելի լինելով, կը գրկէ ազգը վանքերուն համար ընտրելիք արդիւնաւորութենէն, որքան մենք կ'ըսպասենք և որքան կարող է ինքն ընծայել:

Իբրև օրինակ մեր Հայաստանի ուրիշ գաւառաց կը յիշատակեմ թէ, Ս. Նշանի և Ս. Հրեշտակապետի և միւս վանքերուն արտերը ու կալուածները, ինչպէս նաև քաղաքի եկեղեցեաց կալուածները Առաջնորդի անուան գրել տրուած է և կալուածագիր առնուած, բայց այդ կալուածագրերու պատճէնները բոլոր օրինակելով տուփարի մը մէջ՝ Պետրոս Հայր սուրբ, իր կողմէն ալ երկու տող գրելով՝ թէ «Որքան իմ անուանս են գրուած, բայց այսքանը այս վանքին, այսքանը այն վանքին, այս եկեղեցւոյն, այն եկեղեցւոյն են,» ևն, զոր ներկայացնելով Մեհրդեղին, վաւերացնել տուած է Ղատիին կնիքով, և այսպէս ապահովցուցած է տպին առաջուածքները:

Ս· Նշանի վանքին միաբան և իրրև տըեօրէն ժողով՝ երկու վարդապետ միայն կայինն, ութն տիրացու, մշակք, տնտեսք, այլ և այլ պաշտօնեայք, և երկու անկեալք։

Ս· ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻ ՎԱՆՔ

Քաղաքէն հինգ ժամ հեռի է, Աղտուց կամ Դուզաատրին մօտ բարձր լեռնակի մը վրայ, որ կը նայի հովտի բոլոր գեղերը, և կը դիտէ Ալիսին երեսը և շրջապատ լերանց գեղեցկութիւնները։ Բաւական թուով սենեակներ ունի կրկնայարկ, բայց խարխալեալ։ Փոքրիկ տաճար մը միայն ունի, բայց չատ սիրուն։ Այս վանքը Քրդերէ և աւազակներէ չատ վնաս կը կրէ· իւր արտերը մշակել տալու և վանքին հսկելու համար Ս· Նշանէն ղրկուած էր հոն Զարացի Մովսէս վարդապետ, հսկայ և կտրիճ անձն։ Վանքի պարսպին մօտ խաչ—բլուր մը կայ, գերեզմանոց, ուստի գտնուած էր 1871ին Ս· Գոհարինեանց ոսկերք արկղաձեւ չարուածքի մը մէջ զետեղուած· և վրան թզաչափ մեծութեամբ սպիտակ քար մը իրրև խուփ դրուած, զոր աչօքս տեսայ և վրայի գըրուածքն օրինակեցի, որ է, «ՈՑՍ ՆԱՀԱՏԱԿՔ ՈՐ ԿԱՏԱՐԵՑԱՆ ՍՐՈՎ ՎԱՍՆ ՔՐԻՍՏՈՍԻ· ՌԱՏԻՈՍ· ԵՒ ԳՈՀԱՐԻՆԷ՝ ՏՆԿԻԿ ԵՒ ԾԱՄԻԴԷՍ։» Քարին միւս երեսը գրուած՝ «ԵՒ ԵԴԱՆ ՅԱՑՍ ՏԵՂԻՈՋ Ի ՁԵՌՆ ՍՈՒՐԲ

ՎԱՐԴԱՊԵՏԻ ԲԱՐՍՂԻ ։ ԹՈՒԱ· ՈՒՋ ։» Սոյն Սրբոց նշխարք ամփոփած են այժմ վանքին տաճարին մէջ յաջակողմեան պատին տակ , Ս· Հրեշտակապետի մեծ և ահեղ պատկերին ներքեւ ։

ՁԵՌԱԳԻՐՔ ԵՒ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ

Սեւասուս մէջ բազմաթիւ են ձեռագիրները , բայց մենք մեր տեսածներուս ցանկը և յիշատակներն միայն կը դնենք այս տեղ ։

1· Ա-եփաթան , փոքր երկաթագիր , մագաղաթ , 'ի Մայր եկեղեցին . ընտիր ոսկենկար , պատկերազարդ , որոյ դրան վրայ Աբրաերէն գրուածք մը կայ , զոր օրինակել տուի թէպէտ , բայց դժուարահասկանալի և սխալներով լի էր . ուստի միայն իմաստը կը դնեմ .

« Սերաստիոյ դատաւորին նախագահութեանն տակ կազմեալ արբազան ժողովոյ (Ջճլե-է շէ՛) մէջ եկեղեցականաց տեսչութեամբն ու քննութեամբը տուգտուած է թէ այս Աբեսաբանը Մատիէլեան Նորսիսին՝ Տավաթ փաշայի Աննիկ , Աղնիւ և . . . . անուն դուստր ժառանգորդաց թողուցած ինչքերուն մէջ տեսնուած է . սակայն այս պայմանաւ թէ Ներսէս եպիսկոպոսը Սերաստիոյ եկեղեցապետ Առաքել եպիսկոպոսին , սա ևս վերոյիշեալ Մատիէլին և որմէ յի-

չեալ Նորաչի յանձնած են, և 'ի վերջոյ Պետրոս Գրիգորեանի յանձնուած է վազըֆի եղանակաւ, որպէս զի եկեղեցականք միշտ պարտ և պատշաճ առեն կարդան » ևն ։

Ի վախճանի Աբարերենին՝ Հայերէն գրեալ .

« Զվերջին տասցոյ տուր Աստուածնիս յիշեսջիք 'ի տուրբ և 'ի մաքրափայլ յաղաւթըս ձեր պատուականն , որ ազատեաց զտուրբ Աստուածն 'ի ձեռաց սլատզդեաց , և եղ յիշատակ պատուականն իւր հոգւոյն և իւր հաւրն Խոնարին և իւր մաւրն Անուշին , և իւր կնոջն Զաւրին , և իւր հաւրն Յոհաննին , և մաւրն Ջանիաչին , և քեռուն Մկրչին , վախվ և յիշատակ իւրեանց հոգւոյն պատուականին , եղբաւրն Իսկանտարին և Աբրահամին և Խաչատուրին որ փոխեցաւ առ Քրիստոս տղայ հասակաւ . Աստուած ողորմի իւրեանց հոգւոյն , ամէն ։ Դարձեալ յիշեսջիք յաղաւթս ձեր զԽոջորըն , զկինն զԿուլիտանն և զիւրեանց զաւակն զԱգապարն , զՆազաչն , զԲրնքուչն և զՎարդանէն , զկեռան , զկոչիկն , զՂաւարին , եղբայրն զԽաչատուրն ։ Այս եղեւ 'ի քաղաքս Սերաստիոյ 'ի թուականիս Հայոց ՌԾԱ· 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ , որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն ։ Զայս տուր Աստուածն եղ յիշատակ Պատուականն 'ի ձեռն սէր Տիրատուրին . խնամ տանողքն աւրհնին յԱստուծոյ , ամէն ։ . . . «Յիշեսջիք զմայրն Մանանայն . . . զՊատուականին որդին զՂուկրին , զիւրեայքն զՊետրոս և զԱլիքսանտան և զհարսն զԳոհարն , և

պիտուներն զԹամանին, զՏիրուհին և զՑարուԹիւնն . . . » :

— . Ծձղկեննկար երկու երեսի աղիւսակաց մէջ ոսկեգրով գրուած է .

« Ով յանակիզքն ծոցոյ բան ,
« Որ ծագեցար յարդըս մարդկան ,
« Եւ զայս մատեանս Աւետարան ,
« Մեզ հնչեցեր ձայն ցնծութեան .
« Դու զորս եռուր մեզ քեզ փրկեան ,
« Կաթողիկոս 'ի Հայաստան ,
« Զտէր Կոստանդին պետ հովուԹեան ,
« Ի գունդն ընդալ 'ի Պետրոսեան .
« Եւ զստացող այսմ ատիր ,
« Եւ զարդարող սուրբ կտակի ,
« ԶԹորոս նորին եղբաւրորդի
« Եւ քահանայ սուրբ և արի ,
« Եւ զՏալիԹա բարիհոգի ,
« Իւրեանց ծննդաւք և այլ զարմի .
« Ընդալ 'ի քում առագաստի ,
« Որ ես աւրհնեալ յամենայնի » :

— . Ի վերջն ՄատԹէի .

« Ընդ մետասանիցն գնդի համագասեա Քրիստոս զտէր Կոստանդին կաթողիկոս և զեղբաւրորդին իւր Թորոս քահանայ ստացող աստուածախառն այս մատեանի » :

— . Ի վերջն Մարկոսի .

« Ստացող սորա Թորոս քահանայի ողորմեա Քրիստոս » :

« . Ի վերջն Ղուկասու .

« Զաստուածապատիւ տէր Կոստանդին կաթողիկոս Հայոց և զեղբաւրորդին իւր Թո-

րոս քահանայ որ և առաջող լուսաւորչին յիշեսջիք ՚ի Քրիստոս Յիսուս »։

— . ի վերջն Յօհաննու, յիշատակարան, մաքուր երկաթագիր։

« Փառք քեզ անսահման անուն և անզուգական անճնաւորութիւն Հայր և Որդի և սուրբ Հոգի։ Որ ետուր կարողութիւն և սատար եղեր տկարութեան իմոյ ՚ի գրոս հանել ըղձալի մատենիս։

« Օրհնութիւն քեզ սուրբ Երրորդութիւն և միաբնական Աստուածութիւն, այժմ և՚։

« Շնորհիւ Ցեառն սկսեալ և ողորմութեամբ նորին յանդ եղեալ աւարտեցաւ մատեանս աստուածախուռս աստուածաբնակ երկրպագելի և պաշտելի սուրբ Աստուածութեան յեթն հարիւր և վեհասաներորդի ամի թըւարերութեանն Հայոց, յաշխարհատուռ Աթոռս Հռոմկլա ընդ հովանեաւ աստուածաբնակ տաճարացս որ յանուն սուրբ փրկչին և սրբոյ Աստուածածնին և սուրբ Լուսաւորչին վերոյ և այլ ևս բազմահաւաք սրբոց։ Ի ժամանակս աստուածասէր և բարեպաշտ արքային Հեթմոյ և ՚ի Հայրապետութեան տեառն Կոստանդեայ կաթողիկոսի որ սրբոյ բազան վարուք իւրովք առհասարակ պարտացուցանէր զբազումս, մինչ զի և յարտաքնոցն առաւել ընդունէր վկայութիւն զանհամեմատ վարուցն իւրոց մաքրութեան. հեզ էր և ողորմած և բազում բարութեանց լինէր աւրինակ։ Ուստի և եղբաւրորդին իւր Թորոս քահանայ ՚ի նմանէ ուսեալ լինէր գրատէր և աստուածասէր, զնոսա ածեալ թէ ամենայն որ ինչ յերկրէ ընծայեալ նիւթք ընդ նոյն կորնչել ունին, և որ յաւիտեան

մնայ՝ բան Տեառն է : Վասն այսորիկ եռափափադ սիրով ստանայր մատեանս Աստուածաշունչս՝ ի հին և՝ ի նոր կտակարանաց, և զամենայն գոյս իւր և զարարս զոգիլ եթէ Ջանայր դնել՝ ի վերայ նոցա և այլ ևս զարդուց սրբոյ եկեղեցւոյ. վասն զի յոյժ տուընասէր էր այրն և պայծառացուցիչ եկեղեցական կարգաց. նմին իրի ստանայր կրկին անգամ զմատեան սրբոյ Աւետարանիս յիմէ անարժանութենէ թորոսէ մանկանուն Ռաբլին կոչեցեալ, որ և ըստ կարի իմում յանդհանի Աստուծով զհրաման նորա, նոյնպէս զարդարեալ ոսկւով սրբով և երանգ երանգ գունաւք ներքոյ և արտաքոյ ընդելուզեալ քարամբք պատուականաւք առ՝ ի սիրելի առնել զսա մանկանց սրբոյ եկեղեցւոյ : Վասն որոյ աղաչեմ զձեզ ով աստուածասէրք, որք հանդիպիք սմա և որք ժառանգէք զսա, յիշել աղաւթիւք՝ ի Տէր զարժանաւորն առաքեալն բարեաց յիշատակի զբարեպաշտ արքայն Հեթում և զորբահոգի թագուհին իւր Զապէլ դուստր Լեւոնի արքայի, և Աստուածով զորդիս սոցա զպարոն Լեւոն և զպարոն Թորոս և զամենայն նախնիս իւրեանց որք և անուանին Ռուբինեանք.

«Յիշել աղաչեմ և զթագաւորահայրն պարոն Կոստանդին ուստերաւք և դստերաւք և ամենայն զաւիւք :

«Յիշեսջիք և զերջանիկ հայրապետն Հայոց տէր Կոստանդին և զհայր իւր Վահրամ և զմայր իւր Շուշիկ և զեղբարսն իւր զԳորգ և զԳրիգոր և զպարկեշտուհի քոյրն իւր Շուշանիկ և Վանենի :

«Աղաչեմ յիշել և զքաջակրօն քահանայն Թորոս զստացողս մատենիս և զհայրն իւր Գորգ քահանայ և զմայրն իւր զԱգիպ, և

զեղբարան իւր զաստուածապատիւ եպիսկոպոսն զտէր Յովհաննու և զԳրիգոր նորին հայրապետ, և զքոր իւր Շուշանիկ և զդստերան իւր Մլքի և Շուշան և զմայր սոցա Տալիթա կանուխ վախճանեցելոյ զկենցաղս։ Եւ զհաւերեղբաւր որդիսն իւր զԳրիգոր, զՅովհաննու, զԹորոս և զամենայն ազգայինս իւր։

«Ցիշել աղաչեմ և զդարի չառաւիղ որդին իւր պարոն Յովհաննու, իշխանական պատուով զինուորեալ 'ի դրան արքայի. և զամուսին նորա զտիկին Աղայ 'ի մեծ տոհմէ և զդուստերս սոցա և զդստերս։

«Որոց ամենայն յիշելեացս առհասարակ Քրիստոս Աստուած ննջեցելոցն հանգիստ և ողորմութիւն պարգեւեսցէ, և զկենդանիսն անխռով խաղաղութեամբ պահեսցէ. ամէն։

«Ցերեսս անկեալ բազմաւեղ և թարմատար զրիչս աղաչեմ յիշել և զիմ անարժանութիւն և զծնաւղսն իմ և զամենայն բարի ուսուցիչսն իմ. և Աստուած զձեզ յիշեսցէ յիւրում արքայութեանն և 'ի փառս։ ամէն»։

— Ի սպառուած յիշատակարանիս պատրաստ տեղ մը բոլոր գրով գրուած է։

«Կազմեցաւ սուրբ Աւետարանս 'ի թվին ՌՀԵ 'ի քաղաքն 'ի Սեբաստիայ, 'ի գրան սուրբ Աստուածածնին ձեռամբ տուտանուն մեղաւք լցեալ Մելքիսեթ գպիրս և զուսուցիչն իմ Մելքիսեթ վարդապետն որ հանգուցեալ է 'ի Քրիստոս. որ բազում աշխատեցաւ ընդ իս և ուսոյց արհեստս զայս։ Ով ընթերցող քահանայք, աղաչեմք զձեզ, որ մէկ Հայր մեղայիս մի յիշեք զմեզ աղաչեմ աղաչեմ»։

— . Ի վերջին երես .

« Զմեզաւք դատապարտեալ կաղմաւղ սորա գԱռաքել Չնապանդենց և զծնողն իմ և զհարազատն իմ զպաւղոս ս ր կ , և զուսուցիչն իմ զԱարգիս քահանայ գնանդուցեալն 'ի Քրիստոս աղաչեմ յիշել 'ի Տէր· 'ի թուա՛· ԶժԱ » :

— . Զկնի այսորիկ ընտիր երկաթագրով .

« Գարձեալ ես բազմամեղս Թորոս 'ի թուա՛· Զժն· եռու զսուրբ Աւետարանս 'ի սուրբ ուխտն Աղբակաղին կոչեցեալ 'ի ձեռն տէր Աիոնի եպիսկոպոսի , և խնդրեցի 'ի նմանէ զի 'ի յիշատակի Նախավկային ընդ պատարագն իմ ծնողացն և հոգեւոր ախրոջն և ինձ մատուցեն զինչ յայսմ աւուր պատարագ մատուցանի , և որք զխնդրուածըս մեր կատարեն՝ Քրիստոս Աստուած զիւրեանց կատարեսցէ :

« Զսահմանս գայս միաբան եղբայրութիւնն յանձն էառ , և որք զկնի մեր գան , կատարեսցեն գայս » :

1· Աստուածաշունչ բոլորագիր , ընտիր , մագաղաթի , 'ի Ս· Սարգիս եկեղեցին :

« . . . Արդ 'ի թիւ Հայոց ՈՀԳ· թագաւորն Տաճկաց Սուլթան Մուրատն , եկն 'ի Սերաստիա , գնալ 'ի Պարս 'ի պատերազմ . կամեցաւքն Աստուծոյ հրամանն եղաւ նորոգելոյ զեկեղեցին սուրբ Սարգսի , որ 'ի վաղուց հետէ հնացեալ և խախտեալ էր : Եւ երանելի հայրս մեր Ներսէս վարդապետն մեր վերատեսուչ մայրաքաղաքիս մերոյ Աբաստիոյ , թողեալ զամենայն հոգս մարմնա-

կանա, և միայն հոգեւորին բուռն հարեալ, և վառեալ 'ի սէրն Քրիստոսի, ձեռն արկ 'ի չինուածն սուրբ Եկեղեցեացս, և բազում նեղութիւնս կրեաց 'ի յանօրինաց. որպէս 'ի հնումն Զօրաբաբէլ, և Յովսեղեկեանց քահանայ մեծ, որ բազում և չատ աշխատանս կրեաց հաւատով և յուսով, և միամիտ սիրով. չինեաց բազում ծախիւք, և նորոգեաց ողորմութեամբն Աստուծոյ. և լուսաւորեալ պայծառացոյց զկարգս և զկրօնս Եկեղեցականաց, որ խանդարեալ էր 'ի թուլամորթ և 'ի ծոյլ առաջնորդաց: Եւ յետ այսր յաւել եւս նորոգել զսուրբ Աստուածածնին Եկեղեցիս մեր. և ոչ այսու միայն չատացեալ էր և զԱյի—օր եկեղեցին Յունաց ապրին, որ 'ի վաղուց հետէ խախտեալ և կործանեալ էր, և նոքա անմխիթար մնացեալ՝ ո՛չ ունելով ձեռնտու 'ի մարմնաւոր և 'ի հոգեւոր կարեաց: Վասն որոյ յոյս 'ի յԱստուած եդեալ ձեռն արկ և վերստին նոր նորոգեաց և ուրախացոյց եւս զնոսա: Զոր Տէր Աստուած, իւր աշխատանացն վոխարէն հատուցումն արասցէ Ճ. պատիկն աստ, և 'ի հանդերձեալն անտրտում ուրախութիւնն պարգեւեսցէ անպրաւ յաւիտեանս:

« Եւ դարձեալ ասացաւ զսուրբ գիրս զԱստուածաչունչս զայս, անմաչելի թղթովս որ ինքն իւր ձեռամբն չինէր, զմտագաղափարս քերէր և պատրաստէր զտեսրս առ 'ի դիւրութիւն լինելոյ ինձ անվարժ գրչիս, և բազում զմեզ մխիթարէր 'ի հոգեւոր և 'ի մարմնաւոր կողմանէ. որ թէպէտ մեք առնարժան էաք գործոյս այսորիկ, սակայն ստատարութեամբ աղօթից բազմերախտ հօրս մերում, բարերարն Աստուած ոչ ըստ մեղաց իմոց արար, և ոչ ըստ անօրէնութեան ի-

մեռեալ հատոյց ինձ, այլ ըստ իւր մարդասիրութեանն ողորմեցաւ ինձ և դթացեալ փրկեաց յամենայն վտանգաց հոգւոյ և մարմնոյ: Վասն որոյ հայցեմք յանկարօտ Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ վտանգաւոր այսմ գրի որ գյիշատակս գրեցաք, գրեսցէ ՃԸՐ 'ի գիրն կենաց, և նմա փառք յաւիտեանս ամէն:

« Յիշատակս օրհնութեամբ եղիցի. և Զեզ յիշողացդ և մեզ յիշեցելոյս առ հասարակ ողորմեսցի Քրիստոս Աստուած մեր, ամէն: Հայր մեր որ յերկինս:

« կատարեցաւ գիրս, ծաղիկս, և յիշատակարանս, թուին Հայոց ՈՁԹ. օգոստոսի ԻԹ. օրն չարաթի 'ի փառս Աստուծոյ: Գիրքս այս սիրելի, թուղթս անմաշելի, նըկարս անքակտելի, յօրինակն ի' խնայեսցի»:

— Այլ գրով գրեալ.

« Աստուած ողորմի Անդրէաս Պարոն Տիրոջն և իւր ծնողացն որ ետ 'ի գին Աստուածաշունչ գրոցս ի. ղրչ. Աստուած լուսաւորէ զիւր հոգին:

« Աստուած ողորմի մահտեսի Պաղտասարին և կոզակցին իւր Անուշին, որ ետուն 'ի գին Աստուածաշունչ գրոցս տուն մի Լէ. ղրչ. ի:

« Ես մեղաւոր Աճամ Գրիգոր Ա. ա՛ բ՛ ա՛ ին լուս | | |

դանեաց, թուղթոց պատկերներով, և այլ և այլ ձեւերով զեղարուեստեալ. չատ Աւետարանաց նկարները կը նմանին իրարու, զորմ՝ քննութեան արժանի համարարաց: Խորանաց մէջն ալ համարարբառ չորից Աւետարանչաց՝ սիւնակ սիւնակ գրուած: Չեռեւեալը բացատրութիւն է այն նկարաց և խորանաց:

«Ստեփաննոսի Մանեաց եպիսկոպոսի զառաւել հրաշից արժանի առակի զերապանծութիւն բանից զեղեցկազարդեալ պիտանացուացս զառ՝ի չորից աւետարանչացն մեզ պիտառութիւն: Արտայայտելով վանական բանիւ, առանեցուն կանոնացն, նկարակերպ խորանայարկ զունակ զունակ զեղոցն: Երիներուն ներանկմունքն, որոց ձրի չան զերկնային մարմնոյն մեռապիան բացայարելով պարտականապէս, այնպէս համազգոյ բանիւք մի առ մի չաղաչարեալ զընթերակացին հոլովան արտակալեալ, որ վասն ցիառուն վկայութեան բանքն: Ուսոյ և խորանացն զեղոցն նկարագրութիւնք: Սկսեալ յառաջնմէ կանոնացն են մինչև ցտասներորդն: Արիւնաներկեալ կարմրօք սեաներն և խոյակացն որք՝ի մարմնառորութիւնն և՝ի խաչն մեզ պիտառեցին . . . :

Իսկ ոսկեզոյն կամարն զքահանայական ուրն զխորհուրդ՝ի միջի կացեալ. իսկ կարմիրն զինեզոյն վասն զի զՄեղքիսեդէկ բերելով զխորհուրդն՝ի ղէմս Քրիստոսի: Իսկ վերնայարկ սեաւն լայնատարածեալ հանրաքն, իբրև ամբով ծածկեալ ուրն զխորհուրդ Աստուածային անաւրէնութեանն: Իսկ երորդն նմանապէս զեղաւքն՝ի խորհուրդ

Աստուածայայտն եկեալ, սկիզբն առնու առաջի կանոնին երեք ի մի միաբանական Աստուածութեան արտայայտելով, յորոյ վերայ կամարացն սեղանն բոցախառն հրով, ի վերայն սեամբն, վասն զի ծածկեալ էր սեամբըն իբրև պատրուակաւ պիտրհուրդն Քրիստոսի: Իսկ հաւքն՝ վասն զի աքաղաղքն նայելով ի խորանին անօրէնութիւնն և խաչըն: Եւ որպէս աքաղաղքն ի մէջ մարեստանեաց ճոխք և համարձակք հրամանաւուք և ահարիուք: Իսկ ասլա չորրորդն յայտնէ զդէմս եկեղեցւոյ չորք տեղաւք համարատառաւ պատուհեաւրն, միակարգ բանիւք զանազան կամարաւքն, ունելով ի մէջ կամարացն զխաչն, և երկու աղաւնակերպ հաւք ի նմա նայելով, իբրև ոչ եթէ սոյգ աղաւնիք, այլ նմանութեամբ վասն զի որք առին զՀոգին սուրբ, եղեն ընդունակ Հոգւոյն սրբոյ: Իսկ արտաքին սեաւն բացատոյնն, վասն զի նախ առաւեր էր անցաւորի հին աւրինացն առ ի լինելոյ մաքրութիւն կարմիր սրեամբն Քրիստոսի, նոյնպէս և զսեղանն, զմիաբն անաւրացուցեալ, և զբոցն սլայծառացուցեալ իմացականապէս զոր Քրիստոս արկանէ:

«Իսկ եղջիւրք կամարացն անդրէն ի վերայ խոյականացն, զոյգ առ միմեանս կարմիր և կատոյտ խարսխեալ հինգ հինգ մասամբք մերձ ընդ մերձ զհինգ դասողականն և զհինգ տախտակ աւրինացն նշանակէ:

Իսկ արմաւենիքն ի տորուտա ի վեր բուսեալ, վասն զի յերկրէ աստի ճշմարտութիւն բուսաւ մերձենալով առ վերին կարգսըն կանաչացեալ արդարութեամբ որպէս և գրեալ է: Իսկ երկու հաւքն կարմրակտուցք և կարմրոտունք, որպէս առաջին խորանին

սպասաւորքն, որ ի Եպէտ և մարմնոյն մեկուսի էին ի նոր խորհրդոյս այլ ձայնիւ և բերանով զնոյնս բերէ զխորհուրդ։ — իսկ հինգերորդ խորանն զնոյնս բերէ զխորհուրդըս, սուրերն պակասի և կարմիրն պայծառանայ, և չուչան ծաղկէ, քանզի խաչն մերձեցաւ, և գուշակք յարութեան հասին յայտնել Քրիստոսի արեամբն փրկութիւն հեթանոսաց։ Այլ դեռ եւս քող ի վերայ կայ, զի զմարգարէականն դեռ եւս նշանակէ զխորհուրդս, վասն այսորիկ երեք միայն իրրև զմարգարէական և թագաւորական և քահանայական։

« Իսկ նռնենիքն երեք առեղունք ի մի ինջի ելեալ, աւրինակ բերելով զհնումն ի նորա խորանաւն և կտակարանաւն դառն կեղեւովն զքաղցրութիւն պաղոյն ի ներ քամանելով։ Իսկ եղջիւրքն մերձ առ վերինն սեղանն զՄովսէսի և զՀարոնի բերեն ընդ խորհուրդս, որպէս ի միւս կանոնին գտանեմք, և կաքաւան առ ստոնիկն Մարիամ և առ Թախարն։ Իսկ ձկնաքաղն ձայնիւ որսորդութեամբ ի ջուրն, հոգւոյն առեալ առաքութեամբ մարգարէիցն, յոտս աւետարանչացն առելով։ Իսկ աքաղաղքն ոսկեզգեստք փետրաւքն զարդարելաւք, վասն զի հոգւոյն արժանաւորքն նախ զանձինս իւրեանց մաքրէին »։

1· Ա-եպտոն՝ որոյ յիշատակարանի թուղթ պակաս էր։

— · Ի վերջն Ղուկասու, յետ բանից « Գովէին և աւրհնէին զԱստուած », կայ յաւելեալ · « Եւ զամենայն հաւատաւոտագոյն

պատմեցին այնոցիկ, որք եկին ընդ Պետրոսի: Ցետ այսորիկ ինքն Յիսուս սկսեալ յարեւելից մինչև 'ի մուտս արեւու· և ետ 'ի ձեռըս նոցա զԱստուածային զանապական քարոզութիւնն սիեզերական փրկութեան, ամենայն արարածոց յաւիտեանս ամէն»:

Ցիշատակարանէն գիտի հետեւեալ աղիւսակը կար, որոյ ներքեւ գրեալ էր·

«Այս իմաստ չարակարգեալ Վարդան վարդապետի, Կիւլիկեցւոյ: Ո՛վ բացցէ դիւրին է հմտասէր պիտոյ է բազում գանձս գտանել: Համեմատէ չորս տարրս: Իմանալիք և զգալիք»:

«Մի մեղադրէք տեղիս վատ է և գրիչն կու փակչէր, և զեղկելի և զլիճուն գրիչս յիշեցէք»:

Ա.	Ա.	Ա.	Ա.	Ա.	Ա.	Ա.	Ա.	Ա.	Ա.	Ա.	Ա.

ԱՅԼ ՁԵՌԱԳԻՐՔ Ի ՆՈՅՆ ՎԱՆՆ

1· Պատմութիւն Նիկիոյ ժողովոյն ։
1· Պատմութիւն Երգերգոցի ։
1· Կիւրակէից , Յակոբ Պատրիարքի ։
2· Մեկնութիւն պատարագի, Լամբրոնացւոյն ։
1· » Կաթողիկեայց ։
1· Կիւրակէից Սիմէօնի ։
2· Մեկնութիւն Եսայեայ . մինն , ոսկեզօծ և նոր ։
1· Հարանց վարք ։
1· Մեկնութիւն եօթն խորհրդոց ։
1· » երկոտասան մարգարէից ։
1· Ճառ Ներսոզեան , Գետեզերեանց ։
1· Վեցօրէից ։
1· Բանք Դաւթի անյաղթի , Վարդանայ և Մագիստրոսի ։
1· Կուլիէլմոսի Աստուածաբանի , Մարդաբէութիւն Եսայեայ ։
1· Մեկնութիւն Աղաթածոց , և այլ մեկնութիւնք բովանդակեալ ։
1· Լուծմունք Տաթեւացւոյն ։
1· Քարոզ գիրք անծանօթ ։
1· Աստուածաբանութիւն Սկօթոսի ։
2· Մեկնութիւն Ցօբայ , Տաթեւացւոյ . և այլ բանք ։
1· Մեկնութիւն յայտնութեան , ընդարձակ ։
1· Աստուածաբանութիւն Թովմայի , առաջին հատոր ։

1. Քարոզ գիրք, 'ի վերայ Ամենասուրբ Երրորդութեան :
1. Տետրակ կտակաց և նաւակաց Երեմիայի :
1. Թուղթ Խորենացւոյ առ Սահակ Բագրատունի :
1. Քարոզ ապաշխարութեան :
1. Սահմանաց, Առաքել վարդապետի :
1. Մեկնութիւն Մատթէի 'ի Խորենացւոյ : (Այսպէս էր գրուած) :
1. Սաղմոս, ոտանաւորի վոխուած :
1. Քարոզ Յովհաննու, և այլ բանք :
1. Պատմութիւն Ոսկերերանի :
1. կտակ Յոհաննու արքեպիսկոպոսի :
1. Քարոզք Տաթեւացւոյն :
1. Մեկնութիւն և քարոզք, անծանօթ :
1. կերակուր քահանայից :
1. Ցիսուս Որդի :
2. կանոնագիրք :
1. Մեկնութիւն յայտնութեան, և սահմանաց :
1. Քարոզ յայտնութեան և վկրտութեան :
1. » Տաթեւացւոյ և Ցակոբայ Ղրիմեցւոյ, և այլք :
1. Բանք Եփրեմի :
1. Շարական :
1. Գանձարան :
1. Հարցմանց Տաթեւացւոյ :
1. Աւետարան :
1. Մեկնութիւն տօնարի :
1. Նաւակատ րութիւնք Մագիստրոսի :

1. Տաղարան ։
2. Լուծմունք Ցօրայ ։
1. Դաւթի հարցմանց ընդ երկարնական ։
1. Սաղմոս ։
1. Ժողովածու քարոզք ։
1. Ճաշոց ։
1. Ժամագիրք փոքր ։
1. Խրատ քահանայից ։
1. Ցայտաւուրք հին ։
1. Ճառք եւագրի խրատականք ։
1. Պատճառաբանութիւն Սուրբ Գրոց ։
1. Ներածութիւն Պորփիւրի , Սահմանաց Դաւթի , Ստորագրութիւն Արիստոտէլի , Գէրի Արմենիաս , Թուղթ Արիստոտէլի առ Աղէքսանդր , Համեմատութիւն հին կատակարանաց ընդ նորոյս , Մեկնութիւն Սահմանաց Առաքել վարդապետի , «Ամենայն չար տանջելի» ևն. որ են միակազմ գիրք մի։
1. Անալօճիա , կամ բանք ոսկիականք ընտիր քարոզ։
1. Մխիթար Գօշի և կոմիտաս հայրապետի բանք ։
1. Դիոնէսիոսի Առաուածաբանութիւն 'ի վերայ հրեշտակաց , և Սեբիանոսի խոստացեալ բանք ։

ԱՌԱՋՆՈՐԴ ՊԵՏՐՈՍ ՀԱՑՐ ՍՈՒՐԲԻ ՍԵՊՀԱԿԱՆ ՁԵՌԱԳԻՐՔ

1. Կիւրակէից , Աղամալեան ։
1. Քարոզ գիրք , կարապետ Պատրիարքի ։

1· Մեկնութիւն առակացն Աւետարանի ։
1· Ընտիր ճառ և Մեկնութիւն, անծանօթ հեղինակի ։
1· Բանք իմաստասիրաց, և Համեմատութիւն հնոց և նորոց ։
1· Ձորից վերջնոց ։
1· Ղուրան Մահմէտի ։
1· Կտակ խաչելութեան ։
1· Բարոյական և բանաստեղծական զուարճալի մատուռ ։
1· Մեկնութիւն «ի սկզբանէ էր բանն» ։
1· Վեցօրէից ։
1· Շարական, ընտիր մագաղաթեայ ։
1· Քարոզ գիրք, աշխարհաբառ ։
2· Բանք, այլ և այլ իմաստասիրաց ։
1· Մեկնութիւն Ծննդոց, անկազմ ։
1· Քարոզ գիրք, անծանօթ ։
1· Աստուածանւանութիւն, անկազմ, եւ այլ և այլ տետրակք ։

Ս· ՆՇԱՆԻ ՅՕՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՔՈՎ ՁԵՌԱԳԻՐՔ

1· Դաստիարակագիրք, Կլիմակեցւոց օրով, «ի Լամբրոնացւոյն» ։
1· Աւետարան մագաղաթ, խիստ հնագրեալ ։

———

ՏԻՐԻԿ ՔԱՂԱՔ

Յունիս 26։ Մեկնեցանք դէպի Տիւրիկ։ Ժամէ մը հասանք Բրգնիկ գեղը, ինչպէս կրօնքով զուտ կաթոլիկ են գեղիս Հայք, նոյնպէս և իրենց պզեստուց տարազով կը զանազանին միւս գեղերու Հայերէն. մանաւանդ կանանց հագուստներ, խոչոր, թանձրը և ամեւ, բայց կարծես հնութիւն մը կը ցուցնեն։ Աղք կարիճ են. մէկ մասն հագապոտ և մէկ մասն ջորեպան են։ Ժամ մը եաքը, և ահա կը հասնինք Ալիա. փոքր և մեծ լեռներ կան մեր շրջապատը, և անճուկ հովիտներ։ Գեղացիներ ափուսած են դաշտին երեսը. սայլերը ճռնչելով կ'անցնին կը դառնան, դոմչներ կը լոզան, և կոշիկ ու եզը բռնած են Ալիսի ջրերը։ Քարուկիր կամուրջ մը կ'անցնինք։ Մօտ է Բին—գէօլ գեղը։ Եւ ահա կը տարածի մեր առջեւ նոր հովիտ մը, որոյ մէջ տեղը կը տեսնուի կովտուն գեղ. մեր աջ կողմն է Գավրա գեղ՝ կապած քարի մը։ Մեր ջորեպան Գկլպաչ Խըտըրն կը պատմէ թէ, Գավրայի վերն եղած լերան բարձր գագաթը ժամանակով գանձ կայ պահուած եղեր, որոյ Ըլլը՞ն է եղեր «երբ Ալիսի ջուրը հոս հասնի, գանձս յայտնուի»։ — Անհնարին բան։ Բայց նախորդը՝ իր տրեխները չորցած լինելով Ալիսի մէջ կակղցընելու առեն, նախիրը բարձրացեր

այս լեռը, նախորդը չոր տրեխները ջրով լի առեր վազեր հոն, և ջուրը գետին թափելով, գանձը դուրս ելեր» . . . : Նոյն կողմն է Խորան կամ Խորասան գեղ, որոյ դիրքն և առջեւ տարածեալ նորաձեւ հովիտն ու հասկալից արտերը մեծ գեղեցկութիւն կ'ընծայեն : Ասկէ կը բարձրանանք Հրեշտակապետի լեռը. վանահայր Մովսէս Վճերուակ աշխոյժ ձի մը հեծած, պէնքերը վրան առած, վեղարն 'ի գլուխ ալէծածան՝ սրարշաւ կու գայ մեզ դիմաւորելու : Արդէն երեկոյ է, հոս օթեցինք գիշեր մը : Ո՛վ գիշեր անմոռանալի : Վանքի բարձունքէն լուսնակի լուսով և անուշ զովագին օդով կը դիտէինք Սեւաստու հովիտը : Մեր աչքի առջեւն է Խանճառ, Պետրոսի, և այլ գեղերայք Հայոց Ամիս արծաթափայլ կ'ընթանայ, Զարայի լեռներ, Հապէշ լեռն անտառոտ և այլ շղթայք, որ կը չրջապատեն այս հովիտը զանազան մասամբ և զանազան անուամբ : Պակասութիւնն այն է միայն, որ գեղերը ծառատունկ չունին : Աղտը կամ Դուզասար գեղ վանքին մօտն է, և վանքիս տորոսները լի են աղի աղբիւրներով ու լճակներով : Նստած ենք քանի մը հինաւուրց ուռեններուց ներքեւ, որոց կանանչ ոստոց մէջէն և քովերը գտնուած մացառներէն զանազան թռչնոց դայլայլիկներ երջանկութիւն կ'ապդեն 'ի մեզ : Հոս եկաւ հասաւ մեզ կառավարութեան ոստիկան Մահմատ աղան,

որ բարեկիրթ մէկն էր : Հոս տեսութեան ե-
կան մեզ Դուզտաարկն առաջաւոր պղպա-
յինք :

Յունիս 27, ընդ առաւօտն մեկնեցանք, Դուզտաարի ջաղացքներէն անցնելով. ժամ մը ետքը դավչանլու գեղի առջեւն էինք : Ջառ'ի վեր կ'ելլենք. լեռնադաշտեր, գոմեր, արօտալից և հասկալից արտեր, վաստակաւոր երկրագործաց բազմութիւնը սփռուած են հոս. կարիճ Հայ կանայք գերանդի 'ի ձեռին կը մրցին երիտասարդաց հետ խոտ հնձելու. տունք են այն քաջակազմիկ մայրեր, որ այնքան քաջառողջ և հսկայ զաւակներ կ'ընծայեն ազգին. մեծաւ մասամբ աբրուշ և ջամուկ (երկւորեակ). Սեւաստու գեղերու մէջ աղջիկ չատ թանգ է և հազուագիւտ : Քօթնի և Եար—Հիսար գեղի գոմերը հասած ենք. 5 1/2 ժամ գալով իջանք Անտոն քեահեայի գոմերը, պաղ ու վաղուն ջրոյ մը ափ, ծաղկաւալ վիշապի թփոց հովը իջանք - Օրը պահք է, հաց, աղ, սոխ, դաղձ, պաղ ջուր, զովագին օդ, վիշապի ծաղկանց հոտ, դիմացէն՝ խոտ հնձելու խշխշոց, աղջկանց աչքի ծայրով դիտելը և հարսանց փսփսոց, մեր ձիոց փռնգոցն և վրնջոց, թռչնոց ճլվլոցն, բղէզներու տզզոց, կրակին մուխն ու բոց. մեր թէյ կ'եռայ, խըտըր՝ լո լո լո բարբառով կը մրմնայ, Մահմատ աղան մրափեր է, և մեծ գամիս չնթռւկեր պչէն ու ականջը չարունակ կը շարժէ : Աշ-

խոյժ ծերունին Անտոն քովս նստեր կը հարցընէ և կը պատասխանէ, կը տխրի և կը զուարթանայ. ձեռներն՝ի վեր կ՝ամբառնայ երկնից բաղդը կը բառնայ, և կը դառնայ գոհանայ... իւր որդիքներէն երեքը, Կիւրեղ, Աբթին, և փոքրիկն Եշան քովս կը խայտան: Ահա մեր երկու ժամ այս տեղ:

Ելանք շարունակել մեր ուղին, դարձեալ լերինք, խոտ, հունձ, եւ: Կիւռլավիկ բարձր և ձիւնոտ լեռան մօտն ենք. դէպ՝ի Ղարա—բէլ կ՝ընթանանք, որ նոյնպէս բարձր է և ձիւնոտ: Այս լեռնամէջներն և բարձունքները խիտ խիտ գեղեր և վրաններ կան Գղըպաչներու: Ձէրքէզներ ապառեցան: Մահմատ աղան բանաստեղծական խօսք մը կ՝ըսէ, թէ «կեսարիոյ էրգիաս լեռը կարի բարձրը լինելով, ըսած է, Գուռլավիկն իմ գօտին է, և Ղարա—բէլն իմ բլուրներս»: կը յառաջանանք, դարձեալ կրային լերինք և բլուրք, փուռն, որ Սեւաստէն կը շարունակէ: Եւ և էլ չատ: Ղարաբէլէն կ՝իջնանք, որ կ՝անջրպետէ Սեւաստու և Տիւրիկի սահմանները: Տիւրիկի երեսը անտառոտ է: Ժամ 11 ին իջանք խան մը, տմայի և աւերակ, բայց հարկ էր հոն իջեւանել. բարեբաղդաբար տէրը հոն գտանք, որ եւկած էր մեղուներ նայելու, ծածկոյթի մը տակ պատսպարեց զմեզ: Տեղի գուարճալի, բայց լուերով, մոծակներով, և երկիւղով լի: Հոս տեսանք վիրակից Արաբացի Դավրիշ մը,

իր չան հետ պառկած ջրին եղրը, անօթութենէն լեղուն բռնուած, կօշիկն և չապիկն հազար տեղով ծակ ու պատառուած, հապիւ կը հեկեկէր « Սբ֊ածն Աստո » . իրեւ վըկայական իրեն տրուած թուղթ մը կը ցուցնէր և կը պաղատէր, որով ոչ գիր և ոչ լեզուն կը հասկընայինք, բայց իւր վիճակին արգահատեցանք : Իւր այս վիճակը կը ներկայացընէր մեր Աւիոյ բնակիչները. նա անոնց կատարեալ անձնաւորութիւնն էր. բայց իրեւ Տաճիկ, իւր սէգն ու դաշոյնը վրան կը կրէր դեռ այդ վիճակին մէջ :

Յունիս 28: Գիշերով ժամը 9ին հեծանք, 12 ժամ քշել պէտք էր մինչև Տիւրիկ, որոշած էի որ անպատճառ նոյն օրը Տիւրիկ մտնէինք : Ո՛վ ճանապարհներ, մէյ մ՝ալ ձեր երեսը չտեսնամ: Եւ և էլ, քար ու կըռէճ, անջուր և անմարդ, հանդիպողը մեզ կ՝ըսէ. « Զգոյշ գնացէք, ի՞նչպէս չէք վախնար . . . : » Հինգ ժամէն կը հասնինք Հայոց Սընջան գեղին մօտերը, ձորէ մը անցնելով, ուր՝ ջուր, ծառ, ջաղացք, վարուընկի արտեր, հետեւաբար և մարդեր կը տեսնանք. ջրոյ մը եղերքը իջանք հանգչելու 2 ժամ: Եւանք չարունակել մեր ուղին. չորս կողմերնիս անբեր հողեր են ձերմակ, կիր, տեղ տեղ խոտ կը քաղեն աղքատօրէն, ցորեն ափ ափ ցանուած : Խեղդի մէկն ալ նոր հերկ կ՝ընէ, ու հետուէն առ մեզ կ՝աղաղակէ « Աստո ֆէյտան օլա՜ն, — հօ, հօ, եղներ

կը քշէ. Պանա պէր լե՛լե ըլ-ըլ՛-ը, հօ, հօ, հօ»: Հազիւ քանի մը ուղեւորներ տեսանք, որ սպառազէն թուրքեր էին. քիչ մը ետք ալ Սընջանցի Հայ մը, որ Պօլսէն կու գար:

Ջըմբոսկու—բէլ նշանաւոր լեռնագաշտ մ'է վտանգներով լի. զառ 'ի վայր խիստ խոր ձոր մը իջանք, ուր ձիու մը անցք հազիւ կայ. երկու կողմն երկնաբերձ, փշրեալ կրաքարեր, որ թափեր են և կը թափին մեր առջեւն ու ետեւը, ճամբան կը գոցեն և զմեզ կը սարսափեցընեն. «Երնայ այս ձորը անցորդաց գերեզման ըսուիլ. 20 վայրկեան տեւեց մինչև դուրս ելանք: Ձորաբերան երկու փոքրիկ գեղեր կան. բաւական լայնցաւ հորիզոնը. հոս սատի անտի առուներ գալով գետ մը կը կազմեն, որք օժանդակելով մեծ ճիւղի մը՝ կ'երթան Տիւրիկ և անտի անցնելով կը խառնուին Եփրատ:

Քարաչէն կամուրջէ մը կ'անցնինք, ուռենի մը կը տեսնենք և կանանչ. գլգլացող ջրոց ձայնը կ'առնունք. վազեցինք 'ի հով. սաստիկ զառ 'ի կող է. արեւը կիզիչ էր. աղբերաց ակունքները հետանք. 12 բաժակ պաղ ջուրէն խմեցի, և դեռ պապակս չանցաւ: Դարձեալ հաց և սոխ, բայց ո՛րքան համով: Գետը մեր ոտքի տակէն կը հոսի, և ձկունք կայտառելով զմեզ կը գրգռեն: Ժամ մը հանդչեցանք, և ելանք. ամենէն չար ելլէն է մեր ուղին, նեղ կածան. անհնարին է ձի նստիլ. արդէն այս աւուր

ճանապարհը գրեթէ ամբողջ քալեր ենք։ Մարդ կը զարհուրի վար նայելու. անդունդ, գետ, ապառաժաց և աւազակաց վայր, ժայռ, 1 1/2 ժամէն աւելի տեւեց։ Ե՛լ հա է՛լ, և ապա նոյնքան էջ, մօլոզ քարերու մէջ։ Ահա կ'երեւնայ Տիւրիկ։ Քանի՛ ցանկալի կ'երեւիս հեռուէն ո՛ քաղաք։ Ժամը 10 1/2 էր իջեւանեցանք Առաջնորդարանը։

Շրջանակաձեւ բարձր լեռներով պատեալ հովտի մը մէկ կողմն չինուած է Տիւրիկ, զարդարեալ ընդարձակ ծառատեաններով, որք առատ և ընտիր միրգեր կ'ընծայեն. ջրոց առատութիւն ունի, ըստ ամենայնի վայելուչ և զուարճալի քաղաք մ'է, եթէ անմաքրութիւններ չունենայ։ Քաղաքի դիրքը երկուքի բաժնուած է ձորակով մը, ուստի ջուր մը կ'անցնի. մէկ կողմն հին բերդն է, բարձր լեռան թեւին վրայ, որոյ պարիսպները քանդուած՝ բայց դեռ բուրգեր ողջ կը մնան ամրաչէն. բերդի վրան ու ստորոտը տուներ կան չինուած. այս մասն կ'անուանուի Բերդի տակ, իսկ միւս կողմն աւելի բազմաբնակ է թէ Հայոց և թէ Թուրքաց տներով, այս բաժնի մէջն են ծառատեանները, չուկայն, և այլ հասարակաց տեղեր ու հրապարակներ։ Զարմը ասոյէ դեռակը՝ որ մեզ հետ կու գար, կը հոսի քաղաքի կողէն յարեւելս, դեռոյն միւս կողմն բուն բերդին դիմաց հին ամրոց մը կայ, զոր Հայք Աստուածածնի բերդ կ'ան-

ուանեն, ուր ուխտաւորի մը կայ Աստուածածնի անուամբ։ Քարայր մը կայ հոն, կ'ըսէին, մարմար քարերէ, որոյ տանիքէն առնորակ ջրեր կաթելով աւազան մը կը կազմեն, կարի զով է, ուր աւտուն կ'երթան գառն ուտելու. խորունկ նեղուղի մը ունի որ ըստ ոմանց մինչև դեռ կ'իջնէ, ըստ ոմանց՝ դեռոյն տակէն միւս բերդը կը հանէ։ Տիւրիկի ոչ միայն քաղաքի մօտերը, այլ ամբողջ գաւառն ամուր լեռներ, ժայռեր, անձաւներ, քարայրներ և անհնարին կիրճեր են, որք կը յիշեցընեն մեզ անցեալ ժամանակի Հայոց ազատութեան ապաստանարաններ լինել։ Տիւրիկ իբրև պորտ մի է ինկած Տորոսի և Անտիտորոսի լերանց մէջ, մօտաւոր յարաբերութիւն ունի կամախու, Բաբերդի, Ակնայ, Արաբկիրու, Խարբերդու, Մալաթիոյ, Սըսոյ և Մարաշու, Սեւասու և Շ. Գարահիսարի հետ, կամ՝ այսպէս ըսելով, Մեծ Հայոց, Փոքր Հայոց և Կիլիկիոյ հետ։ Տիւրիկ՝ Սոյ աթոռոյն թէմն է մինչև այսօր, բայց իւր Առաջնորդն Պոլիսէն կ'անուանուի։

Այգային վիճակը կարի անմխիթար էր, մութ գաղափարներով տոգորեալ, և կուսակցութեան բաժանեալ։ Առաջնորդն ուզող և չուզող, բայց իրօք անձնական էր վէճը։ Առաջնորդն՝ Թէոդորոս Վ. Պաարիարքարանէն դադրեցուցած՝ քաշուեր էր վանքը. բայց անոր տեղ ուրիշ մէկը գոնէ Ցե-

ղապահ չնչանակելով, մերթ իրրև առաջնորդ պինքն ընդունողներուն գործքեր կը նայէր, չուղղներուն՝ չէր։ Քաղաքական ժողով անունով մարմին մը կար ազգը ներկայացնող, բաւական գործունեայ անձինք էին. բայց իրենց ազդեցութիւն կոտրած էին հակառակող և բողոքող ազգայիններ, ուստի թէ՛ քաղաքն և թէ՛ գեղերը խանգարման և բարձի թողի վիճակի մէջ կը գտնուէր։ Շատ փորձեր ըրի միացնելու, ժամանակն և ազգի պէտքերը յիշեցընելով իրենց, քարոզելով և խօսելով. թէպէտ համբուրեցին պիրար և Պահպանիչ խնդրեցին, բայց կ'երեւէր որ սրտով անհամբոյր էին։

Առաջնորդն եթէ Աւետարանը հասկըներ, և կրթութիւն ու գիտութիւն ունեցած լիներ, կարող էր միաբանել պիրենք. բայց ինքն ալ պատճառներ տուած էր, ինչպէս նաև Պատրիարքարանն։

Քաղաքիս մէջ երկու եկեղեցի կան Հայոց, Ս. Աստուածածին և Ս. Երրորդութիւն՝ գեղեցկաշէն, իրարու մերձ, Բերդի տակ ըսուած թաղին մէջ շինուած, այն ինչ Հայոց ամենամեծ մասն քաղաքի միւս մասին մէջ կը բնակին, բաւական հեռու։

Քաղաքիս մէջ չորս վարժարան կար Հայոցս, գծուծ չէնքերով և ողորմելի վիճակով մը. վարի թաղի վարժարանը բոլորովին փակ էր. լուսաւորութիւն և դաստիարակութիւն պիրենք ճանչցողներ և ընդունողներ չունէին

հոս. հազիւ կը բաւեհաճէին խօսիլ և լսել այս կենաց խնդրոյն վրայ: Ընիկ Տիւրիկցի Ղ-ըմամճի արուեստաւորք ժամանակաւ Պօլսոյ մէջ ընկերութիւն կազմած, կալուածներ գնած լինելով, անոնց արդիւնքէն տարեկան 4000 ղրշ. կու գայ եղեր վարժարանաց. քանի մը տարիէ 'ի վեր դադրած էր սոյն գումարն, ծնողք թոշակ չէին վճարեր՝ ձրիին վարժած լինելով. միայն Ս. Աստուածածին եկեղեցին 2000 ղրշ. կը վճարէր իւր վարժարանին, և քանի մը ծնողք խիստ չնչին բան մը. մեծ ամօթ էր այս Տիւրիկցի ազգայնոց, որոց մէջ աղքատ չկար, բայց զգայմունք արթնցնելու համար քարոզող և դործող ալ չկար: Թիւ ուսանող մանկանց իբր 200: Տարեկան ծախք՝ 7500 ղրշ. էր կ'ըսէին:

Աղքատասնամ ընկերութիւն մը կար հնուց կազմեալ, և Հայրենասիրական ընկերութիւն՝ որ անգործ կեցած էր:

Հայէն և թուրքէն գաս ուրիշ ազգ բնակիչ չունի քաղաքս. կալուածներ, վաճառականութիւն և արուեստները մեծաւ մասամբ թրքաց ձեռքն է. Հայոց հարուստները վարձակալ են, և մեծ մասն ալ փերեզակ, որ ապրանքներ կը տանին գաւառները ծախելու, և շատերն պանդխտութեամբ կը շահին: Բողոքական Հայք շատ սիրով էին մեր ազգայնոց հետ. թուրք հասարակութիւնն ալ աղէկ էր, բայց մօլլաներ և աղաները բարբարոս և մոլեռանդ:

Չեռագիր չկար հոս, և ճանապարհները լեռնային, դժուարին ու խանգարեալ։ Անուանի լեռներն են՝ Դելի դաղ, Ադ դաղ, Ջընըսկու—բել, Դումուրճայի—բել, Եամա դաղի, Գէմիրլու, Սարը չիչէկ, Սուսուզ—բել, Կէօլ տաղի, եւն։

Տիւրիկ իրեն գեղերով միասին ծանր հարստահարութիւններ կը կրէ Գլուըջանցի Քիւրդ Աշիրաթէն՝ որոց գլխաւորն է Դելի Սըլօն. Գըզլպաշ Խոշկերցի Աշիրաթէն՝ որոց գլխաւորն է Ալիշան պէյ. սա իրեւ հրամանատար համարուած է Սեւաստի և Տիւրիկի և ասոնց սահմանաց մերձ եղած բոլոր աւազակաց ու սպանողաց, ազէկ ալ քաղաքականութիւն ունի. Քէլէճոր Աշիրաթէն՝ որոց նշանաւորներն են Զօլախ Հասէյի Մուստաֆան և եղբարք. Ղարա—Քէլու Գըզլպաշ աղաներէն, եւն։ Աւելորդ է ըսել թէ քաղաքի թուրք աղաներէն ալ ասոնց նմաններ և պաշտպաններ կան։

Տիւրիկու քաղ. կառավար. գոյմագամութիւն է՝ Սեւաստու վիլայէթութեան տակ։ Վիճակագրական թիւերը Պատրիարքարանին ուղղած լինելով, օրինակները առնել չունիմ, ուստի այսուհետեւ բնակչաց թիւերը կը պակսին գործոյս մէջէն։ Պատրիարքարանն, արդէն կ'իմանանք թէ, որոշած է՝ի պաշտօնէ հրատարակել թէ՛ թիւերը և թէ՛ կարեւոր տեղեկագրութիւնները։

Հայարնակ գիւղերայք .

ԽՈԽՈՆԱՎՈՒԼ գեղ· եկեղեցի 1· Ս· Լուսաւորիչ : Վարժարան 1· Լուսաւորչեան : Ուսանող 45 մանկունք :

ՄԸՐՈՒԱՆՈՑ գեղ· եկեղեցի 1· Ս· Աստուածածին :

ՍԻՆՋԱՆ գեղ· եկեղեցի 1· Ս· Գէորգ :

ՕԴՈՒՒ » » 1· Ս· Թովմայ Առաքեալ : Վարժարան 1· Մամիկոնեան : Ուսանող 50 մանկունք :

ԱՇՈՒՇԷՆ գեղ· եկեղեցի 1· Մոգուց Թագաւոր : Վարժարան 1· Սրբատեան : Ուսանող 67 մանկունք :

ԲԱՐՂԱՄ գեղ· եկեղեցի 1· Ս· Աստուածածին :

Ս· ՅԱԿՈԲ գեղ· եկեղեցի 1· Ս· Յակոբ վանք :

ԿԻՒՐԷՍԻՆ գեղ· եկեղեցի 1· Ս· Երրորդութիւն : Վարժարան 1· Ուսանող 40 մանկունք :

ՇԻԿԻՄ գեղ·

ԱՐՄՈՒԹԱՂ գեղ· եկեղեցի 1· Ս· Գէորգ :

ՓԱԼԱՆԿԱՑ » » » Ս· Գէորգ :

ԳԱՍՄԱՆ գեղ· եկեղեցի 1· Ս· Աստուածածին : Վարժարան 1· Ս· Մեսրոբեան : Ուսանող 45 մանկունք :

ՋԻՄԱՐԱ գեղ· եկեղեցի 1· Ս· Երրորդութիւն : Վարժարան 1· Ս· Մեսրոբեան : Ուսանող 60 մանկունք :

Աւերակ եկեղեցիք, վանք և ուխտատեղիք։

Ս. Յակոբայ վանք, որ գեղերու կարգին յիշեցինք, 12 տունի չափ Հայք տիրեր են վանքի հողոյն, բնակութիւն հաստատած են հոն, արտերը իրենց վրայ բաժներ և ընտրըրեր են. քանի մը արտ ալ Թրքաց ծախեր են. վանքի պղնձեղէններն և այլ անօթները իւրացուցեր են. դեռ ուխտաւորներ կը յաճախեն Ս. Տաճարին, որոց եկամուտն ալ գեղացւոց իրաւունք եղած է։

Օղուզ գեղին մօտ փայլէվանք անուն վանքի մը աւերակ կայ։ Կիւրէսին գեղին մօտ Ս. Թորոս։ Գասման գեղին մօտ Բագրատաւն անուն աւեր եկեղեցի մը կայ հին գերեզմանատունով մը։ Ակրակայ Թրքաց գեղին մօտ Ս. Գրիգոր Նարեկացւոյ անուամբ վանք մը, 4 ժամ հեռի Տիւրիկէն, ուր երբեմն Սրբոյն նշխարք ամիսոփեցան Սեննեքերիմ արքայի վաստուրականէն գաղթելուն, ողջ մատուռ մը կայ և քանի մը հին սենեակներ, բարձր լեռան մը վրայ։ Տիւրիկ քաղաքի մէջ՝ Ս. Աստուածամայր, Ս. Գէորգ, Խնդրակատար և Ս. Սարգիս եկեղեցեաց աւերակներ կան. վերջնոյս տեղը նախ պարսէզ և ապա արտ ըրած է քաղաքացի Թուրք մը, ևն, ևն։

———

ՏԻՒՐԻԿՈՒ Ս· ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՎԱՆՔ

Քաղաքէն 2 1/2 ժամ հեռի, կիրճերով և լեռներով բաժանեալ, նեղ տեղ մը ցած բլրակի մը վրայ կառուցեալ է վանքս, որ և կը գրուի «Կիւրղի Անապատ». և Թուռնավուլ գիւղին մօտ լինելով՝ «Թուռնավուլայ վանք» եւս ըսուած է: Թերակղզւոյ ձեւ ունի վանքի բլուրն, երեք կողմէն հեղեղատներով, անտառներով ու փոսերով պատեալ. խաղաղասէր և աշխարհուրաց կրօնաւորաց կարի յարմարագոյն վայր, սակայն պակաս չեն արջեր, գայլեր, և առնցմէ աւելի՝ աւազակներ: Ջէնքով, չներով և հաց տալով կը պահպանուի վանքը: Երբեմն բաւական թուով կրօնաւորներ ունեցեր է, ուր չատ գրքեր գաղափարուեր են, որ միակ և սուրբ աշխատութիւն էր վանականաց համար. իսկ այժմ ոչ միաբան, ոչ աղօթող և ոչ ժամասաց: Առաջնորդ Թէոդորոս Վ. որ մտով և մտքով թանձր մէկն է, միայնակ կը վարէ և կը վայելէ այս վանքը: Շէնքերը անշուք են, տաճարը խիստ փոքր, ցած և անլոյս. միայն Առաջնորդարանը փառաւոր է, լուսաւոր և հովասուն, որ կը նայի դէտակին և կարգով տնկուած ծառերուն վրայ, ուստի կ'երեւի նաև Թուռնավուլայ ճանապարհը: Թթեններաց և այլ մրգաբերաց տունկերով դրախտ մը ունի: Եկամուտն է դեղե-

րու պողիներ, արտերու բերքեր և ուխտաւորաց արդիւնք: Ս. Գրիգոր Լուսաւորչի նշխարաց գիւտի տօնին վանքը դնացինք, ուր թէմացի ուխտաւորաց բազմութիւն եւկած էր. և իրենց ուխտն էր՝ ուտել, խըմել, խաղ կանչել, պարել, մատաղ եփել, ժամ գալ, ժամոց տալ, եւն: Նոյն օր պատարագեց նորին Արքեպիսկոպոսն. և ապա իրմէն պէտք եղած տեղեկութիւններ առի, ու քանի մը ժողովականաց հետ մեկնեցայ քաղաքը: Շատ ինքզինք կը բարեբանէր երանելին, և կարի խրոխտ էր Ղազարեանին:

ՉԵՈՒԳԻՐՔ ԵՒ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ՏԻՐԻԿԻ ՄԷՋ

1. Ա-ԵՓՐԱՆ. Ս. Լուսաւորչի վանքը:

« Արդ ես նուաստ հողս Գրիգոր արեղայս ծոյլս և անարժանս 'ի կրաւնաւորս, և չնորհիւն Աստուծոյ և ողորմութեամբ նորին դրեցի զսուրբ և զկենաւնակ Աւետարանըս 'ի սպայծառութիւն մանկանց նորին: Գրեցաւ սա 'ի թուականութեանն Հայոց ՉԻԹ. 'ի յԱռաջնորդութեան Պետրոս Եալխոսպոսի, 'ի սուրբ և 'ի գերահռչակ անապատիս որ Փրկչի վանք կոչի, 'ի դուռս սուրբ Փրկչիս և սուրբ Լրեւմանս և Շամուէնեայ, և աստուածընկալ սուրբ Նշանիս որ աստ կայ: Արդ աղաչեմ զձեզ մանկունք նորոյ սիոնիի որք հանդիպիք այս սուրբ և աւետաբարող Աւետարանիս, կարդայք, աւգտիք և կամ աւրինակէք, յիշեցէք սրտի մտաւք 'ի մաքրափայլ աղաւթս ձեր զիմծուն և զխոշոր գըր-

չակ գիրիգոր արեղաս և զծննաւղն գիրիգոր ներկրար և զմայրն իմ զՇուշան խաթուն և զմլոտեսի Մելիք մայրն իմ որ բազում աշխատութեամբ ննոյց պիս . . . :

« Դրի յիշատակ . . . և եղբարցն իմ Ռըստագիսին , Ռամէտին , Քուլաչին , Ցովաննիսին և եղբաւր որդոյ Մուզամիլին և ամենայն արեան մերձաւորաց : Ի գուռս սուրբ Աստուածածնի , սուրբ Լուսաւորչի , և սուրբ Ցովհաննէս Աւետարանչի , ի յանապատիս որ Խուռնաւիլու վանք կոչի , և քվերն իմոյ Աղուխ խաթունին , Արդ աղաչեմ զամենասեան ով մանկունք նոր սրանի որք ընթեռնուք զաստուածաշաւում Աւետարանս ի սուրբ խորհուրդն , և լսէք , որպէս մատաք մեզաց թողութիւն հայցէք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ , և զորս յիշեցաքն , նոցա , և եղիցի : Եւ որ զհետ մեր ապաստաւոր սուրբ ուխտիս , կամ Հարպետ , կամ Եպիսկոպոս , կամ վարդապետ , կամ Արեղայ , կամ Երէց , կամ Աշխարհական , և կամ յիմ ազգէն եղբայր , և կամ եղբաւր որդի , մի իշխեսցէ զսա ծախել կամ գրաւական դնել և հանել զսա ի վանից : Եւ որք առնեն զայս ոչ առնուն աւրհնութիւն ի յայս սըրբոցս . և եղցեն անմասն յարքայութենէն . և որ յիշատակարան քերէ կամ թուղթ կարէ և կամ գիր գրէ ի լուսանցն , մասն պռոպայի առցէ և վաչխահանացն . պկորհայ և ըզդաղանայ և զկայէնի պատիժն կրէ :

« Այլ և վասն նեղութեան ժամանակիս որ գայ և հասանէ չարն , հանեն և թագուցանեն ի յամրոցնին , մինչև անցանէ բարկութիւնն . այլ յաւրինակ մի՛ խնայեսցէք : Իսկ խնամով պահոցքն աւրհնին Աստուծոյ և յամենայն սրբոց : Երբոր խաղա-

զուխիւն լինի՝ չուտով ՚ի յետ բերեն ՚ի սուրբ Ուխտս, ՚ի խուռնավիլու վանքս որ կիրեղի ասի։

«Այլ և աղաչեմ զդասս արքազանիցդ զի յամենայն ամի երկու անգամ գյիշատակարան կարդայք, մէկ տաւնին և մին Զատկին . . . ։

«Եւ ոչեր մեր Յիսուս Քրիստոս որ առաքեն է ՚ի տուր բարեաց, ձեզ յիշողացդ և մեզ յիշելոցս առ հասարակ ողորմեացի և նմա փառք և պատիւ յաւիտեանս ամէն։

«Ի թուին ՉՂԹ. Ատուած ողորմի Շահ—Մելիքին հոգոյն, որ երեսս խալկին մի կէս մոթնոց, յիշատակ ՚ի վանքս կերեզի, ձեռամբ Մանուէլ սարկաւագին։ Ո՛ր Աստուածնորդ որ ծախէ և կամ հանէ ՚ի վանացս նզովեալ եղիցի, և զնանն գՅուդայի և գխաչ հանողացն առցէ։

ՏԻՎՐԻԿՈՒ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՉԵՌԱԳԻՐՆԵՐ

1. ԺՈՄՓԷՐԻ. Ս. Աստուածածնի եկեղեցին։

Աւերհնեալ է Աստուած. աւարտեցաւ Աստենի գիրքս ձեռամբ Աւետիս դպրիս, ՚ի քաղաքս ՅԱրտաւեր. Թվ. ՌՃԺԶ.

Ով եղբայրք անմեղադիր լերուք աղալատնացս զի կար մեր այս է. կարգալով կամ աւրինակելով, յիշեսջիք գԱւետիս գրիչս և դուք յիշեալ լիջիք Քրիստոսէ, Հայր"։

«Յիշատակ է Աստենի գիրքս եղեգնձորցի տէր Խաչէլ հեզահոգի քահանային, և եղբաւրն նորին Անանիային և մեծ հաւրն Ստեփաննոս քահանային, և կողակցին, և իմ

հաւրս Յոհաննէսին, և կոչակցին. դնեցին զգիրքս, և եդին յիչատակ 'ի գիւղն Եղեգընձոր 'ի դուռն սուրբ Սարգիս եկեղեցին. վարձն 'ի Քրիստոսէ առնուն »:

1· Ա-եփոքան.

«Արդ գրեցաւ եղեւարուխս քառավտակ աղբերս ոռոգանելով քառանկիւն և քառագիր Աւետարանաւս զլորտս տիեզերաց, ըստ առաջնում ասացելոյ մարգարէին Հոգւոյն Աստուծոյ:

« Եւ արդ աւարտեցաւ Աւետարանս աստուածաբան, Մաթէոսի, Մարկոսի, Ղուկասու և Յոհաննու. 'ի թվարերութեանս յոթելեան տումարիս, ՉԿԶ· 'ի վառս և 'ի պայծառութիւն սրբոյ եկեղեցւոյ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, 'ի դաշտիս Դարանաւ 'ի գեղջ Խոռինանց, ձեռամբ Վարդանայ աշխարհի իրիցու, յիշատակ ինձ և իմոցն, հաւր իմոյ Գրիգոր քահանայի, և մաւր իմոյ Աղբրացի, և եղբարց իմոց Մըկրտչի, և Աչխէն տիկնոջ:

« Դարձեալ աղաչեմք զամենեսեան որք հանապազ խաչակից լեալ էք խաչելոյն Քրիստոսի, և պատաբերեալք արդասաւորութեամբ պտղաւք 'ի կամս Աստուծոյ, յիշել զվարդապետան մեր զՅակոբ, կարապետ, զՍտեփաննոս և զՅովհաննէս, և զծնաւղս իւրեանց, և զհարազատս եղբարս նոցա: Եւ որք կամակից եղեն սմայ ըստ իւրաքանչիւր կարի, Քրիստոս Աստուած փառաւորեալ հանգուցէ զհոգիս նոցա 'ի խորանս սիրոյ ազց իւրոց ամէն »:

1· Ա-ԷՊՓԱՔԱՆ .

«Այլ և զիս զսպիկարս զթանձրացեալ մեղաւք , զվարդան գրիչ յիշել վերստին ՚ի հանապազ մշտահայց պաղատանս ձեր առա-ջի Աստուծոյ :

«Այլ և գրեցաք զսայ ՚ի յիշատակ մեզ և մերոցն , և ՚ի ժառանգ հարազատ զաւա-կաց մերոց , Ցովանիսի , Ղազարոսի , և Թա-դէոսի , զորս տէր Աստուած վայելել տացէ բազում ժամանակս առաքինական կենացս , և յետ աստիճանաց յիշատակ իւրեանցն և ծնաւղաց իւրեանց :

«Եւ է սա Թադէոսի զորս տէր Աստուած վայելել տացէ մինչև ՚ի խորին ծերութիւնն ամէն : Ես Մարթա և Շնորհաւոր սիկին որ եաւք զաւետարանս գրել ՚ի խալսալ արդե-ականց մերոց , որք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով , մեզացն մերոց Թողու-թիւն խնդրեցէք ՚ի Քրիստոսէ Աստուծոյ մե-րոյ , որ առատն է տուրս , և զձերն Թողցէ գյիշողացդ ՚ի միւսանգամ գալստեան իւ-րոյ » :

1· Ա-ԷՊՓԱՔԱՆ .

«Փառք անբաժանելի սուրբ Երրորդու-թեան Հաւր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն : Նո-րոգեցաւ սուրբ Աւետարանս ՚ի թուականին Հայոց , ՌՂԶ· ՚ի հայրապետութեան տեա-ռըն Փիլիպոսի , և Առաջնորդութեան Սա-նահնոյ Սարգիս եպիսկոպոսին ձեռամբ Մը-կըրտիչ գպրի :

«Որ ոչխրիկ ՏԷրն ամենայնի Հոգւոյ սուրբ առաքոցի , Ղարսխանին և կոզակցին Ոսկե-հատին , և որդիքն Դաւիթն , տէր Ոհանէսն , Աստուածատուրն , Սարգիսն , Ամիրխան ,

Սուրխան, Գալուստ և Նազարն, դուստրն Շնահատուրն, և հանգուցեալ որդին Շահնազարն, հայրն Ղարախանին, Աստուածատուրըն, մայրն Մուրվաթն։ Քար սուրբ Գաբրիէլըն, հանիկն Մուրվաթն, եղբայրն Ամիխանն, Տատուրն, հանգուցեալն Առաքելն, քոյրն Պահրի խանն, Շամանդուխտն, կուլպուտախտն, Սիրամարդն։ Սա յիշատակ անջնջելի, բարի զաւակ հոգոց սոցին, յորժամ որ դայ Տէրն երկնային, անճառ փառաւք իւր հայրենին, նստի աթոռ իւր դատանին, գիւան առնէ մարդկան ազգին, յայնժամ աչաւքն քաղցրակին, հայի սիրով յանձն առցին, և բարբառովն աստուածային, գոչէ՝ի վեր ըստ հաւատացեալին, եկայք աւրհնեալք հաւր իմոյ ժառանգեցէք զվերինն երուսաղէմ, Հայր մեր"։

«Զվերջին ատացող և նորոգող սուրբ Աւետարանիս, զՏիւրիկեցի Անտոնի որդի Խոջայ Սիմաւոնն, և մայրն իւր զՄանանդն, և քորքն իւր՝ զԱրզուն, զՆազլուն, և զըզՄուրվաթն։ Եւ զպապն իւր զՍուրմանչէն, և զհանիկն իւր զՄարգարիտն, և ժրագըլուխ ամուսինն իւր զՄարիամն, և զորդին իւր զնորաբողբոջ Անտոնն, և հօրեղբայրն իւր զԲաղտասարն, և զՄելքոն. և միւս մեծ պապն զմիզոպի Ամիրչէն, և կողակցին իւրոյ, և քեռոյն իւրոյ Սեդրակին, զէգէլին, Իշխանին, Պօղոսին, Միսակին, և Անտոն վարդապետին, և ամենայն արեանառու մերձաւորացն յիշեցէք և Աստուած ողորմի ասացէք։ Արդ՝ ես Տիւրիկեցի մեղապարտ Սիմաւոնս, և կողակիցն իմ Մարիամն և որդին իմ Անդոնն, գնեցինք զսուրբ Աւետարանս, և տվինք վանամ և յիշատակ՝ի դուռն սուրբ Յովհաննու Եկեղեցուն վա-

սըն փրկութեան հոգւոց մերոց , ով ոք որ հանդիպիք Ա· բերան Աստուած ողորմի ասացէք աղաչեմ » ։

« Գրեցաւ և նորոգեցաւ , ի քաղաքն Թիֆլիս , ձեռամբ Յակոբ դպրի , թուին ՌՃ· և ԽԳ։

« ի վայելումն Խոջայ Սիմաւոնին և ամենայն իւրայոցն ամէն ։ Հայր մեր" » ։

1· Ա֊եփոփան ։

« Ոստի և չառաւիղն աւրհնութեան և սեռն բարեհնչեան , սրբազան և գերաւանքուր մարդն Աստուծոյ , նախանձեցաւ նախանձ բարի ։ Տեսեալ զոմանս տարփոզական սիրով տեղնչացեալս , զի զՏեառն մերոյ և զԱստուծոյ մատեան յաւետարանի յինքեան գրաւէին . և ապա խորհուրդ մի բարի ի մէջ առեալ ասէ թէ ամենայն կեանք մարդոյ անցաւոր տեսանեմ , և առացաւ զառացուածս գեղեցիկս , նախանձեցաւ նախանձ բարիոք ։ Եւ ապա թախանձեալ զոգնաւեզ և զանարժան գրիչս զԱտեփաննոս էրէցս , նկարագրել զաստուածախաւս սուրբ Աւետարանս յիշատակ հոգւոյ իւրոյ ըստ յայնմ որ ասէ թէ երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընդանեակ յերուսաղէմ ։ Եւ իմ հարկեալ ի սիրոյ նորա թէպէտ և ի վեր էր գործառնութիւն սորա քան զկար իմ և զարժան , ապա և զանկարութիւն ի բաց եդեալ լցի զիմաւքաք առցա ։ Եւ գրեալ աւարտեցի զսա ի գիւղն որ ասի Կալանջ , կարողութեամբն Աստուծոյ ։ Ընդ հովանեաւ սուրբ Նշանեացդ ի գաւառս Մեղրինու , ի թուին Հայոց ՌԺԸ· ամին ։ ի թագաւորութեան Սուլթան Սելուին ։ Եւ ի կաթողիկոսութեան տէր Խաչա-

տուրին, և 'ի հայրապետութեան տէր Գը-
րիգորին:

«Արդ երեսանկեալ աղաչեմ զձեզ ով
սրբակրաւն քահանայք, որք հանդիպիք տուր
Աստուածոյ կարգով աւրինակելով, լի սիր-
տիւ յիշեսջիք զմեզաւորս և զուսուցիչս իմ
զՅոհաննէս երէցն որ է հոգեւոր ծնողք
իմ: Եւ ըստ մարմնի ծնաւղացս Պապին և
Թամամին և Մուսէս դպրին և ծնաւղաց իւր,
Աստուած լուսաւորէ զիւրեանց հոգին ամէն:
Մանաւանդ զստացող սորին: Դարձեալ յի-
շեցէք զվերջին ստացաւղ տուրս Աստուա-
նիս, զկուլատարն, և զիւր որդին զԱստուա-
ծատուրն, և զԳասբարն, զՊաղտասարն,
զԱբրահամն, և զիւր աղջկունքն, զերեցկինն
և զՆազլուն: Յիշատակ իւրեանց հոգւոցն
իւրեանց ննջեցելոցն. և որ յիշէ և Աս-
տուած ողորմի ասէ, Աստուած իւրն ողորմի
'ի միւսանգամ գալստեանն ամէն:

«Եւ ետուն 'ի ձեռն տէր Յովհաւտուրին
'ի գիւղն Յարուճամին, և ոչ ոք ունի իշխա-
նութիւն ծախելոյ զսա կամ գրաւ տալու:
և եթէ ոք անդգնի, զպատիժն կայէնի
առցէ »:

1. ՃՂԸ ՓԲԲ.

«Զոր տեսեալ զայսպիսի գանձս աստ-
ուածային և պայծառ լուսով, փառաքեաց
հոգով և մարմնով, և ջերմեռանդ սրտիւ
տեսանել Մկրտիչ քահանայն, և ետ գրել
զսոյր տարեգիրքս տարւոյն, անպատճառ
և անթերի, յիշատակ իւր և ծնաւղացն
իւրոց, Աւնովփրիոս քահանային, և մաւրն
իւր Շայմելիքին, և հաւրեղբարցն իւր պա-
րոն Բուլքարամին, Նիկաւղասին, և Սահ-

վանոսին և մաւրեղբարցն իւր կարապետ վարդապետին, և Յովաննէս հէրպետին, և Անդիպատրին, և զմօրքուեր որդին իւր։ ըզՏէր Ստեփան եպիսկոպոսն։

«Այլ և յիշեցէք տէր Աստուածն Իսրայէլի, զանանաւորն իւր զՈսկուն Մէլիքն, և զդուստր իւր զմեծ Խաթունն, որ 'ի տէր Մկրտիչ հէրպետին բազում երախտիք ունին, հոգեւոր և մարմնաւոր։ Քրիստոս Աստուած որ ողորմած է և գթած, երկայնամիտ և բազումողորմ, ողորմութիւն և թողութիւն չնորհեսցէ ամենայն ազգականաց նոցա ամէն։ Այլ աղաչեմք զամենեսեան, նախ զվարդապետք և զդաս քահանայից, և սարկաւագաց և քրիստոսատուրեան ժողովրդոց, որք հանդիպիք սմա, սեւանալով կամ կարդալով, և կամ սւրինակ դնելով, աղաչեմք զձեզ ով սուրբ ծառայք Աստուծոյ, միով Տէր ողորմեալիւ արժանի արարէք, և Աստուած որ կարողն է և ողորմածն, ողորմութիւն և թողութիւն չնորհեսցէ ամենայն սրբոց մերոց և ձերոց առ հասարակ, յիւր միւսանգամ գալուստն ամէն։

«Այլ՝ աղաչեմ զամենեսեան, յիշեցէք 'ի Քրիստոս զստացող գրոցս զՂազար երէց և զծնաւղսն իւր՝ և զայլ արեան մերձաւորսն, և Աստուած զձեզ յիշէ յիւր արքայութիւնն ամէն։

«Այլ գրեցաւ սա ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի՝ Յովհաննէս քահանայի, 'ի յերկիրս Քաջբերունի, 'ի քաղաքս որ կոչի Արճէշ, ընդ հովանեաւ կըմբէթայարկ և խորանաձեւ սուրբ եկեղեցոյս որ յանուն սուրբ Գէորգայ զաւրավարին կառուցեալ կայ։ Ի թագաւորութեան ազգին Նեաողաց Սուլթան Շահանշային, և 'ի կա-

թողիկոսութեան սուրբ Լուսաւորչին աթոռոյն, տէր Կիրակոսի՝ որ մականուն Խըլոց կոչի։ Արդ գրեցաւ սա ՚ի թուականիս Հայոց ՃՁՂ. թուին, ձեռամբ յոդնաւոր եւ տխառնար գրչի ցովաննէս քահանայի՝ ՚ի յիշատակութիւն Մկրտիչ քահանայի, ստացողի և նկարողի։

«... Արդ ես Մկրտիչ քահանայս ուխտ եղեալէի գնալ յԵրուսաղէմ, և ՚ի պրաղմանէս և ՚ի ծուլութենէս ոչ չտապեցայ, և յապդմանէ չարին եկաւ Ղուրալանդն ՚ի վերայ Արճիշոյ և թալանեց զամենեսեան, և մեր չհանդիպեալ ուխտին՝ առաք զգիրքս և բերաք ՚ի Տիւրիկիս և տուաք ՚ի Ղազար երէցըն. և նա ետ մեզ Ց. Քլօրի, և մեք տարաք յԵրուսաղէմ։

«Արդ ես Ղազար երէցս և որդին իմ ցովաննէս քահանայ, գնեցաք զգիրքս ՚ի Մկրտիչ արեղայէս Ց. Քլօրի, յիշատակ մեր և ծնաւղաց մերոց։

«Արդ ես Ղազար երէցս՝ ուխտ եղեալ էի գնալ յԵրուսաղէմ. և ՚ի ժամանակիս դառնութենէն ՚ի վերայ ազգիս Քրիստոնէից զոր եղեալ Ջիհանչահ Սուլթանն ՚ի թագէն Թաւրիզոյ, և եկաւ ՚ի վերայ եղբնկոյ քաղաքին, և էառ զեղբնկայն. և բազում նեղութիւնք էած ՚ի վերայ ազգի Քրիստոնէից, և խուճլուպակ պարոնն ոչ հնազանդեցաւ Ջիհանչին, զոր հրաման ետ Ջիհանչան, զաւրաց և զաւրավարաց իւրոց զոր գնացեալ առին աւար բազում, և գերի բազում. և ոչ կարէ պատմել զխեղճ և զաղիողորմն քրիստոնէից ազգիս։

«Եւ պարձեալ անտի, և չուեալ ՚ի կամախ, և առին աւար և գերի բազում, և զխեղճ և զողորմն զոր եղաւ ՚ի վերայ Քրիս-

տոնէից զբր հրամանն Տեառն կատարեցաւ. թէ մի՛ լինիցի վտանգաւոր ձեր ի ձմերայնի, և մի յաւուր շաբաթու։ Այս ի կտակս կատարեցաւ, և իմ տեսեալ զդառնութիւն ժամանակիս և զձերութիւնն անձինս, և իմ յուսահատեալ Աստուած ապաւինեցայ, թէ այց արասցէ Աստուած վտակաքանայ իմոց։ Եւ ողորմածն և մարդասէրն Աստուած, ողորմեցաւ, և այլ դուռն ողորմութեան եբաց ինձ. զբր եկաւ դիրքս այս ի Յորճիշոյ և եհաս առ մեզ, և մեք տեսեալ զդիրս և զթուղթ և զվայելչութիւն ծաղկի սորա և մեր լսեալ փափաք արար, առաք զդիրքս ի վայելչութիւն անձին իմոյ և իմ որդւոյ Յովաննէս քահանային»։

1. Գանձարան. «Ով սիրելի, սիրելի, եղբայրք գովելի, միտ ած որ զայս քեզի խրատս տամ որ լսես, յորժամ որ դու դանձըն երգես, թուղթն թքով ապականես, կամ երկու մատդ բռնես քարչես, հանց որ կապին վնաս գործես, կամ անգէտի ձեռն դնես, խոզաց մարդկան կոխան չինես, զկողն անողորմ ի յետ քարչես, և կամ թանաս մատ ու շրջես, կամ վրան մոմ կաթեցնես, և կամ գրածն ապականես։ Այլ յոյժ սիրով նախանձաւոր, արբեալ ձեռօք լաթով բռնես, ի հրոյ ի ջրոյ ի գաստ պահես, մկնէն գէշ գէշ գիր չի գրես, երկու երեք չորով պատռես, ի չորային տեղիք դնես, բոլոր սրտիւ գանձ ոտղ ասես, ապա զԱստուած դու տեսանես։ Ձեռքս փտի և հող դառնայ, գիր յիշատակ առ ձեզ մնայ»։

— Նոյն Գանձարան։ «Շնորհաւք Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, և

ողորմութեամբն Աստուծոյ, կիսանորոգ եղեւ Գանձարանս այս, ձեռամբ իմոյ անարժան Պարսամ դպրիս, 'ի քաղաքն Տիւրինկի, ընդ հովանեաւ սուրբ Խնդրակատար և սուրբ Նշան եկեղեցւոյն, 'ի թուականիս Հայոց, ԹԱԳՆ Է ՃՈԽԱԼԻ։

«Եթէ կամիս իմանալ, թուէն մինչև Ինին որ կարմիր քաշած համարեսցես. և յետ թուելոյն երկոտասան թիւ յարտաքս հան որ կատարեալ լինի թվական մեր Հայոց ազգի. դուն իմաստութեան ընդ դէմ քո բացուի, զայս թագս ճոխալի գլուխդ իջանի։ Քանզի պատճառ կրկին նորոգման Գանձարանիս, եղեն դպիրներն, քանզի վաղուց հետէ քայքայեալ և ամայի գոլով, վանորոյ կամեցան 'ի լոյս ածել, և 'ի յանգ հանել զսա զի մի' ամենայն ճրագն Աստուածային 'ի ներքոյ մահիճին. այլ կամեցան դնել 'ի վերայ աշտանակի, զի որք մտանեն լոյս տեսցեն, և որք տեսցեն, լուսաւորին և փառաւորեն զԱստուած կենդանի. իրաւի եղբարք, որ սա հոգեւոր գանձ է և ունի ինքեան բազում անկողոպտելի մարգարտաշար պատուական անուն, որով գովաբանէ համայնգամայն սուրբսըն և յաղթող նահատակն իւրաքանչիւր 'ի յաւուր ոճնի իւրեանց, զոր քաղցրաբարբառ դպիրներ եղանակեն ազգի ազգի գուշնով, և համեղ մեղեդիքով, 'ի փառս աւետնաստուրբ երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ"։

«Ծաներուք ով սիրելի հայրք և եղբայրք իմ, որովհետեւ որ ոչ յայտնի եղեւ մեզ գծողն և յիշատակ երգողաց անուանքն, որ գրէաք, վանորոյ Աստուած ողորմի և Հայր մեզան անտրտունջ հանապազօր ասէք, որ Տէր Աստուած զանուանս նոցին 'ի գպրութիւն

կենացն գրեացէ, և զձեզ և զմեզ անդա-
տապարտս պահեացէ ամէն»։

1. Գանձարան։ «Գրեցաւ աստուածախուռն
տառս որ կոչի Գանձարանս, զոր արարեալ
է մեծ բարեւնասէրն մեր Գրիգոր Կաթո-
ղիկոսն, որ գաղտաւիարեալ ունի յինքն
գանձս և զտաղս, որ է կատարեալ խորհուրդ
եւթնարիւնեան Հոգւոյն զաւրութեամբ, զորով
զարդարէ կաթողիկէ կատար սեփհական.
հաստատեալ սեամբք եւթնեակ հոգւոյն
մաքրական, որով ազատիմք եւթն չար մա-
հու մեղացն ախտակրական. և արբիմք և լի-
նիմք տաճար սուրբ Երրորդութեան ճաչակ-
մամբ սուրբ մարմնոյ և արեան որդւոյն Ա-
ստուծոյ մաքրական։ Այլ և գրեցաւ սա ձե-
ռամբ Յովհաննիսի բազմաւեղ և ախտար գըր-
չի. և իմ անընդունակ գոլով յարուեստս
գրչութեան. և բազում մեղաց ցնորիւք
պաշարեալ, այլ ըստ կարի մերում զոր պար-
գեւեաց մեզ մարդասէր Հոգին, զոր բազմ-
աշխատասիրեալ եմ 'ի սմա, գրեցի անար-
ժան ձեռամբ իմով յընտիր և խաղդ աւ-
րինակէ. 'ի թուականին Հայոց, ՌԺ· 'ի
յաստուածախնամ գաւառս 'ի Տիւրիկի, 'ի
հրեշտակաբնակ վենաստանս, որ կոչի Կիւր-
ղի վանք։ Ընդ հովանեաւ սուրբ Աստուա-
ծածնին, և Յովհաննէս աւետարանչին, և
սուրբ Լուսաւորչին. նախ պատուեալ ծե-
րունի հաւրս մեր, Յովաննէս եպիսկոպոսի
վերադիտողի այսմ նահանգի, որ այսմ
ամի փոխեցաւ 'ի Քրիստոս։ Արդ աղաչեմ,
ղոսաքդ արբազանից, որք պատահիք այսմ
գանձարանիս եղանակելով, կամ աւրինա-
կելով, կամ տեսանելով միայն՝ յիշեսջիք 'ի
մաքրափայլ աղաւթս ձեր զտատացող բա-

բաստանին պիտճայ Աղուան որ առացաւ զսա իւր յիշատակ ի հալալ արդեանց և իւր ծնաւղացն իտճայ Վարհատին, և մաւրն և իւր կոզակցին Խաթուն փայլային, և որդուցըն Վարհատին, և Գրիգոր սարկաւագին, որ մեզ կու սպասաւորէ, և յոժ աշխատելով և ղիւղիղա կոխելով. Աստուած պինքն ի խոր ծերութիւն հասուցանէ. և դեռաբոյս մանկանն Յակոբին, և դստերացն և ամենայն արեան մերձաւորացն:

«Յիշելով զրան մարգարէին, թէ երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընտանի յԵրուսաղէմ. վասն որոյ ետ գրել զսա և եղ յիշատակ ի դուռն սուրբ Աստուածոյ՝ ի պայծառութիւն եկեղեցացն, ի վայելումն որդւոց իւրոյ դեռաբոյս մանկան Գրիգորի սարկաւագին. զոր ակր Աստուած վայելել տացէ մինչև ի խորին ծերութեան: Վասն որոյ աղաչեմ հայրական գթով, և եղբայրական սիրով, ոգալանացս չմեղադրել: Յովանէս եպիսկոպոսն վախճանեցաւ, և ծեր հարևզանիքն հատան. ժամս ազգսոն խափանեցաւ, Ովանէս արեղան սուտ հայրապետ եղաւ: Մինչև ի վարդավառին փոխն դրեցի. զաբրինակն ափուցս առան. մինչև ի վերջն այլ աբրինակէ դրեցաւ: Անմեղադիր լերուք, սուրբ ընթերցաւղք, սիրտս ի սուգ և ի տրտունութիւն կայր. այլ ասպչեմ, և երես ի գետին դնեմ, ով սուրբ քահանայք, սիրով ուղղել ներուքն և թողութիւն հայցել ի Տեառնէ ինձ բազմամեղ անձինս, գթոտ և ողորմած մուտս: Եւ նա որ առատն է ի տուրս պարգեւաց, տացէ և ձեզ իւրոց անբաւ և բազում բարեացն, ըստ ձերում ախորժականացն, թողութիւն չնորհեսցէ ձերոց մակաւ և յակամայ յանցանացն, և

խոցն բազում և կատաղար ոգեկանացն. վի միաբան վայելեցուք հայրական պարգեւացըն, և ընդ աչմէ կացելոցն արժանաւոր եղիցուք. և խոնարհ Աղուան և իւր ծնաւղքն և կողակիցն և իւր որդիքն, 'ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն: Այլ միշտ, զԱւետարանիկ առիւծադն, և զոսկեանման առիւծադն, որ մեզ 'ի ծառայութիւն կան, և զմեր ուղիս կուղեցին. Աստուած իրենց չնորհ տայ ամէն:

«Եւ ըստ վերոյ ասացելոցս, ես խոնարհ Աղուան ըստացայ զգանձս, և եղի յիշատակ 'ի քաղաքս 'ի Տիւրինկի, 'ի գուռն սուրբ Աստուածնէյն յիշատակ անչինչ հագուց իմոց և ծնաւղաց իմոց, և զարդ մանկանց նորոյ սիոնի. և 'ի տաւնախմբութիւն տաւնից տէրունականաց և 'ի պայծառութիւն սրբոց դասուցն ամէն: Արդ ով' ոք իշխեսցէ հանել զսա զրանէ սուրբ եկեղեցոյս. ոչ առաջնորդ եպիսկոպոս, կամ արեղայ կամ երէց, կամ տանուտէր, կամ իմ ազգէն, կամ այլի, կամ դուստր, կամ քուր, և կամ թէ այլ ոք, ոչ ծախելով ոչ գրաւ տալով, և կամ թէ ուժեք բռչխելով, և կամ թէ այլ ինչ իւիք պատճառանաւք:

«Այս թէ ոք անդգնի, և լրութիւեամբ 'ի գէմ դառնայ այսմ հրամանի, և առնէ զոր ասացաք ոչ առնել, այնպիսին զանէծքըն կայենի և զպատիժն Դաթան և Աբիրոնայ կրեսցէ, զմահ և զրաժին Յուդայի և պիտաչահանուացն առցէ. և զպատկառութիւնն ընդ սատանայի և զկամուրջացն նորա ընկալցի. և աստ մի' հասարակեսցէ զաւուր կենաց իւրոց. այլ խնամոյ պահաւքըն աւ''.»:

1· Ա֊եփեսոն : « Արդ՝ ես նուաստ հողս , Մեսրաւպ ծոյլս , անարժանս , և անարուեստս գրիչս որ գրեցի զաստուածաքարոզ Աւետարանս ՚ի լաւ և յընտիր աւրինակէն : ՚Ի թուին Հայոց ՉԿԵ· ՚ի գիւղս որ կոչի Ա.կն· ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին , և սուրբ Յոհնայ , և սուրբ Գէորգեայ , և այլ ամենայն սրբոցս :

« Արդ աղաչեմ զձեզ , ով մաքուր քահանայք և կրօնաւորք , որք հանդիպիք այս սուրբ և աւետաքարոզ Աւետարանիս , կարդայք՝ աւգտիք կամ աւրինակէք , յիշեցէք սրտի մտաւք ՚ի մաքրափայլ աղաւթքն ձեր , զիցուն և զխոչոր գրչակս զՄեսրաւպ , և յանդգնութեան իմոյ ոչ մեղադրել , զի յաւժարութիւն , և փափաք սրտիս մոտացումն եղեւ ոսկարութեանն այժմ և յաւիտեանս ամէն : Ըստացող բուրաստանիս , յիշատակ է սուրբ Աւետարանս Գրիգոր արեղիս , և իւր ծնողացն Թորոս երիցուն , և մաւրն Մունաթին , եղբաւրքն Մեսրաւպ երիցուն , ... քուրոջն Փաչային , Մաղթուելին՝ իւր որդուն , որ առացաւ զսա Գրիգոր արեղայն Ա.կնցին իւր յիշատակ ՚ի հալալ ընչից իւրոց բազում փափաքանաւք , և յոյժ աշխատանաւք , յիշելով զբան մարգարէին թէ Երանի որ ունիցի զաւակ ՚ի Սիոն և ընտանիս յԵրուսաղէմ . յաւուրս նորոգութեան Խաչատուր եպիսկոպոսին . ով որ զայս Աւետարան գրաւէ կամ ծախէ , կամ ՚ի յայս դրանէս հանէ կամ գրաւէ՝ Առաջնորդ կամ աղգական , նա զմանն Յուդայի առցէ » :

1· Ա֊եփեսոն : « . . . . . Արդ ես նուաստ Զաւրվար երէցս զմտաւ ածի զայս ամենայն , և յիշեցի զայն որ ասէ , թէ

երանի որ ունիցի զաւակ ՚ի Միսիէն և ընտանեակ յերուսաղէմ . և գրեցի զսուրբ և զկենսունակ Աւետարանս ողորմութեամբն Աստուծոյ , յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց , Ստեփաննոս քահանային և Նարմելիքին , և կենակցին իմոյ Մեհրիմելիքին և հոգեւոր մաւրն մեր մղաեսի Մինային , և ամենայն արեան մերձաւորացն . ՚ի վայելումն դեռաբոյս զաւակին իմոյ Յովհաննէս սարկաւագիս . . . . » :

1· Ա֊եփոքեան · Որ է յիշատակ տէր Ներսէս եպիսկոպոսին , և գրեցաւ ՚ի Թուականութեան Հայոց , ՋԻԹ· ՚ի քաղաքիս Տիւրիկոյ , ընդ հովանեաւ սուրբ Սարգսի տաճարիս . արդ՝ աղաչեմք զձեզ ով մանկունք նոր Միութիւնի , որք հանդիպիք այս սուրբ և աւետաքարոզ Աւետարանիս , կարդայք և աւկտիք և աւրինակէք ՚ի սմանէ , յիշեցէք արտի մըտաւք ՚ի մաքրափայլ աղաւթս ձեր զՋաւրվար գրիչս և զվարպետն իմ զտէր Գրիգոր Զաղրոցն . այլ և յիշեսջիք զբազմերախտաւորն ՚ի վերայ մեր՝ զվարպետ Սամուէլն . այլ և յիշեսջիք զհոգեւորն մեր ծնաւղ , որ երբեմն պնդութեամբ և պՏնաւրինականացն զինչ որ խարճ եղաւ . և Քրիստոս Աստուած զձեզ յերկնից արքայութիւնն յիշէ ամէն· Այլ յիշեսջիք զպարոն Մելքիսեդն որ զաւրինակն չնորհեց : Այլ և յիշեսջիք զաստղնորդք գաւառիս , զտէր Ստեփաննոս և զկարապետ վարդապետն , որ մեզ աւգնական է յամենայն պետս հոգեւոր և մարմնաւոր » :

1· Մ֊շոց · ՚ի Ս· Լուսաւորչի վանք : « . . . . Աւարտեցաւ Մաշտոցս . . . . յամի ՋԺԵ· ընդ հովանեաւ Ս· Աստուածածնի , և

Ս. Գէորգայ պատրաստարին ՝ի . . . (եղծեալ էր մրով) ընդ երկայն ուսուրս արասցէ զնա Քրիստոս Աստուած ամէն : Եւ յեպիսկոպոսութեան այս նահանգի ոչխր Ստեփաննոս վարդապետի , և ոչխր Յովաննէս եպիսկոպոսի . ծագկեցուսցէ զնոսա Տէր Աստուած ՝ի վերայ ծագկեալ գաւազանի իւրեանց . եղիւ լրումն սուրբ Մաշտոցիս ձեռամբ սուսանուն քահանայի Հէրապետի : Ջիչեցէք զառաջնոյ սուրբ գրոյս պարեպաշտս և զերկիւղած կինն Սալխուկ խաթունն , ՝ի բարի արիւտոյն չաւաւեղ . . . յիշատակ իւր և ծնաւղաց նորին Ստեփանոսին և Գուլիզարին , և Ջոջ պապուն Ծերուն ապին և մաճուն Հէր—Մկրտչին . . . յիշեցէք զՍալխուկ խաթունն և զայրն իւր զՉանի բէկին , և զաւական իւրեանց զպարոն Գորգն , Մահտն , Շահնշահն , Մկրտչն , Ռաւէն , Նուրայն , Աղուն . . . զխաւջայ Մահտեն , և զծնողան իւրեանց զՆիկողայոն և զՓիրուզբախտն , և զԲէկի խաթունն , և ընդեռաթոյս զաւակին իւրեանց զԴարսիանն . . . զՉանի բէկի ծնողն զՄարգարէն և զԹանգխաթունն , Աստուած ողորմեայ արժան արարէք . . . և զքաւերան Սալխուկ խաթունին ընդ Հասէն , զԱպաղային և զԳուլնարն , զԲէկին , զՇայմելիքն . . . Հէրմելիքն յիշեցէք առաջի անմահ Գառին Աստուծոյ :

« . . . Եւ զԳուլմելիքն , զԲուսէրի տան մարդն յիշեցէք ՝ի Քրիստոս , որ ՝ի պէրքս ՝ի տեռ եւ նկ , և Աստուած ողորմի ասացէք նմա . Աստուած ձեզ ողորմեսցի ամէն . եղիցի եւ պիցի : (այլ գրով) Այս գիրքս . . . եղեգնաձոր Չքանչարին տղայն Յովաննէս գնեց և երեսս յիշատակ իւր հոգւոյն և իւր կողակցին Խանդուտին . . . » :

1. Աբեղան : «ի թվին ՉՀԹ. հայրապետութեան տէր Գրիգորի գրեցաւ տուրբ Աւետարանս երկիրս Գեղամայ՝ ի տուրբ Ուխտս որ կոչի Հայրոյ Անան՝ ի գառն և նեղ ժամանակի . եկն երկիրս մեր Տաճիկ մի՝ հարկ խնդրէր ոչ համարուաք այլ թաւարաւք , որ հակ բեռին . . . » :

1. Շարկան մազապահ , պահաս , ասնացուցիւ հանդերձ : « . . . . Ընդունակատուս գրեալ ձեռամբ տէր Եսայեայ՝ ի յերկիրն Կեսարիոյ՝ ի գիւղն Տաւմարցոյ . ՝ի թաւականին Հայոց ՉԼԶ. կրկնակի քառից և միակ երից . . ՝ի թագաւորութեան Սուլթան Խալրայիմին , և կաթողիկոս Հայոց Փիլիպոսի » :

1. Մաշտոց : « . . . Սարդիս ծերունի պատուական քահանայ՝ ի տուրբ Ուխտն Հաւոյթաւ՝ զիմուղիմն պատրաստեաց և ես անյիշելի գաւխիթ գրեցի զդիպքս . . . և ընծայեցաք զսա՝ ի տուրբ ուխտս Հաւոյթաւ՝ ի գառն տուրբկաթողիկէին և տուրբ Աստուածածնին և տուրբ Յարութեան և ամենազաւր տուրբ Ամենափրկչին և այլ սրբոց : Եւ եղեւ գրչութիւն սորա՝ ի նախագրական տուրբ Ուխտն՝ ի մեծն Այրի վանս , և կատարուաւն գրոցս Աստուածապահ գիւղաքաղաքիս Գառնի , առ գրան տուրբ և հրաշափառ կաթուղիկէիս և այլ տուրբ եկեղեցեացս . ՝ի թվին. ՊՀԲ. ՝ի հայրապետութեան տեառն Գաւրոնի Գառնեցոյ սրբազան կաթուղիկոսի , և ՝ի վերադիտողութեան տուրբ Ուխտիս Հաւոյթաւ՝ հեզահոգի և սրբասէր և մաքրամիտ և մեծապէպ արհիապատիւ եպիսկոպոսի տէր Զաքարիայ . . . : Յիշեցէք ՝ի տուրբ պատարագն

զՍարգիս քահանայն և զծնողն նորա զՄեհեաեանն և զԱստղիկն . և զբազմամեղ սուտ անուն քահանայ զԴաւիթ գրիչս և զծնողսն իմ . . . » :

— . կային նաև չատ Մաչառց , Ճաչոց , Գանձարան , Ա.ետարան , Եա , մեռեալ և փոեալ վիճակի մէջ անխնամ ճգուած :

— . Վանքիս տաճարի մէջ Ս. Մասունքներ պահպանելու արծաթէ մեծ տուփի մը վրայէն օրինակեցի հետեւեալը :

« Ցամի փրկչին 1021. Հայոց թվին ՆՀ. ամին Աստուածընկալ սուրբ Նշանս այս ՚ի ժամանակս ցունաց Վասպի կայսերն կոստանդեայ Դաւիթ որդին Սենեքերիմայ հրամանաւ հօրն բազում ընծայիւք գնաց առ Վասիլ կայսրն հանդերձ ծառայիւք , քահանայիւք և Ուչտունեաց Եպիշէ եպիսկոպոսիւ . թէ ըզխորհուրդ Սենեքերիմ արքային ծանուցանեն առ կայսրն . յորժամ հասին ՚ի մեծն Պոլիս , կայսրն այն բազում սիրով ընկալաւ զնոսա և կատարեաց զխնդիր Սենեքերիմ արքային և ետ նմա հաստատուն նամակաւ զամենայն երկիրն Սեբաստիոյ հանդերձ ամենայն գաւառօք իւրովք մինչև ՚ի գետն Եփրատայ . իսկ յորժամ եկին Դաւիթ առ հայր իւր Սենեքերիմ , ոչ ոսկաւ ուրախութիւն արար արքային . իսկոյն և առ զսուրբ նշանն Վաթագայ և ընդ նմին բազում գործիքն Քրիստոսի և մասունք սրբոց՝ եկին եհաս ՚ի Սեբաստիա , զսուրբ Նշանն կանգնեաց անդ , և իշխանացն նորին կիւրեղ անուն իշխան միոյն գաւառն Ջիւրիկու յանուն Ս. Լուսա-

ւորչի վանք մի չինեցոյց, որոյ մականուն կո-
չի կիւրղի անապատ. սուրբ Աստուածածնայ
և սուրբ Նշան եկեղեցիքն մերձ նորին նա
չինեաց. աստանօր եդ զսուրբ Նշանն Աստ-
ուածընկալ: Նորոգեցաւ մաքուր արծա-
թիւք և ոսկեզօծիւ նոյն դիտիւ, չորս կող-
մանց մասունքն ևս ինքն յիշատակ եթող
վասն իւր հոգւոյն, բաց 'ի յաշխատութենէն
և տուեցելոյն յիւրմէ. նաևս որ էր Ղազա-
րոս աբեղայն պատճառ դորա որ 'ի յԱկնա
երկրէն մինչև ցժողովուրդ տեզւոյս որ տը-
ւեալ են դմա աշխատող ոսկերիչ վարպետքն
և Միաբանքս որ տուեալ ունին՝ վարձն 'ի
Քրիստոսէ ընկալնուն. յիշատակն արդա-
րոց օրհնութեամբ եղիցի: Վերանորոգեցաւ
ՌՄԿԳ և յունիս ժ. օրն »:

ԳԱՍՄԱՆ ԵՒ ԲԵՆԿԱՑ

Յունիս 5: Տիւրիկէն կը մեկնինք: Ան-
միջապէս կ'սկսի զառ'ի վեր, քարուտ նեղ ու-
ղին, հազիւ ձիու մը սմբակներ կրնան բռռ-
նել, դահավէժ է, և վիհերով սարսափա-
տես: Ժամէ մը կը հասնինք վանք դեղ
Գըզըլպաշի: Դարձեալ ել, բարձր ել, միշտ
ել, քար և վախ չատ. կէօղ դաղին ենք, որ
հռչակաւոր է եղեւնադործաց չարիքներով.
սարսռեցուցիչ ցուրտ կ'զգանք, ձիւներու
վրայէն կ'անցնինք. հովիւք, գոմք, հօտք
զարդարած են լերանս արօտաւոր վայրեր:
Բոլոր մեր շուրջ երեւցած լեռները մետաղի
կերպարանք կը ցուցնեն. կ'ըսուէր թէ մաղ-

նիսի, երկաթի, պղնձի և արծաթի հանքեր-
րով լի են. արդարեւ տեղ տեղ ալ կը պա-
տահէ՛ք բովերու, որ երբեմն բանած եղեր
են, իսկ այժմ խափանեալ։ Վերան գտա-
թէն Ջորեպան Հիւսէին կը ցուցնէ մեզ Գաս-
տան, Զնտրա և Բենկայ մեծամեծ և գեղե-
ցիկ գեղեր։ Իրենց ձիւնապատ ճակատները
վսեմափառ տեսլեամբ մեզ հանդէպ կ՛ամ-
բառնան Մնձուր լերինք, այն է Տաւրիկ կամ
Տէրսիմի մէկ կտորը. և վերջապէս կոյտ կոյտ
բարձրաբերձ սարեր ամենայն ուրեք, որ կը
ներկայացնեն Տաւրոսը։ Ո՛րչափ չար էր մեր
ելքը, դրեթէ նոյնչափ չար էր էջքը։ Հինգ
ժամէն իջանք Գասման գեղը։ Գասմանայ
դիրքն ու շէնքը խիստ վայելուչ և չքեղ է,
իր անունը Տիբրիկի աններկն առեալ ձեւաւոր.
ծառազարդ է և ջրաւէտ։ Այս գեղը հայրե-
նիք է Ներսոսեանցի առհասին. Ցակոբ է-
ֆէնտիի անուան յիշատակարանը տեսանք
եկեղեցւոյ դրան վրայ, առատ ծախքով շին-
ուած էր, որոյ կից կար և վարժարանի մը
շէնք, բայց դուռը փակ։ Գեղիս բնակիչք
Հայ են, քանի մը տուն Թուրք ալ կայ. կեն-
ցաղավարութիւնն քաղաքացւոց պէս է. թէ-
պէտ հողագործ ալ են, բայց ընդհանրապէս
Պօլիս հայի մտաւոր ունին, անոնցմով է ի-
րենց չահ. և դրեթէ ամեն տուն մարդ
կայ Պօլիս։ Իջեւանեցանք ահեր Գէորգ քա-
հանայի տունը, ուր երկու ժամ հանգչելէն
և գեղը շրջելէն գիշեր մեկնեցանք։ Օրը տա-

բաժանեալ է , կը չտապինք Բեննկայ հասնիլ . մեր ուղին դիւրէ և զուարճալի . ընտիր ընտիր արտեր , ծառեր , ջրեր , և գեղացին ու գեղուհին տարածեալ են գաշտը . հնձոց վաստակի օրերն են , ջրհիններ օրայ կը կրեն , կանայք և աղջիկներ դարի կը քաղեն , մանուկները ծառոց հով և ջրոց ափը նոզերու և խոտերու վրայ պառկած մրջիւններու բոյները կը խառնեն , որը կ'երգէ , որն ալ արտուտի եռեւէն կը վազէ . թվոց միջէն խօսնակ թռչունք ներդաշնակ կը նուագեն խոտհատուկ ճոպուռին ձայն ձը՛ռ ձը՛ռ՝ լսուցեր է գաշտը , և երամ երամ հաւքեր ելեւէջ կ'ընեն քաղուած արտերու մէջը . արեգակն իւր ճառագայթներ կ'առնիմովէ : Կը գտնուիմ Զմարա երթալէ , ուր շատ Հայեր կան , և լաւ բարեկամներ : Ահա կը մօտինք Բ. Նկայի ծառաստանեայց , ուր լի են բազմահուռն թթենիք և այլ մրգաբեր տունկեր : Բեռնարձակ ուղտուց մեծ կարաւանը Մալաթիա կ'երթայ : Կայտառ պատանեակք անոյշ ձայնով խազ կը կանչեն ծառոց մէջ հարսունք և երիտասարդք երամ երամ Բեննկայ կը դառնան . գերեզմանատան կշտէն զառիվայր կ'իջնանք , ուր ընտիր տապանաքարեր կան տաշածոյ : Ժամը 12 անցեր էր , արեւուն վերջնալոյս հպիւ կը լուսաւորէ մեր ուղին , և ահա Եփրատայ ափին ենք . . . . Եփրա՛տ , ո՛վ Եփրատ . . . Եփրա՛տդ իմ Եփրատ . . . ո՛վ իմ պաշտելի ջուր . . . ուժգին

կը յուզես զիս . դեռ կը բարախի սիրտս , կը թրթռան չրթունքս , կը դողդողան մատունքը . չեմ կարող նկարագրել զքեզ և ի քեզ զգացածներս . . . . :

Անցանք կամուրջէն , քարերու մէջ , նեղ նեղ , ոլոր մոլոր , վեր ել փողոցներէն . և իջևանեցանք տէր Յակոբ քահանայի տունը , ուր անմիջապէս մեզ ի տես եկան բնակչաց երեւելիներէն , ուսեալ երիտասարդներէն , և վարժապետներ :

Տէր Յակոբ՝ դեռ երիտասարդ , բայց ուսեալ և բարեբարոյ քահանայ մ'է . ինչպէս իւր անունն էր , նոյնպէս և իւր հիւրասիրութիւնը հաւասար նահապետական էր :

Հետեւեալ առաւօտը եկեղեցւոյ սեղանակը ժողովեցան Բեննկայի ազգայինները , որոնք ամենքն ալ դրեթէ Պօլսոյ մէջ ծանօթ անձինքներ էին . տեսակցութիւնք և հարց ու պատասխանիք իրենց ու մեր կողմէն փոխանակուեցան . պաշտօնս լրացընելէն զկնի՝ երկսեռ վարժարանը այցելեցինք , զորս գոհ աչօք տեսայ , բայց դիտեցի որ կրնային աւելի լաւ վիճակի մը վերածել :

Կարի ստիպումներ ըրին , ես ալ կը փափաքէի քանի մը օր հոն անցուներ , բայց պաշտօնս յառաջ կը մղէր զիս : Բեննկայի դիրքը խիստ տուր է , ապաստանարան մ'է կամ ամրոց մը փակած ապառաժներուն , նեղ և խոր կիրճեր ունի յայսկոյս և յայնկոյս , ուստի մեծն Եփրատէս կծկելով՝ սըղ-

մուելով պատուընթաց կ'անցնի. կամուրջը՝ որ կը կապէ դիմացի դաշտը գեղին հետ, ամեն երեկոյ դռներով կը փակուի, և եթէ թշնամի ունենան՝ կամուրջը կը բառնան, որով անանցանելի կը լինի գետն, քանզի կրնան միայն քար գլորելով դիակնացնել և ջրոյն հոսանաց տալ յարձակողները: Բնակացւոց մեծն ու փոքր պէնքեր ունին. ամեն տեղեակն մէկ կողմն գիրք չարած են, երկու կողմն պէնքեր, մէկ կողմն ալ փորի պատքեր: Ընտիր նժոյգներ ունին. քաջավարժ հեծեալներ են, և արագոտն գիտեն վազել քարեր ու լեռները: Ովաճըղի, կամ որ նոյն է՝ Դէրսիմի Քրդերը այս կողմի Հայ ու Թուրք գեղացիներէն տուրքեր կ'առնուն, կը կողոպտեն, կ'ապաննեն եւ. միայն Բնակացիք իրենց քաջութեամբ ոչ միայն ազատ կ'ապրին, այլ և կը սարսափեցնեն Քրդերը. դեռ Ովաճըգցի մը ոտք կոխած չէ Բնակայ: Թէպէտ երբեմն երբեմն որսի, ճանապարհի և դաշտի մէջ կը պատահին իրարու, բայց հաւասար քաջութեամբ կը կշռեն մէկզմէկ, և եթէ դէպ լինի, որ դարանակալութեամբ Բնակացի Հայ մը կողոպտեն, կամ վիրաւորեն, կամ ապաննեն Քրդերը, քանի մը պատիկ պիտի տուժեն: Մէկ խօսքով՝ Բնակացի Հայեր՝ հարուստ, քաղաքակիրթ և քաջարի են. և եթէ իրարու հետ միութիւն պահեն, իրար սիրեն ու յարգեն, անհամեմատ են բոլոր Հայաստանի Հայոց մէջ, որոց օրինակ

ալ կրնան լինիլ։ Գեղին ստորոտը քանի մը տուն Թուրքեր կը բնակին՝ գատ, և կ՚ապրին Հայոց չնորհիւ։ Թրքաց թաղը կ՚անուանուի Ռաբաթ։ Իրօք Հռաբաթ եղած է կ՚ըսուէր գեղիս հին անունը, զոր Սենեքերիմայ Բենիկ իշխանն նորոգեր, և անոր անուամբ ըսուեր է Բենիկայ կամ Բինիկայ։

Երեք եկեղեցի ունին, Հրեշտակապետ, Աստուածածին, և Երեք մանկունք։ Վարժարան 2. Մեսրոբեան և Ղուկեան։ Ուսանող 120 մանկունք, 60 աղջկունք։

Գեղի շուրջն են Ս. Թագաւոր, Ս. Նիկողոս, Ս. Խաչ, Ս. Յակոբ, և Յովհաննէս եկեղեցեաց աւերակք։

Բենիկայ՝ Տիւրիկու գաւառապետութեան, Սեբաստոյ վիլայէթին վերջինն է։

Յուլիս 6։ ժամը 6 էր մեկնեցանք Բենիկայէն. քահանայք և իշխանք յուղարկաւոր եղան, և երկու նորահաս առոյգ երիտասարդք, Պօղոս Մեծատուրեան և Նազարէթ Ալանեան՝ տոհմականութեամբ, կրթութեամբ, սրտի բարութեամբ և արիութեամբ հաւատար գերապանց, Թուան իրենց կրակոտ ձիոց քամակը, սարսափք և զէնքերով շողշողուն, հեծեալք և նժոյգք մէկ քան զմէկ աչքոյժ. ձիոց վրիւնջիւններով, հրապինուց պայթիւններով ու չառաչներով Թուանք լեռնագլուխը. կապան է մեր անցքը. վարը գահավէժ ձորեր, և հեռուանց Եփրատն կը պտըտի, որոյ միւս երեսն կը նշմարուի Արա-

կայ կամ Ներեկայ լեռն, գեղն, ու վանքին դիրքը. Ապրանք կամ Ապարանք գեղ, և ուրիշ գեղեցիկ գեղեր Թրքաց ու Քրդաց. սոյն կողին վրայ է նաև Ներվէր գեղ Հաւոց, եւ Մեր միւս կողմն են Բենկայի այգեստանք, և խումբ մը աշխատասէրներ կը տեսնանք, որ նոր ադրիւրի մը ջուրը գեղը տանելու ճամբան կը չինեն. ասոր համար յատուկ կոտակ ըրած էր 15000 ղրշ. հանդուցեալ Մ. Պալտասար Չայեան, 1000 քօնսօլիտ ալ եկեղեցեաց, 500 քօնսօլիտ վարժարանին, եւ Ճամբու մը չափ յառաջացած էինք, խնդրեցինք և օրհնութեամբ յետս դարձուցինք մեր քալարի բարեկամները. մեզ հետ մնացին Գէորգ քալայաղթ սպասաւորէնն, Նիկողոս տուրհանդակն, և մեր ոստիկանն: Գէորգն ու Նիկողոս կը պատմեն Բենկացւոց և Ովահըզցւոց կռիւները: Հոս է, կ'ըսէ Գէորգ, ուր եղբայրս որսի երթած ժամանակ Քրդերը դաւով սպաննեցին: Քրդերու բազմութիւն մը կարաւանով կը պատահին մեզ, մենք անոնցմէ և անոնք մեզմէ կը զգուշանանք. տեղերը արթուն կը հոտին. և ահա ժխոր մը տեղի ունեցաւ, Քրդերը մէկանց բարեւի կայնեցան, ամենախոնարհ յարգանօք բարեւեցին մեզ. Գէորգին կը հարցընեն թէ՝ Սա՞ է (պիս ցոյց տալով) Պօլսէն եկող քննիչը, որ Սեւաստն էր: Հասանք Սօսիք ըսուած գուարճալի տեղը, ուր հովերը, պաղ աղբիւրներ և բազմա-

թիւ ուռենիներ կան. Բենկացւոց տուրքաց մակաղատեղի է: Աւեր եկեղեցի մը, որոյ որմոց շուքը նշները հանդչած են: Ինչ մը հանդստացանք մենք ալ, և դարձեալ ճամրիվեր կը բարձրանանք. քա՛ր, և չարունակ քա՛ր: Ցորս ժամէն գիւղի կը հասնինք քանի մը թուրք տեղեր՝ ձորերու մէջ ցուարճալի դիրքերով և ծառաստաններով: Հարանիք կայ: Հայ—Հռոմի գեղի մը քովէն անցնելով՝ ձորակ մը կը բացուի առջեւնիս անդընդային խորութեամբ. պտուտաւոր և խանդարեալ է ուղին, անդխաւոր և նեղ, ժայռերով չրջապատուած, ոչ մարդ և ոչ ձի կրնայ ուղղաձիգ կանգնիլ. ձորակին խոր յատակը քանի մը ջաղացներ կան, վտակ մը կը հոսի, և մեծ ջրոյ ակն մի կայ առնորակ, դալար ուռենիք միակ զարդ են այս ամայի վայրին. տեղ տեղ բարձրացած են՝ կարծես մինչև երկինք՝ լերկ ու մոդ քարինք. տեղ մը չկայ այնքան զարհուրանք ազդող մարդու մը որչափ հոս, ուր արեւն անգամ չհամարձակիր իւր ճառագայթները տարածել: Դէլիքլի—դաչն ենք, կամ Ծակ—քար, որ կամարաձեւ դրան նման բացուած է և այդ ծակի միջէն կ'անցնի ուղեւորը. երկինք հազիւ ժապաւէնի մը չափ կը տեսնուի. կ'աճապարենք փախչիլ ելնել այս անդունդէն, ծննկակոտոր և չնչասպառ եղած: Աւոր գազգաթէն կը տեսնանք Հայ—հռոմից վանքը կամ վանք գեղ, ապա Ձորակ, վերջապէս

չքեղաչէն Ակն, որոյ ոտից տակէն մահեկաձեւ կը ձգի Եփրատէսն ահեղ և ծանրացաւումն երեսօք։

ԱԿՆ, կամ ԱԿՆԱՑ ՔԱՂԱՔ

Միթէ կ'արժե՞ս դու, մեծահամբաւ քաղաքդ, այսքան նեղութիւններ կրել տալ քեզ այցելու եկողին։ Արդարև երբ ճընշուած՝ քարերէդ, խոտերէդ, վախերէդ, քըրտնաթաթախ և արիւնաշաղախ ելեւէջներէդ, յանկարծ կը տեսնես Ակն՝ Զորակի դափաթէն, այնքան չքեղ չէնքերով և գեղեցկազարդ ծառաւուռներով, կարծես արքայութիւն մի է այն. իջնալ պէտք է մինչև կիրճին խոր յատակը, և երկրպագելով Եփրատի թագաւորութեան պատուանդանին, ապա անցնիլ կամուրջով մը, յայնժամ կը տեսնես թէ այդ արքայութեան հանգիստ կարծած քաղաքդ՝ քանի՛ դժուարին և անելանելի առասպար մ'է, ինչպէս մարդ պատէն կամ պարսպէն 'ի վեր ընթանայ. քարերու մէջ ենք, քար կը կոխենք, քարերն 'ի վեր կ'ելնենք, եթէ մխիթարութիւն մը կայ՝ քարշալար տանդուխներն են, խոխոջացող առատ ջրեր, և ծառոց ու բուսոց, կանանչ տաղարթներ, որ տարածուելով փողոցներու պատերէն դուրս՝ գեղեցկութիւն մը սփռած են։ Իջեւանեցանք վերին թաղի Ս. Աստուածածնին եկեղեցւոյ Առաջնորդարանը, Ակըն-

ցուց արժանաւոր չէնք մը, ընդարձակ և փառաւոր։

Քաղաքի առաջաւոր ազգայինները, ժողովքներ, խորհուրդներ, քահանայք, ուսումնականք դաս դաս այցելեցին չնորհքով և կարգով։ Ութն օր մնացինք Ակն. մեծ դիւրութեամբ կատարեցինք մեր պաշտօնը. ժողովքներ և առեւնագրութիւններ բաւական կանոնաւոր էին։ Առաջնորդ չունէին, բայց պէտք ալ չունէին։ Արդէն իրենք իրենց գործեր կրնային վարել, թէմն ալ փոքրիկ էր։ Ը պահէր իրենց քահանայ, և վարժարանները հոգալու և յառաջադէմ վիճակի մէջ դնելու հոգը. քիչ մ'ալ «ես ես» էին. սակայն մեր քանի մը դիտողութիւնները փորձով ցոյց տուին թէ դիւրութեամբ կը հաւանէին ազգի օգտին։ Չէինք կրնար աւելի ալ մեղադրել, վասն զի Ակնայ յետին Հայն անգամ իր ունեցած չունեցածը գօնսօլիտի, բաղդի թղթոյ փոխարինած էր, և ամենուն յայտնի է թէ այս բաղդն ինչ դժբաղդութիւններ բերաւ իրեն յուսացողաց գլխուն. եկեղեցեաց և վարժարանաց գումարներն ալ մի և նոյն հեղեղը տարած էր։ Արդէն Ակն ոչ առեւտուր և ոչ երկրագործութիւն ունի, ասոր համար բոլոր Ակնածիններն սփռեալ են այլ և այլ քաղաքներ ու աշխարհները, շատերը անդարձ գաղթականութեամբ. բայց շատերուն ալ մեծածախ տուներ և Ակնայ

ջուրն ու օդը չեն ձգած մեկնիլ· ուր որ չրջեցայ՝ Ակնցիներու պատահեցայ : Առածը կ'ըսէ թէ՝ Ակնցու երկու ոտքէն կաղն միւնչև Հնդկաստանը հասեր է, մէկ ոտքէն՝ միւնչև Զինումաչին » : Ցիշեցէք ծիծեռնակը, որ իր հոյակապ բոյնը կը չինէ քարի մը կողմ, և ինքն արագ արագ կը սլանայ յայս և յայնկոյս, որդն ու կուտ կը կրէ իւր ձագուց· և ահա նոյն է Ակնցին, չարունակ կ'երթայ կու գայ, կը բերէ, կ'սպառէ, և նորէն կը վերադառնայ :

Ակնցի Հայք՝ աւանդութեամբ գիրենք կը հաւարին Անուշ գաղթական· իսկ Ապուշ չեխն ու կաւիրկապ որ արուարձան են Ակնայ, Վատպուրականի գաղթական : Թէ՛ ան՝ և թէ՛ անոնք՝ նախարատոհմ կը կարծեն գիրենք· և իրենց հետ եկող ժողովուրդները մերձակայ գիւղերու մէջ բնակած : Այսօր անկարեւոր պարծանք մ'է տոհմականութիւն· անշուշտ իրենք ալ հասկըցած են թէ՝ անձանց արժանիքն է միայն ճշմարիտ ազնուականութիւն : Այլ սակայն պէտք չէ մոռնալ թէ՝ Ակն՝ մեծ Հայերու հայրենիք է եղած· դեռ դարուս սկիզբները թէ՛ Պօլսոյ մէջ և թէ՛ գաւառները մեծամեծ ամիրաներ վոյլեցան, որք օգուտ և պատիւ բերած են ազգին իրենց պահապանութեամբ հանդերձ, որ ժամանակի կենցաղավարութեան պատուէրն էր և ազիտութեան արդիւնք· ո՛ւր են իրենց ժառանգութիւնները և ժառանգները··· :

Ա.կնայ, Ա.պուշեխի և կամրկապայ Հայոց ճոխ և շռայլ կեանքը, ծանր և մեծաբարոյ վարմունքներ, ճարտար շահագիտութիւնը, տանց և կահ կարասեաց մաքրութիւն ու չքեղութիւն, ծառայից բազմութիւն, տիկնանց պերճ զգեստներ և ոսկեղէն զարդեր, սառնց ֆէրաճէն, լայն ու երկայն թեւերով կապայ, թանկագին մուշտակին, զլխոց սպիտակ շղարշն, գագաթնակալ թասըն, երեանոց, և գլխէն՝ի վար վարսերուն խառն փոուած ներքեվ ծոպեր, արծաթէ կոճակներ, և պարանոցն ու բազուկները պճնող մարգարիտներն, ոսկիներն և բուսաները, ծանրագէմ ու ակնածելի խոշոռաններըը, եւ. եւ. կը ցուցնեն թէ հասարակ մարդիկ և ժամանակիս որդիք չեն, բայց ա՛լ հարկ է որ իրենք պիրենք ժամանակիս յատմարցընեն:

Նայելով Ա.կնայ կիրճին և տեղւոյն ամրութեան, անշուշտ ընտրանօք չինած են հոս իրենց բնակարանները. որտորդներէ հաստածուած թուչնոց նման՝ անմերձենալի և անառիկ քարերուն ապաստանած, ուր արեւն և երկինք անդամ իրենց երեսը հազիւ կը ցուցընեն. և ո՛ր կողմէ դառնաս՝ բարձրաբերձ պորչատոյն քարեր կը վիակեն աչքէդ հորիզոնը: կատարեալ և անըմբռներելի աքսորանք մ՚է ընդարձակ հովիտներու և մեծ երկնքի վարժողի մը այս տեղ բնակիլ: վա՛յ էր ինձ, որ վանայ այդ եատանին, ծովին,

վարագայ հովտին, Մշոյ մեծ դաշտին, Քաղկեդոնի չրջակայքին և Մարմարային գեղատիպ և մեծամասնալ երեւոյթներուն վարժուած, կը ճնշուէի այս ժայռերուն մէջ, Քաղաքիս անուն Ակն, զոր Էկին ալ կ'անուանեն, այլ և այլ մեկնութիւններ կ'ուտան, բայց ատոնցն այն կ'երեւի, թէ իր անուն առած է ջրոյ մեծ Ակնէն, որ քաղաքի վերէն խիստ առատութեամբ կը բղխի քարուտ ապառանէ մը. և ջաղացքներ բանեցընելով, ու բոլոր քաղաքի փողոցներ, և արուեստները բաշխուելով, տուներուն ոռոգելով, դեռ մեծ մասն կը թափի Եփրատ: Ինչ գործարաններ չեն շինուիր այս ջրոյն վրայ և նոյն իսկ Եփրատին վրայ: Եփրատ իր օգուտները ունի, ձուկ կ'ընծայէ: իր ափերով կը զատարճացնէ, իր չալակով կը բերէ չէնքի և վառելու փայտեր, քալակով ալ ցորեն և այլ պէտքերը:

Գեղեցիկ է Արիգի թաղը՝ Ակնայ հարաւը. կից է Արիգին՝ Ապուշեհան, Կարուշլան և Կամրկապան, որք կրնան մէկ մէկ թաղ անուիլ. ամենքն ալ ծառաղարդ, մրգաբեր. Կամրկապան այգիներ ալ ունի, ամենքն ալ ջրաւէտ: Անուանի է սպիտակ թուզի համով և առատութեամբ: Կը նայիս ապառանի մը կամ չոխկ աղբիւրի մը քով, վերէն վարպէնեւաց, խանձարեղէց, ծիրանի, սալորի, տանձի, բալի ևն, ծառերը՝ նախ ծաղիկներով ապա պտուղներով ծանրացած ճղերը ծառած

կը ծառանան գլխուդ վերեւ, քովերդ ալ տնկած են մեխակ, մանուշակ և այլ հոտաւէտ բոյսեր ու զանազան համեմները, մանաւանդ Ակնայ սուլթան խոշորափառ և բոսորագոյն, կծու և գրգռիչ կարմիր պղպեղը, կեր, արբ, զուարճացիր, և ահա ամբողջ անձդ և չուրջդ կը փուռին ծաղկունք ծառոց, և չոր թուխ՝ աւազանին կամ բաժակիդ մէջ, սեղանոյն ու գազաթանդ վրայ Թրըխկ կ'իյնայ ծիրանի, խնծորի, եւ. կաթուկ մը, կանանչ ոստերը և հասուն պըտուղներ սիրող թռչուններ քեզ նուագաւոր և պարսյած: Ապիէն անդիէն ալ քաղցր և բարձր ձայնիւ պատանեկաց ու երիտասարդաց խաղ կանչելուն արձագանքները կը բերուն քեզ քարեր:

Ակնայ քաղաքը երկու եկեղեցի կայ Հայոց, Ս Աստուածածին, և Ս. Գէորգ: Ս. Գէորգ նոր չինուած էր հոյակապ և մեծածախս, քարուկիր, գմբէթաւոր, բայց իւր քովի վարժարանը հին և անկանոն, իսկ վերին թաղի վարժարանը՝ բաւական աղէկ: Վերադարձիս ուրախութեամբ տեսայ որ երկու թաղ միանալով՝ իրենց վարժարանները ծաղկոցի վերածեր էին, և մէկ ուսումնարան մը բարձր ուսմանց համար սահմաներ էին արժանաւոր ուսուցիչներով. բացման հանդիսին ներկայ էի: Կը մնայ իրենց աւելի կարևոր պակաս մը, այն է աղջկանց վարժարան, որոյ յաջողութեան յուսով կը մնամ:

ԱՊՈՒՉԵԼՈ · եկեղեցի 1· Ս· Նշան · վառաչէն . իսկ իւր վարագայ վարժարանը՝ խարխալուած և յետին աստիճան անկարգ · ասիսո՛ս գրատան և գրքերուն , ասիսո՛ս այս գեղին ու վարժարանի նախկին հաւրաւոյն :

ԿԱՄՐԿԱՊ · եկեղեցի 2· Ս· Աստուածածին և Ս· Գէորգ : Վարժարանը երկսեռ՝ Աբամեան և Սանդխտեան · ազէկ ուսուցիչներ ունէին , ապահով եկամուտներ , հետեւաբար և յառաջադէմ աշակերտներ · երկու քահանաներն ալ ուսեալ · Արժ· տէր կարապետ Երէցեանը՝ առաջնորդական Տեղապահ էր Ակնայ :

ԿԱՐՈՒՇԼԱՑ · եկեղեցի 1· Ս· Աստուածածին , և մէկ Ծաղկոց՝ խեղճ վիճակի մէջ : Կարուշլայի մէկ կողմն ժայռի մը վրակած է Ս· Կոզմոսի և Դամիանոսի մատուռն , որ ընդհանուր ուխտատեղի է , երեք փոքրիկ խորանով , տանիքի վրան ալ ունի երեք կիսախոտրան , ուր պատարագ կը մատուցուին · մատրան դրան դէմ երկու սենեակ կայ Մատաղատուն անունով՝ ուխտաւորաց համար · խաչքարեր և ծառերը կը զարդարեն այս վայրը , որ կարուշլացւոց գերեզմանատունն է , և քանի մը Առաջնորդաց շիրիմներ ալ կան : Այս մատրան արդի իւնքը կարուշլացիք իրենց սեպհականած են , իրրև թէ իրենց վարձք բերող կալուածը մը ինէր , ուր խիստ յարմար է կեղրոնական ուսումնարան մը հինուիլ : Եփրատեան այս մատրան տակի ժայռը

համբուրելով՝ գլուխը կը դարձնէ յարեւելս։

Ապուչեխին մօտ է Ջերաղ Թաղ, և Մայր-ընդուրիկ, զոր իբրև ուղղելով կ՚ըսեն Մայր-ընդունակ. Ադրանիերու Աստուածածին, Ս. Մինաս, Ս. Թորոս, Ս. Սահակ, լեռան Ս. Թորոս։ Կաթրկապայ մօտ է Ս. Յակոբ, Ս. Թորոս, և Ս. Ներսէս։ Կաչոյ գեղի այգեստանք գրեթէ խառն են Կաթրկապին, փոքր ձորով մը անջրպետուած։ Կաչոյի բնակիչքը իբր հարիւր տարի առաջ տահկացեալ Հայք են, կ՚ըսէին. և ամեն մարդ գիտէ թէ տահկաբին թաղեր և տոհմեր կան Հայ անունով։ Կը պատմեն թէ Կաչոցիք՝ Թրքաց բռնութենէն ազատելու համար կ՚որոշեն տահկանալ, և կը տահկանան. գեղի քահանայն այդ ին կը դառնուի այս ժամուս. երէցկին կը վազէ գոյժ տալ երիցուն, թէ, փութա՛, գեղացիք ամենքը տահկցան։ Երիցը կը դառնայ կը պատասխանէ. «վո՛չ, ֆարը, ուեն պահա կիօվլատաճ՞ մը ուօյլէրըմ, պեն չըփա՛ն Տաճկ օլմաշամ՛»։ Խեղճ երէցկինը այլայլած, մազերը փետռելով կը թռի ժայռի մը գլուխ, ձայն կ՚արձակէ կաթրկապցւոց. «Ես մինակ միսայի Հայ. ձեր Աստուած կը սիրէք, կաթրկապիք, իմ հոգւոյն խաղաղ ծխեցէք, աղօթք ու պաշտօն կատարէք»։ Եւ կաթրկապցոց աչքին առջեւ գինքը կը գահավիժէ, Եփրատին հոսանաց մէջ կը տուլանի. կաթրկապիք անոր մարմինը կը հանեն կը թաղեն, ամեն տարուան անոր գերեզմանը կ՚օրհ-

նուի, և ամեն կիրակամուին կամրկատու մայրերը երբ տանիքը խունկ կը ծխեն այն աղօթքը մրմնջելով, « Աստուած ողորմի հին ու նոր անցաւորաց, անօրէնէն ապաշխարածին, ծոմն ու ցամաքը մեռածին, համբոյ չինողին, աղբիւր բերողին, կամուրջ կապողին, քարերը խոտակողին » ևն, կը յաւելուն ասել, « Աստուած ողորմի կաշոյի երէցկին Մանասին »։

Լիճք գիւղ, հինգ ժամ հեռի Ակնէն. եկեղեցի 1· Ս· Աստուածածին։ Վարժարան 1· բայց քայքայեալ։

Նարվէր գեղ, չորս ժամ հեռի Ակնէն. եկեղեցի 1· Ս· Մինաս։ Վարժարան 1։

Առնք են Ակնոյ վիճակի հայաբնակ գեղերը, թէպէտ Բենկան ալ Ակնոյ վիճակն է, բայց քաղաքականապէս Ջիւրիկին էր. նաև Զորակ և Մուշեղկայ գեղերն ալ չորս տուն Հայ կայ, բայց Հայ—Հառոմի գեղեր են։ Մուշեղկայ Հայ—Հառոմց Ս· Գէորգ առաքելին մէջ ալակոզմեան խորան և Մկրտութեան աւազանը Հայոց է. վանք գեղի Հայ—Հառոմց Ս· Գէորգ առաքելին կից բակին մէջ Ս· ՍԱՐԳԻՍ անուանով մատուռ մը կայ Հայոց, ուր առին միանգամ Ս· Պատարագ կը մատուցանեն Հայք։

Գրեթէ ամեն գեղերու մէջ թուրք կայ։ Ամեն եկեղեցիք ալ պայծառ և հոյակապ են. տուները և կենցաղավարութիւնները քաղաքացւոց պէս, ամենքն ալ պանդխտութեամբ

կը վաստկին, և ամենու տունն ալ՝ չատ, քիչ, գրքեր կը պահուին. ապտոս և նարեկ, վաոդ և գնդակ մի և նոյն սենեկի մէջ կը պահուին. տնական անօթ և զարդուց զգեստ, հրացան և սուր՝ մի և նոյն պատէն կախուած. ապահովութիւն չկայ առանց զէնքի դռնէն դուրս ելնել. պահոց, աղօթից և ազանդութեանց նախանձախնդիր են. բայց սրտի անկեղծութիւն քիչ ունին, և իրարու որոգայթ լարել խիղճ չեն ըներ. բայց թէ յայլոց և թէ իրենցմէ լսածներս բազդատելով տեսածիս հետ, չատ բարեփոխուած էին, մանաւանդ յուսաւոր երիտասարդներ կային. քիչ ժամանակի մէջ կրնան նախանձելի ընել Ակնայ վիճակը։ Երեք ընկերութիւն կար Ակնայ մէջ. Ազգասիրական, Ուսումնասիրական, և Շահաբեր. ոմանց պրամագլուխներ քօնսօլիտ են, ոմանց ոսկի։ Գեղերու մէջն ալ ընկերութիւնք կը յառնեն և կը ննջեն։ Ընդհանրապէս նկատելով՝ վարժապետները պակաս չեն և արժանի են այն պաշտօնին. բայց ուսանողք քիչ են, ահա քաղաքի և գեղերու ամբողջ ուսանողաց թիւ՝ 782 մանկունք, 162 աղջկունք։ Եկեղեցեաց և վարժարանաց կալուածներէն չատը Պօլսոյ մէջն են, ինչպէս նաև անհատներուն ալ։

Քանի մը գեղեր կան Հայ—Հոռոմոց, որք են Զորակ, Մուշեղկայ, վանք, Շրջու, որոց բնակիչք գրեթէ երբէք տարբերութիւն չունին Հայոցմէն, իրենց ընտանեկան

և վարժարանի լեզուն Հայերէն է, նամակներ և տուփարներ Հայերէն, վարժապետ Հայ, քահանայք անգամ ցունարէն չգիտեն խօսիլ, և չարունակ յարաբերութեանց մէջ են Հայոց ժողովքներու և առաջնորդարանին հետ, միայն քահանայից գլխարկը, ինդկեցեաց զգեստները և ծէսերը ցունական են. եկեղեցական ընթերցուածքները մասն մի Հայերէն են, զորօրինակ, Աւետարան, Հաշու գիրք, ժամագրքը, բայց պատարագ ցունարենէ Հայերէնի թարգմանելով կ'ընեն, Հաւատամքն և Սուրբ Աստուածն ցունարէնն իրենց անուններըը արդարև Հայ ու Հայոմէն խառն: ցունարէն լեզու կամ գիր գոյութիւն խիստ հազուագիւտ է: Ամենք ցունական կայսերաց բարեպաշտութեան արդիւնքներն են, քաղկեդոնիկութեան աւարներ երեւի թէ մի և նոյն գեղերէն եղեր են ոմանք որ Հայ մնացեր են, ուստի հարկ եղեր է մի և նոյն եկեղեցին կիսել, զորօրինակ, Վանք գեղի մէկ մասուան Ս. Սարգիս՝ Հայոցս, միւսը Ս. Գէորգ Հայ—Հոռոմոց, և Մուչեղկայ գեղի եկեղեցւոյ մէկ խորան և Մկըրտութեան աւազանը Հայոցս մնալը, միւս երկու խորան՝ Հայ—Հոռոմոց, ևն: Մասն մի Հայ—Հոռոմներ ալ Զմշկածակու գեղերն ունինք որք մօտ են Ակնայ:

Կան և քանի մը գիւղօրայք, որոց բնակչաց համար նոյնպէս կ'աւանդեն թէ Տաճկացեալ Հայք են, և իրենց բարբառոյն

մէջ Հայերէն բառ շատ գործ կ՚ածեն. տան, այգի, թաղի, արտի անուններըը Հայ են ցայսօր, բայց իրենք շատ քացախ են։ Ահա այս գեղերէն քանիներու անուններըը, Փակեր, Արգոյ, Ագրակ, Ապրանք, Սանդուխ, Վեց գեղի ագրակ, Միջին գեղ, Վան, Աղաւորիկ, Սերկեւիլ, Գազան, Հողդար, Արտոս, Աւերակ, Հռապատ, Թաւօք, Ուռէք, Հաբանոս (իբր թէ կ՚ըսեն Հարեղանոց), Բազմաշէն, Կեճակի, Փշատի եւն։ Դարձեալ Եփրատայ միւս կողմն, Զմիկածակու հողը, Ս. Թորոս Նահէյ ըսուած գաւառն, ամբողջ գեղարնակները Տաճկացեալ Հայք են եղած։ Այս ո՞րքան թեթեւ է եղած ատոնց հաւատքը, մի թէ որոնք որ ցայսօր մնացեր են Հայ, պակա՞ս բռնութիւններ կրած են. երեւի թէ իրենց կրօնականներն ալ կաշոյի երիցու երիցակիցներէն են։ Ո՛հ, մարդ չկրնար ատոնց արտասուելու լսել և դիտել ատոնք։

Ակնայ և գեղերու Հայ բնակչաց ազնուն դպալի կերպով նուազէ. ատոր պատճառը իրենց կենցաղավարութիւնն է մասամբ մը, և մանաւանդ յաճախ պանդխտութեան մէջ օրեր անցընելն։

Շատ ձեռագիրներ կը գտնուէին Ակն և իւր գեղերը. բայց ինչ որ եկեղեցեաց կը վերաբերէր՝ ընտիրները թանգագին անօթոց և պղեստուց հետ պրեր դարաններըը պահեր էին պատերազմի երկիւղէն. իսկ ձեռքի վրայ գտնուածներուն ցանկը և յիշատակա-

բանաց օրինակութիւնը միջոց չունեցայ առնելու։ Ճաշու գիրքն մեծ դիրքով՝ ընտիր մագաղաթի, ոսկենկար պատկերազարդ, երկաթագիր Աւետարան մը, կողերը արծաթապատ, և չորս անկիւնը չորս մասունք զետեղած, ակունքներով, մէկ խօսքով՝ արուեստի և մեծագնի գանձ մը, Ապուշեխու եկեղեցին տեսայ, զոր կ'անուանէին Սանոյ կամ Սամանն Աւետարան. բայց յիշատակարանը կ'ըսէր որ Սեւասացի երկու եղբարք յօրինած են այն արուեստաներ պատկերաց և կողերուն վրայ, ուրեմն ինչո՞ւ պիտի ըսուէր Սանոյ Աւետարան, գուցէ լինէր այն սահանութեանց կամ Աստուածային ցասմանց օրերը դուրս հանելու և կարդալու համար։

Ակնայ և իր շուրջ եղած լերինքն են՝ Սարը չիշէք և Մնձուր լերանց շղթան, այն է Ովաճըք, Դուժիկ, որոյ մէկ թեւն է Խոստան ձանապարհները խիստ չար են, քար, կապան, սար ու ձոր։ Ամբողջ վիճակը լեռնային է, և փրդեր կամ Գըզըլպաշներ կը վիտան ամեն ուրեք։ Թէպէտ Հայք բաւական առուտուր ունին սոնց հետ, բայց կարի չատ կը վնասուին. կարաւաններ կը կողոպտուին, անասուններ կը յափշտակուին, գոյքեր և ապրանքներ կը գողցուին, սպանութիւնք տեղի կ'ունենան. միայն այս տարբերութիւնը կայ, որ Հայերն ալ պինեալ լինելով և քաղաքագիտութիւն ունենալով՝ երբեմն իրենց քաջութեամբ, երբեմն կառա-

վարութեան միջոցաւ, երբեմն ալ բարեկամութեամբ՝ իրենց աւարներ ետ կը վերադարձնեն։ Գրեթէ ամենօրեայ դէպքեր էին նախիրը տանել, ջորիներ խլել, Պօլսէն եկողները թալանել, մարդ վիրաւորել, եւ։ Իր տարի մը յառաջ Ովաճըգի նշանաւոր աւազակ մը կը կալանաւորուի կառավարութենէն եւ կը ղրկուի Խարբերդ կը բանտարկուի. այս միջոցին առեւտրականութեամբ Ովաճըգի կողմն կը գտնուի Ակնցի Պօղոս անուն Հայ մը, Քրդեր զայն իբրեւ պատանդ կը բռնեն եւ Ակնցւոց իմաց կու տան. եթէ մեր մարդ (Քիւրդն) չազատէք, Պօղոսը կը սպաննենք։ Երկար ժամանակ կը պահեն. Քիւրդը բանտէն չազատուիր. եւ խեղճ Պօղոսը որ հնար գտած է եղեր փախչելու, եւեւէն կը հասնին, եւ քարերու վրայ կը դընեն կը մորթեն. որոյ ողորմելի ընտանիք ամեն առաւօտ երկու ժամէն աւելի լաց ու սուգ կ'ընէին այն ժամուն, երբ լսեր էին Պօղոսին խողխողման գոյժը։

Գաւառիս բերքերը կարի նուազ են. միայն քիչ մը շերամ ունին եւ ճէհրի. բոլոր իրենց պէտքերը դրսէն կը գնեն. հաց, հագուստ, փայտ, եւ։ Ամեն արուեստները տեղական պիտոյից համար կը գտնուին. նշանաւոր արհեստն է մանիսա գործել եւ կօշիկ կարել։

Միակ վանք մը ունին, Ս. ՓՐԿԻՉ, Ակնէն 5 ժամ հեռի, մօտ Լիճքին եւ Բենկային, ո-

րոյ մօտ եղած քարի մը վրայի Ս. Երեւումն մատուռի անուամբ՝ ԵՐԵՒՄԱՆ վանք ալ կ'ըսուի։ Վանահայր և Միաբան չունի. Գաւառական վարչութեան և Առաջնորդին տեսչութեան ներքեւն է։ Դիրքը բարձր, հովասուն, և աքանչելի ջուր ունի. չէնքերը մեծաչէն՝ այլ հնացեալ։ Ծանրագին Ս. անօթներ և զգեստներ ունի, զորս առ ահի փըրդաց՝ Լիճք գեղի մէջ կը պահեն և մատ մ'ալ Ակնայ մէջ։ Ունի 20 ի չափ ընտիր արտեր, և Պօլսոյ մէջ կալուածներ, և այլ և այլ նուէրներէ տուրքեր և պտղիներ։ Վանական խորհուրդ անունով 7—8 անձինք ընտրուած էին տեղական վարչութենէն, որոց անմիջական հսկողութեան տակն էր վանքը. սակայն անցեալ տարի Հրաշագործ սրբատաղանը համոզելով, նոյամ լաւ եւս իրենք անկէ հաստատուելով, վանահայր կարգած էին վանքիս, որ խոստացեր էր թէ՝ Շատ հարստութիւն ունիմ ես. Ծերացեալ եմ. Ունեցածս վանքին կը թողում. վանքը կը չինեմ. վարժարան կը բանամ. եւ. եւ. քանի մը ամիս նըստելէն զկնի, կ'ելնէ պտղիներ կը ժողվէ. Այս իմ իրաւունքս է ըսելով՝ ծոցը կը ծրարէ, օր մի ալ բեննկացի ուխտաւոր գալու առթիւ Լիճքէն ձեռք մը զգեստ, սկիհ, եւ. բերել կու տայ պատարագ կ'ընէ, վար կը դնէ. կը տեսնէ որ ետ ուղղ չկայ. Ելէք երթանք, կ'ըսէ, ո՞ զգեստք և սրբազան անօթք. դուք ինծի պէս Սրբապանի պէտք ունիք,

և ես ձեզի : Եւ գեղէ գեղ ժողովք ընելով յանուն Ս. Վանից, կը հասնի Տիւրիկ, քաղաքի մէջն ալ կը ժողվէ, և վերջապէս ժողվելով հասած էր Սեւաստ, ուր տեսանք զինքըն Ս. Սարգիս եկեղեցւոյ սեղնեակը ութն ամիսէ 'ի վեր փուած ու նստած, քանի մ'ալ քահանայ ձեռնադրած էր, և դեռ կը ժողվէր և կ'օծէր : Ակնցիք ակն ունէին թէ Ն. Սրբազնութիւն իրենց վանքի համար ժողովածները պիտի առնուր դառնար. բայց յանկարծ իմացան որ վանքէն առեր ու տարեր էր : Կային ոմանք որ չէին կրնար հաւատալ թէ՝ Սրբազան մը խաբող լինի, տարող լինի : Բայց ասիկայ Հրաշագործն է, և արդարեւ Ակնցւոց պէս ճարտարները խաբել ու կողոպտել՝ հրաշքի մը չափ գործ է : Չէին հաւատար զգեստները տանելուն՝ աւելի իրենց աւօթ բերելուն համար, բայց ո՞ւր են ըզգեստները, չկան : Քրդերէն պահպանած էին, և Սրբազանի մը կողոպուտ տուած ... :

Ակնայ և կամրկապայ ազգայնոց ստէպ ստէպ թախանձանքները չկրնալով մերժել, Ս. Պատարագ մատուցինք և քարոզ խօսեցանք : Ազգային զգացմամբ զեղուն անձինք և եռանդագին երիտասարդներ իրենց բանախօսութեամբ և երգերով մեծ մխիթարութիւն ազդեցին սրտիս : Վերջին գիշերը մեր ապնիւ մտերմին, և իւր բարութեամբ բազմաց ծանուցեալ, Պօլսոյ Գատը — գեղը բնակող Հազարեանց կարապետ աղայի

տուն օթեցինք ՚ի կամրկապ :

Չեմ կրնար չյիշել կոշիկներ լեռն, յորմէ կը բղխին 40 ակունք ջինջ և սառն ջրեր, արդարեւ իբրև ատինք կովու, մօտ ընդ մօտ, Ապուչեխու և կամրկապու վերեւ. տեղի զուարճալի և երանաւէտ, ուր կ՚երթան տաք օդերուն գառն ճաշակել. այս ջրերը առու առու բաժնուելով կ՚ոռոգեն յիշեալ արուարձանները : Նկատումնք մի եւս, Ակնայ քանի մը գեղերու անունները «կայ» վերջաւորեալ են. ինչպէս Մուշեղկայ, Բենկայ, Արակայ, Աշոտկայ, եւն. կը ցուցնեն թէ՝ կայան կամ տուն եղած են առնք Մուշեղի մը, Բենիկի մը, Արայի մը, Աշոտի մը, եւն: Գուցէ ժողովուրդն առնց պատմութիւններ ալ աւանդութեամբ պահած ունի, ափսո՛ս որ մեր ժամեր չէին ներէր հարցնելու և գրելու այսպիսի բաներըը, որ պատմութիւն լուսաւորող ճառագայթներ են :

Ակնայ քաղ· կառավար · գայմագամութիւն է՝ խարբերդի մեծ վիլայաթի գիւղաքաղաքներէն . գայմագամն իւր ձեռքի տակն ունէր ինն ոստիկան . . . :

Հեռագիր չկայ Ակն, որուն անշափ պէտք ունին :

Ուրախութեամբ կը լսեմ թէ Պօլիս գըտնուող՝ Ապուչեխի Հայ որդիք նոր ընկերութիւն մը կազմեցին, բարեկարգ և յառաջադէմ վիճակի մէջ դնելու իրենց գեղին վարժարանը : Ահա գեղեցիկ նախանձ :

1865ին Ակնայ մէջ Նահապետական անունով ընկերութիւն մը կազմուելով, քանի մը տարի ետքը գեղ մը դնեցին Մշոյ դաշտին մէջը իմ ձեռքովս. այս ընկերութեան հիմնադիր կը համարուի Թիմուրեան Միսաք, որ իբր առաջարկութիւն առ իւր ընկերս՝ տեսրակ մը հրատարակած է. տեսրակի պարունակութենէն մաս մը յառաջ կը բերեմ հոս, որով կը հասկցուի Նահապետականաց Նպատակն։ Ա. Հաւասիկ.

« . . . . Ամենաբարին Աստուած մեզի տրվեցուց և պատուիրեց թէ՝ «Բազմացեր և բեւսաց քոց կերիցես զՀաց քո, և թէ՝ գործեացես զերկիր, եւն։

« . . . Տես երկրագործը իր երկիր բրելուն արօրը անպակաս հողոյն կը զարնէ և քաղաքացւոյն անկէց բերք կամ ուտելիք կը հանէ. տե՛ս քաղաքացին ալ թէ ինչ կ՚ընէ, երկու ծայրն ալ սուր գործիք մը ձեռքն առած կերակ կերակ խորամանկութիւններով, նենգութիւններով և չարագոյն հնարքներով նախ իր հոգւոյն և հետեւաբար ընկերին կը վնասէ. երկրագործը իր ժողված բերքերը ո՛րքան առատապէս քաղաքացւոյ կ՚ընծայէ ու ինքը միայն աւուր պարէնով կը բաւականանայ։ Տե՛ս նաև քաղաքներուն բազմաթիւ մարդիկները, միլիոնաւոր դատարկաշրջիկները անոնց աշխատանքովը կը կերակրուին, պալատները և մեծամեծ տուները

երկրագործին աշխատութեամբը կը զարդարուին և մեծամեծ ամարանոցները և վաճառանոցները դարձեալ երկրագործին քրտնաջան աշխատութեամբը կը լեցուին։ Այս ամէն բաներու վրայ տե՛ս ինչ կերպ վարմունքով կը վարուի քաղաքացին երկրագործին հետ, անանկ որ դանոնք տեսնալն անդամ նախատինք կը սեպէ իրեն, որն որ արդէն միշտ անոնց մատուցներովը ժողվուած արդիւնքներն և անոնց աշխատութեան արդասիքներն են որ ինքը առատապար կը վայելէ։ Թողումք ատոնք, մտածենք անդամ մը ուտեանանք թէ՝ ի՛նչ գործ որ բռնենք նէ, մեր ընկերին ձեռաս մը տուած չենք ըլլար։ Ինչ ալ ըլլայ նէ, ամէն մարդ կը ջանայ որ իւր բաղդը, իւր չահը և օգուտը ընկերոջը ձեռսին մէջը փնտռէ. զորօրինակ՝ եթէ գնող ենք՝ ծախու առնելու բաներնիս թեթեւ գըննով մը, կամ արժէքէն շատ մը վար՝ կէս գնով առնել կը ջանանք. իսկ եթէ վաճառող՝ ծախելիք բաներնիս կ՚ակսիմք գովել. զանիկայ հազուագիւտ բան մը ցուցնել, որպէս զի իր արժէքէն տասնապատիկ աւելի գնով ծախելու կարենանք համոզել։

«Տեսանք երկրագործինն ալ ասա՞նկ է, ո՛չ, հապա իւր հողին մէջ ինչ սերմ որ ղրկաւ նէ՝ չի հարկէ նոյնը պիտի հնձէ։ Ահա այս է քաղաքացւոյն և երկրագործին մէկ մէկու դէմ ընթացքնին. տեսանենք թէ որո՞ւն ընթացքը Աստուծոյ կամացը համաձայն կըր-

նանք գտնալ։ Ամէն բերան կը խոստովանի որ երկրագործինը համաճայն է, և մարդկային ընկերութեան չահաւէտ և օգտակար։

« . . . Աստուծոյ ահաւոր դատաստանէն սարսելով, և ժամանակիս կենաց համար ալ դիւրին կեանք մը անցուներու տաժանաւոր հոգերէն ազատելու համար՝ ցանկացինք Ընհպոպական անուն ընկերութիւն մը կազմելու, որպէս զի անով կարենանք երկրագործական արդար վաստակոց համար աշխատիլ և միջոց ձեռք բերել։ Այս ալ մեր քաղաքին դրիցը (Ակնայ) չհամեմատելով՝ մէկմէկ որ քաղաք տեղ չըլլար անոր համար, և մէկ մ'ալ բաւական հող չգտնուելուն համար, ուստի առանկ հաճութիւն տրուեցաւ որ քանի մը անձինք երթանք Հայաստանի մէջ մեր Օսմանեան Տէրութեանը հողերուն արդաւանդ տեղ մը գիւղ մը կազմել և անդ միակերպ ըստ թուոյ ընկեր ըլլացող տանց պարզ տուներ շինել, և պատրաստել ամէն երկրագործական վերաբերեալ գործիքները, տեղւոյն կուսակալի հաճութեամբ՝ ի կոստանդնուպոլիս դիմել և Տէրութեան բարձրագոյն դռնէն հրաման առնելով՝ քանի տուն որ ընկեր եղած ենք նէ՝ գաղթենք ի Նոր Հայ անուանուած գիւղը, քանի մը տուն այս կողմի խեղճերէն տանելով և քանի մը տուն Հայաստի մշակներ՝ ի գիւղ բերել բնակեցնելու մեր դրամը և քաղաքականութիւնը անոնց աշխատութեա-

նը հետ խառնելով, բնական ընթացքով մեր աստի կենաց պիտոյքը հոգալով և բարոյականութեամբ ալ մեր հոգւոյն պէտքերը պատրաստելով, տանելով հետերնիս մաքրակենցաղ քահանայ մը և Աստուածային երկիւղով զարգացած, իմաստուն վարժապետ մը, հոգեւոր պաշտօնէիւն գՈւրբ եկեղեցին զարդարել ամենայն փառաւորութեամբ թէ նիւթականաւ և թէ գինուորեալ եկեղեցեաւ, և իմաստուն վարժապետաւն ալ թէ մանչ և թէ աղջկանց մաքերուն անդաստանը սերմանել զբանս Սուրբ գրոց, և ուսուցանել անոնց ճշմարիտ բարոյականութիւն Քրիստոսի կամաց, Քրիստոնէութեան Աստուածահաճոյ ուսումն և ընկերահաչտ քաղաքականութիւն. աւելորդ սեպելով անօգուտ ուսումները որ մեր ընթացքին և պարզ վարուցը չեն վերաբերիր։

« Ինչպէս որ ըսինք, թէ տուները միակերպ ըլլայ պիտի, և զարդարանք ալ չունենայ պիտի, նոյնպէս մեր հագուստներն ալ համեստ ու պարզ ըլլալու է. բաւական համարելով բրդէ և բամպակէ գգեստները, որոնք որ մեր մարմինը պիտի պատսպարեն, ինչպէս որ մեր նախնի Սուրբ Հարք և առաքինի անձինք այս կերպ պարկեշտ հագուստներով ինքզինքնին կը պատսպարէին, ասոնց պէս նախնի Սպարտացիք և իմաստուն փիլիսոփայք ալ իրին կատարչութեան առեններըս։

«. . . Առանց նման կերակուրնիս ալ պարզ և բնականի չարմար ընել, ինչպէս որ բնութիւնը պարզեւեր է մեզի, աւելորդ սեպելով արուեստաւոր պեղխութիւնէն չառաջ եկած ամէն բաները, որոնք որ օգուտ չունին ու վնասակար են։ Հերիք սեպել մեր աշխատանքովը մեր հողէն եկած բերքերը որ Աստուած կը պարգեւէ, ոչխարին կաթը, մեղուին մեղրը, ցորենին պարզ հացը, ծառի պտուղները, ծովին ձուկերն ու օդին թռչուններն միթէ չի՞ բաւեր մեզի, պարզապէս եփելունը եփել, չեփածն ալ չեփած ուտել որ տեսակներն ալ կը փոխենք ու հազարումէկ տեսակ խմորեղէններ ալ կը հնարենք։

«Եւ մեր անպատանին պտուղներուն մշակութեան աշխատանաց արդեանցը և ընտանի անասուններու ու վայրենի ընտանեաց տուած վաստակներովը բաւական ըլլալով՝ յօտարութիւն շդնալ, և մկգմկկ վաստակելու միջոցները խափանելով անանկ կանոն մը հաստատել որ չըլլայ թէ պանդխտութեան երթալու կարօտ ըլլանք, վասն զի շատ կը ձնաստւիմք և կը տանջուիմք. որովհետեւ մարդկային սրտին դէմ է և ընտանեացմէ զատուիլը անտանելի է։ Այսպէս ըլլալով մէկ մէկու օդնականութենէ զուրկ կ'ըլլան թէ առն և կնոջը, թէ հօր և թէ որդւոցն։ Տեսէ՛ք ահա երկրագործը ապատ է այս անտանելի վիճակէն և երջանիկ է, և Աստուած

ալ չուզեց որ ասանկ ըլլայ :

«Աստուծոյ պարգեւ ըրած և մեր աչխատութեենէն քաղած արդիւնքէն կամ արմըտիքներէն նախ տէրութեան տասանորդը արդարապէս հանել տալու է , և երկրորդ մէկ բաժինն ալ գիւղին հասարակութեան ընծայել առաքինութիւն վաստկելու նպատակաւ , և երրորդ ամէն տուն իւր տարեկան պիտոյքը անթերի լեցունելէնետեւ՝ աւելցածն ալ աւուր արժէքի գնով ծախել և կամ ծախելու խրկել, ամենեւին չպահել թէ սուղ ծախենք , որ աւելի վաստակ ըրած ըլլամք , վասն զի ասանկով մարդկային ընկերականութեանը մեծ վնաս տուած կ'ըլլամք և Աստուծոյ ժողովրդեան անէծքը կ'ընդունիմք , ըստ այնմ թէ՝ «Ցորենը պահողին ժողովուրդը անէծք կու տայ :

«Կանանց հագուստի զարդերն համեստութեան փոխել, փուճ ու մուճ բաներ չինելու ու կարելու սեղն՝ բամպակ և բուրդ մանելու կրթել և զբաղեցնել , որոնք կտաւի և վերարկուի գործածելու համար թէ տունի և թէ յատկացեալ գիւղին մէջէն գործուի :

« Գիւղին գործածութիւնները չորս անձանցմէ բազկացեալ Ցեխական ժողովի մը ձեռօք տեսնելու համար չորս անձինք ընտրուելով առաքինի և ալեօք պատկառելի ըլլան , որոնք ամէն խնամքները ընելու աչխատին գեղին հասարակութեան օգուտին հա-

մար և այնպէս կառավարեն դիւղի ժողովուրդը, որ ո՛չ վէճի պատճառ ըլլայ և ո՛չ տաբաձայնութեան։ Վէճի պատճառ չըլլար երբոր հասարակութեան միօրինակ իրաւունք տանին և դատաստան տեսնելու գործ մը պատահի նէ, զարմանալով մը իրաւունք չունեցողին ըսել. թէ ընկե՛ր, ինչպէս վստահացար որ այդպէս ըրիր, ուրեմն մեղանչեցիր ըսեն. երբ ներում խնդրէ՝ ներեն, ալ բընաւ չը յիշելու պայմանաւ, վասն զի Քրիստոս այսպէս կը հրամայէ։

« Եւ տարաձայնութեան պատճառներն ալ վերցունելու փոյթ ունենան. ինչպէս տուները միաձեւ ընինք, որ միւսն չը ցանկայ, նոյնպէս ալ զգեստները միօրինակ համեմատ ըլլալու է. ասոնց պիտի թէպէտ աղքատը հարուստին հագածին չի կրնար կարողանար հասնելու, բայց հարուստը կրնայ աղքատին համեմատիլ։ Ասոնց պէս տէրութեան օրինաց համեմատ արքունական տուրքերը առանց ուշացընելու վճարելու փոյթ և ջանք պիտի ունենայ Տեսչական ժողովը, անանկ որ ուզած ատեննին մարդ մը գայ ուզէ նէ՝ եկած օրն կամ միւս օրն անմիջապար տան ու ճամբեն։ Ասով իրենց հաւատարմութիւնը տէրութեան իրեւ ճշտավաճառ մը ցոյց կ'ընեն, և դրացի դիւղերուն հետ ալ ամենայն խնամատարութեամբ և սիրով վարուելու միջոցներ ձեռք բերելու ենք, որպէս զի երբ դուրսէն անծանօթ

թշնամի մը պատահելու ըլլայ՝ ոտիպուին դըրացի գիւղացիք ալ պաշտպանելու զէր գիւղը, կը պարտաւորիմք նաև դրացի գիւղացւոց մարդասիրութեամբ խնամք տանել, և անոնց մտաւորական և նիւթական պիտոյքներ ընծայել, որով առաքինութիւն ըրած ըլլամք: Ասանկ կացութեամբ թշնամի բնաւ չենք ունենար և մէկը մեզի հակառակ չի կենար, ինչու որ նախապէս Աստուած հաշտ կ'ըլլայ ժողովրդեան հետ: Աստուած այն ժողովրդին վրայ հաճ և հաւան եղած առենը՝ ո՛վ կրնայ չարիք հասցնել անոր. այլ ինչպէս որ կ'ըսէ Սուրբ Գիրքը «Օրհնեալ զանդըս և զանդատանս և զբերս,» արդարեւ Աստուծոյ ողորմութիւնը ու օրհնութիւնը անանկ տեղեր անպակաս կ'ըլլայ միշտ:

« Նաև կրօնականի վերաբերեալ հոգեբուն, եկեղեցական պաշտօնեայն և իւր ընկեր բարեկիրթ վարժապետը ուսումնասէր անձամբ կրնան ժողով մը կազմել և ամենայն բարեկարգութեան միջոցներով ձեռք բերել և ծաղկեցուցանել ամենայն փառաւորութեամբ: Մեր փառասիրութեան բաղձանքը առաքինութիւն գործել և Սուրբ Եկեղեցիներս փառաւորապէս զարդարել պիտի ըլլայ, վասն զի պիտի ըսենք. «Մի՛ մեզ Տէր մի՛ մեզ, այլ անուան քումմ տուր փառս.» Այսպիսի գեղեցիկ կարգադրութեամբ և համաձայն Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ և մեր Լուսաւորչական դրութիւններուն և աւան-

դուխիւնները պահելով՝ ինչ զանազան առաքինութեան պտուղներ կ'երեւի և ինչ մաքուր վարքեր կը փայլէ անդ : Ա՛ս ատանկ ըլլալէն ետքը չատ մը բարի մարդկանց նախանձելի և բարի օրինակ մը կրնայ ըլլալ, և ո՛վ չի փափաքիր թէ հոգեւոր և թէ մարմնաւոր երջանկութեան պատճառ եղող միջոցին ձեռք զարնել, որ արդարեւ ատուգապէս նոր մարդ և նո՛ր Հայ դիւզ անուանելու իրաւունք կ'ունենայ . . . . . » :

Արդարեւ նախանձելի, և բարի օրինակ լինելու արժանի ձեռնարկութիւն, ոչ միայն Ակնայ Հայոց համար, այլ պէտք է ըսել թէ և Պօլսեցւոց և այլ չատ տեղերու համար : Այն գեղը (Շքաւդիան) զոր ես գնեցի այս ընկերութեան, իբր 100 ոսկի վճարելով . ունի իրեն լեռնային և դաչտային մասն, անտառ, արօտնոց, ուսոի առատ խոտ կը հնձուի, աղբիւրներ և արտեր, Ս. Կարապետի վանքի հողերուն չրեքէ կից . 15 երկրագործ տուն կրնայ բաւականանալ ընդարձակօրէն : Թիմուրեանի պարզասիրութիւնն ու հաստատամտութիւնը չունեցան միւս ընկերներն . ո՛րը եկաւ ու վերադարձաւ, ո՛րը երբէք չեկաւ, ո՛րը իր կողմէն ուրիշ մարդ ղրկեց, իսկ ինքն Թիմուրեան չետ քանիցս անձամբ գալուն ու գնալուն, վերջապէս ընտանեօք հաստատուեցաւ Մշոյ մէջ . անշուշտ չկրնալով ՆՈՐ ՀԱՅ գեղն մինչև ցայսօր Նա-

հայերեսական բաղձացեալ վիճակին վերա-
ծել թէ՛ առանց ընկերաց մնալուն, և թէ
երկրին ու քաղաքականութեան պատահա-
բեր դժուարութեանց համար։ Փափաքելի
էր որ մեր դրամատէր Հայեր իրենց ուշը
դարձնէին Հայաստանի մէջ հողեր գնելու.
հոն Լորտի պէս ճոխ պիտի ապրին, Հայ մշա-
կի պէս առողջ, և մեծ ազդեցութիւն պիտի
ազդեն տեղական կառավարիչներուն, թուրք
և Քիւրդ պէյերուն վրայ, իբրև օրէնսդէտ
և քաղաքադէտ անձինք, և Հնդկաց Ռամայի
մը չափ հարուստ պիտի լինին հողով, բերքե-
րով, ձիերով և բազմաթիւ անասուններով։
Թող չսարսափին այնչափ Հայաստանէն հա-
սած չարիքներէն, միթէ պակա՞ս են նոյն
իսկ Եւրոպիոյ և Մայրաքաղաքին մէջ աւելի
չարաչար չարիք, միթէ նոյն իսկ թադաւոր-
ներ և պաշտօնականներ չե՞ն զարնուիր։ Մի-
թէ չուկայի խանութներ, տուները ամեն օր
դողոց ձեռքը չե՞ն. միթէ Բերայի փողոցնե-
րուն մէջն անգամ մարդիկ չե՞ն կողոպտուիր,
և թաղերու մէջ՝ իրենց տանց մէջ չե՞ն սպան-
ուիր։ Թողունք ինչ որ ախտն ու մոլեգնութիւն
կ'սպաննեն, ևն, ևն։ Հայաստանի ամենամեծ
չարիքը իւր կարող որդւոց հեռի մնալն է, և
զանի աղքատ ու անպաշտպան ձգելը. պէտք
է հողեր գնել, պէտք է տեղ տեղ փոքրիկ
պահ հաստատել, որոնք գոնէ Հայը պան-
դխտութեան պիտի ելլէ ետ կը կեցնեն, պէտք է
օրէնսդէտներ և բժիշկներ երթան հոն. այս

երկու դասուն ալ մեծ ասպարէզ կայ Հայաստանի մէջ, որոցմով կը պաշտպանուին գոյից և կենաց զոհեր: Հայաստանի մէջն է բուն ՀԱՑԿԱԿԱՆ խնդիրն, և մեք Գէրլինի մէջ կ'որոնենք զայն . . . :

ԱՐԱԲԿԵՐ ՓԱՂԱՓ

Յուլիս 15: Կամրկապէն յուզի անկանք: Ուղարկաւորաց բազմութիւն: Մանկտին կ'երգէ: Այգեստանեայց գլխէն տուինք իրենց «Մնաք բարով» և առինք «Երթաք բարով», բարձրացանք քարերն 'ի վեր: Թէպէտ 10 ժամու ճանապարհ է մինչև Արաբկեր, բայց վտանգով լի. ուստի ոստիկանին հետ երեք ալ կտրիճ պինեալ Հայք կամրկապէն եկան մեզ հետ: Այն ինչ լեռան միւս երեսէն 'ի վար կ'իջնէինք, կամարակապ աղբիւրին վրայ խումբ մը ձիաւորներ տեսանք. որոց ձիեր կը վրնջէին և ատրճանակներ մուխ, բոց և պայթիւն կ'արձակէին. յուղարկաւոր բարեկամներ էին Ակնէն կանխած, ուր յարգանաց և համակրանաց փոխադարձ հանդիսիւ պատահեցանք իրարու: Հոս ժամանեցին մեզ երգնկայի բանակէն մեկնող Մարաշցի թեւապետ մը և պինեաւոր մը, աղէկ ուղեկիցք: Մեր ոստիկան էմին աղան խիստ քաղաքավարի մէկն է, աղէկ ալ հայերէն կը խօսի: Եփրատն մեզմէ անդաժան կ'ընթանայ, քարեր անպակաս են, գեղերու ծառաստանեայց

միջէն կ'անցնինք, Հաբանոսի (Հաբեղանոց) ձորոյն մէջ, ջրոյ ափը, թթենեաց չուքը ներս տանք 'ի ճաշ. գթօսալի է վայրը. գեղը՝ որ վերեւն է, քարերուն միջէն կ'երեւի, ասոր ալ բնակիչք տաճկացեալ Հայք են եղած: Կ'ընթանանք. կիրճ ու կապան. գետը կ'անջատէ Զմշկածագու և Ակնայ սահմանը: Անդին սիրուած են այգեստանք՝ լերանց ստորոտը մինչև ջրեզրը: Ջորեպան և Էմին աղան կը պատմեն այս ձորերու մէջ տեղի ունեցած կողոպտուներ և սպանուները: Թանձր նաւակ մը կը տեսնենք, որով անցուդարձ կ'ընեն Զմշկածագ երթեւեկողներն: Այս ձորոյն մէջն է Գըղըլ ֆալըըը՞, Արեան պոյն և արեան հոգ. քիչ մը անդին է Առնաւոտի խան, որ ողջ է, բայց ամայի, առ ահի փրդաց: Յայնկոյս Եփրատայ անդեայք և խաչինք. մերթ ընդ մերթ հրացանի գնդակի արձակման ձայնից արձագանքներ կը լսենք դիմացի քարերէն: Կ'անցնինք դժուար ու քարուտ լեռ մ'ու ձոր մը, Պօթ—պէրէ-ին: Եփրատ կ'անտեսի: Ձառ 'ի վեր պտուտաւոր կը բարձրանանք, բարձր կատարին վրայ աւեր պահականոց մը կայ և ցամաք աղբիւր մը, Թութ—բէլին է, ծառատունկներ և ինքնաբոյս մացառներ կան աստ և անդ. խորհ'ն ամայութիւն արհաւիրք կ'ազդեն 'ի մարդ, և ահա քանի մը այծերու մըկմկոց կը լսենք, երջանիկ այծարածն հոգւոյ կատարեալ անդորրութեամբ ընկողմնած պրակի մը չուք՝

իւր սրինգը կը հարկանէ : Լեռնահովիտ մը կը բացուի մեր առջեւ . — Փառք քեզ, Աստուած . հողոյ երեսը և արտեր կը տեսնանք , ամեն ուրեք հնձողք կ'երեւին : Թուրք կանայք և արք փռուած են դաշտը , և ահա Աշոտակայ գեղ, դիրքը սիրուն և չէնքերը վայելուչ , բնակիչքը տաճկացած Հայք են եղած : Մեր աչ կողմն , լեռան բարձր թեւին վրայ է Օճախ գեղ Թրքաց , որոյ այգեստանեայք կը հասնին մինչև մեր ճանապարհը : Աղբիւրի մը մօտ , ուռենեաց հովանեաց տակ հանգչեցանք . մեր չուրջ կը զարդարեն թըթենիք , մրգաբեր այլ և այլ ծառատունկք այգիք , և անպտուղ ծառեր , անդաստանք և մարգագետինք , հնձողք և մանկտիք : Աշոտակայ առջեւէն կ'անցնի Թարթերդի ճանապարհն : Ասկէ մէկ ժամ տեւեց մինչև Ոսկեգետակ , որ կը բղխի Սարը չիշէկ լեռնէն . իւր ափունքը կը նմանին կոյտի վարսերուն , աղտրթափիտ ծառատունկներով, և իւր ծոցոյն մէջ կը լողային կարմրախայտ ոսկեփայլ ձկունք : Աղտոտ գնչուներ իրենց էշերով և ձագերով թաւալած են ջրոյն ափը . մուրացկանութեան տոպրակներ և բուռները բացած մեր չուրջն առին , հաց , թխութիւն , լաթ , ոտակ , ինչ որ ուաս , և ինչքան որ ուաս , չահ կը համարեն իրենց և չնորհակալ կը լինին : — Բայց ինչո՞ւ երկիր չէք դրծեր . — Երկիր չունինք , և ոչ բնակարան : — Վարձկա՛ն եղէք . — Ծառայ լինել չենք

սիրեր : — Բայց այդ ինչ կեանք է , և մինչ դուք գո՞հ էք . — Գոհ ենք , եթէ մեզմէ տուրք չառնուն : — Դուք որ երկիր չունիք , տուն չունիք , չահ չունիք , ինչ անունով տուրք կու տաք . — Մեր տուրք , տոպրակի վրայ է , քանի՛ այր և քանի՛ կին ենք , մէկ մէկ տոպրակ ունինք մուրալու , ամէն տարի վարձկալ մը կը դնէ կառավարութիւնէն մեր տուրքը , և կուգայ կը թուէ գլուխ , իւրաքանչիւր տոպրակէն 30—40 դրչ. ոսկի դրամ կը ժողվէ ՛՛՛ : Ա՛ս ալ առանց ընծաներուն է եղեր : Քիչ մը հանդչելէն և զովանալէն ետքը՝ կամուրջով մը կ՛անցնինք Ոսկեդետակ . յայնկոյս կան քարակոյտներ , զոր կ՛անուանեն Խոբաբեայ քաղաք , և կ՛ըսեն , Հին քաղաքի աւերակ է : Արդարեւ քաղաք չինելու յարմարագոյն տեղ , ուր բուսած հասկալից ցորեններ կը հնձէին Գետակին բերանը , ժայռի մը քով տակը կը ցուցնեն Ս. Փիլիպպոս առաքելոյ անուամբ վանքի մը տեղ , որ չատ ժամանակ չէ աւեր եղած է . իւր սեպհականութիւնը տիրած են Թրքեր . մինչև ցայսօր ուխտաւորք դեռ կը յաճախեն հոն : Մօտ է անոր նաև Ս. Մամաս , աւերակ : Եւ մը կ՛երթանք , որոյ գլխէն կը տեսնենք Շեփիկ գեղ , գեղեցիկ է իւր դիրքն ու շրջակայքը . հընձողներու միջէն կ՛անցնինք . դեռ քառորդ մը կայ գեղը հասնելու , և ահա վարժապետն ուր՝ աշակերտաց՝ ծառոց տակէն մեր ճամբան կը կտրէ . փոքրիկ մանկունք , գըլ-

խիրաց, երկայն ու խառնակ մազերով, բռնրիկ ոտներով, մէկ շապիկով ու վարտիկով, բեկբեկ ձայնիւ սկսան երգել և կրկնել.

«Անգութ երկինք ալ չըյիշեր մոռցեր է Հայաստանը,

«Անխիղճ Հայեր ալ չեն սիրեր անուշիկ Հայաստանը . . . »:

Միրաս ծովացաւ ատոնց ձայնէն և ա-սացուածքէն. յուզեալ կը ծփայր արիւնս և արցունքս . . . :

Շքեղ տուն մը կայ առջեւնիս, հոն հանգուցին զմեզ հացագործ Սիմոն աղայի տունն էր, որ 'ի զուր իւր բոլոր հարստութիւնը թափած էր այս չէնքին համար. ինքն մեռած էր, միակ դուստրը կարգեր էր Մելքոն անուն բարեբարոյ երիտասարդի մը հետ զմեզ խիստ չնորհալի կերպով ընդունեց, բողոքական էր այս խեղճը, և բաւական կային սոյն գեղի մէջ բողոքական անուանով Հայեր: Գեղացիները ժողվեցան մեր շուրջ. ի՛նչ հարստահարութիւններ և զրկանքներ կը պատմեն, զորս կրած են և կը կրեն Քրդերէ, այլ մեծաւ մասամբ քաղաքի թուրքերէն, պաշտօնատարներէ, ոստիկաններէ և զօրքերէ: Բոլոր գեղացիք ծանր պարտուցտակ էին, և աղքատ: Գեղի հողերը Աբրակերի թուրք պէյերուն էր, որք առանց իրաւանց սեպհականած էին իրենց, կ'ըսուէր:

Հետեւեալ օր թողինք Շեփիկ, մխիթարելով գեղացիները որչափ և կրցանք: Իջանք

ձոր մը, ուստի ջուր մը կը հոսի, ծառատունկներով վայելուչ։ Խիտ խիտ թթենեաց և այլ մրգաբեր ծառոց միջէն կ'անցնինք. քանի մը տուներ կան հոս. Գօզլու- կ'ըսուի այս տեղ. պաղորակ ջուր մը վերէն կը թափիւր Մեր աչ կողմն, իբր կէս ժամ հեռի կ'երեւին ծառազարդ բնակարաններ. Հին—Արաբկերն է, զոր Հայք՝ Անդի—քաղաք կ'անուանեն և Թրքեր՝ Էսկի շեհիր, ուր տակաւին Թուրք բնակիչներ կան և մինարէով մզկիթներ. հակիւ 70 տարի կայ որ Հայք իսպառ Թողած են զայն և գաղթած նոր քաղաքը։ Գօզլուի գլխէն երեւցաւ Արաբկեր քաղաքի մէկ երեսը չնորհալի տեսքով մը։ Նոր լսած էին մեր գալը. աճապարանօք կը պատրաստուէին դիմաւորել, բայց արդէն ես մտած էի քաղաքը։

Խառնուեցանք հեծեալ և հետի բազմութեան. Եկաւեանց վարժարանի մանկտին փողոցը կայնած կ'երգէր. չուկայէն էր մեր անցքը. ամբոխ մեծ, Քիւրդ, Թուրք, Հայ, Գայմադամէն ալ չավուշ մը, որ զարդարեալ ձի մը կը բերէր, չնորհակալ եղայ առանց հեծնելու։ Դէպ Առաջնորդարան գընացինք, ուր 300ի չափ աշակերտք Ասումնարանին և Մայր վարժարանին, երկու կարգ բաժանեալ կ'երգէին։ Ի՞նչ էր այսքան հանդիսադրութիւնք. — Արաբկերցւոց ազգային զգացմանց ցոյցք։ Ո՞վ էի ես, — Օտար ազգաց համար, ոմանց՝ Ինկիլիզ, ոմանց

Միւֆէթթիշ։ Իսկ ինձ համար ողջունատար մը, այլ իսկապէս՝ ես, Գարեգին վարդապետս, որ ոչ միայն չէի արժէր, չէի թոյլատար, այլ և չէի սիրեր այնպիսի բաներ, չափազանցութիւններ, ուստի ծանր տպաւորութիւն գործեցին յիս, ինչպէս նաև վերջէն ըրածնին ալ, քրտինքներ հոսեցին անձնէս։

Մեծ ուրախութեամբ ողջունեցի Մինաս և պօղոս Ջէրպէտէրեանք, եկաւեան եղբարը, Մինաս տէր Միքայէլեան, Յօհաննէսեան, և այլ բազումք, զորս յանձնէ կը ճանաչէի կարնոյ մէջ և անոնց բարեկամութեան կարօտը կը կրէի։ Անմիջապէս պատուեցին ըզմեզ իրենց ներկայութեամբ Ազգային ժողովներ և խորհուրդներ. Նշանաւոր անձինքներ, քահանայից և վարժապետաց դասն, և այլ անհատներ, բոլորն ալ կարգով և չնորհալի պատչաճաւորութեամբ։ Ապա գայմագամն Խոտրէի ժողովքով, և միւս Ատեաններըը, քաղաքի երեւելի թուրք պէյեր, և նոյն օրը քաղաքը գտնուած Գղզպաշներու գլխաւորներէն Բորեազ պէյ, Աբրաս պէյ, եւն։ Արտաքոյ կարգի համբաւ հանած էին մեր անձին և պաշտօնի նկատմամբ. ասոր համար գայմագամն և բոլոր պաշտօնատարներ ու պէյերը խիստ երկիւղածութեամբ կը խօսէին, զիրենք արդարացնելու ջանագովութիւններ կ'ընէին՝ Հայերուն կրկնել տալով նոյնը. և երբ փոխադարձ գնացի

իւրաքանչիւրին, առանձին առանձին մէկըզմէկ կ՚ամբաստանէին։ Գայմագամն՝ պէյերու համար՝ նեղսաւոր և բարբարոս են, կըսէր։ Ասոնք՝ գայմագամն խեղդ է, կ՚ըսէին, թէ՝ ի. ՀՓ. կաշառակուր է, և աւազակաց պաշտպան, թէ՝ Մեծ Հ. պէյն ինքգինք դըրեր օրէնքէ և իշխանութենէ վեր, թէ՝ Խարբերդի միւթասարիֆն է չարերուն երես տուող, և ամենայն վեղծմանց հեղինակութիւն Խարբերդի կեդրոնէն կը ծագի, թէ՝ եւն. եւն. եւն։

Ինն օր կեցանք Ամարկեր, անձամբ այցելեցինք եկեղեցիները, վարժարանները. չատ դիւրութիւն ընծայեց վիճակագրութեանս՝ քաղ. վարչութեան կանոնաւորութիւնը, Ահա վիճակ մը, ուր արձանագրութիւնք, տուման, դիւան, քարտուղար, եւն. կը տեսնեմ իսկատուութիւն, յօժարութիւն և եռանդ, բարեխառնութեամբ կը գործեն. տոհմով ազնիւներն բարոյիւք ալ ազնիւ՝ չէին խորշիր հասարակութենէն քուէով ընտրելոյ մը հաւասար նստիլ և պաշտօն վարել։ Ունին 10 վարժարան. մէկն Ուսումնարան է Ս. Թարգմանչաց անուամբ, որոյ նկրքեւի յարկն ալ օրիորդաց վարժարանն է Զարուհեան անուամբ, միւսները Թաղկոց կամ միջին կարգի վարժարաններ են, որոց մէջ տակաւութիւ աղջիկներ ալ կան. պատճառ այսքան վարժարան ունենալուն՝ թաղերուն մէկ մէկէ հեռի ինելն է, բայց ընդհանուրն

ալ մէկ Ուսումնական խորհրդոյ հակողութեան տակն են։ Մայր վարժարան ըսուածը ծաղկոց մ'է, ուր 200 աշակերտք ձրի կ'ուսանին։ Սաղաթիէլեան կարապետ աղային՝ի կենդանութեան կտակած 50000 ղրշ.ի տոկոսով, որ տարեկան 3000 ղրշ. կը վճարէ, դրամագլուխն իր քով պահելով. և՝ի մահուան 50000 ղրշ. ազգային տնտեսութեան յանձնել կտակած է մի և նոյն պայմանը գործադրել և իւր ու կնոջը գերեզմանը վարժարանին մէջ ամփոփել պարտաւորելով. կանխաւ արդէն տապանաքարերն ալ բերել տուած էր։ Բոլոր վարժարանաց ծախքն է տարեկան 42500 ղրշ։ Սաղաթիէլեանի կտակէն զատ՝ 16000 ղրշ ալ Մայր եկեղեցին կը վճարէ, 3500 ղրշ. միւս երեք եկեղեցիք. մընացեալը՝ թոշակներէ։ Վարժարանի կալուածոց մատակարարութիւնը Մայր եկեղեցւոյ թաղականաց ձեռքն էր։ Ամէն տարի ուսուցչապետ մը ունէին, Զրագեան ցակոբ, Վաղ գիւղէն։ Ուսանողաց թիւն էր 80՝ մանկունք, 80 աղջկունք։

Ամերիկեցի Հայ վաճառական և վաստակաւոր պանդուխտ ընկերութիւն կազմած էին քանի տարիէ հետէ և դրամագլուխ ունէին Հալէպ եղողները՝ 700 լիրայի, կարին եղողները՝ 600 լիրայի (քօնսօրթում), Պօլիս եղողները՝ 120 լիրայի (երկաթուղւոյ թուղթ), որոց նպատակն էր մի և նոյն, այն է կալուածներ կառուցանել Ամերիկեցի վարժա-

բանաց համար։ Իրենց հայրենակից Պօղոս էֆէնտին՝ որ յԵգիպտոս կը բնակի և Աստուած բաղդաւորած է զինքը, խոստացած էր մեծ գումար մը նուիրել նոր ուսումնարանի մը բացման, այն պայմանաւ որ ինչքան Արարկերցիներ ամբողջ տային, նոյնչափ ինքն միայնակ պիտի տար։

Ահա այսքան պատրաստութիւն և չարժումն կար. ուրախութեամբ կ՚ապասէին իրենց նորընծաիր Առաջնորդ եպնիկ վարդապետին. ա՛լ աւելի ուրախ պէտք էր լինէր եպնիկ վարդապետ, որ այսպիսի պատրաստեալ և հասունացեալ պատուական հունձք մը կը յանձնուէր իրեն։

Վարժարանները այցելած միջոցին, ինչպէս նաև քանի մը բաներու վրայ ըրած դիտողութիւններս անմիջապէս ուշադրութեան առին և բարեփոխել ձեռնարկեցին, զորօրինակ, դասագրքերու և դասատուութեան մեթոտներու մասին, ևն. Ուսումնական խորհուրդ, Հոգաբարձութիւն և Ուսուցիչներ իսաւն ժողովներ կազմեցին։ Բայց ամենէն աչքի զարնելու կէտը՝ խեղճ օրիորդաց վարժարանն էր, ցած, խոնաւ, հոտած, առանց օդոյ ներքնայարկ մի էր. համաձայն էր այս վիճակին նաև անոնց ուսման վիճակն։ Չեմ գիտեր ի՞նչ նշանակութիւն ունի կեդրոնական վարժարան, ահա արդէն կայ Ս. Թարգմանչաց ուսումնարան. իսկ ե՞թէ Գիշերօթիկ վարժարան ըսել կ՚ուզեն,

այդ շատ աւելորդ է, մանաւանդ իւր ամենամեծ դժուարութիւններն ունի և ծանր պատահարներ նիւթական և բարոյական մասին. մօտս դարձեր էր գաւառաց մէջ կեդրոնական կամ Գիշերօթիկ վարժարանի անունը. մի և նոյնը լսեցի Խարբերդի, Զըմշկածակի, Բալուի, և այլ Առաջնորդներէն, այն ինչ ներկայ վարժարանները բարեկարգելու մեծ ախտ ունին, որոնցմով օգտակար աշակերտներ կրնան ընծայել ազգին, մանաւանդ աղջկանց դաստիարակութեան վրայ ուշ դարձնելով, հոգ պէտք է տանիլ ընտիր ուսուցիչներ և լաւագոյն մեթոտներ հաստատել, որոց պակասութեամբն է միայն որ մեր վարժարանները անպտուղ կը մնան թէ՛ գաւառներ և թէ՛ Պոլիս։

Մխիթարուհեցւոյ տեսնալով Հայոց և Հռոմէականաց մէջ աւելութիւն չկար, այլ ախրով էին. Արարկերու պատուելին Մարտիրոս քարեկիրթ և բանիբուն մէկն էր, ազգային ամենայն խնդրոց նկատմամբ անխոնջ և եռանդագին ջանացող. սոյն տեսութիւնն կը հաստատէին բոլոր Արարկերցիք. յիսնադարձ այցելեցինք իրեն, որոյ սենեկին մէկ կողմը գրադարան, միւս կողմն կախուած էր Լուսաւորչին գՏրգատ մկրտելու հանդիսաւոր պատկերն։ Կաթոլիկ Հայոց վերապատուելոյն եւս փոխադարձ այցելութիւն տրուինք։

Աւագ քահանայ տէր Միքայէլ Հայրն՝ որ

տեղատեղ էր Առաջնորդի, ծերացեալ է, և կրնայ ըսուիլ թէ՝ քահանայ չունին Արաբկերցի Հայք, ինչպէս նաև դիւղորայք, բաց 'ի երեք գեղերէն, յորս երկերկու քահանայ կան. իմ տեսածներուս մէջ Անջրդի գեղի քահանայք լաւագոյն էին: Գաղաթի Ս. Յակոբ եկեղեցին երանելի վարդապետ մը կար իբրև քահանայ և իբրև վարժապետ, խըստակեաց կրօնաւոր, և հաստատակուռ տըփող:

Արաբկերի մէջ առաջին արուեստ հաստատած է մանիսա գործել. 1600 հոր կը բանէր. իմ հոն եղած օրերը բանթողս (գործադուլ) ըրած էին, իրենց օրականը թղթադրամով վճարելուն առթիւ. գործատէրեր՝ որ վաճառականներն են, մեծ յուզմունքի մէջ էին. գործողներ երդմամբ կապուած էին իրարու մինչև իրենց ուզած գինը տրուէր, անէծք և տուգանք սպառնացած էին իրենց ուխտէն բաժնուողին: Ինքպինքս Լոնտոնի մէջ կը կարծէի: Մեծ քանակութեամբ մանիսա կը փոխադրուի և կը վաճառուի այլ և այլ քաղաքները: Յիրպէտէրեան Պօղոս էֆ. գործարան մը բացած էր, ուր շրջեցայ և ուրախութեամբ տեսայ արուադրած կերպաս տարազները, որք կը մրցէին Հալէպի և Շամի ապրանքներուն հետ. ունէր նաև չերամի թել ոլորելու գործիքներ. արուեստատէրն ալ Արաբկերցի հայր և որդի Հայ էին:

Ընդհանրապէս արուեստներ յառաջացընելու ջանք կ'ընէին Հայք. դեղերը ամենքըն սկսած են Եւրոպական մաղով զտել կալերու ցորեններըը, որ քաղաքիս մէջ կը չինուի. ճարտարարուեստներ կան, որ դիւրութեամբ կը չինեն Եւրոպական պէնքեր, մեքենաներ և նուրբ գործիքներ, որոցմէ առաջին կը համարուին Զաքար Շիտէճեան և Պետրոս Տէմիրճեան։

Ամբարկերի թուրք պէյերն 'ի բաց առեալ, հասարակութիւնն խիստ անոյշ վարմունք ունին Հայոց հետ, չատերն Հայերէն գիտեն։ Քաղաքս տարածեալ է և ելևէջ դիրք մը ունի. օդն՝ տեղ լաւ, տեղ ծանր է։ Առաջնորդարանը հին և օդն սեղմուկ էր։ Բազմաթիւ թթենեաց և այլ և այլ մրգատեսակաց ծառաստուններ կը զարդարեն քաղաքս, գետակ մը երկուքի կը բաժնէ թաղերը։ Ամբարկերն ալ չինուած է Ամբրոսին Սենեքերիմայ գաղթականութեան միջոցին, բայց ինչպէս որ ըսինք՝ ներկայ Ամբարկերը չէ այն։ Բնակիչներ ընդհանրապէս ալճինաւոր հագուստ (պլուն) կը հագնին. նոքաղցեստը քիչ կայ. և կանայք տաւանով կը ծածկուին, բայց իրենց ներքին սէրճանքըն, զարդն ու ոսկին տեսնել ճոխ է։ Կարի բարեպաշտ են և եկեղեցասէր։ Նշանաւոր են աղքատասիրութեան մէջ, և յատկապէս դուռնար մ'ալ կայ 60—65000 դրչ. ի հանգանակուած, աղքատաց օգնելու նպատակաւ։

Եկեղեցի ունին 4· Ս· Աստուածածին՝ Մայր եկեղեցի, Ս· Յակոբ, Ս· Գէորգ, Ս· Լուսաւորիչ: Մայր եկեղեցին միայն հոյակապ է, ընդարձակ և քարուկիր· միւսներ պայծառ՝ բայց փոքրիկ են:

Հայաբնակ գիւղօրայք:

ՇԵՓԻԿ· եկեղեցի 1· Ս· Աստուածածին: վարժարան 1: Ուսանող 60 մանկունք, 10 աղջկունք:

ԱՄԲՐԿԱՑ· եկեղեցի 1· Ս· Նշան: վարժարան 1: Ուսանող 40 մանկունք:

ԱՂԸՆ· եկեղեցի 1· Ս· Աստուածածին: վարժարան 1: Ուսանող 15 մանկունք:

ՎԱՂՇԷՆ· եկեղեցի 1· Ս· Աստուածածին: վարժարան 1: Ուսանող 16 մանկունք, 5 աղջկունք:

ՓՈՒՇՆԱՑ· եկեղ· 1· Ս· Աստուածածին:

ԿՐԱՆԻ· եկեղեցի 1· Ս· կարապետ: վարժարան 1: Ուսանող 15 մանկունք:

ՀԱՍԿՆԻ· եկեղեցի 1· Ս· Գէորգ:

ԷՀՆԷՅԻՔ· » 1· Ս· Աստուածածին: վարժարան 1: Ուսանող 17 մանկունք:

ԽՈՒՈՉ· եկեղեցի 1· Ս· Աստուածածին:

ՄԱՇԿԵՐՏ· » 1· » » վարժարան 1: Ուսանող 30 մանկունք, 10 աղջկունք:

ՍԱՂՄԿԱՑ· եկեղ· 1· Ս· Աստուածածին:

Ա.ՆՋՐԴԻ· եկեղեցի 1· Ս· Նշան: վարժարան 1: Ուսանող 80 մանկունք:

ՇԱԳ · եկեղեցի 1· Ս· Նշան : Վարժարան 1 : Ուսանող 40 մանկունք :

ՎԱՆՔ · եկեղեցի 1· (Աւերակ) :

ՇԱՊԼՎԱՐ · · · · · · :

Վերոյիշեալ գեղերը թէպէտ Ագարակերի Առաջնորդութեան թէմին են, բայց տասն գեղ Ակնայ գայմադամութեան ենթակայ են · որոց իրաւասութեանը տակ Միւտիր մը կը նստի Աղբն գեղը : Ահա անկանոնութիւն մը ժողովրդեան գործքեր տեսնալու · մանաւանդ այս գեղերը 5—6 ժամ հեռի են Ագարակերէն · իսկ Ակնէն 10—12 ժամ երկիւղալից ճանապարհով : Գրեթէ ամեն գեղերու մէջ թուրք բնակիչ կը գտնուի, և մասն մը բողոքական եղած Հայեր : Գեղացւոց չէնքեր, հագուստն ու սպրուստը մեծաւ մասամբ քաղաքացւոց նման են · տեղ տեղ ալ գերազանց քան զքաղաքացիս · կանանց պերճանքն չսայլէ, ամեն տունէ պանդուխտ կայ Պոլիս կամ այլ մեծ քաղաքներըը · երկիրըն անձուկ է մշակութեան համար և բերրի չէ · գեղերէն չատն ենթակայ են Տէրսիմցւոց չարագործութեանց և թուրք բռնաւորաց հարստահարութեան · թէպէտ Հայեր զինեալ լինելով և որսի վարժուած, քաջութեամբ զիրենք կը պաշտպանեն գրդերէն, բայց յաճախ կը չարչարուին կառավարիչներէն, պեսերէն և պէյերէն, որոց դէմ զէնք չբանիր, և կառավարութեան օրէնքն անոնց կամքն է · ա՛լ ո՞ւր դիմեն և ի՞նչ ընեն։

Դէպք մը. — Հէյնէցիք քսան տուն-է բաղկացեալ փոքրիկ գեղ մ'է Հայոց, Եփրատի միւս երեսն ալ Գոմ—բաշ անունով գեղ մը կայ Քրդաց՝ Զիլկածակու կառավարութեան տակ։ Գումրաչցիք գիշերով անասուն կամ ցորեն գողնալու համար 30 հոգւոյ բազմութեամբ մը կու գան Հէյնէցիքցւոց վրայ. Հայերը կը յաջողին անոնցմէ երեք Քիւրդ բռնել, միւս Քրդերը գնդակներ կը թափեն գեղին մէջ, Հէյնէցիքն ալ գնդակով կը պատասխանեն. այս խառնի մէջ՝ բռնուած Քրդերէն մէկն ապանուած էր, Հայեր կ'ըսէին թէ Քրդերու գնդակով մեռած էր նա։ Բայց ի՞նչ կար, թող Հայոց գնդակով մեռած լինէր, ոչ, ահագին է տարբերութիւնը, նոյն իսկ աւետնի առջեւ։ Վերջապէս յաջորդ օրերը իմաց կու տան կառավարութեան. և ահա իրաց վախճան. դիակն և կալանաւոր Քրդերը կ'արձակուին 'ի Գոմ—բաշ. Գումրաչցիք մեռած Քրդու արեան գինը կը պահանջեն Հայերէն. և միշտ սպառնալեաց տակ կը դնեն գեղը. Հայք բաւական ծախքեր կ'ընեն, գայմագամին պիտի Քրդերուն վրայ երթայ. իբր թէ բազած զօրքեր ու ոստիկանները քանի մ'օր Հէյնէցիք կը նստին, կ'ուտեն կը թափեն, և Հայեր խթինթաքի կ'ենթարկուին. Քրդերու վրայ երթացող չկային իր. Գումրաչցիք կը կրկնեն իրենց պահանջն ու սպառնալիքն, և երբեմն երբեմն գիշերները խմբովին Հէյնէ-

ցիքի վրայ կը յարձակին. Հայք իրենց կալ ու արտը ձգած՝ ապառապէն կը պահեն գեղը, բայց վերջապէս գիշեր մը պնդէն քիչ մը բացակայ կալ ընող երեք Հայ երիտասարդներ կը յափշտակուին Քրդերէն և կը տարուին Գումրաչ. կը կապուին ախոն, կը ձաղկեն զանոնք չարաչար, կը լկեն, անասուաղ կը պահեն, մեռած Քրդուն ընտանեաց վրէժխնդրութեան կը մատնեն, մէկ կողմէն ալ լուր կու տան Հէյնէցիքցւոց թէ՝ եթէ մեր մեռածի արեան գինը և պէնքերը ղրկէք, ձեր մարդիկ կ'ապատենք, թէ ոչ՝ կը խողխողենք: Հայք Քէլէչ աղա անունով նշանաւոր Քիւրդ մը միջնորդ կը ձգեն, 15000 ղրշ. կը վճարեն, աղայքը կ'ապատեն, որոց ապրելու յոյս չկար, և դեռ վերջացած չէր խնդիրը, դեռ պէնքեր կը պահանջէին, մի և նոյն ժամանակ մեր կառավարիչներն ալ տուրքեր կը պահանջէին:

Քանի՛ քանի այս օրինակ և աւելի ծանրագոյն դէպքեր լսեցի, ինչպէս նաև Սաղմկացւոց դէպքը. բոլոր Ձմիկածակի գեղերուն և Խարբերդուն ու Զարսանճագի, և այլ տեղերուն, որոցմէ քանիսը իրենց կարգին պիտի նշանակեմ: Ուրիշ պատմութիւն մը:

Տիւրիկու, Ակնայ, Արաբկերու և Մալաթիոյ միջեւ ինկած Սարը չիշէկ և Ազջատաղ լերանց մէջտեղերը կը բնակին Դըւընճանցի Քրդեր, որոց գլխաւորն է Դէլի Սըլօն, մարմնով և կիրքերով վիթխարի

գալան մը, Բ. Դռնէն հրաման կ'ելնէ զօրք հանելու ատոր վրայ, և բռնել կամ քա-պաննել. Արաբկերի կառավարութեան կը յանձնուի այս գործողութիւնը, և Դէլի—Սըլէօն իւր մարդերով զօրաց դէմ պնդելէն վկնի տկարանալով կը փախչի: Անոր տունն, դանձն ու առացուածքը, որ ամբողջ աւազակութեանց արդիւնք էին, կ'աւարտուին, նոյնպէս և գեղը: Հրաւէր կը գրուի շրջակայ գեղեր ու քաղաքներ, որպէս զի ձիաւորներն ու կողոպտեալներն գան, և իրենց գոյքերն ապացուցանեն ու տանին. կու գան, որոցմէ շատերն թուրք և Գըզըլ-պաշ գեղացիներ էին, մաս մի ալ Տիւրիկու Հայ գեղացիներ. նոյն օրերը Խարբերդի մեծ Միւթասարիֆն այցելութեան գալնելով իւր վիճակները, կը հասնի Արաբկեր. և ահա իւր հետ կը տեսնուի Դէլի—Սըլէօն՝ Միւլէյման աղա եղած, հացակից և պատուակից: Ամեն գլած ու նստած տեղն, շրջած և այցելած տեղերը, « Ա՛ր Մէ-լէյման ագա, Ա՛ր Մէ-լէյման ագա ». զայս տեսնելով դատախազները՝ խոհեմութիւն կ'ընեն ետ դառնալ իրենց տեղերը, միայն Հասան—Զէյթպիկն տանի չափ թուրքմէն կամ Գըզըլպաշ կը մնան իրեն դատախազ: Միւթասարիֆը մեր ժամանելէն քանի մը օր առաջ մեկնած էր Խարբերդ. Դէլի—Սըլօն — Միւլէյման աղան և անոր դատախազներն ալ հետ տանելով, ուր քննութեան պիտի սկսուէր: Երբ Մալաթիայէն

Խարբերդ դարձայ, տեսայ որ Ալէյհան աղան տեղւոյն Իտարէի ազա թուրք սէյի մը տուն հիւր տրուած էր, և շատ համարձակ կը շրջէր ու ընտանի եղուսուտ կ'ընէր թէ՛ աղեաններուը և թէ՛ ամեն տեղերը. զարմանօք իմ լսածներս պատմեցի այդ անձին վրայ, և դիտեցի թէ ինչպէս կարելի է հասարակաց այսքան ծանուցեալ եղեռնագործ մը և Տէրութեան հրամանին ու կօրացը դէմ դնող յայտնի ապստամբ մը տակաւին քննութեան վերապահել, և երթէ քննութեան ենթակայ՝ ինչպէս Իտարէի ազայի մը տուն պատուով հիւր դնել, և թէ՝ սա քաղաքական օրինօք ու դինուորական օրինօք կրկին յանցաւոր եղած էր . . . — խօսքս կտրեց Մուխթասարիֆին, « Իրաւունք ունիս, ըսաւ ցած ձայնով, բայց յանձնարարական (Թավսիյէ) բերած է. շատ անհնարութեան մէջ կ'իյնայ կառավարիչ մը՝ երբ բարձրագոյն պաշտօնատարէ մը ո՛և իցէ անձի մը կամ խնդրոյ մը համար յանձնարար գիր կ'ընդունի. Աստօն երկնակայ վսեմած էր, և առանց բուռն միջոցներու՝ վստահութեամբ կրցաւ գալ մեզի՝ դրով մը միայն »։

Դէմ — Սասնոյ ըրած հազար հազար ու սարսռելի խժդժութիւնք անլուր բաներ էին. ոչ միայն անասնոց և ստացուածոց ընտիրները՝ ո՛ւր և որո՛ւ քով լինէր՝ հրաման կ'ընէ և բերել կուտայ իրեն, այլ և ո՛ր գեղ որ երթայ, գեղի աղջիկներն ու կանայքը

աչքէ կ՚անցընէ, հաւնածին հրաման կու տայ գիշերը իրեն ղրկելու, չերթացողք և չյօժարողք կը մորթուին: Ամեւոր Փիւրդ հայր մը իւր աղջկան պատիւը խնայելուն համար, Դէլի—Սըլօն զանի չամբուր անցընելով մեծ կրակի մը վրայ խորովել տուեր էր անոր ընտանեաց աչքին առջեւը . . . : Ահա այս էր Դէլի—Սըլօն, որուն վերջին բարուրք ու ընդարձակ վիճակը տեսնելով չատեր, ամենէն չնչին արիկան կամ Փիւրդն անգամ սկսեր էր Ալեյութիւն ընել:

Երկրիս բերքերն են ցորեն, գարի, կաթազ, մեղր, ընտիր և առատ միրգեր, խաղող, չերասի բժոժ, աֆիոն: կը սնուցանէ ընտանի կենդանիներ, ուղի աղուէս, կուզ, վարչաղ, գայլ, եւ: Բայց Եւրոպայէն ամենամեծ քանակութեամբ մանած կը գնէ մանիլա գործելու համար, և այլեւայլ պէտքեր:

Հողերը՝ որ մեծաւ մասամբ դաչտային է, Թրքաց և Գղըլպաշներուն սեպհական են Եափօով . քիչ մաս կայ Հայոց ձեռքը: Լերինքն են Ենտիտաւրոսի շղթայն: Անուանիք՝ Կէօլ—դաղ կամ Մէհկ—դաղի, Ղարաբաբայ եւ: Ջրերն են՝ Ոսկեգետակ և Անկոյ վտակ՝ Սարը չիչէկ լեռնէն իջնելով Աղընու հովիտէն կը թափին Յեփրատ . Թուխման—սույու գետակն՝ Աղջատաղէն բղխելով Արգաւանի հովիտէն կը հոսի, բրինձի և ցորենոյ արտերը ոռոգելով, Մալաթիոյ 4 ժամ մնացած կը խառնուի Յեփրատ:

Արգաւան դաւառի միջէն կ'անցնի Բազդատի մեծ ճանապարհ, քաղաքէս 6 ժամ հեռի։ Մեծ Հայաստանի կամ կարնոյ հետ հաղորդակցելու համար կարճ ճանապարհ կայ եղեր Դէրսիմի վրայով. զոր Ակնցիք, Զմշկածագցիք և Զարսանճախցիք ալ պատմեցին, բայց խափանեալ է խանդարուելով՝ և Քրդերու երկիւղէն. այժմ Ակնէն և Երզընկայէն անցնելով կ'երթան Կարին, որ 70 ժամու չափ կը տեւէ։ Հետապիր չունին, որուն անչափ պէտք ունին։ Երկրիս բնակիչ ցեղերն են Հայ, Թուրք, Գըզլպաշ և Քիւրդ։

Արաբկեռու ձեռագիր գրքերէն միայն հետեւեալը օրինակել տուի, թէպէտ սըխալներով լի։

«Պատմութիւն սուրբ Գեղարդեանն և այլ Տնօրինականաց Քրիստոսի և Նշանացն։

«Ի սուրբ և փրկական Տնօրինականացն արքունեանց Քրիստոսի Աստուծոյ մերոյ այսպէս գտաք Գործոց ոսկեգրով՝ ի պատմագիր թագաւորութեան՝ ի քաղաքս Կոստանդինուպոլիս, և այսպէս պատմեցաւ, որժամ առին զթագաւորութեան քաղաքն՝ մեծ թագաւորն Ֆռանկաց բացեալ զմեծ եկեղեցին զսուրբն Սոփիա և մեծ պարսաւանօք դուչէր զամենայն քաղաքն և զՊատրիարքն և զնախարարս սուրբ եկեղեցոյն, և խնդրէր զփրկական սրբութիւնս, և նոքա զոր ունէին ցուցին. և ապա բերին մեծ Գործոցին զպատմարանն, և էր գրեալ այսպէս. Պատմուճանն Աստուածային որ վերանկեալ էր ամենեւին և զարդիոն նաւորո-

տըն տուեալ սուրբ առաքելոցն Պիշեա և Տիմէթէոս, և նոցա տարեալ 'ի Սելեւկիա կղզին և կայ մինչև ցայս աւր. պարէգոտն և պատառաւակալն և զանկար պատմուճանն՝ Աբգարու թագաւորին. Մաթոս Աւետարանչի տարեալ 'ի Պարթիա՝ միաբաց և կա մինչև ցայսօր. ՚՚՚ զքղամիդ կարմիր և զե. մատն պահին փչոց առաքեալն Մարկոս տարեալ Սպանիա 'ի Վէնէտիկ քաղաք. ՚՚՚ զկրկնափորան և զմին բեւեռն, և զկատարն որ կոչի աքցան, և զվարչականն որ ոչ կայր ընդ այլ կտաւան այլ ուրոյն ծալեալ 'ի մի կողմն, տարեալ պայն երկիրն Նաւեաց որ այժմ Համաշէն, մերձ մօտ ի ձանէք և 'ի Տրապիզոն քաղաքն եղին առաքեալքն 'ի բարձրադիտակ լերին. և ամպ և մէգ շուրջ է զնովաւ, զոր ոչ ոք կարէ ելանել և մըտանել 'ի նա մինչև ցայսօր. իսկ 'ի զարդ 'ի պատառակն Տեառն որ կապեալ 'ի խաչ ունէր, որ արեամբ թացեաւ, որ ոչ ոք կարաց հատանել 'ի ներս, պի որ մերձենայր հրով այրէր, Յոհան Աւետարանիչն ունէր և տարաւ 'ի Ակիտա քաղաք կղզի Յոկաս քաղաք, և կայ 'ի նմին:

«Պատուածամօր պատմուճանն և ծիրանին Որմնական կղզոյն կայ. խանծարուրն 'ի Հռոմ քաղաք կա և մոգաբեր հանդերձ տղայութեան 'ի Սելեւկիա կղզոյն Ասկան քաղաք կա. սուրբ սեղան վերնատան և ղեներն և այլ սպասքն 'ի Կոստանդնուպոլիս է տարեալ. բեւեռն և սուրբ ձեռացն 'ի նոյն թագաւորացն կա. զարմանաթոռն և պատառ խնկոցն 'ի Արակաս կղզոյն... Կաստա քաղաք կա. Հայրական տուեալ ըզդիրն կենաց անբաց և անընթեռնուլ տարեալ Պետրոսի Արակլիա կղզին... քա-

զաք , զոր սուրբ Բագարատ դարձոյց և գի-
կուածն խորտակեաց . և կա անդ : Եւ զինւոր
գեղարդն , որ կոզմն փրկական աղբեր արե-
ան եհեղ, առեալ Ղունկիանոսի , որ կուր
էր ի ծնէ , հարեալ ի կողն Փրկչական ,
առժամայն լուսաւորեցաւ . Աստուածար-
եանքն ներկեալ սուրբ Գեղարդն , և փուչ
պատկն , Ովէտ Արեւմտեցոյն աչն , և սուրբ
Շիշ եւղոյն աղնուականին , և Աստուածամօր
պատկերն , սուրբ առաքեալն Թադէոս տար-
եալ ի Հայք : Այս է նշան սուրբ Գեղարդ-
եանն , և այսու օրինակաւ ճանաչէք , որ ոչ
խաբեն զձեզ նենգաժոտ ազգն Ղենաց , որ
թագաւորք սուրբք և աստուածասէրք բեր-
եալ զերկնային պատկն սուրբ հաւատացե-
լոյն Քրիստոսի , և ամենայն սուրբ եկեղեցիս
հռչակապարծանք :

Եւ արդ սուրբ Գեղարդն Քրիստոսի
երկնային դանձն լուսոյ կա ի խաչափէ ծած-
կեալ աչխարհի Հայոց , և որք տեսանեն զնա
մի՛ տեսցեն զնահ յաւիտենից , և ոչ իշխես-
ցէ ձեռն մտանել ի սահմանս , և որ թա-
գաւորութեան որ կա իմացեալ և պատ-
ուեալ՝ թագաւորութիւն այնմ աչխարհին
սակաւն նուազի ժամանակս : Եւ նմանութիւն
Աստուածագիր Գեղարդին այսպէս է . գըմ-
բեթաձեւ ի վեր քարշեալ գլուխ նորա ,
որպէս նիզակին սուր առ հաւասար . և երկ-
նային և հրեշտակաձեւեալ , նման խաչի , փո-
րեալ հաստուածն անդէն բ. կողմանէ երե-
սաց սուրբ խաչին բեւեռեալ , և բեւեռամբ
Դ. որպէս Տէրն ի խաչին , աղիւսանման ,
և ձբ. օրինակ առաքելոցն , և վայր կողմն
փոր նիզակին Դ. մատին չափով , բայց ոչ այլ
ինչ քանդակեալ , այլ ամենեւին անարատ և
հաւասար . այս է նշան Գեղարդեանն : Ի-

բամօր պատկերն ՚ի Հոգոց վանքն ՚ի Թաղկաց գաւառին : Եւ Շիւ իւղոյն երկիրն Տարօնոյ ՚ի վանքն Եղէգնի . (1) ՚ի ճանաչել Արեւմտեցոյն աչն (2) ՚ի Աղբերան գաւառին գեղն որ առաքելոյն Թադէոսի անուամբն է . և Պատկ վիշոց . . . կա՝ ուր նահատակեցաւ սուրբն ՚ի Զարեւանդ գաւառի . և այսպէս օրինակեցաւ անօրինական սրբութիւն ՚ի Հռոմ գրէ ՚ի Հայ թարգմանեցաւ և բերաւ ՚ի Հայս , որում էր թիւն ՋՀԶ. և Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն :»

« Ցիշատակ է Ղուկասու մեկնիչս , որ կոչի Քարոզ գիրքս Յովաննէս վարդապետին և իւր ծնաւղացն , հաւրն Մկրտչին և մաւրն Թաւրէզին , և եղբարցն Գրիգորին , Զաքարին , Մարգարին . հաւր եղբարցն և քուերացն Հարղամարդին , Գոհարին , և ամենայն արեան մերձաւորաց մեծի և ՚ի փոքու առհասարակ ամենեցուն ամէն » :

« Դարձեալ գրեցաւ գիրքս ՚ի ձեռանէ Գրիգոր վարդապետին Ձերմակ ծովուն ատակն ՚ի քաղաքն որ կոչի Կոստանդնուպոլիս . ՚ի թվ. ՌՉԴ. ՚ի Հայրապետութեան տէր Փիլիպպոս Կաթողիկոսին . ո՛վ ովք հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով , յիշեսջիք ՚ի մաքրափայլ աղօթս ձեր զվեղապարտ Յովաննէս վարդապետս որ յանուամբս եմ միայն և դործով ոչ , և զծնօղս իմ . Աստուած զձեզ յիշէ իւր միւս անգամ գալստեան Քրիստոս Աստուած մեր որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն » :

---

1 Այժմ Ս. Յովաննէս կը կոչուի , աւր կայ մինչև յայժմ . մինք ալ ականատես եղած ենք :

2 Սոյն Աչն և ս. Յովաննու վանքն է այժմ :

«Յիշատակ է քարոզ գիրքս և Դատաստանադիրքս և Կանոն գիրքս Գրիգորի քաջ հռետորի և երջանիկ բարեւնապետին մերոյ քաջ և անյաղթ փիլիսոփայի՝ Եպիսկոպոս և որոշեալ ի գործս տնտեսութեան և վարդապետ Հայաստանեայց եկեղեցւոյ, և Պատրիարք մայրաքաղաք և թագաւորանիստ կոստանդիանուպաւլոս և բնածին էէսարիոս, թվին ՈՉԵ· պատահեցաւ էջմիածնայ թաչատուր վարդապետի աշակերտ Նուիրակ անուն ետր Յովաննէս վարդապետն. մեք մեր կենդանութեան ժամանակին, մեր ձեռամբն յանձնեցանք Գ.Չ· գիրք ի ձեռն Յովանէս վարդապետին, որ մեզ խոստովանահայր եղեւ, և զմեր մահու կտանքն դա կատարեաց. դորա ձեռամբն կտակ արաք. թէ գիրք և թէ այլ ապրանք՝ դա բաժանեաց Շահին Զալալուն ձեռամբն, և իսկանատար Զալալուն· Չ· գիրք էջմիածնայ և զայլն ատա և անդ: Դարձեալ ով որ չունի իշխանութիւն զայդ Գ· գիրքդ ի դորա ձեռացն յափշտակել, զի իւր աշխատանքն է. ո՛վ ընթերցող սուրբ գրոցս՝ թէ հանդիպիք սորա կարգալով կամ աւրինակելով, յիշեցէք մաքրասիրայլ յաղաւթս ձեր վերջանիկ բարեւնապետն մեր զտէր Գրիգոր վարդապետն, որ ի դառն և ի վերջ ժամանակիս, և թագաւորութեան Իսմայէլացոց Սուլթան Մուրատին, որ եղ բազում զաւրաւք ի վերայ Պարսից և յաղթեալ ի նմանէ, և սորայ բազում աւար ի գաւառս Հայոց: Եւ ի Հայրապետութեան Տեառն Տեառն փիլիպպոս կաթողիկոսին, և ի Պատրիարքութեան Ըզգահանայ թաչատուր վարդապետին, որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս բարեւնապետն մեր Գրիգոր վար-

դապետն. որոց Պատրիարքութեան ժամանակին եղեւ մոլորումն և Յոռետիկ Հռոմայեցոց ազգին Բ. ամաւ յառաջ որ բազում նեղութիւն կրեաց 'ի գոռոզ և ինքնահաւան ցուներց ազգէն, թէ լոյսն մեր է. և վարդապետն՝ իւր քաջ իմաստութեամբն յաղթեաց նոցա։ Շնորհաւքն Քրիստոսի փառք անդրաւ յաւիտեանից ամէն։ Հայր մեր"»։

Արարկերէն կ'չտապէի մեկնիլ, բայց վարդավառի տօնն վրայ հասաւ. ազգայնոց թախանձանաց և տօնի մեծութենէն պատկառելով յանձն առի կիրակի պատարագել Մայր եկեղեցին, օրհնեցի և մխիթարեցի ժողովուրդը, և իրենք՝ փոխադարձաբար։ Հետեւեալ օր, երկուշաբթի առաւօտ պատրաստ էինք մեկնիլ։ Առաջնորդ արանի դուռն և փողոցն ընդ լայն և ընդ երկայն անթիւ բազմութիւն խռնուած էր, գայլազան և շատերը երթաք բարովի եկած էին։ Ժամը 1 էր՝ ելանք։ Քահանայք և վարժարանի մանկունք կարգաւ կնցած՝ «Տէր ողորմեա» ըսին, և «Գնացեք բարեաւ» և ուրիշ հայրենի երգեր երգեցին վառուն խանդով մը. այլայլած և արտասուալից անցայ չնորհակալ լինելով։ Եթէ կանխաւ իմանայի, պիտի թոյլ չտայի այդ հանդէսը, բայց արդէն թակարդըն ինկած էի. և ալ թող տուի ինչ որ կ'ուզեն ընեն, ոչ իրրև ինձ 'ի պատիւ, այլ իրրև իրենց հայրենասէր առանդեան և ընծից յայտնութիւն. իմձեր, զորս յանձն

իմ կը նկատէին, և զիս ղրկողներէն կ'ա-
կընկալէին: Ուսոի ո'րքան տեւեց քաղաքին
սպառուածքը, նոյնքան ծաւալեցաւ հանդէ-
սըն, տեղ տեղ ալ ուղերձներ կարդացուե-
ցան, որք լի էին օրհնութեամբ, զգացումով
և աղնիւ միտքերով, զորս 'ի դիմաց մե-
ծի և փոքու, արանց և կանանց, կը յանձ-
նարարէին ինձ բերել և ներկայել ուր որ
անկ էր: Քաղաքի սպառուածքին հետ կար-
ծեցի թէ հանդէսն ալ սպառած էր. բայց
ահա ձիաւորաց բազմութիւն և մանկտւոյն
երամ, որ թոչնոյ արագութեամբ կը թռին
լեռն 'ի վեր, և կը շարուին Սպիտակ աղ-
բիւրի լայն աւազանին չուրջը: Հազար գո-
հութիւն և օրհնութիւն կը նուիրեմ անոնց
և կ'աղաչեմ որ հետ գառնան, նոքա խոյ-
տանօք կ'երգեն, և երիցս կ'աղաղակեն,
«կեցցէ՛ Հայն ու Հայաստան, կեցցէ՛ Պատ-
րիարքն և Պատուիրակք, կեցցէ՛ Գարեգի-
նըն». ատրճանակներ 'ի հայթ 'ի պայթ կ'ո-
րոտան, մանկտին կը մնայ, հեծեալք կ'արշ-
չաւեն: Շատ զուարճալի է քաղաքացւոց
ձիարշաւի հանդէսն. ձիեր ընդհանրապէս
աչխոյժ, կրակէն և մէկ մէկու վազելէն կը
խրուչին համայն երիվարներ, վրնջելով գո-
փելով յառաջ անցնիլ կ'ուզեն, հեծեալնե-
րէն ոմանք կը գողան սաստիկ՝ անոնք որ ան-
վարժ են. ոմանք կը գոռան և արագ արագ
կը յառաջեն ու կը գառնան, անոնք որ
քաջավարժ են: Վերջապէս Խալիլ—չաւուշի

աղբիւր կը լինի մեր անջատման կէտ, ուստի բաժնուեցան յուզարկաւորք՝ երթալով այդ իի մը հովերուն չուքը և պաղուկ ջրոց չուրջը՝ գառն ուտելու համար. մենք կերած էինք արդէն և բաժին մ'ալ տուին։ Տէր-պէտէրեան Պօղոս էֆ. իւր երկու զինեալ Հայ ծառաներով և Ղօլանճեան Նապարկէթ աղնիւ երիտասարդն ընկերացան մեզ 'ի պատիւ և յատկահովութիւն ճանապարհին. արդէն երկու ոստիկան ալ կառավարութենէն ունէինք,

Ասոնք գրեցի, որպէս զի մեր ընթերցողներ տեսնան թէ Հայաստանի մէջ ի՞նչ կեանք և ի՞նչ ճաշակ կայ. գրեթէ ամէն տեղն այսպէս։ Կերթանք,

ՄԱՆԱԹԻԱ.

Կէօլ—դաղիի կողերէն կ'անցնինք. օդը զով էր. մեր ձախ կողմը հետզհետէ կը թողունք Գըզլպաշներու շատ մը գեղեր. զարմանալի քարայրեր կը տեսնանք ճանապարհէն քիչ մը վար, որք աւազակաց օրջ համարուած են։ Երեք ու կէս ժամ յառաջանալով հանդչեցանք պրակներու հով, որոյ մօտ ջաղացքներ կան և գետակ մը կ'անցնի։ Բոլոր մեր աջ ու ձախ եղած գեղերը Գըզլպաշ են. ընդհանրապէս ծառաւէտ և ջրաւէտ։ Կը շարունակենք մեր ուղին. օդը տօթագին է. վերջապէս ժամ 9 էր իջեւա-

նեցանք Գարահիւիւք գեղը Ալի աղային տուն նը, որ Գըզըլպաշներուն Տէրէն կամ մարգարէն կը սեպուեր, հարուստ, խորամանկ, և իւր խօսքերն ու կերպերը կարի զգուշաւոր փառաւոր ընդունելութիւն ըրաւ մեզ Ալի աղան. սոյն գեղի խանէփան Բորեազ պէկն և Աղ սախալէ՛ի տէս էկան, որք ընդհանրապէս ցաւ և դժգոհութիւն կը յայտնէին իրենց վիճակէն, թէ՝ Աթմանցի, Աղջատազցի և Գըռըչանցի աշիրաթ Քրդերը չատ ՚ի նա կը հասցնեն եղեր ատոնց, թէ՝ վարձկալներ և պաշտօնատարները հարստահարութիւն և զրկանք կ՚ընեն եղեր գեղացւոց, ևն. ևն։ Բայց գեղին հաստատակութիւն և դրացի բնակիչներն ալ, ինչպէս նաև կառավարութեան պաշտօնեայք կը գանգատէին Ալի աղայէն և Բորեազ պէկէն՝ իրրև կէս ապստամբք, իրրև հարստահարիչք, և գողեր գործածող, նոյն իսկ իրենց անուանած աշիրաթներուն ընկեր և թեւատէր։ Զարմանալի էր որ Ալի աղան և Բորեազ պէկն երկուքն ալ Գըզըլպաշ, բայց զատ աղանդ ունէին, և օրեր եղեր էր որ իրենց աղանդակիցներ և կուսակիցներն առած՝ իրարու վրայ յարձակելով սպաննութիւն կ՚ընեն եղեր երկուստեք։ Թէ՛ ատոնց և թէ՛ այսպիսեաց կռիւներէն օգուտ կը քաղեն քաղաքի մէջ կառավարութեան պաշտօնեայ կամ աղայ եղողներ. Արաբկերի մէջ ամենէն աւելի չահ ունեցողն էր Իսրահիմ

էֆ. որոյ անձն անբաժան է կառավարութեան առեննէն, և ձեռքը տարածեալ է ամեն գեղերու և աշխարհներու մէջ։

Գեղիս կից բլուր մը կայ, կը թուի թէ՝ ի հնումն բերդ է եղած. կը պատմէին թէ՝ ատոր կողերէն և տորոսէն աւերակներ կը բացուին, և թէ՝ երկաթի նետ և չղթայի կտորներ ևս. կը գտնուին, զորս խոփ կուռել տուեր էին։ Երեկոյ է, Ամի աղայի հետ տանիքը բարձերու վրայ նստած ենք. դիտակով կը ցուցընէ Կիւմիւշ կամ Կապան—մատէնի ձորը՝ սեղմուած քարայրանց մէջ, ուստի կ'անցնի Եփրատ, անտեսանելի. ի սպառուած այդ հանրայերանց՝ Եփրատ կ'երեւի, որոյ ափանց քով յայնկոյս՝ հրուանդանի նման բարձրագագաթ լեռ մը կայ և անոր վրայ չինուածք մը։ Ամի աղան կ'ըսէ թէ՝ Հայոց եկեղեցի է այն. այլք կը կարծեն թէ՝ կոստաչուից ժամանակէ մնացած է, ոմանք թէ՝ Աստղերը նայելու դիտարան. վերջապէս կը հաստատեն թէ՝ Ս. Ահարոն անուամբ եկեղեցի է։

Մալաթիոյ ընդարձակ հովիտը կը տարածի մեր աչաց առջեւ. անկէ 11 ժամ է Մալաթիա, այլ սակայն իւր բազմախուռն ծառոց և այգեստանեաց ծաւալը իրեւ սեւ գիծ մը կ'երեւի։

Առաւօտ դեռ արեւ չծագած՝ հեծանք, Տէրսէսէրեանն և իւր մարդիկ, Ամի աղան և Բորնազ պէկն քանի մը ձիաւորով ժամու

մը չափ հետերնիս էկան : Արկաւան գաւառն են նք . քանի մը գեղեր անցնելով հասանք Թէհէր—քէօյ , ուր Միւմիր կը նստի . Ասոնց խեղճ մի էր , եւս հիւրընկալելու զմեզ . իր բնակատունն ու պաշտօնատունն մի և նոյն յարկն էր , որոյ մէկ կողմն ցորեններ , չուվեր , չուաններ , և այլ բազմանքներ , մէկ կողմն գրագիր մը , ոստիկան մը , մէկ պուճախան ալ ինքն խոխրի վրայ նստած , լալկան , անօթի , մերկ , ոչ կրակ ունէր ոչ ճրագ , սուրճ մը անգամ չունէր . իր ամսականն էր 370 դրշ. թղթադրամ. գանգատ ըրաւ որ Քրդեր իր ձին ծեծեր և արօտէն վաներ էին , առանց խոտի մնացած էր , կը վախնար որ գինքն ալ ծեծէին . իր ամսականով և այսպիսի գծուծ վիճակով իսպառ անպատշաճ էր կառավարութեան ներկայացուցիչ և երկրին վարիչ լինելու . « Ոչ ծառայ կրնամ ունենալ , ոչ ընտանիքս և ոչ անձս կրնամ շահել , կ'ըսէր , այս գումարով. հոս ուրիշ շահեր ալ չկան , այն ինչ ուրիշ տեղեր թէպէտ այս ամսականով՝ բայց կըրնայի շահուիլ . . . » : Ասկէ յետոյ դարձուցինք մեր յուղարկաւորները , բայց ճանապարհի ապահովութեան համար հետերնիս դրին Ամի աղան իր մշակ Հասօն , և Բորեազ ալէկն իր մշակ Ահմատն . Ահմատն կտրիճ ու ճարպիկ մէկն էր , իսկ Հասօն կը նմանէր մազոտ սատանայ :

Ամբողջ չորս ժամ կ'երթանք , խմելու

ջուր չկայ, գեղի և մարդոց երեսը չենք տեսներ, ահագին տարածութիւն մը խոտակից, ցուչունք անգամ չեն թողուր, ահոտու տարափոտ վայրեր. չարունակ կը պատահին այս տեղերը պատահած սպանութիւններ և կողոպտութիւններ. Աղջատաղը կը ցուցնեն, Աղջատաղցւոց մինչև այսօր ապստամբ լինելը, ատոնց ձեռքով կարաւանաց և բնակչաց հատած եղեռներ և ջնջաններ, քանի մը տարի առաջ Պարսից Շահզատէի մը սպաննելը, եւ: Արեւը կիպիչ է, և դաշտային գնացքը կարի ձանձրացուցիչ. ահա կը հասնինք Բաբան գեղը, որոյ բնակիչք Գղըլպաշ են. Ալի ագան, Խորեազ սէկն և Տէրսէտէրեան ընդն գրած էին գեղիս մեծաւորաց Պէկթաշին և Մահմատ Ալիին, որ քանի մը ձիաւորով գիշեր ցերեկ ապահով հասցընեն Մալաթիա. բայց աս երկուքն ալ գեղը չէին: Հանգչեցանք ուռենեաց շուքը, ջրոց ափը. և մեծ ախորժակով ճաշ ըրինք, թան, պանիր, վարունկ, սոխ և սխտորով ու եղով տապակուած հաց՝ վրան ալ մածուն դրած:

Ասոնք հոգածութեան մը և խորհրդեան հետ են մեր ոստիկաններ և փրդերը. առանձին կը խօսին կը վիճեն, և վերջապէս կը յայտնեն մեզ իրենց որոշումն, այն է գիշերը այս գեղն մնալ, մինչև մարդ առնունք հետերնիս, որովհետեւ ահա կ'սկսի Եազի—խանի դաշտը, որ այնքան սոսկալի հռչակ ունի իբրև աւազակաց ապատ ասպա-

րէզ, և ուր ամեն օր մարդ կը կողոպտուի, մարդ կ'սպանուի : Ես կը պնդեմ երթալ, Հասօն չատ աղաչանքով ձիոյն սկարանալն ալ պատճառ բերելով՝ ետ կը մնայ . մենք կը հեծնանք և կը քշենք : Կ'անցնինք Գուրուչայ գետակէն, որ գեղի առջեւէն կը հոսի, և յաչնան ու գարնան ահագին կը մեծնայ եղեր : Անմիջապէս կ'սկսի Եագի—խան, որոյ լայնութիւնն է 2 ժամ և երկայն՝ 12 ժամ, ընախիր հող, բայց անջուր մնալուն համար՝ անմշակ և անբնակ է . Թօխմանն—սուլթ գետոյն վերին կողմէն դիւրաւ կրնայ ջուր հանուիլ այս դաշտը, բայց ո՛վ է չինողն : Ամայութիւն որ սիրած է այս կողմերը, անհուն է և զարհուրելի, անդորրութիւն և ապահովութիւն չկայ, լեռնականաց յափշտակութեննէն և կառավարչաց անհոգութեննէն դեռ ցայսօր ամայանալու վրայ է երկիրը : Ահմատը միշտ մեզմէ յառաջ կ'ընթանայ, ամեն կողմն կը դառնայ, կը դիտէ, թէ՛ նա և թէ՛ ոստիկաններ գէնքերը առ ձեռն ունին . մենք ալ մեր նետիչներ (1)՝ և ձիերու վրայ քաջազօտի զինուորի նման սուր կ'արշաւենք . ժամ ու կէս հասանք Եագի—խանի մէկալ եղերը, ուստի Թօխմանսուլին խորհուրդ և բնակակցաց նման բարբառոս արշաւանքով կ'անցնի, քակելով վզնոց

---

1 Նետիչ բառը գործ կածեն տեղ տեղ փոխանակ հրացանի և աղեղանակի։

նելով ափերը, ողողելով ցորենով, բրինձի, բօստանի ընտիր արտեր, որոց ջուրն ալ ինքըն կու տայ, և բերքերը ինքն կ'ապականէ, ինչի՞ կը նմանի այս: Մեծ և հին կամուրջով մը կ'անցնինք, զոր Գէրէ կէօշ կ'անուանեն, չինուած Սուլթան Մուրատէն, բայց մէկ մասն դիակ և մէկ մասն կմախք դարձած է: Ասկէ մինչև Մալաթիա խճուղի չինուած է. հեռագրի թելեր և սիւներ գտանք, խորհ՛ն ազդեցութիւն ըրին վրաս, զորս Սեւաստու լեռներէն կորուսած էինք: Բաղդատի մեծ ճանապարհի մէջն ենք: Անցուդարձներ, մըշակներ, քաղաքացիք և գեղացիք կը հանդիպինք, լոյս աշխարհն ինկանք: Կամաքամկաց ազբիւրին քով ծառոց չուքը չնթռկեր են խոշոր չներ, իրենց չոքէն լեզուն դուրս ձգած լըխկ լըխկ կ'ընեն, անոնց քով կոմլու ու հորթ, էշն ու քուռակ, գրդու աղջիկն ու կեղտոտ պառաւ, և քանի մը բաց գլուխ ու անվարտիկ կուռօ, կճէ, փոքրիկ լամուկներ՝ այծերու մօրուքէն կը քաշկռտեն կը մկմկացնեն: Ջուանալով այս ջրով, և զուարճանալով այս տեսարանով, թողինք ու առաջացանք. հարթ և ընտիր արտորայք կան մեր երկու կողմն, ամեն տեղ կալ կ'ընեն, որաներ կը կրեն. լեռներու կը մօտինք, արեւը կը խոնարհի, գոլպին օդը զուարթութիւն կը սփռէ 'ի մեզ, և գիւղ Ահմէտան ու ոստիկանք փոխ առ փոխ «բօռ—օղլին» և այլ խաղեր կը կանչեն: Գառաս-

տանք և վազուն ջրեր կ'ափոփեն մեր տըքնուԹիւնը՝ ողջունելով զմեզ : Մօտ ենք հին ՄալաԹիա քաղաքին , կլոր երկայն քար մը մը կայ տնկուած ճանապարհին վրայ , որ ցուներէն գիր ունի , և գագաԹը քիչ մը փոս : Կը պատմեն ԹԷ՝ ՍուլԹան Մուրատի տնկած քարն է այս , իբր կէս կամ կեդրոն իւսքիւտարէն մինչև Բաղդատ երԹալուն , ԹԷ՝ աղջիկ մը մէկ ձեռքով բարձած այս քարը և ՍուլԹանի դիմացն ելած է , որոյ քաջուԹեան 'ի նշան հրամայեց կանդնել կոԹող անոր յիշատակին , ԹԷ՝ քարի գլխու փոսին մէջ ալ մը ոսկի դրեր է ՍուլԹանն և Բաղդատէն վերադարձին տեսեր է որ ամբողջ նոյնուԹեամբ կը կենայ , զարմացեր ՄալաԹիոյ բնակչաց քաջուԹեան և հարըստուԹեան , որոց տկար աղջիկն քարէ ալիւն մը մէկ ձեռքով կը բառնայ , որոց մէջ ազքատ ու կարօտ մէկը չկայ . երանի՛ տուեր այս երկրին , երանի՛ իւր ԹագաւորուԹեանն Բայց այդ քարը և իւր արձանագիրը իմաստասիրելու արժանի առարկայ մ'է :

Վերջապէս համեղուԹեամբ , խոշորուԹեամբ , աղուորուԹեամբ և առատուԹեամբ հռչակաւոր ՄալաԹիոյ մրգաստանեայց մէջն ենք . ԹԹենի , ծիրանի , տանձենի , խնձորենի և այլ պտղատու ծառոց դրախտներ , և զանոնք վայելելու , ժողվելու չորացնելու զբաղող Ադամ—Եւայներ , ամեն ուրեք : Ապա քաղաքի պարիսպներ , բուրգեր , որք

տեղ տեղ վլած են, խրամներ, որոց մէջ թխթխուն անկած են, ականակիտ ջրեր, ուր խումբ խումբ թրքուհիք կաւ և ճերմակեղէն կը լուանան, մինարէներ, դմբէթներ, քարաշէն տուներ, բաղնիքներ, մէջնարերդ, մեծամեծ քարակերտ շէնքեր, պորս առանց մէջը չրջելու՝ կը դիտենք, ամենուն ալ աչերուն իր ծանր ձեռքով հարուած տուած, ա՛յս է եղեր այն պատմական հին և անուանի Մելիտինէն Հայոց, զոր այժմ կը կոչեն Էօթէ շէհիր, Հին—Մալաթիա: Ա՛յս քաղաքն է որ հին դարերու մէջ Արեւելեան և Արեւմտեան խուժադուժ ազգաց, ժողովրդոց և իշխանութեանց արշաւանքներ տեսած է. Միջագետք՝ որ յատուկ Աղէքսանդրի՝ Յունաց և Հռովմէացւոց, Բաբելացւոց, Մարաց, Պարսից և Հնդկաց ուժերու, պիտար ջախջախելու, աչխարհակալելու թատր եղած էր, այդ ամենայն անցքը Միջերկրականէն և Բաբելոնէն երկուստակ Մելիտինէն էր, ինքն իսկ երբեմն նպատակ լինելով յարձակողաց, մանաւանդ Միջին դարուն, մասնաւորապէս Հազարացւոց և Թաթարաց արշաւանաց առջեւ. անուանի հանդիսացած է ընդհանուր, Ազգային, և Եկեղեցական պատմութեանց մէջ, որ չատ մարտիրոսներ ունեցած է, այլ իրօք վերջին դարերուն մէջ թուրքաց չահատան մը: Հազիւ 45—50 տարի կայ որ ձգած են բնակիչք այս քաղաքը, և գնացած ժամ մը հեռի Նոր—Մալաթիան կը բնակին,

ուր յառաջ իրենց այդեստանն ու ամարանոցն է եղած : Սակայն հին քաղաքի դիրքն ու օդը լաւագոյն է նոր քաղաքէն . դեռ կան քանի մը հարիւր տուն թուրք բնակիչք հոս, և Նորին ալ ամառը չատեր կու գան իրենց պարտէզներ և պտուղները մշակելու և կթելու :

Ցառաստանք կը վերջանան , քաղաքի ներքին աւերակներէն աչքերդ վեր առնելով՝ յանկարծ կը պատահիս անթիւ գերեզմանաքարերու խառնուածքի մը , ուր կը ներկայանան Մալաթիոյ թրքաց փոթթոգաւոր գլուխներու կերպ կերպ ձեւեր , որոց երեւոյթն իսկ կը զարհուրեցնէն զմարդ , թէ ի՞նչ սոսկալի անձինք են եղած , որք թէպէտ հողոյ տակ՝ այլ դեռ սարսափ կ'ազդեն տեսնողին :

Անցանք , և ահա բանակ մը 300 իշոց և 100էն աւելի սպառազէն Քրդաց , տարօրինակ վեճութեամբ փոթթած են իրենց գլուխները , արիւնկզակ մարդիկ , որք կ'երթան Սեւաստ աղ գնելու . բոլորն ալ առանձին առանձին դիտելով զմեզ , իրարու կը խօսէին «էվհա ընդ՛նէ ա՛, թէվընէ ա՛, ևն» : Մեր ձախ կողմն մօտ ընդ մօտ դեղեր կ'երեւան Թրքաց , ջրերով և ծառերով առատ , և ահա վերջապէս Մալաթիոյ բերանը հասանք : Քաղաքի չէնքերը բնաւ չեն տեսնուիր , ժամէ մը աւելի տարածեալ ծառատունկերու անտառ մը կը թուի , բարձրացած բարտեզնիք և այլ և այլ տունկք թանձր ու խիտ

կը փակեն աչքէդ քաղաքն ու չէնքերը · փողոցները կանոնաւոր և անկանոն, գրեթէ ամբողջովին անմաքուր · ջրալից առուներ ամեն թաղ, ամեն տեղ տեսածդ՝ թուրքեր են . լամուկները յետին աստիճան լիրբ , սըրիկաները և արբեալները կը վխտան : Դըռներու վրայ Շամայ մեծ գլուխներով և երկայն մօրուքներով թուրքերը նստած կը ծըխեն և ծանր ծանր կը խօսակցին , խոժոռ ու խորհրդաւոր հայեացքներ ձգելով անց ու դարձ ընողին վրայ . հոս եկած էին էրզրումէն դաղթական քանի մը տուն բարեպաշտ Միւսլիմաններ , չկրնալով հանդուրժել կեղեքում Ռուսի իշխանութեան տակ մնալ և իրենց խղճմտանքը հանդարտել :

Շուկայի մէկ կողմով չրջելով հասանք Մայր եկեղեցին , Ս· Սարգիս , ուր էր Հայոցըս Առաջնորդարան : Ո՛հ Առաջնորդարան , արդեօք ի՞նչ ջրով պէտք է լուանալ զքեզ . . . : Քո աղտոտութիւնք , մաշուած չէնքդ , անճահ կահերդ , անկարգ կազմաւորութիւնդ , հսկայ լուոց լեգէոններ , մոծակաց խազախ հեծեծազօրք , հետեւակազօր ոջիլներու գումարտակներ , և պաշը պօզուք ճանճերդ , որոցմէ չրջապատեալ իրրև պետ և թագաւոր կը բազմէր վերին աննիւն առաջնորդն Մելիտինոյ Նորին Սրբազնութիւն Տ· Սրապիոն Եպիսկոպոս , որ սոյն հանդիսական դահլիճին մէջ ընդունեց զմեզ , ուր վազվազակի իմ անարժանութիւնս յայտնեցի այդքան փա-

առաջուբ առաձնչականութեան . և Սարաֆեան Աստուր աղայի տունը նորակերտ մաքուր սենեակով մը դոհ եղայ , ուր գոնէ միայն նիզակաւոր վաշտ մը մոծակներ (խոշոր և խայթող «էվէն-ինէկներ) նուագներ ածելով ոտատկը հարկանէին մեզ , չարունակ համբուրելով մեր ոտք ու ձեռքերը և երեսները։ — Գոտա՛նք։

Ցաջորդ օր կառավարութեան մարդիկներէն և ազգայիններէն շատեր մեր պատուա չնորհաւորելու եկան , ինչպէս նաև Բողոքականաց Սարտիրոս պատուելին , և Կաթոլիկաց եպիսկոպոսի կողմէն՝ երկու եկեղեցականք , զորս Առաջնորդարանը ընդունեցի . այս առթիւ բաւական թեթեւացաւ զօրաց բանակը , վասն զի ամեն եկողին հետ իրեն յուզարկաւոր պաս դաս կ՝երթային , բայց պահեստիք նորէն անոնց տեղ կը բռնէին ։ Քաղաքական ժողով անունով մարմին մը կար , որոց ներկայացուցի իմ պաշտօնական գրերը , և հարկ եղած նախապատրաստութիւնները խնդրեցի ։

Երրորդ օրը վոխադարձ այցելութեան հրջեցայ . Միւթասարիֆը վոխուած էր , տեղապահ Մօլլային ներկայացանք ։ Որքան արժանի էր այս անձը այնպիսի քաղաքի մը , կառավարութեան պալատն ընդարձակ չէնք մ՝էր , բայց կառավարութիւնը չէն չէր ։ Նոյն իսկ քաղաքին մէջ և շրջակայքը ամենայն չարիք և եղեռն համարձակ կը գործուէր , կատարեալ անիշխանութիւն էր ,

և անբարոյականութիւն, յափշտակութիւն, լրբութիւն ու սպանութիւնք՝ սիրական պաշտօնէութեան դարձած էին. ասոնց հետ մէկտեղ՝ տղուչներ և խեղդեր ալ բազմաթիւ էին, որ գեղմ ու մոլի կենաց հետեւանքներ են: Գրեթէ ամեն որ այն պրախատզեղ ծառաստանեայց և ջինջ ու առատահոս առուաց ու աւազանաց քով նոսած ծալապատիկ կակուղ բազմոցներու վրայ, կը կկլացնէ իւր նուիրեալն, կը կոնծէ օղին և գինին, կը լափէ խորոված՝ն, գլորիկն (քիւֆթէ) ու բիլաւը, կը խճոդէ բազմազան միրգն՝ի կոկորդն և՝ի ծոցն. դարձեալ օղի, անուշ աղիւնի հոտէն և օդոյն տաղէն ալ ազդուելով և ահա կամ թմրեալ իր եղած տեղը կը մնայ, կամ գրկուելու կիրքերէն կը վարի աստ և անդ զոհեր որոնելու: Մալաթիոյ մէջ ուր կը հաւաստէին թէ՝ տարին առ նուազն 120000 լիրայ կը բերէ աղիւնի վաճառքը, դարմանալի էր տեսնել որ քաղաքացիք շատ անչափ բաժին մ՚ունէին այս գումարէն, և այն՝ միջնորդ լինելով և նենգելով և եթ, այլ բոլոր այս բերք մշակողներն և չահոզներն վայրենի գրդեռն էին: Դրամատէր հարուստ Հայ չկար այս քաղաք, բաց՝ի քանի մը վաճառականներէ, որք պանդուխտ էին: Թէպէտ կարօտ ոք ալ չկար. և իրենց մեծամեծ տներով, ընդարձակ այգեստաններով, ծառաստաններով, և քիչ մը չահով երջանիկ կը կարծէին ինքզինքնին. նոր նոր արթընա-

ցեր էր իրենց մէջ դժդոհութեան հոգին, և կը հաւոզուէին թէ պէտք է գործել և յառաջադիմել թէ՛ նիւթական և թէ՛ մտաւորական ասպարէզին մէջ։ Արդարև Հայոցմէ կ՚սպասուէր այս. վասն զի իրենք էին միայն Քրիստոնեայ տարր այդ տեղը. բայց զիրենք ալ զարթուցանող, լուսաւորող և առաջնորդող կը պակսէր։ Կրօնական և ուսումնական վիճակնին մտայլ. Հայ վարժապետ մը ունէին՝ զոր Թօջա կը կոչէին, կը դասախօսէր տաճկերէն, հայերէն, գիր, թիւ, ձայնաւորութիւն, կառավարիչ էր և տնօրէն և ամենայն ինչ։ Գրագիր էր Առաջնորդարանին, և այլ ուրիշ պաշտօններ ունէր, ո՞վ կրնար դատել զինքն թէ իրաւ այսքան բանդէ՞տ էր կամ բան մը չգիտէր. իրեն կ՚ըսէին՝ Բաւական ես մեզի, դու ամեն բան գիտես, ամեն բանի կարող ես։ Երկու կամ երեք անձինք միայն կրնայ գտնել մարդ ժամանակին պահանջմանց վրայ գաղափար ունեցող, ընդհանրապէս խորին հնութեամբ կ՚ապրին իրենց ներքին և արտաքին կեանքով։ Ադիւտանն և Պէհէնի տոյն Առաջնորդութեան թէմին լինելով, ոչ ոք տեղեկութիւն ունէր. բաղդաւոր էի որ դժբաղդ առթիւ մը Առօ անուն Հայ մը այն կողմէն բերուած էր կառավարութեան առեանը դատուելու. ծեր՝ այլ աշխոյժ անձ մը, որ երկար ժամանակ վարձկալութիւն և դանձապահութիւն ըրած լինելով՝ անձամբ և մանրամասնօրէն գիտէր

Հայոց վիճակին, բնակութիւններ և թիւերը, անկէ քաղեցինք մեր տեղեկութիւնները: Ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և հոս ապրուպրեցի որ Ա.ռաջնորդարանի մէջ ապգահամարութեան տումար ունենան, և հետազհետէ ծնածն ու մեռածը նշանակեն: Բայց միթէ ուրիշ խնդրոց տումար կամ արձանագրութիւն կա՞ր, բնաւ: Ս. Ա.ռաջնորդն իւր ձիէն զատ բան մը չէր յիշեր. ամեն օր իւր հոգն ու խօսքն իւր ձինն էր, իւր ծախած ձին, իւր առած ձին . . . : Ա.ւա՛ղ, խոր ցաւեցաւ հոգիս: Մալաթիոյ Ա.ռաջնորդութիւնը Սոյ կաթողիկոսութեան թէմն է:

Ս. Ա.ռաջնորդի հետ վանքերը չրջելու գնացինք, որ հեռի չեն քաղաքէն: ԼՈՒՍԱԻՈՐՉԻ վանքը՝ բարձր և հովասուն դիրք մը ունի, փոքրիկ տաճարով մը և քանի մը քարուկիր սենեակներով. բոլոր դռները բաց, ամայի, ապականութեանց մէջ. մարդ ունչան չառեաւանք, այլ իրրև որջ կը բնակին եղեր հոն դիշերները աւազակներ և արիկաներ . . . օդն ու ջուրը պքանչելի, ընտիր արտեր ունի: Ա.յս է այն վանքը, որոյ կրօնաւորներ չատ ձեռագիր եկեղեցական մատեաններ գրած են, ինչպէս տեղ տեղ յիշատակարանաց մէջ ընթերցայ: Բայց այսօր այս աւաղելի վիճակին խնալուն պատմութիւնը լսելու արժանի է:

Ա.յս վանքի մէջ տէր Սահակ անուն քահանայ մը իւր ընտանեօք կը բնակի եղեր,

ինչպէս՝ որ իւր հայրն ալ բնակեր է, ապրին հաճութեամբ իրեւ վանահայր և իրեւ մշակ. այս տարի խնդիր ծագելով՝ տէր Սահակն եղեր է սեպհականելու վանքի բոլոր արտերն իւր անձին, բարերաղդաբար Ըռֆֆան անոր անուան վրայ չեն ըրած. Ապպային գաղ. ժողովով կը բռնեն գինքն, և իւր տունը վանքէն կը հանեն. նա կը դիմէ կառավարութեան ատեաններըը, կը դիմէ մինչև Տիգրանակերտ—վիլայէթ, երկուստեք ծախքեր տեղի կ'ունենան, մինչև կը հեռագրուի Ս. Պատրիարքին. և Ս. Պատրիարք կը կանչէ տէր Սահակը Կ. Պոլիս. նա կարճ ճանապարհը կ'ընտրէ, կը դիմէ Մալաթիոյ կաթոլիկաց Ղեւոնդ գերապայծառին, անոր հաւատքն ու խնամքը կ'ընդունի, յուսալով թէ այնու սիրտ կարող լինէր տիրելու վանքի հողերուն կամ վանքն կաթոլիկաց ձեռք անցուներ, Լուսաւորիչն՝ պապական դարձընել: Մի՛ զարմանար ասոնց խելքին. Գերապայծառն, որոյ միայն արտաքինն է պայծառ, ինքնին պատմեց ինձ թէ՝ ինչպէս կանխատես մարդ մը և մուտ մը տեղ չեն ունեցած հոս, թէ ինչպէս ժողովրդական հակառակութեանց երեսէն այսօր բաւական թուով կաթոլիկ, մեծ եկեղեցի մը, վարժարան, առաջնորդարան, և այլ կալուածներ ունին, թէ՝ իրենց չահուն մեծ մասն Մալաթիան Առաքել վարդապետին պարտականն են, որ երբեմն Առաջնորդ էր քաղաքիս, և

միջոց մը ինքն իսկ ժողովրդեան մասին մը հետ կաթոլիկ եղած, եւ. եւ. Անոնք տեղի ունեցած էին ոչ թէ գերատայծառին հանճարեղութիւններէն ու զօրաւորութիւններէն, այլ Մաղլմեանի չարաբարոյութիւններէն, ուրիշ ա-ռաջնորդաց անպիտանութիւններէն և ժողովրդեան ազիտութիւններէն։ Զարմանալի ուրեմն թէ ինչպէս մնացեալներն Հայ մնացած են ցարդ։ Արդէն մաս մ'ալ Բողոքական են, բայց գրեթէ անխտիր են իրենց եղրարց հետ, ինչպէս իրենց պատուելի Մարտիրոսն ալ անկեղծ Հայ մ'էր և բարեխիղճ անձն մը։

Շրջեցանք վանքին արտերը, պրտտ հնձել կու տային Բրդաց։

Վանքիս տաճարի դրան ճակատի վրայ գրուած էր. «Շինեցաւ դաւառս Ս. Գրիգորի ձեռամբ Յիսուսին եպիսկոպոսի. 'ի թուին Հայոց ՊՉԸ. մարտ Գ. յիշատակ ինձ և ծընող. . . .»։ Տաճարի դռնէն դուրս գերեզմանի մը արձանագիր, «կանգնեցաւ չիրիմս Փրկչէ. . . նահատակ Սահական վարդապետին, թվին ՌՄԻԶ. ին»։

Ս. Գրիգորի կամ Լուսաւորչի վանքէն իջանք ԱՆԱՐԾԱԹ ԲԺԻՇԿ, որ պաշտամունքի մէջ փոքր դարի մը տակ աւերակ մատուռ մի է, միայն երկու կամարը ողջ. իւր շուրջը աւերակաց կոյտեր ունի. չէն վանք է եղած. մատրանն աւելէն կը բղխի մեծ ջուր մը, որ կ'ըսուի Բռնաղբ պաշէ, աւազան է բաղում ականց, որոց պարզ և պաղորակ ծոցոյն մէջ

ծիծիալով կը լողային ձկունք, և մեսաղաւլար սէգն իւր կանանչագեղ գորգերով կը զարդարէր աւազանին ջրհանակը. տեղի խիստ զուարճալի, որոյ հողերը թրքաց ձեռքն էին, իսկ մատուռը՝ քանի մը տարի առաջ կաթոլիկներ գաղտնի ջանացեր են կառավարութեան ձեռքով տիրել և վանք մը կառուցանել, հապա արթնցեր են Հայք, և թէպէտ յաջողեր են խափանել կաթոլիկաց չինելը, այլ իրենք գէթ մատուռը նորոգած չեն։

Անարծաթէն անցանք Օրդուզի գեղը, Ս. ՓՐԿԻՉ վանքը, որ բաւական չէն է սենեակներով, պարտէզներով, եւ. ուր անպակաս են ուխտաւորք և երթեւեկք. հող մը ունի բակին մէջ, յորմէ դեղնութիւն ունեցողներ կ'ուտեն ու կ'անցնի. ուխտաւորաց մեծ մասն Ցաճիկ կանայք են. վանքի դիրքն հովասուն, ջրաէտ և ապահով լինելուն՝ օդափոխութեան և զուարճանալու համար եկողներ ալ շատ կան, ուր տեղի կ'ունենան խաղ, դափ, պար, եւ։ Ս. Փրկչի տաճարը խիստ ընդարձակ և հոյակապ չէնք մը եղած կ'երեւի իւր աւերակէն. արդի տաճարը՝ աւերածոյն մէկ մասն է, զոր ծածկեր են. մութ և խոնաւ է, ուր Պատարագ կը մատուցանեն Լիրակի օրերը քաղաքի քահանայք շրջանով. փոքրիկ մատուռ մ'ալ կայ տաճարին աջ կողմն՝ նոյնպէս մութ։ Դրսէն հիւսիսային պատին վրայ դրան մը տեղ կայ

գոցուած , և անոր ճակտին վրայ յունարէն գրով արձանագիր մը : Ըստ աւանդութեան, Լէնկթէմուրի աւերածն է եղեր այս մեծաշէն տաճարն , և ասոր հողեր ու կալուածները տիրեր են Թուրքեր : Օրդուզի գեղը բազմաբնակ է և դրախտի պէս զուարճալի՝ ծառերով և ջրերով. բնակիչք Թուրք են և քիչ մ'ալ Հայք . գրեթէ քաղաքի արուարձան կը սեպուի :

Դարձանք մեր պաշտօնատեղին :

Ես , որ ոչ ծովէն ու ցամաքէն , ոչ Չէրքէզէն ու Քրդէն , ոչ պչնելէն և քրտնելէն չէի տակաւցած , Մալաթիոյ մէջ օրէ օր , ժամէ ժամ , վայրկեանէ վայրկեան անդամ զգալի ծանրութիւն մը և տկարութիւն մը կ'զգամ : Բոլոր քաղաքը հիւանդ է , ծառոց խառութենէն օդ չխաղար , ջրոց շատութենէն և լերան առորոտը չինուելէն՝ խոնաւութիւն կայ , արջառոց հիւանդութեան կոտորած՝ չորս կողմը սատակներով լցած , ոչ օր է որ զանոնք թաղէ . արեւ կիզիչ , ապր և աղբիւս , փորոտիք և կղկղանք , խոտերու և միրգերու ապականած վիճակը՝ ամեն տեղ թոյն կը սփռեն. բնակիչք զանազան ախտից բռնուած , մարդ չկայ , որ գոնէ տենդ չունենայ , հիւծոդականն , վէրքէն , տեղական ախտից կարգէն է. ո՞վ կրնայ սոնց հասկցնել , առողջապահական դպրութիւններ , օրէնքները , Աստուծոյ հակառակ խօսիլ էր . և թէպէտ Մեհմէթէն հեթիզ ալ ունէին , բայց կը դանդաղէր

թէ՝ երբէք բաժներս ուշադրութեան չեն առնուր : Փախչիլ որոշեցի , և ամառարեցի վիճակագրութիւնս լրացնել :

Յուլիս 28 : Նոր Միթհաարիզը քաղաք մտած էր գիշերուան ժամ 3ին . առաւօտը գալուստս չնորհաւորելու գնացինք , որ իջեւանած էր քաղաքի երեւելիներէն Հաճի ալէյ անուն ազնուական Տաճկի մը տունը . ընդարձակ սրահ մը , առջեւը բաց , որոյ միջեւէն կը հոսէր գետոյ չափ մեծ՝ սառն և ապխտակ ջուր : Ձիերը հասան , մարմինը գէր , հասակը բարձր , քիչ խօսելու անվարժ , լեզուն ալ Ցունաց նման ծեք ծեք Թուրքերէն , Կիրիտցի էր ինքն , և Շ· Գարահիսարէն կու գար : Ակն կ ընդունելութիւն ըրաւ , և պատուեց գիշերը քաղաքի մէջ իրեն գալատեան միջոցին պատահած հետեւեալ դէպքը :

Թուրքի մը տան առջեւէն կ՝անցնէինք , ըսաւ , տանիքէն մարդ մը ինքզինքը վար նետեց և իննկաւ ջուրը . քանի մը հոգի ալ տանիքի միւս կողմէն փախան ազազակելով և հրացան կրակելով : Փաշայի մարդկիններէն ոմանք կը կարծեն թէ՝ գողեր են , և հարկին ու աղջիկը կ՝ուշաթափին՝ կարծելով թէ փաշան զարնուեցաւ . փաշան ալ կը կարծէ թէ ջուր իյնողը հալածեալ մ՝է օգնութեան կարօտ , այն ինչ ոստիկաններէն մէկն ալ զանի զարնել կ՝ուզէր . վերջապէս նա կը յաջողի խոյս տալ , և սառնք տարտափալից բայց անվտանգ կ՝անցնին : Առաւօտեան տաճիկ կին

մը կը ներկայանայ փաշային, թէ՝ Ես այն տանը տէրն եմ. իմ աղջիկս բռնաբարել եւ կած էին անոնք որ տանիքէն փախան, որոց պարագլուխն էր Ապտուլ Գաատիր էֆ. Ջուբ իշնողը: Քաղաքի էն պատուաւոր եւ բարձրաստիճան անձին որդի էր սա, ինքն ալ նոյնպէս պատուաւոր եւ առեղնական մարդ, որուն քանիցս հրաման ղրկեց փաշան, այլ չկրցաւ բերել տալ: Ամեն մարդ մատ խածաւ:

Մենք ալ պատմեցինք Փաշային մեր գիտցածները, եւ թէ ինչպէս կը նախատուէին կը հայհոյուէին կը քարկոծուէին Հայեր, իրենց կանայք եւ զաւակները, իրենց հաւատքն ու պատիւը. եւ թէ՝ ինչպէս քահանայից ու նոյն իսկ Առաջնորդին եռեւէն «Քէշիշ, օ՛շ օ՛շ» կը պոռային ու քարեր կ՝արձակէին, որուն մենք ալ ականատես եղանք, եւ յատուկ ճոխ-րէր գրուեցաւ. բայց գործադրուեցաւ կարծեմ՝ ոչ: Երկու օր վերջն ալ Քրդերը զօրանոցին մօտերը ձիաւոր զօրք մը զարկին. եւ քաղաքին մէջն ու դուրսը չարագործներով լցաւ: Գործերն ելան Դիոսի գերանին վրայ: Ընդհանրապէս այս սովորութիւնն ունին Քրդերը եւ չարագործները. ամեն նորեկ կառավարչի մը առաջին օրերը իբրև փորձ քանի մը չարիքներ կը գործեն. եթէ եկողը աչալուրջ եւ կարուկ իշխանութիւն ցոյց տուաւ, կը հանդարտին, եթէ թոյլ ու չուաար մնաց, ազատաբար ամենայն ինչ կը գործեն:

Հայոցմէ ոմանք առանձին եղած առեն

շատ վատ բաներ կը պատմէին Տաճիկ պաշտօնէից և բնակչաց ըրածներէն. բայց երբ իրարու քով գտնուէին, չէին համարձակեր բան մը խօսիլ, և խոհեմութիւն կը համարէին իրենց այս վարմունքն. վասն զի, կ'ըսէին, Դատող ու պատժող մը չեղաւ մինչև այսօր, և եթէ լսեն մեր գանգատ ընելը, պիտի աւելցընեն իրենց չարիքներ։ Դէպք մը, զոր ամենքն ալ կը պատմէին զատ զատ, և կը ժխտէին միշտ այլոց առջև, բայց յայտնի էր թէ ականատես կը ժխտէին. այն էր, դեռ փոքր միջոց մը առաջ՝ փայտէ խաչ մը կախեր էին շան պարանոցէն, և շուկայի մէջ չրջեցուցած էին Հայոց խանութներու առջևէն, իբրև թէ Ռուսաց նախատինք ընելու նպատակաւ. խոհեմ Հայերը լուռ թեամբ նայեր էին վրան. և երբ փախատեր էին կառավարութեան ականջին, խափանել տուեր էր, և փութացեր էր պատասխանել Հայոց թէ՝ լեռնէ մ'է եղեր այդ բանն ընողը։ Այլ մինչ շուկայի մէջ բազմոց և շան ետեւէն քալող այնքան թուրքերը բոլո՞րն ալ խեղդ էին։ Կարի երկիւղով պաշարեալ են Հայք, ոչ իրենց իրաւունքը և ոչ իրենց կրօնքը կրնան համարձակ խոստովանիլ։ Եթէ այսպէս ապրին, լաւ է որ չապրին։

Այսպիսի քաղաքները եթէ Եւրոպական հիւպատոս գտնուի, շատ մեծ տարբերութիւն կ'ընէ ներկայ վիճակէն. դժբաղդաբար աղէկ Միւթասարիֆներու ալ արժա-

նացած չեն · բայց գոնէ Հայոց Առաջնորդն ժիր և բանիբուն մէկն լինի , գրեթէ կէս միաբանարիթ և ամբողջ հիւպատոս մը կրնայ համարուիլ , և եթէ լուսաւորուի ժողովուրդն , կ'արիանայ լինքզինքը պաշտպանելու · զի գիտութիւն՝ զօրութիւն է :

Մալաթիոյ քաղաք · կառավարութիւնը Միաբանարիթութիւն է , Տիգրանակերտի վիլայէթին ներքեւ : Եկեղեցիք Հայոց՝ Յ· Ս· Սարգիս՝ Մայր եկեղեցին · Ս· Յարութիւն և Ս· Երրորդութիւն : Վարժարանք Յ· Մեսրովբեան , Նարեկեան և Արշակունեան : Ծախք վարժարանաց տարեկան 7000 ղրշ· եկեղեցիներէն : Ուսանողք՝ 400 մանկունք :

Հայաբնակ թէմք :

ՀԻՆ—ԲԱՂԱՒ · Եկեղեցի 1· Ս· Սահակ Պաննոս :

ՕՐԴՈՒՉԻ գեղ· եկեղ· 1· (Ս· Փրկչի վանք):

ՉԸՐՄԽՏԻ գեղ· եկեղեցի 1· Ս· Էջմիածին:

ՀԷՔԻՄ ԽԱՆ Ա.ան· Միաբերութիւն : Եկեղեցի 1· Ս· Աստուածածին :

ԱՆՍՈՒՐ գեղ· . . . . :

ՄՈՒՇՈՎԿԱՑ գեղ· եկեղեցի 1· Ս· Յովհաննէս :

ՊԷՀԷՍՆԻ քաղաք · Գայմագամ· Մալաթիոյ միաբանարիթեան տակ : Եկեղեցի 1· Ս· Փրկիչ : Վարժարան 1· Ներսիսեան : Ուսանող 40 մանկունք : Բնակիչք մեծաւ մասամբ Թուրք : Կաթոլիկ և Բողոքական Հայեր ալ կան :

ԱԴԻԵԱՄԱՆ քաղաք, կամ ՀԱՍԱՆ ՄԱՆՍՈՒՐ · Գայմագամ. Մալաթիոյ Միւթասարիֆութեան տակ ; եկեղեցի 1· Ս· Աստուածածնին ; վարժարան 1· Ռուբինեանց ։ Ըսանողք 50 մանկունք ։ Բնակիչք՝ Թուրք, Ասորիք, Կաթոլիկ և Բողոքական Հայք ։

Հայաբնակ գիւղորայք Պէհէնիոյ և Ադիեամանի ։

ՍԱՄՍԱՏ (Սամոսատ), ԳԱՎՐԱԿ, ԴԱՐԴԸՂԱՆ, ՂԱՆԴԱՐՈՒ, ԿԷՕԼ—ԲՈՒՆՂԱՐ, ՔԱՐԲՈՒՇԷՆ, ԳԸՋԸԼՃԷ—ԲՈՒՂՆԱՐ, ՎԱՐԴԱՆԱՑ ԳԵՂ, ԲԱՐԲԱԴՈՑ, ՔՕԼԻԿ, ԲԷՕՑԻՒՔ—ԲԱՂ, ՆԱՈՒԸՃԷ, ԳԱՆ, ՀՈՒՆԻ, ՔԱՎԱՐՏԻՇ, ՂԱՐՊԻՇ, ՀԷՆԻՃ, ԿԱՐԿԱՌ, ՓԷՐԴԷՍՈՑ, ԹԷՄՍԻԱՍ, և ՔԱՂԴԷ ասան, ուր Գայմագամ կը նստի ։

Վերոյիշեալ գեղերն ամենքն ալ առանց եկեղեցւոյ և առանց վարժարանի են. միայն քաղդէի մէջ եկեղեցի մը կայ Հայոց Ս· Գէորգ անուամբ ։ Իսկ բնակիչքն են Հայ և Քիւրդ, տեղ տեղ ալ Ասորիք և Թուրք կան ։

Լերինք Մալաթիոյ · տեղական անուամբ ԱՂ—ԴԱՂ, ԲՀԿ—ԴԱՂ, քաղաքին հարաւը. որոց բնակիչքն են արիւնկզակ Քիւրդեր, Մալիկանցիք, Ալիկանցիք, Քավի, եւ. թէ՛ հասարակաց ճնասակար և թէ՛ ցեղ ցեղի սաստիկ ոխերիմ· Այս լերանց միւս երեսն է, Պէհէնիի և Ադիեամանի ։ Աղջադաղ լեռն՝ Մալաթիոյ արեւմուտքն է, որոյ բնակիչ Քըր-

դեր 5—6 հազար տուն են, կիսով չափ Գը-
դըլպաշ, որք մեծ չարիք կը հասցնեն Ա.րար-
կերու, Հէքիմ—խանի, և Հալէպի ճանա-
պարհաց, ու անոնց մօտ եղած գեղերու և
քաղաքաց, ոչ գործք կու տան տէրութեան և
ոչ տուրք: Այս լերինք Անտիտորոսի հղթայն
են: Աղջատաղի մէկ ծայրն կը հասնի Մարաշ՝
կեսվրայ փոխ անունը առանալով: Աղջա-
տաղն է հիւդ այն ՍԵՒ ԼԵԱՌՆ, որ ՍՈՒՐԲ
ԼԵՐԻՆՔ ալ կոչուած են մեր պատմութեանց
մէջ, ուր լի էին Ասորւոց և Յունաց միանա-
ձանց վանքեր, ուր նաև մեր Գրիգորիաններ
և Ներսէսներ ծաղկեցան, Շնորհալւոյ օրերը
և անկէց գկնի խիստ հռչակաւոր վանքեր
ունեցանք իրրև դպրէվանքեր, ուր թէ՛ մեր
երջանիկ վարդապետաց գրիչին, թէ՛ մեր
դիւցազն Ռուբինեանց, Թորոսեանց, Լեւոն-
եանց եւ. սրոյն ու նիզակին փառաւոր հան-
դիսարաններ եղած են: Ինչպէս վերեւ նչա-
նակեալ ցանկին մէջ կը տեսնուի՝ դեռ եր-
կու գեղ կայ Աղջատաղ՝ Հայարնակ և Հայ-
անուն, ԱՆՍՈՒՐ և ՄՈՒՇՈՎԿԱՑ· Մուշովկայի
ծերունի տէր Յակոբ քահանայն տեսայ Մա-
լաթիոյ մէջ, որ կը պատմէր թէ՝ բոլոր Աղ-
ջատաղի ձորերն ու բլուրները աւերակներով
լի են· խաչքարերու աւերակոյտներ, զորս
կը յարգեն Գըզըլպաշներ և կ՚ըսեն թէ՝ եկե-
ղեցի են եղած այս տեղեր· խաչքարերու
վրայ յաճախ Յունարէն և Ասորերէն գրեր
կը տեսնուին, դուն ուրեք ալ Հայերէն·

բայց Հայոց խաչքարեր յայտնի են, ըսաւ, վասն զի բեւեռ ունին մէջտեղը, թէ՝ թաղէոս առաքելոյ օծածներն են այն բեւեռները: պատմեց թէ ՂՈՒՐՇՈՒՆԼՈՒ ԳԱԼԱ գեղի գըղըպաչները աւերակ մը փորեր էին, ուսուի չորս խաչաքար ելած էր, և եկեղեցւոյ կամարները կային, ոմր ցակոբը կանչեր էին գրդերը, և սա գնալով խաչքարերը մէկ կողմ առած էր, եկեղեցւոյ շուրջ քարերով կիսացանկ ըրած էր, և այն խաչքարերու բեւեռները հանելով իւր քովը առած էր, որոյմով հիւանդաց համար խաչհանգիստի ջուր կ'օրհնէր: Բեւեռի մէկն խնդրեցի և առի: Սա պատմեց թէ՝ ԹՈՐՈՍԻ ՎԱՆՔ անունով չինք մը կայ դեռ. և այլ կցկտուր և որոտկտուր բաներ կը պատմէր, ասիսոս որ աղէկ ուշադրութիւն ըրած չէր, թէպէտ բաւական աշքաբաց և լուրջ մէկն էր բայց պատմութիւնը դիտնալ պէտք էր. սա ազատութիւն ունէր բոլոր Աղջատաղի գրդաց մէջ արձակ և ապահով շրջելու, վասն զի իբրև ազօթելով և թուղթ գրելով բժշկութեան համբաւ հանած էր, ուսոի բոլոր գիւրդ հիւանդներ գայն կը յարգէին. այս գրդերը այն աւերակ եկեղեցեաց ուխտ և մատաղ ալ կ'ընեն եղեր: Տէր ցակոբի հետ Մալաթիոյ ծերերն ալ կը հաստատէին թէ՝ հին քաղաքին Մելիտինէի պարսպին մէկ դուռն՝ թորոսի անուամբն էր, զոր թոքա գաբռատա կ'անուանեն եղեր Տաճիկները: կարօտը սրտիս մէջ մնաց

Ադջատաղը չրջելու, տէր Յակոբի պէս կա-
րապետ մը հազուագիւտ էր արդարև :

Պէհէանիոյ Յ ժամ անդին Քէօռն գեղին առջեւ ՎԱՍԻԼՈՍ անուամբ քարակոյտ մը կայ, որ Գոզ—Վասլի ապարանք է, կ'ըսեն. յորմէ կէս ժամ հեռի է կարմիր վանքի ա-
ւերակը, և աւոր կից քարայր մը, զոր կ'ա-
ւանդեն թէ Շնորհալւոյն առանձին աղօթա-
տեղին է եղեր :

Մալաթիոյ գրեթէ կռնակին կից էր Ադ —դազ լեռը, ուստի կը հոսէին քաղաքին այնքան առատ և զուլալ ջրեր. լեռան գե-
լուխը, կ'ըսէին, եդեմայ պէս պրախտ մի էր բիւր ծաղիկներով և ջրերով. ուր սակայն այն օրերը ոչ ոք կ'իշխէր երթալ, մի Քրդե-
րէն կ'սպանուէր իսկոյն :

Թէ՛ Մալաթիոյ, թէ՛ Պէհէանիոյ և թէ Ադիեամանայ երկիրը մեծ մասամբ հովիտ է, որոց միջէն գետակներ կը հոսին և կը խառնուին Եփրատ : Երկրին պիտոյից հա-
մար պարզ արուեստներ կան : Բերքերն են՝ ա֊ֆիոն խիստ ընտիր տեսակ, շերամի բո-
ժոժ, տորոն, ցորեն, գարի, թիւթիւն, բամբակ, բրինձ, ընտանի և վայրի կենդա-
նիք, ընտիր միրգեր՝ թութ, մըշմըշ՝ որ փոքր բայց համեղ ծիրան է, ցեղ ցեղ տանձեր և խնձորներ, խոշորահատ խաղող և չամիչ, մասնաւորապէս Պէհէանիոյ և Ադիեամանայ մէջ, խոյնի և սեւ սալոր, եւն. որոց չորցու-
ցած չիրերը չատ երկիրները ծանօթ են :

ձանապարհները խիստ բանուկ են և դիւր, յարաբերութիւն ունի Հալէպու, Մարաշու և Իքէնտէրունի հետ. Տիգրանակերտու, Խարբերդու, Սեւաստու, կարնոյ և շրջակայ փոքր քաղաքաց հետ. և իրեւ պորտ է Բաղդադի և Պօլսոյ մէջ: Բնակչաց գլխաւորը առեղական կապոյտ կտաւէ զգեստը և սուէ վերարկու է ընդհանրապէս, Շամայ և Հալէպի կերպասներն ալ կը հագնին, ամենքն ալ պճղնաւոր են: Կանայք թէ՛ Թրքաց և թէ՛ Հայոց խիստ հոգեմ են, ծածկեալ և անտեսանելի:

Վիճակիս բնակիչ ցեղերն են Հայոցմէ զատ՝ Թուրք, Քիւրդ, Գըզըլպաշ, Ասորի:

ՁԵՌԱԳՐԻՒ ԵՒ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ Ի ՄԱԼԱԹԻԱ

1. Ա՜ֆթարքան.

— Ի սկիզբն Աւետարանի, ոսկեզօծեալ տողերով.

«Տէր իմ Քրիստոս լոյս գերարփի,
«Որ շրջեցար մարմնով յերկրի.
«Եւ զայս մատեանս աւետալի,
«Մեզ հնչեցեր ձայն ցնծալի.
«Դու զտէր կոստանդին հովիւ բարի,
«Կաթողիկոսն Հայոց սեռի.
«Զոր փոխեցեր 'ի յայսմ ամի,
«Ցաթոռ նստոյ ընդ Պետրոսի: Ամէն:

ՁԺՁ.

«Եւ վճռանգող այս մատենի,
«Զհարսն Հեթում հաստակ բարի.

«Որ է որդի նա Լեւոնի,
«Որդոյ Հեթմոյ մեծ արքայի.
«Պահեա կենաւք յերկարելի,
«Իւր ծնողաւքն և այլ զարմի.
«Եւ ի քո փառաց հայրենի,
«Հաղորդս ընկալ քեզ կրկնակի: Ամէն:

— Ի վերջն Մատթէոսի. «Ա՛ստուածապատիւ տէր կոստանդին կաթողիկոս յիշեցէք ի Քրիստոս»:

— Ի վերջն Մարկոսի. «Ընդ մեռեալսն հանգուցեա Քրիստոս զսրբազան կաթողիկոսն տէր կոստանդին ստացող սորա և զեղբարսրդին նորին Թորոս քահանայն: Եւ մեղապարտ գրչի սորա չնորհեա մեզաց թողութիւն»:

— Ի վերջն Ղուկասու. «Ընտրելոց մեռելոցն հաղորդս ընկալ Քրիստոս Աստուածզտէր կոստանդին կաթողիկոսն Հայոց ստացաւղ քոյին բանի. և Թորոսի քահանայի եղբարսրդւոյ նորա չնորհեա՛ դասել ընդ սուրբս քո: Եւ քեզ փառք յաւիտեանս»:

— Ի վերջն Յովաննու. Յիշատակարան. «Փառք հանդոյ և միանականն սուրբ Երրորդութեանն և միոյ Աստուածութեանն Հաւր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս: Շնորհիւ Տեառն սկսեալ և ողորմութեամբ նորին յանգ հղեալ աւարտեցաւ մատեանս աստուածային երկրպագելի և հանդուրժելի սուրբ Աւետարանս: Յամի Զժ և Է երորդի թուականութեանն Հայկազեանն տումարի, աստուածապահ գեհակս Հոռոմկլա, ընդ հովանեաւ սուրբ տաճարատեառս սուրբ Փրկչին մերոյ և սուրբ Աստուածածնին և սուրբ Լուսաւորչին մերոյ հրա-

մանաւ և ծախիւք երջանիկ հայրապետին Հայոց տեառն Կոստանդեայ որ զԱստուածահաճոյ վարուց իւրոց և բարի անուան համեմատ ունէր զպատուաբիւն։ Որ և՝ի կեանս իւր՝ի ձեռն քաջակրաւն քահանային թորոսի եղբաւրորդւոյ իւրոյ եւս գրել զսա իմոյ անարժանութեանն Թորոսի մականուն Ռաւսիին կոչեցեալոյ։ Եւ նուիրեաց զսա կտակ հոգւոյ իւրոյ, և ծնողացն և գեղեցիկ մանկանն Հեթումոյ որդւոյ Լեւոնի որդւոյ Հեթումայ թագաւորի։ Եւ ինքն կատարեալ զկեանս իւր հանգեաւ՝ի Քրիստոս կալեալ զաթոռ հայրապետութեան ամս Խ և Ե։

«Որ և՝ի չնորհացն Աստուծոյ և հրամանաւ թագաւորին Հեթումոյ, յաջորդէ զաթոռն սուրբ տէր Ցակոբ այր բարի և վարդապետ հին և նոր կտակարանաց, անապատական վարուք ճգնեալ։ Ի ժամանակի յայսմիկ մեծն Անտիոք գերի վարեաց զբազումս անաւրէնն արքայէն Եգիպտացւոց, և բազում եղեն սպանեալք և գերիք նորա և կակիծ Աստուածարնակ սուրբ և հռչակաւոր տաճարացն որ՝ի նմա։

«Զոր ոչ է պատմել զհրաշատեսակ վայելչութիւն գեղոյ նոցա որք հրով սպառեցան։ Ցայսմ երկիւղէ և չարաչչուկ համբաւոյ զարհուրեցան բազում գաւառք, և առաւել աչխարհս Կիլիկեցւոց։

«Եւ մինչ յայսմ մեծի տագնապի և՝ի դողման էաք, բացաւ առաւաւտ խաղաղութեան մարգարիրին Աստուծոյ, և մեծն Լեւոն թագաժառանգն Հայոց զերծեալ եղեւ իննամաւքն Աստուծոյ յերկաթի հալոցացն՝ի ծառայութենէ և՝ի ձեռաց նոյն արքային Եգիպտացւոց։ Եւ բազում պատուով և ընծայիւք եկն յաչխարհն և՝ի հայրենի աթոռ

իւր , և եղեւ խաղաղութիւն երկրին և խընդութիւն Քրիստոնէից :

«Ի սոյն աւուրս եղեւ պրաւ գրչութեան սուրբ զանազան նիւթուք , և երանդ երանդ գունաւք , առ ՚ի սիրալի լինել որդոց սրբոյ եկեղեցւոյ :

«Վասն որոյ աղաչեմ զձեզ , ով որդիք լուսոյ մեր Միանէ , որք վայելէք առաւ յիշեալ աղաւթիւք ՚ի Տէր գործանաւորն ամենայն բարեաց յիշատակի սուրբ Հայրապետն գէր Կոստանդին ստացող սորա և գործանդող սորին գծիրանաձին մանուկն Հեթում , և գհայր իւր Լեւոն թագաժառանգ և գմայր իւր բարեպաշտուհի նուիրեալ ՚ի թագուհի Հայոց , Կիտան կոչեցեալ : Բարեպաշտասնեայն Հեթում երախտապարծ Հայոց և ինձ անարժանիս , որպէս և դրաւեբերաւք իւրովք և ամենայն գործիւք . որոց ննջեցելոցն հանգիստ և ողորմութիւն պարգեւեսցէ Քրիստոս Աստուած , և գմնացեալսն անխռով խաղաղութեամբ պահեսցէ , և երկնաւոր թագաւորութեան հաղորդս առնսցէ ամէն : Յիշել աղաչեմ և գարիւպոյն քահանայն Թորոս որ գծախս գրոցս երկրորդեաց գոսկիս : (Ա.Մ. գրով) «Բազմամեղ գրիչս աղաչեմ յիշել զանարժանութիւն իմ , և գծնաւորս և գորդիս և գաւագիչս և գամենայն երախտապարծս իմ և գկազմաւղ սորա : Եւ Քրիստոս Աստուած գձեզ յիշեսցէ . . . » :

1· Ա-ԵՓԱՆ .

«Ձմեղաւք մեռեալ հոգին գայր Միմոնին արքեպիսկոպոսին Մալաթիոյ վրայ գիտողին , և իմ որդի Ռոլոս բէկին , վարժեալ ձեռամբ վարդապետին Ա.խատակէս բանուեանցեանին . վերջին կազմեցաւ ՚ի Մելի-

տեղին, ՚ի դուռն սրբոյն Գրիգորին. ՚ի ՁԳ. թուականին, ՚ի յունիս ամսեանն ԻԲ. ին. ով որ կարդայ ՚ի յատենին, նա մեզ ասէ պՔրիստոս որդին. և ղՀայր մեր յերկինքն ՚ի յետ նորին, նա թողցի իւր մեղքն և իւր ծնաւղին, և ժառանգէ վերկնից պարին, և Աստուածորմի իմ վարդապետին, Անտիոքիա բարեւնապետին, և ինձ անարժան և անպիտան ծառային, տէր Միխոլ արքեպիսկոպոսին, և ծնաւղաց իմոց առաջին և վերջին, հոգեւորին և մարմնաւորին, և ամենայն արեան մերձաւորացն, ամենին. ով որ ասէ լի սրտիւ զՏէր ողորմին, նա Քրիստոս թողու զիւր անցանքն և զնախանձաց նորին, ամէն. Ո. Ռ. ամէն

«Սուրբ Աստուածածին այրուձ էր ՅովՀան գլուխն և մենք խիստ աշխատեցանք և վերստին աշխատեցաք նորոգել զսուրբ Աստուածածին յիշատակ մեզ և ծնաւղաց մերոց և ամենայն արեան մերձաւորացն ամէն,

«Սուրբ Աստուածածնովս որ կապվել են նա ՁՄՋ. գիրք է, որ և չնորհօք սուրբ Հոգւոյն և ներութեամբ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ զանց առնէ զմեղս մեր և ոչ նախատէ զմեզ բազում ազալանաց մերոց, և տայ պչնորհս բազում որ ՚ի խորոց սրտէ յաւաչանօք խնդրէ. որ և յետանեալ ծառայս ձեր, ծառայիցդ Աստուծոյ, մեղօք փուեալ, և ՚ի բարի գործոց եմ հեռացեալ, միայն անուանի եմ կոչեցեալ աչ և բարեաց գաստարկացեալ, Արրահամ եպիսկոպոս, որ եմ որդի տէր Մկրտիչ քահանային վերապիտոզի Մելտինու քաղաքին, տեսի զսուրբ Աստուածածնայս որ Ղուկաս և ՅովՀան գլուխքն եղծեալ էր որ գրոց նչանարանք ոչ կայր գըրեալ, նորոգեցի վերստին. ով արբասէր վար-

դապետք և քահանայք և մանկունք եկեղեցոյ, երես 'ի դեռնի դնելով ազերսեմ 'ի սրբութենէ ձերմէ, հայցեմ, յորժամ որ ընթեռնոյք զսուրբ Աւետարանս 'ի յաւուրն, յիշեցէք 'ի մաքրափայլ յաղօթս ձեր զվեղօք լցեալ Աբրահամ արեզայս և զհայր իմ տէր Մկրտիչն՝ Քրիստոս որդի առելով և Հայր մեր որ երկինք 'ի հետ նմին տալով. որ և խնդրեմ բազմատատ տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, զձեզ յանուանէ յիշեացէ իւր սուրբ արքայութեանն ամէն և հազար ամէն: Նորոգեցի գրերն թվին ՌՃՂԳ. ամսեանն մայիսի ԻԷ. ամէն»:

(Այլ գրով). «Ով սուրբ կարդացողք յիշեցէք 'ի սուրբ յաղաւթս ձեր զԱբրահամ ոսկերրիչս և զծնաւզան իմ, զհայր իմ զԿիրակոսն և զմայրն իմ զԱլամ տիկին, և զեղբայրն իմ զԳրիգորն, և զկողակիցն իմ զԹագուհին, և զծնաւզս իւր զՊետէն և զԱշոտն, և զդեռատրոյս պատանեկիս մեր զԱստուածայտուրն տարևաւագն, և զամենայն արեան մերձաւորս իմ 'ի Քրիստոս. և ձեզ յիշողացդ, և մեզ յիշեղելոցս, ողորմեացի Քրիստոս Աստուած, որ և աւրհնեալ յաւիտեանս ամէն»:

«Որ կամակից եղայ սուրբ Աւետարանիս զալ 'ի սուրբ Առաքեալքն . . . . . որ ժամուն և պատարագին մատնայկից լինիմ, ով սուրբ քահանայք աղաչեմ աղաչեմ զձեզ որ յիշէք 'ի սուրբ յաղաւթս ձեր: Յամենայն տարի 'ի ցայտնութիւն պատարագի անխափան կատարեցէք ինձ և ծնաւզաց իմոց ամէն»:

(Այլ գրով). «Ով սուրբ հայրապետք վարդապետք, քահանայք և կրաւնաւորք և սարկաւագունք և ուսումնականք և կարդացողք

սուրբ Աստուածին, որ է Թեոդոսն Քրիստոսի, և ընծեցոյզք 'ի սուրբ եկեղեցի, յիշեցէք 'ի Քրիստոս և 'ի սուրբ մաքուր յաղաւթս ձեր զմահզատի Կիրակոսն, տիրաք մնանուկ և մըտաւք կատարեալ, որպի մահզատի Պետհնամին, որ երեսս վերսին կրկին նորոգել և զարդարել զսուրբ Աստուածին, յիշատակ իւր և ծնողաց իւրոց մահզատի պարոն Պետհնամին, և փաշայ Մելիքին հանդուցելոյն 'ի Քրիստոս, և հաւրեղբաւրն պարոն Ցուլահնին և հարազատ որդոյն պարոն Դաւթին. և քուերցն իւրոց Խոանդ խաթունին, Կիրայ խաթունին, Մանայ խաթունին, Սառայ խաթունին, և դեռատուս զաւակին իւրոց Մարիամին, և կոզակցին իւրոց Հռիփսիմէին, և ամենայն արեան ներքնատոհմացն: Եւ մեծ հաւրն իւրոց պարոն Կիրակոսին, և մեծ մաւրն իւրոց Կիրայ խաթունին . . . :

«Եւ սա՛ երեսս զանիրաւ մանոնան որ չէ մեր սեփական, և էր Աստուածն այրեաց և կրկին երեսս նորոգել զսուրբ Աստուածն. նա Քրիստոս որպին Աստուածոյ նորոգեացէ զհոգիս մըտեսի Կիրակոսիս, և ըզննջեցելոցն սորայ զկենդանեացն և հանդուցելոցն յիշատակացն և անյիշատակացն: Յիշեցէք 'ի Քրիստոս և զմեծ հայրն իմ զպատուականն, և զմեծ մայրն իմ զՈւթլու Մելիքն և Աստուած զձեզ յիշ ամէն: Եւ մի՛ ոք իշխեսցէ զսուրբ Աստուածն ծախել կամ ուժտել կամ առել թէ իմ է. նա մըտեսի Կիրակոս որպի մըտեսի Պետհնամին վըզի իմ ամէն ազգիս վերայ, ով որ զայս պատուէրս չկատարէ, նա զանէծքն 'ի Աստուածոյ առնէ, և 'ի սուրբ Աստուածէ. հնազանդեալքն աւրհնին Աստուածոյ և 'ի սուրբ Աստուածէս ամէն և Ո. ամէն: Ի

յոր տեղ որ կենայ, նա աւագ հինգշաբթին աւուրն զպատարագն մեր ննջեցելոցն մատուցանեն. և խնամ տանտէրն զաւրհնութիւն ի սուրբ Աստուածածնա առնուն. ի թվին Հայոց ՉԳ. նոյեմբեր ԺԱ. ի վտառս Աստուծոյ ամէն:

«Ով որ չունի իշխանութիւն, կամ առնուլ, կամ ծախել, կամ գրաւել, կամ սուրբ Աստիանոսի դրանէն հանել. ով որ յանդգնի՝ բանիւ եղիցի»:

(Այլ գրով). «Զվերջին կազմող սուրբ Աստուածածնա գրագրամէղ գրիչս, աղաչեմ զձեզ յիշել ի Տէր զՀարապետ աբեղայն. կազմեցի ի դուռն սուրբ Ստեփաննոսին, ՌԽ թվականին, ի փետրվար ամսեանն ԺԲ-ին. ով որ կարդայ ի յաւերին նա մեզ ասէ զԲրիստոս որդին, և զՀայր մեր յերկինքն ի հետ նորին, նա թողի իւր մեզքն և իւր ծնողին, և ժառանգէ զերկնիցն զբարին . . . »:

Յուլիս 29. Իմ վերջին օրն է Մալաթիոյ մէջ. սանդուխտ վաճառական և բնիկ ազգայինք Ս. Ադաչնորդի հետ անհնարին թախանձանքներ ըրին, հարկ եղաւ պիջանիլ Ս. Պատարագ մատուցանելու և քարոզ խօսելու. նոյն օր իրենց մեծարանքները վայելեցի, փոխադարձ իմ մեծարանքներս նուիրելով:

Կեսարացի ազգայինք, և ի մանաւորի Կիւլկնի Սերովբէ և Սարգիս եղբարց Մեծ. Տեարց գործակալք կարի յաջողակ և բարձր տեղ կը բռնէին գրեթէ ամեն պատահած տեղերը վաճառականաց գասուն մէջ. Մալաթիոյ մէջ անոնց գործակատարն էր Մ. Յովհաննէս Կիւլկնի, ճարտար և եռանդուն

երիտասարդն, զոր ամբողջ Մալաթիացիք ՀԱՃԻ ՓԱՇԱՅ կ'անուանէին։ Քաղցր պարտաւորութիւն է ինձ հոս յիշատակել թէ յիշեալ աղնիւ և ազգասէր եղբարք, Տէարք Ս. և Ս. Կիւլպէնկ, յատկապէս յանձնարարականներ տուած էին ինձ, որոց շնորհիւ մեծ դիւրութիւններ վայելեցի ամեն ուրեք, ուր որ անոնց մարդ կը գտնուէր, և բաց՝ի երեք փոքր քաղաքներէ, միւս ամեն տեղերը կը գտնուէր։ Ես մեծ էջեր պիտի նուիրէի ընդարձակ գովեստներ հիւսելու այս պատուական հարազատաց, որ ազգին պատիւն են վաճառականութեան հրապարակին վրայ, ու Նախախնամութենէն չնորհք մը տուեալ ազգիս կարօտելոց և ազգային ուսումնական ու բարեպաշտական հաստատութեանց, ընկերութեանց և ընտանեաց՝ իրենց յայտնի ու գաղտնի նպաստներով և բարերարութեամբ. պիտի ներողի զիրենք, որ չատ գաւառներու մէջ վաճառականութեան բերքեր յառաջ բերելու ձեռնտու և քաջալերական հանդիսացած են, զորօրինակ քանի մը տեղեր աֆիոն մշակել տալով, ևբայց պիտնալով իրենց հասկաց խոնարհասիրութիւնն և երկիւղած բարեպաշտութիւնը կը լռեմ, որպէս զի անհամոյ գործ մը ըրած չլինիմ, և միտքանակ պատուելու զիրենք, որոնք այնչափ արժանի են, վշտանալու աստիճ տուած լինիմ։

ընինք և մեկնեցանք, Ս. Աստիւորդն, քա-
ղաքական ժողովն և այլ պատուաւոր ան-
գամներ՝ ձի հեծան, Օրդուղի վանքը հան-
դիպում մը ըրինք, ուր ուխտաւորաց բազմու-
թիւն ալ կը գտնուէր. բակի ջրաղից աւա-
զանին չուրջը բոլորուելով Մալաթիոյ էֆֆ մը
տեղի ունեցաւ զուարթագին. միայն փաշայի
թիւրիմացութիւն կամ անքաղաքավարու-
թիւնը կոտրեց մեր սիրտերը սակ մը, զոր
աւելորդ կը համարիմ նկարագրել, ապա
իւր կողմէն երկու անձինք յուղարկաւոր, և
երկու ոստիկան առհասորդ ղրկեց: ժամ 5
էր, մեք ճանապարհն ինկանք: Դաշտային
էր մեր ուղին, 4 ժամէն եփրատայ եզերքն
էինք, բայց երկու ժամ եւս շարունակելով
իջողու գաւառի միջով գետոյն անցքը հա-
սանք: Օդոյն տօթը կը խարշէ մեր անձը,
և մոծակներու վիլիոնները կ'եռան կը զե-
ռան ջրոյն երկու կողմն, ո՞վ կրնայ առանց
հազարաւոր վէրքեր ընդունելու անցնիլ այս
հրուակներէն, որք ոչ թագաւորի հրամանին
կ'անսան, ոչ ոստիկանները բանի տեղ կը
դնեն, ոչ վարդապետ կը ճանչնան, ոչ տը-
կարին կը գթան, ոչ զօրաւորէն կ'ակնա-
ծեն, ոչ կրակէ, ոչ գնդակէ, և ոչ սուրէ
կը վախնան: Անճնաւոր եղանք: Հոս եփ-
րատը կրկնապատկեալ է, վասն զի Մուշէն
եկած Արածանին՝ որ Ճապաղջուրէն և Բա-
լուէն կ'անցնի, Արաբկերու, Խարբերդու և
Չմշկածագու միջոցը կը խառնուի կարնոյ և

Ակնայ մեծ հիւղին ։ Նաւ մը կայ ջրոյն վրայ մեծ և խոր. խոշոր գլուխ փիւրդ մը՝ իբրև գաւառան նաւուն կառարը կայնած, թանձր և կոչտ գերան մը ղեկ ըրած է, որոյ վերին ծայրէն կլոր ու ծանր երկաթ մը կայ կախուած, այս երկաթը չարժելով՝ ղեկը ուզած կողմն կը դարձնէ. չորս փիւրդեր ալ չորս գերան իբրև թի գործ կ՚ածեն, նաւուն մէկ գլուխը բարձր և միւսը դեռնին հաւասար, ասկէ կը մնան մարդիկ և անասունք և իրարու խառնուած կը կայնին նաւուն վրայ, տասն վայրկեան տեւեց մեր անցքը ։ Թէպէտ գետափը գեղ մը կար, բայց կարի հռչակեալ էր անոր մոծակաց և լուծոց բազմաթուութիւնն ու բարբարոսութիւնը, ուստի և այս իրաւամբ Պէրլինի քօնկրէն ինքնավարութիւն և անկախութիւն տուած էր անոնց՝ իրենց որոշեալ տեղը ։ Անցանք կէս ժամ վեր, ծառազարդ գեղի մը մէջ, Ապտուլլահ աղայի տունը պայծառ լուսնակով տանիքին վրայ բազմելով և ննջելով, հանգիստ և ըզուարճալի դիշեր մը անցուցինք այն Քրդու գեղը ։ Տանուտէր Ապտուլլահ աղան Մալաթիոյ մէջ բանտարկեալ էր, ըստ վկայութեան բազմաց՝ ինքն ազէկ, հարուստ ու պարկեշտ մարդ լինելուն համար ։


Առաւօտ լուսոյ աստղ ծագեց և մեք ձիհէ ծանք. Եփրատի ափերով կ՚ընթանանք, որոյ պարզ և ջինջ ծոցոյն մէջ բոլորեալ լուսինը կը լողայ. ամեն կողմէն բարձրաբերձ

լերինք լուանակով և առուերով դեղափայլ. խորխն լռութիւն և դադար համայն բնութեան. տեղ տեղ պուրակաց և թփոց բոյլերու մէջ թեւաթափ թափ թափ կը զարթնուն թառած թռչունք, Եփրատայ եզերքն երէկն փուլ փուլ կը փլչին հողեր չառաչմամբ ջրոյն մէջ, գետը երբէք զուարթ չէ, հեծութեան կերպարանք մը ունի, և իւր ձայնը կը նմանի վշտացեալոյ մը կամ խոցելոյ մը հեկեկանաց։ Ուղեւոր սագ մը նստած Եփրատին ալեաց վրայ կը նաւի յառաջ՝ դրեթէ անբաժան մեզմէ, պահ ընդ պահ իւր գեղեցիկ գլուխը և երկայն պարանոցը պարզելով ուշադիր կը դիտէ զմեզ։ Զորամէջ է մեր գնացքը, և լերանց կողերու վրայ աստ և անդ գեղեր կան, պրակ պրակ ծառոց միջէն խոխոջելով կը թափին ջրեր և կը ծուարին Եփրատայ մայրենի ծոցը։ Մեր ձախ կողմն կը տեսնանք ապառաժ մը տաշուած և վրան բեւեռագիրեր, ասորիականներ կը պատմեն թէ՝ Ընկերքի գիր է այն, և թէ գանձ ունի այս քարը, իւր մէջը պահուած, ո՛վ որ այդ գիրը կարդայ, գանձը կը հանէ։ Քիչ մը յառաջանալով, Եփրատ հրաժեշտ կու տայ մեզմէ, մտնելով ապառաժներու մէջ, Նեղ կիրճով մը կ'անցնի երթալ Հռոմկլայ։ Սրտագին բարեւներ և երկրպագութիւններ յանձնարարեցինք իրեն։ Եւ ահա հեղեղատ մը կ'անցնինք, որոյ միւս եզերքը չինուած կայ կոփածոյ քարերով ընդարձակ խան մը և մըզ-

կիթ մը, բեօշէր խանն է այս, որ լքեալ ու ամայի կը մնար իւր սենեակներով։ Այս խանէն վեր, ձախակողմն ապառաժներու վրայ ամրոցներու նմանող աւերակ շէնքեր կան. ոտիկանք կ'ըսեն՝ թէ Հայոց եկեղեցի կայ հոն։ Զառիվեր կ'ելլենք. աստ երկու ժամ գնալով կը հասնինք Խարբերդու հովիտը, շէն և մեծամեծ դեղերով ճոխ, որոյ երեւոյթը կ'արդարացնէ այս առածը՝ «Խոբէոպ օվա՜ն, ալլոան օվա՜ն»։ Ամբողջ հոզերը մշակեալ։

Մեծ բազմութիւն մը կու գայ հանդէպ մեր, ծերուկի Հնդիկ իշխան մը, որ իւր երկիրները Անգլիացւոց յանձնելով՝ փոխարէն 25000 Անգգ. ոսկի տարեկան առնելով՝ երկար տարիներէ 'ի վեր կը բնակէր Բաղդատ, այժմ կ'երթար Փարիզի արուեստահանդէսը. իրեն առջեւէն ու ետեւէն կ'երթային սեւամորթ և ազատ ծառայից բազմութիւն և քանի չափ ոտիկաններ։ Հասանք Խան գեղը, որ քաղաք մը կ'արժէ, բնակիչք թուրք են, որոց մէջ խանէպաններ շատ կան։ Աղբիւրի գլուխը հանգչեցանք քիչ մը, և ուղղակի քշեցինք Սօրսօրու վանքը, ուր ժամանեցինք 3 1/2 ժամէն։ Այսօր 13 ժամ ճամբայ ըրինք։ Ձէ՛ Մալաթիոյ ժանդերէն և թէ ճանապարհի տքնութենէն ու տաքութենէն ընկճուած էր անձնս։ Օրհնեալ լինի Սարգիս վարդապետի հիւրասիրութիւնը, որ ըստ ամենայնի սփոփեց և հանգոյց զմեզ. «Վա՜նք՝ վարդապետի կեա՜նք» ըսած է առածը։

Տիգրանակերտու ձեռագիրներէն առնելով Հայոց նշանագիրներէն մաս մը կը դնենք հոս



ա	անգամ
բ	բարեկամ
գ	գոյական
դ	դերանուն
ե	եղանակ
զ	զուգորդական
է	էական
ը	ընդհանուր
թ	թարգմանական
ժ	ժամանակ
ի	իրական
լ	լուծական
խ	խոնարհում
ծ	ծանոթագրություն
կ	կապ
հ	հարցական
ձ	ձայնարկություն
ղ	ղեկավարող
ճ	ճակատագիր
մ	մարդ
յ	յուրահատկություն
ն	նախադասություն
շ	շարահյուսություն
ո	ոճ
չ	չափածո
պ	պատմական
ջ	ջրհեղեղ
ռ	ռազմական
ս	սեր
վ	վերջ
տ	տեղ
ր	րնդունակություն
ց	ցավ
ու	ուրախություն
փ	փոխանցում
ք	քաղաքակրթություն
օ	օրենք
ֆ	ֆիզիկական



ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

ՅԱՆԿ

ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ . . . . . Ա.
ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ . . . . . Է.
ՍԱՄՍՈՆ 1
ՊՍՑԲԱՑ 6
ՍԻՆՈՊ 10
ՄԱՐԶՈՒԱՆ 16
ԱՄԱՍԻԱ 39
ՋԻԼԷ 67
ԹՕՒԱԴ 80
ՍԵԻԱՍՏ 131
ՏԻՐԻԿ 201
ԳԱՍՄԱՆ և ԲԵՆԿԱՑ 235
ԱԿՆ 243
ԱՐԱԲԿԵՐ 270
ՄԱԼԱԹԻԱ 297
ՆՇԱՆԱԳԻՐՔ ՀԱՑՈՑ 337

ՎՐԻՊԱԿՔ

ԵՐԵՍ.	ՏՈՂ.	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
104.	26.	*վանդակապորճ.*	*քանդակապորճ.*
204.	18.	*բլուբներ.*	*բլորներ.*
243.	8.	*խոտերէ.*	*խորերէ.*
247.	20—21	*Արիգի.*	*Արեգի.*